

ՄԻՄՈՆ ԿՐԱՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԸ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄՈՒՐԾԻ ԵՎ
ԹՈՒՐԲԱԿԱՆ ՍԱԼԻ ՄԻՋԵՎ



ՄԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

**ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄՈՒՐՃԻ ԵՎ
ԹՈՒՐԲԱԿԱՆ ՍԱԼԻ ՄԻՋԵՎ**

(Երբորդ Կրատարակություն)

**ԵՐԵՎԱՆ
ԻԿԿ
2022**

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(53)

Վ.942

Այս գրքի լույս ընծայումը կազմակերպվել է Խաչիկ Չուխանեանի անմիջական նախաձեռնությամբ և մասնակցությամբ:

Շապիկի առաջին էջին՝

Հայաստանի Առաջին Հանրապետության քարտեզը:

Վրացյան Սիմոն

Վ.942 Հայաստանը բողջեւիկյան մուրճի և թուրքական սալի միջեւ: Ս. Վրացյան.- Եր.: Իրանագիտական կովկասյան կենտրոն, 2022.-244 էջ, A5 ֆորմատ:

Սիմոն Վրացյանի սույն աշխատությունը հնարավորություն է տալիս հետադարձ հայացք ձգելու մեր ոչ վաղ անցյալի, 1918-1921թթ. իրադարձությունների վրա, և նորովի գնահատելու դրանք: Այն, այսօր էլ, նույնքան բախտորոշ ժամանակաշրջանում, այժմեական է և ուսուցողական:

Նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(53)

ISBN 978-9939-1-1493-4

©Սարգսյան Գ., 2022

ԲՈՎ ԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք.....	9
Հայաստանի ինքնորոշումից մինչև Բրեստ- Լիտովսկ13	
Թուրք-բոլշևիկյան բարեկամությունը	26
Մերկացումներ Էնկյուրիի անկախությունը դատարանում.....	37
Հայ բոլշևիկները.....	54
Մայիսյան խռովությունները.....	72
Հայ եւ ազրբեջանցի բոլշևիկների դավերը Հայաստանի դեմ.....	114
Հայ-թուրքական պատերազմը եւ բոլշևիկները.....	125
Հայաստանը Հեղկոմի իշխանությունները.....	165
Հայ բոլշևիկների հաղթանակի արդյունքը	198
Վերջաբան.....	228
Հետզրույթուն.....	236

Համաշխարհային հեղափոխությունը գոհեր է պահանջում:
Ցավում եմ, եթե մեկ միլիոն հայեր էլ գոհվեն:

Լենին

Թող իմանան ամենքը՝ ովքեր պարտավոր են գիտենալ, որ այսպես կոչված հայկական «խնդիրը», որի վրա իզուր գլուխ են կոտրել իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը, ի վիճակի եղավ լուծելու միայն խորհրդային իշխանությունը:

Ստալին

Մենք մեր համակրանքի, մեր սիրո տուրքն ենք տալիս այն հերոսական պայքարին, որ վարում է քեմալական թուրքիան, մենք հիանում ենք նրա հաղթանակով:

Օրջոնիկիձե

Խորհրդային Ռուսաստանը սավառնում էր Լոզանի խորհրդա՝ ժողովի կանաչ սեղանի վրա եւ հենց նա էր, որ խանգարում էր մեծ պետություններին հարձակվելու ու ճգմելու փոքրիկ թուրքիան:

Չիչերին

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գիրքը առաջին անգամ, հոգվածաշարքի ձեւով, հրատարակվեց «Հայրենիք» ամսագրում-1940 դեկտեմբեր, 1941թ. հունվար-փետրվար: Ապա, 1941-ին լույս տեսավ առանձին տպագրութեամբ եւ շուտով սպառվեց Ամերիկայում: Պատերազմի պատճառով ճանապարհները կտրված էին, եւ Ամերիկայից դուրս սակավաթիվ օրինակներ միայն տարածվեցին, որով ընթերցողների լայն հասարակութեան համար մնաց գրեթե անծանոթ:

Մեզ թվում է, որ այս գրքի բովանդակութունը այժմեական է եւ այսօր, երբ Խորհրդային իշխանութեան վարած քաղաքականութեան հետեւանքով, աշխարհը բաժանված է երկու հակամարտ բանակների, որից ծանրորեն տուժում են Հայաստանն ու հայ ժողովուրդը եւ որի պատճառով Հայկական Հարցը մատնվել է անելի:

Ներկա՝ երկրորդ տպագրութեան մեջ կատարված են մի շարք խմբագրական սրբագրութիւններ, ավելացված են որոշ նոր հատվածներ, փաստեր ու վավերագրեր: Ի նկատի առնված են նույնպէս 1941-ից ասդին տեղի ունեցած դեպքերը:

Թուրք-բոլշեւիկյան հարաբերութիւնները անհունորեն ցավոտ հարց է՝ ճակատագրական եւ աղետալի մեր Հայրենիքի եւ հայ ժողովրդի համար: Այսօր այլեւս գաղտնիք չէ, որ բոլշեւիկյան մուրճի եւ թուրքական սպի միջեւ, ճգմվեց ու խորտակվեց Հայաստանը՝ անմեղ գոհը աշխարհակալ հեղափոխութեան:

Այս գրքի նպատակն է, որքան հնար է լրիվ եւ առարկայական կերպով ներկայացնել բոլշեւիկների եւ թուրքերի հարաբերութեանց պատմութիւնը Հայաստանին վերաբերող խնդիրներում եւ դրանից բխած հետեւանքները: Զուգընթաց

ցաքար ցույց տալ նաեւ Հայ բուլշեւիկների խաղացած դերը: Թուրք-բուլշեւիկյան հարաբերությունը սոսկ անցյալի պատմությունն չէ, այլեւ այսօրվա ու վաղվա հրատապ հարց: Հայ ժողովրդի եւ Հայաստանի ճակատագրով հետաքրքրվող ամեն անհատ պետք է գիտենա այդ պատմությունը՝ հասկանալու համար այն ամենը, որ եկավ Հայաստանի եւ Հայ ժողովրդի գլխին: Պետք է գիտենա՝ խուսափելու համար անճիշտ դատողություններից, անհիմն պատրանքներից եւ սխալ քայլերից ապագայում:

Գրքի նյութը ամբողջապես հիմնված է անհերքելի իրողությունների, պատմական փաստերի եւ վավերագրերի վրա: Ու պեսզի կասկածի որեւէ առիթ չտա, առաջ բերված բոլոր դեպքերն ու հանգամանքները հաստատված են առավելապես բուլշեւիկյան եւ թուրքական վավերագրերով ու վկայություններով: Ճշմարտության նախանձախնդիր ընթերցողը հնարավորություն ունի ստուգելու եւ աննախապաշար կարծիք կազմելու առաջ բերված փաստերի եւ եզրակացությունների մասին:

Դյուրության համար դնում ենք այստեղ այդ աղբյուրներից մի քանիսը.

1) Վ. Լենին 1917 եւ 1918 թթ. արտասանած ճառերը եւ գրած հոդվածները «Լենինի Երկեր» հատորների մեջ:

2) Ա. Նովհաննիսյան «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը», Երեւան, 1925:

3) Շ. Ամիրխանյան «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», Մոսկվա, 1926:

4) «Առաջին մասնաշական-հեղափոխական շարժումները Հայաստանում», Երեւան, 1932թ. (վավերագրերի մեծ հատոր):

5) Բ. Բորյան «Հայաստան, միջազգային դիվանագիտություն եւ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն

Միություն», Մոսկվա. 1927թ., ռուսերեն երկու սովոր
հատորներ:

6) «Նոր աշխարհ» ամսագիրը, Թիֆլիս, 1922թ., թիվ 2:

7) «Խորհրդ. Հայաստան» օրաթերթ, 1925 մայիս 1, 1927թ.,
մայիս 14:

8) Մուստաֆա Քեմալի պատմական ծանոթ ճառը Ազգ.
Մեծ ժողովի մեջ:

9) Էնկյուրիի 1926թ. դատավարություն արձանագրություն-
ները Պոլսի ժամանակակից մամուլից:

Ս. Վ.Ր.

1953, մայիս

Բեյրութ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԻՑ

ՄԻՆՁԵՎ ԲՐԵՍՏ-ՎԻՏՈՎԱԿ

1918 թ. մայիսին, քաղաքական դեպքերի բերումով եւ հայ ժողովրդի առնական բազուկով, ստեղծվեց Հայաստանի Հանրապետութիւնը:

Երկու և կես տարվա ընթացքին, անձեւ քառսի եւ տարածութիւն միջից ծնվեց մանուկ պետութիւնը, հասակ նետեց, կազմակերպվեց, ամրացավ, քաղաքական կերպարանք ստացավ, ճանաչվեց արտաքին ուժերի կողմից, ուրիշ մեծ ու փոքր պետութիւնների հետ միասին ստորագրելով Սեւրի դաշնագիրը՝ հասավ Հայկական հարցի տրամաբանական լուծման եւ հավասարե հավասար մտավ ազգերի միջազգային համակեցութիւն մեջ:

1920թ. դեկտեմբերին, սակայն, Հայաստանը ստիպված եղավ ընդունել խորհրդային վարչաձեւը, ապա՝ հրաժարվելու անկախութիւնից: Ինչո՞ւ: Արդյոք հայ ժողովուրդը արժանի չէ՞ր անկախութիւն: Արդյոք Հայաստանը անընդունա՞կ էր ինքնուրույն պետական կյանքով ապրելու:

Առարկայական փաստերի անաչառ ուսումնասիրութիւնը իրավունք է տալիս մեզ պնդելու, որ Հայաստանի անկախութիւն անկման պատճառները ներքին չէին, այլ գերազանցապես՝ արտաքին: Հայաստանի Հանրապետութիւնը ընկավ թուրքերի եւ բոլշեւիկների միացյալ հարվածների տակ: Եւ առաջին հերթին՝ բոլշեւիկների, որովհետեւ, եթե խորհրդային Ռուսաստանը չքաջալերեր ու չօգներ, քեմա-

լական թուրքիան, այն ժամանակվա պայմաններում, համարձակություն չէր ունենա հարձակվելու Հայաստանի վրա:

Բուլչեկիներն իրենց վերաբերումի մեջ հենց սկզբից անկեղծ չէին դեպի Հայկական Հարցը: Այս տեսակետից ոչ մի տարբերություն չկա խորհրդային եւ դրամատիրական պետությունների քաղաքականությանց միջեւ: Երկուսն էլ Հայաստանն ու Հայկական Հարցը նկատում էին և շարունակում են նկատել ոչ թե նպատակ, այլ միայն միջոց իրենց աշխարհակալական ծրագրերի հաջողության համար:

Ըստ հոլթյան, Խորհրդ. Ռուսաստանը թուրքահայաստանի հետ ավելի վատ վարվեց, քան նույնիսկ ցարական Ռուսաստանը: Սազոնովը թուրքահայերին գեթ «եկեղեցական ինքնավարություն» էր շնորհում, Լենինն ու Ստալինը այդ էլ զլացան: Միլյուկովը գոնե խոստանում էր գրավել թուրքահայ նահանգները եւ Ռուսաստանի հովանավորության տակ ինքնավարություն տալ հայերին, Լենինը ոչ միայն մաքուր թուրքահայաստանից ձեռք քաշեց, այլ Ռուսահայաստանի մի մասն էլ զիջեց թուրքերին՝ այն արդարացումով, թե մեծ նպատակները մեծ գոհեր են պահանջում:

Լենինի համար Հայկական Հարցը միայն մեկ արժեք ուներ՝ պայքարի գենք՝ հակառակորդների դեմ: Եվ նա մեկից ավելի անգամներ, իր ճառերում ու հոդվածների մեջ, օգտագործեց այդ գենքը:

1917 եւ 1918 թվականներին Հայկական Հարցը Եվրոպայի ուշագրությունը գրավող խնդիրներից մեկն էր: Դիվանագիտական շրջանակները, ընկերավարական համագումար-

ները, պետական մարդիկ, հաճախ, զբաղվում էին հայերի ճակատագրով: Մասնավորապես, ազատամիտ եւ արմատական շրջանակները ջերմ համակրանք էին արտահայտում դեպի հայերն ու հայկական բաղձանքները: Եվ բնական է, որ ցարական իշխանության տապալումից հետո, Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը անմիջապես աշխատեք դարմանել հին կառավարության գործած անարդարությունները հայերի վերաբերմամբ: Այս մտայնության արդյունքն էր ժամանակավոր կառավարության 1917 թ. ապրիլի 26-ի կարգադրությունը Թուրքհայաստանի մասին:

Այդ կարգադրությամբ, «մինչեւ խաղաղության դաշնագրով Թուրքահայաստանի վիճակի վերջնական որոշումը» Թուրքերից նվաճված վայրերի համար սահմանվում էր առանձին վարչություն, որ պիտի լինեք անկախ կովկասյան իշխանությունից ու ենթակա ուղղակի Պետրոգրադի կենտրոնական կառավարությանը:

Այս կարգադրությունը, բնականաբար, ընդհանուր ուրախություն պիտի պատճառեք հայերին: Թուրքահայկական նահանգները իրապես վերածվեցին ինքնավար շրջանի՝ ժամ. կառավարության նշանակած կոմիսարի ղեկավարության տակ: Կոմիսարի օգնականը հայ էր՝ բժ. Հ. Զավրիյան: Գավառապետերից շատերը և տեղական պաշտոնեության մեծ մասը նույնպես հայեր էին: Շուտով գաղթականությունը վերադարձավ իր տեղերը, և 1917 թ. ամառը, Վասպուրականից սկսած մինչև Երզնկա, ամբողջ տարածությունը բնակեցված էր գրեթե բացառապես հայերով: Մոտ 150.000 հայություն կար այդ օրերին ուսու բանակի գրաված

չըջաններում, որ մեծ աշխուժությամբ լծվեց ավերված բնակավայրերի վերաշինության եւ տնտեսության վերականգման գործին:

Ժամանակավոր Կառավարության այս կարգադրությունը բուռն քննադատության ենթարկվեց բուլշեւիկներին, մասնավորապես Լենինի կողմից: Մեկնելով իրենց հիմնական սկզբունքից՝ «հաշտությունն առանց հողերի գրավման եւ ռազմատուգանքի»՝ բուլշեւիկները մեղադրում էին, թե Ժամանակավոր Կառավարությունը ռուս բանակը պահելով թուրքահայաստանում՝ նվաճողական նպատակներ է հետապնդում: «Հեռացրե՛ք ռուս բանակը Հայաստանից, պահանջում էին բուլշեւիկները Ժամանակավոր Կառավարությունից, այլապես ձեր եւ ցարական կառավարության միջեւ ոչ մի տարբերություն չի լինի»:

«Մենք, գրում էր Լենինը, պարտավոր ենք անմիջապես գոհացնել ուկրաինացիներին ու Ֆիններին, ապահովել նրանց եւ Ռուսաստանի բոլոր օտար ցեղերին կատարյալ ազատություն, մինչեւ անջատվելու իրավունք. նույնը պետք է գործադրենք ամբողջ Հայաստանի վերաբերմամբ, պարտավոր ենք գործերը հեռացնել Հայաստանից եւ մեր կողմից գրավված թուրքական հողերից:¹ (Ընդգծումը մերն է. Ս.Վ.):

Քիչ վերջը նա գրում էր. «Եթե վաղը Խորհուրդները ձեռք առնեն իշխանությունը... մենք կասենք. դու՛րս հանեցեք գործերը Հայաստանից, այլապես կլինի խաբեություն»:

¹ Լենինի երկերը, ռուսերեն, Հատոր 14-րդ, մաս Բ, էջ 128:

Ձուր էր հակաճառում Կերենսկին, թե ոուս բանակի հեռացումը Հայաստանից կլինի ոչ թե հայերի ինքնորոշում, այլ անխնա ջարդ, թե ոուս զորքերը չեն հեռացվում ոչ թե Հայաստանը գրավելու դիտավորությամբ, այլ հայ խաղաղ բնակչությունը, մինչև հաշտության կնքումը, պաշտպանելու նպատակով: Լենինին այդ բացատրությունները չէին գոհացնում: Նա ճառերով ու հոդվածներով շարունակում էր համառ կերպով պահանջել ոուս բանակը անհապաղ հեռացնել հայկական նահանգներից:

Նույն պահանջը Լենինը դրեց եւ Խորհուրդների առաջին համագումարում՝ 1917 թ. մայիսին: Ցույց տալու համար համաշխարհային բանվորության և ճնշված ժողովուրդներին, որ հեղափոխական Ռուսաստանը նվաճողական նպատակներ չի սնուցանում, նա պահանջում էր, որ ոուս բանակը անմիջապես հեռացվի Հայաստանից: «Եթե այդ բանակը, -ասում էր նա, -որ այժմ պահվում է Հայաստանում եւ բռնազրավում է կատարում, որ դուք հանդուրժում եք, եթե այդ բանակը Հայաստանը դարձնեք անկախ Հայաստանի Հանրապետություն եւ այն դրամները, որ մեզնից առնում են Անգլիայի եւ Ֆրանսիայի դրամատերները, տրվեին նրան, ավելի լավ կլինեք»:

Խելահաս ամեն մարդու համար հասկանալի էր, որ այն ժամանակվա պայմաններում, «անկախ Հայաստանի Հանրապետություն» կարելի չէր ստեղծել: Պարզ էր նույնպես, որ ոուսական բանակը Հայաստանից դուրս բերելը հավասար կլինեք հայերի բնաջնջմանը: Եթե Լենինը իրոք հարգում էր հայերի ինքնորոշման իրավունքը, հենց այդ իրավունքով հայերը խնդրում ու պահանջում էին, որ ոուս

զորքը ոչ միայն չհեռացվի Հայաստանից, այլ ավելին՝ եւս զորացվի: Բայց, ինչպես ճիշտ ասում է բուլղերիկ պատմաբան Բ. Բորյանը, Լենինի համար կարեւորը Հայաստանն ու հայերը չէին, այլ բուլղերիզմի հեղափոխական նպատակները: Լենինի համար «Հայկական Հարցը միջոց էր, ոչ թե նպատակ»:² «Հայաստանը Լենինի համար զենք էր լուծելու համար դիվանագիտական կնճիռներն ու խաղերը»:³

Բորյանը արդարացնում էր իր ուսուցչի ճիզվիտական այս քաղաքականութունը նրանով, որ համաշխարհային հեղափոխության շահերը այդ էին պահանջում և որ մեծ նպատակների համար փոքր նպատակները պետք է զոհվեն. բայց դրանից ո՛չ հայ ժողովրդի կրած տառապանքները կմեղմանան, ո՛չ էլ Լենինի բարոյականութունը որեւէ արդարացում կգտնե:

Նույն Լենինի պնդումով Խորհուրդների երրորդ համագումարի հրատարակած «աշխատավոր եւ շահագործվող ժողովրդի իրավունքների հայտարարության» մեջ, դրվեց հետեւյալ կետը. «Խորհուրդների երրորդ համագումարը ողջունում է ժողովրդական Կոմիսարների Խորհրդի քաղաքականութունը, որ հայտարարել է Ֆինլանդիայի կատարյալ անկախութունը, սկսել է դուրս բերել զորքերը Պարսկաստանից, հայտարարել է Հայաստանի ինքնավարության ազատութունը»:

Այս կետը հետագային, 1918թ. հուլիսի 10-ին, Խորհուրդների հինգերորդ համագումարի կողմից մտցվեց Խորհրդային պետության հիմնական օրենքների մեջ եւ

² Հայաստանը, միջազգային դիվանագիտութունը եւ Խ. Ս. Հանր. Միութունը» Հատոր Բ, էջ 362:

³ Նույն տեղում, էջ 377:

կազմեց *Խորհրդ. Ռուսաստանի Սահմանադրության առաջին մասի երրորդ գլխի 6-րդ հոդվածը*:

Միեւնույն ոգով է կազմված եւ ժողովրդ. Կոմիսարների Խորհրդի 1917թ. դեկտեմբերի 31-ի ծանոթ դեկրետը Թուրքահայաստանի ինքնորոշման մասին՝ ստորագրված Լենինի եւ Ստալինի կողմից: Այդ դեկրետը բառացի կերպով ասում է հետեւյալը.

«Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի Գյուղացիական եւ Գանվորական Կառավարությունը կպաշտպանե Ռուսաստանի գրաված Թուրքահայաստանի հայերի իրավունքը ազատ ինքնորոշվելու մինչեւ կատարյալ անկախություն: Ժողովրդ. Կոմիս. Խորհուրդը կարծում է, որ այդ իրավունքի իրագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմանով, որոնք բացարձակապես անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար: Այդպիսի երաշխիքներ ժող. Կոմ. Խորհուրդը համարում է.

- 1) *Զորքերի հեռացումը Թուրքահայաստանի սահմաններից եւ անմիջապես հայկական միլիցիայի կազմակերպումը Թուրքահայաստանի բնակիչների անձի եւ գույքի ապահովությունը երաշխավորելու համար:*
- 2) *Հայ գաղթականների, այլեւ զանազան երկրներում ցրված հայ տարագիրների անհապաղ վերադարձը Թուրքահայաստանի սահմաններ:*
- 3) *Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով դեպի Թուրքիայի խորքերը տեղահանված հայերի վերադարձը Թուրքահայաստանի սահմանները, որի վրա ժող. Կոմ. Խորհուրդը պիտի*

պնդե հաշտության բանակցությունների ժամանակ
թուրք իշխանությունների հետ:

- 4) Ժամանակավոր ժողովրդական կառավարության կազմակերպումը թուրքահայաստանում Պատգամավորների Խորհրդի եւ Հայկական Կոմիտեի ձեւով՝ ընտրված ռամկավարական սկզբունքով:

Կովկասյան գործերի արտակարգ ժամանակավոր կոմիտար Ստեփան Ծահումյանին հանձնարարվում է՝ ցույց տալ թուրքահայաստանի բնակչությանը ամեն տեսակ աջակցություն երկրորդ եւ երրորդ կետերի իրականացման գործում, այլեւ ձեռնարկել տեղական հանձնախմբի կազմություն՝ զորքերը թուրքահայաստանի սահմաններից դուրս բերելու եղանակը մշակելու համար:

Ծանոթություն.- Թուրքահայաստանի աշխարհագրական սահմանները կորոշվին հայ ժողովրդի ռամկավարական ձեւով ընտրված ներկայացուցիչների միջոցով՝ համախորհուրդ սահմանակից եւ վիճելի (մասմեղական եւ այլն) շրջանների ռամկավարական ձեւով ընտրված ներկայացուցիչների հետ, կովկասյան գործերի արտակարգ ժամանակավոր կոմիտարի հետ միասին»:

Հետաքրքրական է, որ հայտնի բոլշեւիկ Պող. Մակինցյանը (այժմ գնդակահարված) հայտնում է, որ այս դեկրետի նախապատրաստության մեջ գործուն մասնակցություն են ունեցել բանաստեղծ Վ. Տերյանը եւ Ս. Սրապիոնյանը (Լուկաշին): Իսկ Բ. Բորյանը պնդում է, թե «այս հարցում հանգուցյալ Ծահումյանը վճռական դեր է խաղացել»:

Բորյանի ասելով՝ հայերի առաջարկած նախագծում եղել է հետեւյալ կետը. «Պահանջված քանակով ռուս զորքեր

կպահավին Հայաստանի սահմաններում (նախկին Էրզրումի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթներում), մինչեւ այն ժամանակ, երբ գերիշխան հայ ժողովուրդը Ֆիզիկական հնարավորություն ստանա ազատ համաժողովրդական քվեակուլթյամբ որոշելու անկախ Հայաստանի ներքին կազմակերպության հարցը եւ մինչեւ որ կազմվի հայ ժողովրդական միլիցիան՝ երաշխավորելու համար ներքին կարգը եւ երկրի արտաքին ապահովությունը:⁴

Վ. Տերյանը ու Ս. Շահումյանը շատ լավ ծանոթ էին Թուրքահայաստանի վիճակին եւ բնական է, որ նման պահանջ դնեին դեկրետի մեջ, առանց որի ամեն խոստում կլինեի պարապ խոսք: Հայաստանի ապահովության եւ ինքնորոշման հնարավորության միակ պայմանը այն օրերին ռուսական բանակի ներկայությունն էր, մինչեւ որ պատերազմը վերջանար եւ ստեղծվեր բնականոն վիճակ: Ճիշտ է ասում Բորյանը. «հայերը գերադասում էին «բռնագրավված» լինել Խորհրդային կառավարական զորքերից, քան թե ունենալ Թուրքահայերի «ինքնորոշումը» թղթի վրա եւ մնալ ռուսահայերի Ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի տակ Թուրքերի կողմից»: Բայց ժող. Կոմ. Խորհրդին հետաքրքրողը Հայաստանն ու հայերը չէին, այլ միջազգային հեղափոխությունը եւ արեւելյան-իսլամ ազգերին սիրաշահելու հաշիվը: Պահել ռուսական բանակը Թուրքահայաստանում՝ պիտի նշանակեր անհաճո գործ կատարել Թուրքերի համար, մինչդեռ, ինչպես կտեսնենք հետագային, Թուրքիան եւ իսլամ աշխարհը բոլշեւիկների աչքին մեծ կարեւորություն ունեին, եւ բոլշեւիկները արդեն բանակցու-

⁴ Բորյան, Բ հատոր, էջ 261. «Նորք», 1925, թիվ 5-6, էջ 414-415:

Թյան մեջ էին Թուրքերի հետ: Բուլղերիկների համար, ասում է Բորեանը, «ամբողջի շահերն ավելի բարձր են, քան մասի շահերը»: Հայերը «մաս» էին եւ պետք է գոհվեին «ամբողջի» սեղանի վրա: Եվ հայ բուլղերիկների առաջարկած կետը չմտավ դեկրետի մեջ:

Այս այն դեկրետն է, որի առթիվ Ստալինը հայտնում էր, թե Հայկական Հարցը լուծվեց միայն Խորհրդային իշխանուժթյան ջանքերով: Հետագային, Ալ. Մյասնիկյանն էլ հաստատեց, թե՛ Հայկական Հարցը լուծված վերջացած է Խորհրդային քաղաքականության շնորհիվ:

Դեկրետի բնական հետեւանքները տեսնելու համար շատ սպասելու պետք չեղավ: Խոսքին անմիջապես հաջորդեց գործը: Խորհրդային իշխանության հրամանով ուսական գործերը ձգեցին Թուրքահայաստանը եւ հեռացան Ռուսաստան: Հայոց Զորից սկսած մինչեւ Երզնկա, այդ լայնատարած ռազմաճակատի պաշտպանությունը մնաց հայկական նորակազմ գորամասերի եւ կամավորական խմբերի վրա, որոնց առջեւ կանգնած էր Թարմ ուժերով գորացած Թուրքական բանակը: Բնական էր, որ հայերը մենակ պիտի չկարողանային պաշտպանել այդ ընդարձակ տարածությունը: Եվ հետեւանքը եղավ այն, որ Վեհիբ փաշայի գորամասերը, իրենց շուրջը սփռելով ավեր ու կոտորած, առաջ շարժվեցան եւ մի քանի ամսում ամբողջ Թուրքահայաստանը անցավ Թուրքերի ձեռքը: Բուլղերիկների ձեռքով «ինքնորոշված» Թուրքահայությունը՝ բնավեր ու խուճապահար, նորից բռնեց գաղթի եւ Թշվառության ճանապարհը:

Բոլշեւիկյան քաղաքականութիւնը նույն հետեւանքներն ունեցավ եւ ամբողջ Ռուսաստանի վերաբերմամբ – ներքին քառս եւ ճակատների փլուզում: Անգոր շարունակելու պատերազմը՝ խորհրդային իշխանութիւնը խնդրեց հաշտութիւն: Հաղթական Գերմանիան դրեց տաժանելի պայմաններ: Լենինի կառավարութիւնը ուրիշ ելք չունեւ, քան ընդունել թշնամու պահանջները: Եվ 1918 թ. մարտին ստորագրվեց Բրեստ-Լիտովսկի խայտառակ «խաղաղութիւն» դաշնագիրը:

Այդ դաշնագրի 4-րդ կետը անմիջապէս վերաբերվում է հայերին: Այնտեղ ասված է. «Ռուսաստանը պետք է կատարե իրենից կախված ամեն բան, որպեսզի ապահովի Արեւելյան Անատոլուի նահանգների շուտափույթ պարպումը եւ նրանց օրինավոր վերադարձը Թուրքիային: Արդահանի, Կարսի եւ Բաթումի շրջանները պետք է նույնպէս անմիջապէս պարպվին ռուս զորքերից: Ռուսաստանը չպետք է խառնվի այդ շրջանների պետական, միջազգային-իրավական հարաբերութիւնների մեջ, այլ պետք է թույլ տա, որ այդ շրջանների բնակչութիւնը ինքը ստեղծե նոր կարգ՝ համախորհուրդ հարեւան պետութիւնների, ի մասնավորի, Թուրքիայի հետ»:

Ուրիշ խոսքով՝ բոլշեւիկները ոչ միայն ամբողջ Թուրքահայաստանը հանձնում էին Թուրքերին, այլ՝ վերադիր նաեւ Ռուսահայաստանի երեք կարեւոր շրջանները:

Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ավելի եւս արձակեց Թուրքերի ձեռքերը: Նրանք չմնացին ռուս-թուրքական սահմանագծի վրա եւ շարժվեցին դեպի Կովկասի ներսերը՝ իրենց հետ բերելով ավեր ու կոտորած:

Այս առթիվ Անդրկովկասի կոմիսարիատը ստացավ Չիչերինի եւ Կարախանի հետեւյալ հեռագիրը.

«Թուրքական բանակը շարժվում է դեպի Բաթում, Կարս եւ Արդահան՝ ավերելով երկիրը եւ բնաջնջելով գյուղացի բնակչությունը: Հայերի հետագա ճակատագրի պատասխանատվությունը ընկնում է Գերմանիայի վրա, որովհետեւ նրա պահանջով էր, որ ռուս զորքերը դուրս հանվեցին հայկական շրջաններից եւ այժմ նրանից է կախված թուրքական զորքերի զսպումը սովորական բռնություններից»:

Ուրեմն, իրենց ամբողջ քարոզչությամբ ու գործերով, Լենինի ճառերով, հոգվածներով ու դեկրետներով, բոլշևեիկները չէին ուզում զորքերը հեռացնել թուրքահայաստանից և միայն Գերմանիայի պահանջով հեռացրին: Մաքիավելությունը ամեն դիվանագիտության հատուկ է, բայց ստին ու կեղծիքին էլ սահման կա: Գեռ Բրեստ-Լիտովսկից շատ առաջ ռուս զորքերը հեռացված էին Հայաստանից: Բրեստ-Լիտովսկի օրերին միայն հայկական զորամասեր կային Հայաստանի ճակատում:

Չիչերին-Կարախանի հեռագիրը հանցավոր խղճի ինքնարդարացման անհաջող ճիգ էր սոսկ՝ իրենց իսկ ձեռքով կորստյան դատապարտված մի ժողովրդի գերեզմանի առջեւ...

Անշուշտ, Լենինը ավելի անկեղծ էր, երբ հետագային, հայ ժողովրդի ամենաողբերգական վայրկյանին, իր մտերիմ գինակից Արշավիր Մելիքյանի գլխավորությամբ իրեն ներկայացրող հայ բոլշևեիկներին պատասխանեց. «Միրելի ընկերներ, ցավում եմ հայ ժողովրդի ճակատագրի համար, բայց մենք 15 միլիոն ռուսներ զոհաբերեցինք հա-

մաշխարհային հեղափոխութեան համար եւ եթե պետք լինի, եւս 15 միլիոն կզոհենք: Համաշխարհային հեղափոխութեանը զոհեր է պահանջում: Ցավում եմ, եթե մեկ միլիոն հայեր էլ զոհվին...»:

Արշավիր Մելիքյանը, որ Լենինի հավատարիմ զինակիցն էր եղել տարագրութեան օրերին, այնուհետեւ խորտակվեց հոգեպես ու կորավ անհայտութեան մեջ ուրիշ գաղափարական բոլշեւիկներին նման:

ԹՈՒՐԲ-ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Բուլշեւիկները, եւ հատկապես Լենինը, մեծ նշանակութիւն էին տալիս արեւելյան ժողովուրդների մասնակցութեանը համաշխարհային հեղափոխութեան պայքարին: Արեւելյան ժողովուրդները, Լենինի կարծիքով, վճռական դեր պիտի կատարեն հեղափոխութեան մեջ:

Հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո, Խորհրդապետները իշխանութիւնը առանձին հայտարարութեամբ մարտակոչ ուղղեց արեւելյան ժողովուրդներին: Իսկ Լենինը մեկից ավելի անգամներ գրել ու խոսել է այդ հարցի մասին: Այսպես, Համայնավար կուսակցութեան երրորդ համագումարում, խոսքը ուղղելով արեւելյան ժողովուրդներին, նա ասում էր. «Արեւելքի ժողովուրդների զարթոնքի շրջանից հետո, ժամանակակից հեղափոխութեան մեջ սկսում է Արեւելյան ժողովուրդների անմիջական մասնակցութիւնը ամբողջ աշխարհի ճակատագրի որոշման: Արեւելքի ժողովուրդները անթնանում են, որպեսզի եռանդով գործեն եւ որպեսզի ամեն ժողովուրդ լուծէ բովանդակ մարդկութեան ճակատագրի հարցը: Ահա թե ինչու ես կարծում եմ, որ համաշխարհային հեղափոխութեան մեջ, որ սկզբից դատելով, պիտի շարունակվի երկար տարիներ եւ պիտի արժե շատ աշխատանք, ձեզ վիճակված է մեծ դեր, եւ դուք ձեր պայքարով պետք է միանաք մեր պայքարին համաշխարհային աշխարհակալութեան դեմ... Այժմ մեր

Խորհրդային Հանրապետությունը պետք է իր շուրջը համախմբե Արեւելքի բոլոր արթնացող ժողովուրդներին, որպեսզի նրանց հետ միասին պայքար մղենք միջազգային աշխարհակալություն դեմ»:

Եվ Լենինը հրավիրում է Արեւելյան ժողովուրդներին կազմել տեղական հեղափոխական բջիջներ, կապել Երրորդ Միջազգայինի հետ, ձեռք մեկնել առաջավոր բանվորությունը եւ միահամուռ ուժերով պայքարել ընդհանուր թշնամու դեմ:

Այնուհետեւ Լենինի արծարծած այս սկզբունքները հիմք դարձան բոլշեւիկների արեւելյան քաղաքականություն: Երրորդ Միջազգայինը եւ Խորհրդային իշխանությունը մասնավոր ուշադրություն դարձրին իսլամ ժողովուրդների վրա եւ շատ ջանք թափեցին նրանց համակրանքը շահելու համար, առանց միջոցների մեջ խտրականություն դնելու, գրգռելով եւ օգտագործելով նույնիսկ կրոնական մոլեռանդությունը: Շատ տեղեր իսլամ մուլաներն ու սոֆտաները դարձան բոլշեւիկների գործակիցներ: Այդ տեսակետից, իբրեւ բնորոշ օրինակ, առաջ բերենք մի հատված Դադստանի մահմեդական հոգեւորականների համագումարանի ընդունած բանաձեւից:

«Համագումարը,՝ասում են բոլշեւիկացած մուլաները,՝ հրավիրում է բոլոր մահմեդականներին, ամեն տեղ, ուր կլավի մեր կոչը, ի բոլոր սրտե եւ անկեղծությամբ ենթարկվել գոյություն ունեցող Խորհրդ. իշխանության եւ նրա հետ ձեռք ձեռքի կովել Խորհրդային ազատ հանրապետությունների եւ բովանդակ իսլամ աշխարհի ընդհանուր թշնամիների դեմ: Որովհետեւ նա որ ուզում է

Խորհրդային իշխանության կործանումը՝ ուզում է նաև իսլամ աշխարհի ստրկացումը: Հիշեցե՛ք, որ Ղուրանն ասում է, թե տիրող իշխանության հպատակվելը մեր պարտականությունն է, մանավանդ որ Խորհրդային իշխանությունը իսլամներին ազատում է ստրկությունից: Մա՛հ Խորհրդային իշխանության եւ բոլոր մահմեդականների թշնամիներին: Սրբազան պատերազմ մեր ամենքի ընդհանուր թշնամիների դեմ»:⁵

Եվ միայն Դադատանում չէր: Արեւելքի մահմեդական հոգեւորականների մեծ մասը համակրանքով էր նայում բուլղեւիկներին, մանավանդ, առաջին շրջանում, որովհետեւ շոշափելի փաստերով տեսնում էր Խորհրդային իշխանության հովանավորությունը իսլամ աշխարհին:

Եվ հիրավի, բուլղեւիկները ոչ մի ջանք չէին խնայում տարածելու համար իրենց ազդեցությունը մահմեդական երկրներում՝ գրգռելով վերջիններիս թշնամանքը եվրոպական աշխարհակալների դեմ, հաճախ, զոհաբերելով քրիստոնյա ժողովուրդներին՝ իրենց քաղաքական նպատակների համար:

Այս տեսակետից բուլղեւիկների համար առանձին գրավչություն եւ արժեք էին ներկայացնում թուրքերը եւ Թուրքիան, որ իսլիֆայություն կենտրոնն էր եւ մեծ հմայք ուներ իսլամ ժողովուրդների աչքին: Գրավել թուրքերի համակրանքը եւ աջակցությունը՝ պիտի նշանակեր ամբողջ իսլամ աշխարհի համակրանքն ու աջակցությունը չահել: Հատկապես Անգլիայի դեմ մղվող պայքարում

⁵ Ն. Սամուրակի (Էֆենդիեւ), «Դադատան» (ուուսերեն), Մոսկվա, 1925, էջ 135-136:

իսլամոթյունը - Բոսֆորի ափերից սկսած մինչեւ Ալթայ ու Հնդկաստան, Ասիա ու Աֆրիկա- հսկայական ուժ էր: Համաշխարհային հեղափոխության ձգտող Լենինի եւ իր ընկերների համար քաղաքական պարզ շահի խնդիր էր թուրքերի բարեկամոթյունը վաստակելը:

Ուստի եւ բնավ զարմանալի չէ, որ Թուրքիայի պարտության գրեթե հաջորդ օրն իսկ սերտ բարեկամոթյուն հաստատվեց բոլշևեիկների եւ Պոլսից փախած թուրք իթթիհատական պարագլուխների միջեւ:

Մուղրոսի զինադադարի նախօրյակին, 1918 թ. հոկտեմբերի վերջերը, Թալեաթ փաշայի կառավարությունը տեսնելով, որ պարտությունը անխուսափելի է, հաշտություն խնդրեց անգլիացիներից եւ միեւնույն ժամանակ հրաժարվեց իշխանությունից՝ իր տեղը տալով Դաշնակիցների համար ընդունելի կառավարության:

Միեւնույն ժամանակ Իթթիհատի համագումարը հրավիրվեց հապճեպով, ուր որոշվեց Իթթիհատը հայտարարել լուծարված եւ փոխարենը ստեղծել նոր կազմակերպություն Թեհեսաուս անունով, որին փոխանցվեցին Իթթիհատի բոլոր գործերը, գույքերն ու դրամները եւ որ նոր անունով պիտի շարունակեր Իթթիհատի գործը: Որոշվեց նաեւ, որ Իթթիհատական պատասխանատու վարիչները անմիջապես հեռանան երկրից:

Իթթիհատական պետերը Պոլսից փախած Մուղրոսի զինադադարի ստորագրության օրը: Իթթիհատի կենտրոնի ազդեցիկ անդամ դոկտ. Նազըմը այսպես է բացատրում փախուստի պատճառները: «Փախչելու ծրագիրը ընդհանուր կենտրոնից ծնունդ առավ: Խորհվեցավ, թե Թալեաթ,

Էնվեր փաշաները, Նազըմ եւ Բեհհէդդին Շաքիր պետք է հեռանան: Քրիստոնյաները՝ հույները եւ հայերը սրանց հանդեպ թշնամություն ունեին եւ նրանց պատրվակ բռնելով՝ կարող էին խռովություններ հարուցանել երկրում»:

Ուրեմն, փախուստի բուն պատճառը վախն էր քրիստոնյաներից եւ առաջին հերթին, իհարկե, հայերից:

Հայերի վախը հետագային, Բեռլինում էլ, հանգիստ չի թողնում ջարդարարներին: «Լսած լինելով, որ Բեռլինի հայերը ցույց պիտի կատարեն մեր դեմ, մենք մի սանատորիում մտանք եւ այնտեղ մնացինք: Այնտեղ իսլամ Հեղափոխականների Ընկերության սկզբունքները ճշտեցինք», - վկայում է դոկտ. Նազըմը:

Պոլսից փախչողների մեջ էին էնվեր, Թալեաթ եւ Ջեմալ փաշաները, դոկտ. Նազըմը, Բեհհէդդին Շաքիրը, Պետրի բեյը, դոկտ. Րուսուխին, Ջեմալ Ազմին, դոկտ. Ֆուատը եւ այլն, եւ բոլորն էլ ականավոր եւ արյունարբու իթթիհատականներ: Հետագային, նրանց միանում են եւ ուրիշներ, ինչպես Քյուչուք Թալեաթ, Խալիլ փաշա, Ջավիտ բեյ եւ այլն:

Փախստականները, գերմանական թորփիլանավով, ուղղվում են դեպի Ղրիմ եւ Սեւաստոպոլի վրայով անցնում Բեռլին: Էնվերը ճանապարհին զատվում է Կովկաս անցնելու համար, բայց վերջը դարձյալ միանում է Բեռլինի խմբին:

Իթթիհատական ջարդարարները Բեռլին են հասնում Գերմանիայի պարտության եւ հեղափոխության օրերին: Վախենալով հայերի վրեժխնդրությունից՝ միառժամանակ պահվում են մի բուժարանում, որտեղից եւ սկսվում է

նրանց գործունեությունը: Այստեղից նրանք կապ են հաստատում պատերազմի օրերին Գերմանիա հավաքված հակաանգլիական եւ հակառուս մահմեդական՝ հնդիկ, թաթար, աֆրիկացի, արաբ, թուրքեստանցի և այլ գործիչների հետ եւ որոշում են հիմնել համախալամական հեղափոխական մի կազմակերպություն, որի նպատակը պիտի լիներ պայքարել իսլամ ցեղերի թշնամիների դեմ ու պաշտպանել թուրքիայի շահերը: Այս կազմակերպությունը կոչվում է «Իսլամ հեղափոխականների ընկերություն», որի կենտրոնական վարչությունը բաղկացած էր էնվեր, Թալեաթ ու Ջեմալ փաշաներից, դոկտ. Նազրմից, Բեհաէդդին Շաքիրից, դոկտ. Բուսուխիից, Շեքիբ Արսլանից, Ջեմալ Ազմիից եւ դոկտ. Ֆուատից: Նախագահն էր էնվեր փաշան, բայց կազմակերպության ոգին եւ իրական վարիչը Թալեաթ փաշան էր, որ հաճախակի ճամփորդություններ էր կատարում, կապեր էր հաստատում, տեսակցություններ էր ունենում եւ ուղղություն տալիս կազմակերպության գործունեությանը: Ի միջի այլոց, նա ներկա գտնվեց Ամասերդամի Ընկերվարական համագումարին, ուր պաշտպանեց թուրքիայի իրավունքները: Հռոմ գնաց եւ տեսնվեցավ կոմս Սֆորցայի հետ՝ ապահովելով Իտալիայի բարյացակամությունը եւ կոմս Սֆորցայի անձնական աջակցությունը թուրքական դատին:

Այդ օրերին, Բեռլինում, սկսվեց նաեւ թուրքաբուլղեղիկյան բարեկամությունը, որ շուտով վերածվեց սերտ գործակցության:

Թուրքերի հետ առաջին կապ հաստատողը եղավ հայտնի բուլղեղիկ կառլ Ռադեկը (այժմ շնորհագուրկ), որ Բեռլին-

նում էր գտնվում Խորհրդային իշխանության հատուկ հանձնարարությունները: Նա տեսակցություններ ունեցավ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի եւ սրանց ընկերների հետ եւ արդյունքը եղավ այն, որ թուրքերը որոշեցին «Իսլամ Հեղափոխականների Ընկեություն» գործունեությունը փոխադրել Ռուսաստան: Թուրքերը հանձն առին Ռուսաստանի մահմեդական ժողովուրդների մեջ Խորհրդային իշխանության հակառակ աշխատանք չկատարել եւ իրենց ամբողջ ուժը ուղղել Անգլիայի դեմ, իսկ բոլշեւիկները խոստացան նյութական եւ բարոյական լայն աջակցություն ցույց տալ նրանց:

Այս բանակցությունները տեղի ունեցան 1918թ. վերջերը, և հաջորդ տարվա սկզբները թուրք-բոլշեւիկյան գործակցությունը արդեն փաստ էր: Հետզհետե իթթիհատական պարագլուխները, զանազան ճանապարհներով, տեղափոխվեցան Ռուսաստան եւ Մոսկվայում ձեռնարկեցին գործնական աշխատանքներ: Մոսկվա գնացին եւ Կովկաս ապաստանած իթթիհատական պարագլուխները: Այսպիսով, Խորհրդ. Ռուսաստանի մայրաքաղաքը դարձավ թուրք ջարդարարների կենտրոնավայր: Այստեղից էր, որ Էնվեր, Ջեմալ եւ Խալիլ փաշաները, հայկական կոտորածները կազմակերպող Բեհաէդդին Շաքիրը, դոկտոր Նազրմը, Քյոլչուք Թալեաթը եւ ուրիշներ տարածեցին իրենց համախալամական քարոզներն ու դավադրությունները: Մասնավորապես, նրանք բուռն գործունեություն էին ծավալել Անդրկասպյան երկրներում, Աֆղանստանում եւ Կովկասում:

Պետք չէ մոռանալ, որ Կովկասը Բրեստ-Լիտովսկի դաշնագրից հետո, դարձած էր թուրքերի գործունեության վայրը: Այնտեղ էր Նուրի փաշայի «Իսլամ բանակը», որ մասնակցեց Բաքվի գրավմանը եւ կոտորածին, 1918թ. սեպտեմբերին: Այնտեղ հաճախ երեւում էր Խալիլ փաշան: Բաքու եւ Գանձակ հավաքված էին բազմաթիվ թուրք զինվորականներ ու մտավորականներ, որոնք պաշտոններ էին ստացել Ազրբեջանի բանակի, կառավարական հաստատությունների եւ դպրոցների մեջ: Թուրքերի ազդեցությունը Ազրբեջանում շատ գորավոր էր:

Երբ Բեռլինի թուրքերը երեւացին Մոսկվայում, անմիջապես կապ ստեղծվեց սրանց եւ Կովկաս գտնվողների միջև: Բաքուն դարձավ մի տեսակ կամուրջ Էնկյուրիի կառավարության եւ Ռուսաստանում գործող թուրքերի միջև, որով հաստատվեցավ ընդհանուր ճակատ Մոստաֆա Քեմալի եւ երկրից փախած իթթիհատականների միջև:

Ինչի՞ էին ձգտում թուրքերը:

Պահպանել թուրքիայի ամբողջությունն ու անձեռնմխելիությունը, միացնել իսլամ ժողովուրդներին թուրքիայի ղեկավարության ներքո, առնել Ազրբեջանը թուրքիայի հովանավորության տակ, թույլ չտալ, որ թուրքահայաստանից հող տրվի հայերին եւ, առհասարակ, խորտակել Հայաստանի Հանրապետությունը եւ ոչնչացնել հայերի ուժը նաեւ Կովկասում:

Բողեւիկները այս բոլորը գիտեին, բայց նրանք ոչ միայն արգելք չէին լինում թուրքերի գործունեությանը, այլեւ կատարելապես համաձայն էին նրանց հետ: Էնվեր, Խալիլ, Ճեմալ, Նուրի փաշաները եւ մյուս իթթիհատական

պարագլուխները ազատ-համարձակ շրջագայում էին Ռուսաստանում ու Խորհրդային իշխանության դրամով եւ աջակցութեամբ քարոզչութիւնն էին անում եւ կազմակերպութիւններ առաջ բերում Թուրքեստանում, Աֆղանստանում, Ազրբեջանում, կովկասյան լեռնականների եւ Վոլգայի ու Ղրիմի թաթարների մեջ: Եվ որպէսզի կարողանան բուլղեւիկների վստահութիւնը շահել, Մոսկվայում որոշ փոփոխութիւններ մտցրին «Իսլամ Հեղափոխականների Ընկերութեան» ծրագրի մեջ՝ հարմարվելով բուլղեւիկյան գաղափարներին եւ ոճին: Իրենց քարոզչութեան եւ հրատարակութիւնների մեջ էլ գործ էին ածում բուլղեւիկյան լեզու:

Հայանի կոմունիստ Սուլթան Գուլիեւը, 1920թ. մայիսին, Մոսկվայի «Իզվեստիա»-ում հետեւյալ հետաքրքրական տեղեկութիւններն է տալիս թուրքերի Ռուսաստանում կատարած աշխատանքների մասին: «Միլի⁶ կազմակերպութիւնը,- գրում է նա,- Դենիկինի Մոսկվայի վրա գործած հարձակման ժամանակ նրա թիկունքում ապստամբութիւնն առաջ բերեց և ստիպեց կովի վճռական ըոպեններին իր բանակից մի քանի զորամասեր ուղղել դեպի հետ՝ ճնշելու համար ապստամբութիւնը: Այդ ձեւով է աշխատել Միլի կազմակերպութիւնը եւ Բաթումի, Կարսի, Արդահանի շրջաններում: Ազրբեջանի բանակում գործող թուրքական սպաները գաղտնի քարոզչութիւնն էին անում ի նպաստ միութեան Խորհրդ. Ռուսաստանի հետ:

Քաղաքական այս գիծը Միլի կազմակերպութիւնը ավելի պարզորեն ցուցահանեց Դաշնակիցների Պոլիսը

⁶ Մուստաֆա Քեմալի կազմակերպութիւնը:

գրավելուց և թուրքական Ազգային Երեսփոխական Ժողովի ցրումից հետո: Բաքվի հեղաշրջումից ամիս ու կես առաջ Բաքու հասավ Մուստաֆա Գեմալի կողմից հատուկ մի պատվիրակույթ յուն՝ հայտնելու համար, որ Անատոլուի ապստամբները ցանկանում են հարաբերության մեջ մտնել Խորհրդ. Ռուսաստանի հետ եւ առաջարկում են կա'մ պատվիրակներ ուղարկել Անատոլու, կա'մ ընդունել իրենց առաքելությունը»:

Եվ բանակցությունները Մոսկվայի եւ Էնկյուրիի միջեւ տեղի ունեցան եւ հաստատվեց ավելի սերտ համաձայնություն ու գործակցություն: Այդ համաձայնության հետեւանքներից մեկն էլ եղավ «Իսլամական ջոկատի» կազմակերպությունը Բաքվում, Խալիլ փաշայի ձեռքով:

Հուլիսի 20-ին Մոսկվայից Բաքու վերադարձավ Խալիլ փաշան, հանդիսավոր ընդունելության արժանացավ Խորհրդային իշխանության կողմից եւ անմիջապես ձեռնարկեց «Իսլամական ջոկատի» կազմության: Խորհրդային իշխանությունը հոգաց նրանց ամբողջ ծախսը, գեներալ զինամթերքը, հագուստն ու պարենը: Ռուսաստանի զանազան կողմերից՝ Ղրիմից, Կազանից, Ուֆայից, Թուրքեստանից հավաքվեցին իսլամ կամավորներ ու թուրք զերիներ, որոնք մարզվեցին ու կազմակերպվեցին, եւ այսպիսով, ստեղծվեց հատուկ մի զորամաս, որ հետագային Խալիլ փաշայի հրամանատարության տակ, Ղարաբաղի, Զանգեզուրի եւ Նախիջևանի վրայով, անցավ Թուրքիա:

Թուրք-բոլշևիկյան այս եւ հետագա շրջանի գործակցության մասին շատ նյութեր կան այժմ հրատարակված՝ թե՛ բոլշևիկների, թե՛ թուրքերի եւ թե՛ չեզոք մարդկանց կողմ

մից, բայց ամենեն հետաքրքրականը իթթիհատական գործիչներին խոստովանություններն են, մանավանդ, այն տեղեկությունները, որոնք երեւան եկան Էնկյուրիի նշանավոր դատավարության ընթացքին, 1926թ. ամառը, Անկախության Դատարանի առջեւ:

Բերենք այստեղ մի քանի քաղվածքներ այդ դատավարությունից՝ ավելի ցայտուն կերպով ներկայացնելու համար թուրք-բոլշեւիկյան բարեկամության եւ գործակցության պատկերը:

III

ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐ ԷՆԿՑՈՒՐԻԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Ինչպես ասինք, հենց սկզբից բարեկամությունն եւ գործակցությունն հաստատվեց Թուրքիայից փախած իթթիհատականների եւ քեմալականների միջեւ՝ փոխադարձ հասկացողությամբ եւ աշխատանքի բաժանման սկզբունքով: Քեմալականները պիտի գործեին ներսը, իսկ իթթիհատականները դրսից քաղաքական եւ նյութական օգնություն պիտի հասցնեին:

Այս գործակցությունը, սակայն, հարթ չէր անցնում: Իթթիհատականների մեջ կային մարդիկ, ինչպես էնվեր փաշան, որոնք հաշտ աչքով չէին դիտում Մուստաֆա Քեմալի հաջողությունը: Այս վերջինս էլ մեծ հավատ չուներ իթթիհատական պետերի անկեղծության վրա: Բայց երկու կողմի շահն էլ հարկադրում էր գործել համերաշխ: Մանավանդ քեմալականների համար մեծ արժեք էր ներկայացնում բուլղեւիկների աջակցությունը, իսկ իթթիհատականները ուժեղ կապեր ունեին բուլղեւիկների շրջանում:

Իթթիհատական-քեմալական փոխհարաբերությունների մեջ կարեւոր դեր ունեին եւ բուլղեւիկները, որ էնվերի պես արկածախնդիր մարդկանց միջոցով ձգտում էին խորհրդայնացնել եւ իրենց ազդեցության տակ առնել Թուրքիան: Բուլղեւիկներին որոշ հույս էր ներշնչում եւ քեմալական զինվորականներից ոմանց «համայնավարական» տրամադրությունները: Քյազիմ Կարաբեքիր փաշան, օրինակ, մի

պահ իր գործածանքը վերածել էր «կարմիր բանակի» եւ մեջը մտցրել բուլղարական կարգեր:

Քեմալականները, սակայն, շատ շուտով խելքի եկան եւ վերջ տվին ներքին բուլղարացու թշնամուն: Նրանք նույնիսկ ծովը թափեցին Ռուսաստանից Տրապիզոն եկած թուրք համայնավարների պատվիրակու թշնամուն՝ Մուստաֆա Սուբհիի գլխավորութեամբ եւ այդ վայրագութեանը ոչնչով չանդրադարձավ Էնկյուրիի եւ Մոսկվայի բարեկամական հարաբերութեան ներքին վրա:

Էնկյուրի չէր կարողանում մարտել Մուստաֆա Քեմալի հաջողութեան ներքին եւ չէր ուզում հաշտուիլ այն մտքի հետ, որ թուրքիայի ազատարարը պետք է լինի իր հակառակորդը եւ ոչ թե ինքը: Որոշ տեղ էր գրավում եւ այն հաշիվը, որ քեմալականների պարտութեան դեպքում թուրքիան կարող էր ազատուիլ՝ ընդունելով խորհրդային կարգեր՝ միանալով Խորհրդային Ռուսաստանին:

Այսպես թե այնպես, Էնկյուրի եւ մի քանի իթթիհատական պարագլուխներ, բուլղարիկների դրամով եւ օժանդակութեամբ, Մոսկվայում հիմք դրին «Ժողովրդական Խորհուրդների Կուսակցութեան» եւ կենտրոնացան Բաթումի շրջանում՝ հարմար վայրկյանին թուրքիա ներխուժելու մտադրութեամբ:

Սաքարիայի հաղթանակով այս ծրագիրը ջուրն ընկավ: Բուլղարիկներն էլ հիասթափված՝ կամաց-կամաց սկսեցին ձեռք քաշել իթթիհատականներից, մանավանդ երբ համոզվեցին, որ Էնկյուրի փաշան եւ իր ընկերները այնքան էլ անկեղծ չէին Խորհրդային իշխանութեան հանդեպ: Իթթիհատականների մեջ էլ պառակտում ընկավ եւ ականավոր

առաջնորդների մի մասը՝ Թալեաթ փաշա, Ջեմալ փաշա, Բեահեդդին Շաքիր եւ ուրիշներ, կոտորվեցին հայ հեղափոխականների ձեռքով, իսկ էնվեր փաշայի արկածալից կյանքը վերջ գտավ Թուրքեստանի տափաստաններում:

Հուսահատված արտաքին աշխարհից՝ իթթիհատականները զանազան ճանապարհներով վերադարձան Թուրքիա եւ աշխատեցին ներսից պայթեցնել Մուստաֆա Քեմալի իշխանությունը եւ նորից իրենց ձեռքն առնել Թուրքիայի կառավարության ղեկը:

Ահա այս հանգամանքներում ծագեց իթթիհատական պետերի էնկյուրիի մեծ դատավարությունը, 1926թ. օգոստոս ամսին: Այդ դատավարության մեջ մեզ համար կարեւոր են այն մերկացումները, որ ամբաստանյալներն արեցին Թուրք բոլշեւիկյան գործակցության հետ կապված ղեպքերի մասին: Ահա այդ մերկացումներից մի քանիսը՝ քաղված Պոլսի մամուլի մեջ հրատարակված պաշտոնական արձանագրություններից: Պետք է ավելացնել նաեւ, որ այդ մերկացումների մեծ մասը հաստատվում է եւ պատմական ուրիշ անհերքելի փաստերով ու վավերագրերով:

Դատավարության առաջին եւ գլխավոր ամբաստանյալներից մեկը՝ Քյուչուկ Թալեաթը պատմում է, որ ինքը Թալեաթի խմբի հետ չփախավ Պոլսից, այլ քիչ վերջը հեռացավ Խալիլ փաշայի հետ: Խոսքը տանք իրեն:

«Խալիլ փաշայի հետ փախանք Թավշանջիլար: Գարա Վասրֆ մեզի ըսավ, թե Ազրբեջանի մեջ պիտի աշխատենք: Էնկյուրիի ճամփով Սվազ գացինք: Կազի փաշան կարգադրեց եւ Կովկաս անցանք:

էրզրումի բանակատեղիի մեջ քանի մը օր մնացինք, հետո Նախիջեւան, անկե ալ Ազրպեջան անցանք: Մեր պարտականությունն էր դրամ հավաքել, մինչդեռ մուսաֆաթական կառավարութեան պետը՝ Յուսուֆ բեյը,⁷ արժեք չէր տա Անատոլուի պայքարին: Կուսակցությունները պայքարի մեջ էին իրարու հետ. աշխատեցանք զանոնք հաշտեցնել:

Նուրի փաշա մեզմե առաջ եկած էր եւ Դադստանի մեջ կկռվեր Դենիկինի բանակի դեմ: Կանչեցի Նուրի եւ Խալիլ փաշաները եւ կացությունը բացատրեցի անոնց: Անատոլու մեզմե օգնություն կսպասեր, մինչդեռ մուսաֆաթական կառավարությունը անհաշտ դիրք մը բռնած էր: Կուսակցականները կանչելով՝ բացատրեցի անոնց Անատոլուի կացությունը եւ ըսի, թե Անգլիա կուզէ թումբ մը հաստատել Պարսկաստանի եւ Թուրքիո միջեւ»:

Քյուչուկ Թալեաթի ճիզերը անցնում են ապարդյուն: Այնուհետեւ նա հանձնարարում է Քյազիմ Կարաբեքիր փաշային, որ բոլշեւիկների հետ շփման մեջ մտնի: Այդպես էլ լինում է, եւ բոլշեւիկները խոստանում են օգնել Անատոլուին: Այս ձեւով, ըստ Քյուչուկ Թալեաթի, բարեկամություն է հաստատվում բոլշեւիկների եւ թուրքերի միջեւ:

«Շփում կատարեցինք բոլշեւիկ կուսակցութեան հետ, շարունակում է Քյուչուկ Թալեաթը,՝ հետո Խալիլ փաշայի հետ Ղարաբաղ գացինք. ան Մոսկվա մեկնեցավ, իսկ ես՝ Բաքու: Խալիլ փաշա Մոսկվայի մեջ հաջողեցավ կարգ մը շահեր ապահովել. քիչ մը ոսկի առավ: Բոլշեւիկները ամ-

⁷ Ուսուբեկով, Հայտնի մուսաֆաթական, որ անհետացավ Ազրբեջանի խորհրդայնացումից հետո, փախուստի ճանապարհին:

բողջովին տերն էին կացութեան. Թուրքեստանի մեջ կարգ մը թուրքեր ու թաթարներ բոլշեւիկ կուսակցութեան մը կազմեցին եւ կուզեին Թուրքիա գալ: Մուստաֆա Սուպհի անոնց մեջ էր:

Ինչպէս ըսի, էրզրումի մեջ միջոց մը Կարաբեքիր փաշայի բանակատեղին մնացինք, հետո Կովկաս անցանք: Պիտի աշխատեինք տնտեսական օգնութեան ապահովել Ազրբեջանէն: Սակայն, այդ շրջանին մուսաֆաթականները իշխանութեան գլուխ կզտնվեին եւ որեւէ կարեւորութեան չէին տար Անատոլիի շարժումին եւ զայն արկածախնդրութեան կնկատեին: Ամենէն զարմանալին այն էր, որ Ազրբեջանի երիտասարդութեանն իսկ վստահ չէր, թէ Անատոլիի շարժումը դրական արդեւոյնքի մը պիտի հանգի:

Կացութեանը այսպէս բացատրեցինք: Ազրպայջանի էնկլոլրիի դեսպան Իբրահիմ Ապիլով ըսավ. «Հեղափոխութեանը կհանենք, կառավարութեանը կտապալենք եւ Անատոլուն կօղնենք»: Այն ատեն հետեւյալ տեսակետը պարզեցի՝ բոլոր կուսակցութեաններուն հետ միանալով կառավարութեանը պիտի տապալենք. ասոր համար անհրաժեշտ էր Համայնավարներու գործակցութեանը ապահովիլ:

Այդ շրջանի բոլշեւիկները մինչեւ Դադստան եկած էին: Ազրպեջան պատրաստութեան չունէր: Իսկույն շփման մեջ մտանք Ազրպեջանի բոլշեւիկ կուսակցութեան հետ, որու ղեկավար Միգա Դավուդի⁸ վարչապետութեան խոստացանք: Այսպիսով բարեկամական հարաբերութեաններ հաստատեցինք:

⁸ Միգա Դավուդ Հուսէյնով, հայտնի բոլշեւիկ, որ հետո Ազրբեջանի վարչապետը դարձավ:

Այդ միջոցին հայ հրոսակներու եւ ազրպեջանցիներու միջեւ կռիւներ կմղվեին:⁹ Ես Շեքի գացի: Այդ շրջանին Ազրպեջանի կառավարությունը տապալվեցավ եւ համայնավար վարչաձեւ հաստատվեցավ: Երբ Բաքու գացի, խալիլ փաշա արդեն Մոսկվա մեկնած էր: Ես Բաքու մնացի: Բոլշեւիկները կացության տերն էին:

Ճիշտ այդ միջոցին Հիլմի, Մուստաֆա Սուպհի եւ գերությունեն վերադարձած կարգ մը անձեր թուրքերեն, թուրքմեններեն եւ թաթարներեն բաղկացյալ թուրք Համայնավար կուսակցությունը հիմնած էին: Այդ կուսակցությունը Անատոլու պիտի մտներ եւ հոն փոքր կարմիր բանակին կորիզը պիտի կազմեր:¹⁰ Ազրպեջանի համալսարանի համար Պոլսեն եկած թուրք ուսուցիչները փոքր գրքույկներ հրատարակելով զբաղված էին: Ես զանոնք քաջալերեցի»:

Այնուհետեւ Քյուչուկ Թալեաթը տեղեկություններ է տալիս Արեւելյան Ժողովուրդների Համագումարի մասին, 1920 թ. օգոստոսին:

«Ատեն մը հետո Բաքուի մեջ Արեւելյան Համաժողով մը գումարվեցավ: Բոլշեւիկները իսլամ երկրներե պատվիրակներ կանչած էին: Քյազիմ Կարաբեքիր փաշայի կողմե 20 հոգանոց թուրք պատվիրակություն մը ղրկված էր: Համաժողովի մեջ խնդրո առարկա եղավ ընկերային պայքարը աշխարհակալ պետությունների դեմ: Մինչդեռ միեւնույն ատեն Բեահեդդին Շաքիր, էնվեր փաշա եւ Ազմի պեյ ուրիշ ժողովե մը եկան եւ մասնակցեցան իսլամական

⁹ Խոսքը Ղարաբաղի կռիւների մասին է:

¹⁰ Այս այն խումբն է, որ Տրապիզոն անցավ եւ քեմալական իշխանության կողմից ծովը թափվեց: Բոլորն էլ ոչնչացան:

Համաժողովին: Էնվեր փաշա տեսակցած էր Ռադեկի հետ: Էնվեր եւ Թալեաթ փաշաները զանազան վայրերու մեջ կազմակերպություններ ըրած էին «Իսլամ Հեղափոխական Ընկերություններ» անվան տակ: Այդ ընկերություններու կողմէ եկած էր եւ Էնվեր փաշան: Տրապիզոնի արհեստակցական միություններու կողմէ կնքված շատ մը պարապ թուղթեր բերած էին. ես ալ այդ միություններու կողմէ ներկայացաւ:

Թուրքիո պատվիրակները 20-30 հոգի կլլային: Անոնց մեջ կային Հաֆրզ Մեհմետ, Նայիլ եւ Ազմի: Բուլչեւիկներու տեսակետով որոշումներ տրվեցան:

Իսլամ Հեղափոխական Ընկերություններու նպատակն էր՝ ընդհանուր հեղափոխությամբ շարժման մեջ դնել իսլամ երկրները, զանոնք ազատել եւ օգնել Թուրքիո պայքարին: Էնվեր փաշա կուզեր այդ ձեւով ընդհանուր շարժում կազմակերպել»:

Համագումարի ընթացքին, նախկին իթթիհատականները մասնավոր ժողովներ են գումարում: Բեհաեդդին Շաքիր առաջարկում է վերականգնել Իթթիհատը: «Մրադիր մը ընդունվեցավ,- վկայում է Քյուչուկ Թալեաթը,- որով Իսլամ Հեղափոխական Ընկերություններու Թուրքիո մասնաճյուղը կկազմվեր: Էնվեր փաշա Զինովեւի եւ Ռադեկի հետ Մոսկվա գնաց եւ հետո Բեռլին երթալով՝ լուր պիտի տար Թալեաթ փաշային: Նայիլ բեյ եւ ես Թուրքիա վերադարձանք: Էրզրումեն հեռագրով կազի փաշային հաղորդեցինք Զինովեւի տեսակետը եւ Տրապիզոն գացին»:

Մոսկվայից Տրապիզոն է գալիս նաեւ Խալիլ փաշան ու հետո՝ Իբրահիմ Թալի բեյը, որ «Մոսկվայի մեջ տեղի ունե-

ցած ժողովի մը» մասնակցած էր: Սակայն, էնկյուրիի կառավարութեան հրամանով Խալիլ փաշան հեռանում է Ռուսաստան, իսկ Քյուլչուկ Թալեաթը անցնում է Պոլիս:

Քիչ հետո Պետրի բեյի նախաձեռնութեամբ Մոսկվայից, իթթիհատական պարագլուխները ժողով է գումարվում Բաթումում: «Պետրի բեյ, էնվեր փաշա, Խալիլ փաշա եւ դուք. Նազըմ կուսակցութեան մը կկազմեն», որ կկոչվի «Ժողովրդական Խորհուրդներու կուսակցութեան» եւ որին հարում է Քյուլչուկ Թալեաթը եւ ուրիշ իթթիհատականներ՝ էնվեր փաշայի գլխավորութեամբ: Այդ կուսակցութեան նպատակն էր ուժ տալ թուրք ազգայնական պայքարին եւ եթե Մուստաֆա Քեմալի բանակը պարտվեր՝ բոլշևեիկների օգնութեամբ մտնել թուրքիա եւ ձեռք առնել իշխանութեանը: Արդեն կուսակցութեան անունն էլ հարմարեցված էր բոլշևեիկյան ձեւերին:

Մի հետաքրքիր մանրամասնութեան. «էնվեր փաշա, ասում է Քյուլչուկ Թալեաթը,՝ չեմ գիտեր Պոլսե^ոն, թե^ո Մոսկվայեն շատ մը կնիքներ բերել տված էր իթթիհատի եւ անոր մասնաճյուղերի անունով: Կնիք կար նույնիսկ Դերսիմի համար, որ մասնաճյուղ չէ ունեցած»: Այդ կնիքներով պատրաստվում էին կեղծ վկայականներ եւ կնքվում էին բազմաթիվ թղթեր»:

Քյուլչուկ Թալեաթի այս վկայութեանները հաստատվում են եւ ուրիշ ամբաստանյալների ցուցմունքներով: Դրանք հայտնի փաստեր են այսօր եւ այլ աղբյուրներից:

Նույն փաստերը, ուրիշ մանրամասնութեաններով, հաստատում է իթթիհատի Կենտրոնի հայտնի անդամ Դուկա.

Նազըմը, որ հայկական ջարդերի գլխավոր պատասխանատուներից մեկն է:

«Բեռլինի մեջ գտնվող ռուս պատվական կոմիսար մը, ասում է նա, խոստացավ ամեն օգնութիւն ընել մեզի: Ասոր վրա պայմանագրութիւն մը կնքեցինք. միայն գրգռութիւնն չպտի կատարելնք Ռուսիո իսլամներուն մեջ: Ռուսներն ալ Ազրպէյջանի անկախութիւնը պիտի ճանչնային:

Մեր նպատակն էր Միջագետքի եւ Հնդկաստանի մեջ կազմակերպութիւն առաջ բերել: Ջեմալ փաշան ալ նույն նպատակով Աֆղանստան գնաց:

Որոշեցինք Բեռլինէն սավառնակով Մոսկվա երթալ, սակայն, սավառնակը ճամփան վեց անգամ վար ինկավ: Էնվեր, Ջեմալ, Պետրի եւ Շաքիր Մոսկվա գացին: Ես ալ Թաւրիաթի հետ Բեռլին մնացի՝ քարոզչութեան գործը կազմակերպելու համար:

Մոսկվա երթալէ առաջ, Մուստաֆա Քեմալ փաշայեն թուղթ մը առի, որ կսեր, թե Գործավարներու Խորհրդի որոշումով իրենց հետ կգործակցիմ, թե պետք է արտասահմանի մեջ աշխատիլ եւ Անատոլուի ի նպաստ քարոզութիւն կատարել: Հետո, կհանձնարարեր Եվրոպայի կացութեան մասին տեղեկագրեր ղրկել Էնկյուրի:

Թաւրիաթ փաշայի նահատակութիւնէն վերջ Էնվեր փաշա զիս Մոսկվա կանչեց, սակայն, չգացի: Հետո, Էնվեր փաշա Բեռլին եկավ: Այդ շրջանին ըսվեցավ, թե Էնվեր փաշա կուզեր Անատոլու մտնել, սակայն, Բեհանգըլին Շաքիր եւ Րուսուլի բեյերը ըսած են, թե Էնվեր փաշա առանձին է եւ

հանձնարարած են, որ Անատոլու չերթա: Ասոր վրա էնվեր փաշայի հետ Մոսկվա գացի:

Մոսկվայի մեջ գանազան իսլամ երկրներու պատվիրակություններ կային. ասոնց պահանջները նկատի առնելով՝ Մոսկվայի կառավարութեան դիմելով՝ օգնություն խնդրեցինք եւ զենք ու զեցինք: Միեւնույն ատեն Մոսկվայի դեսպան Ալի Ֆուլատ փաշային դիմելով՝ հայտնեցինք, թե էնկյուրիի թշնամին չենք եւ Մուստաֆա Քեմալ փաշայի հրամանեն դուրս պիտի չելլենք: Էնվեր փաշա նամակ մը գրեց Մուստաֆա Քեմալ փաշային, ես ալ առանձին նամակ մը գրելով՝ հանձնարարեցի, որ հրաժարվի էնկյուրիի մեջ իսլամական համաժողով մը գումարելու գաղափարեն»:

Դոկտ. Նազըմի ցուցմունքները եւ ուրիշ հետաքրքրական փաստեր են պարունակում թուրք-բոլշեւիկյան գործակցութեան մասին, բայց մեր շոշափած հարցի տեսակետից այսքանն էլ բավական է:

Հետաքրքրական են եւ մի ուրիշ իթթիհատական պարագլխի՝ Ազմի բեյի ցուցմունքները: Նա էլ հաստատում է, որ Բեռլին ապաստանած իթթիհատական պարագլուխները կազմում են համախառնական մի կուսակցություն, բայց «Բեռլինի մեջ կարելի չեղավ գործադրել ծրագիրը, եւ հարմար վայրը Ռուսիան գտանք: Բայց Ռուսիա անցնելը գրեթե անկարելի էր, քանի որ հաղորդակցություն չկար Ռուսիո եւ Գերմանիո միջեւ: Ջեմալ փաշա եւ Պետրի բեյ ռուս գերիներու հետ գացին: Էնվեր փաշա կուզեր սավառնակով երթալ. մեկնեցավ, բայց սավառնակը վար ինկավ եւ չկրցավ երթալ: Ես իտալիա գացի եւ կոմս Սֆորցայի հա-

վանուխյամբ ռուս գերիներու հետ խառնվելով՝ Խարկով եւ հետո Մոսկվա անցաւ:

Ռուսիո մեջ տեսակցեցա Անատոլուեն եկած պատվիրակուխյան հետ: Խարկովի մեջ վարչապետ Ռակովսկիեն իմացա, որ Էնվեր փաշա սավառնակով վար ինկած է եւ Էսթոնիո մեջ բանտարկված կմնա: Տասը օր վերջը Էնվեր փաշա Մոսկվա եկավ: Ջեմալ փաշա եւ Պետրի բեյ Աֆղանստան մեկնած էին: Ես ալ վարանուծի մեջ էի: Էնվերի հետ տեսակցեցանք: Ծրագիրը Գերմանիո մեջ պատրաստված ըլլալով՝ Ռուսիո չէր հարմարեր: Փոխեցինք կարգ մը բացատրուխյուններ եւ օրինակի համար «անգլիացիներու» տեղ «աշխարհակալներ» ըսինք:

Այս բարեփոխումները կատարեցինք ես, Էնվեր, Սեյֆի, Իբրահիմ Թալի, Յուսուֆ Քեմալ և ուրիշներ...

Մոսկվա գտնված միջոցին, Էնվեր փաշա ըսավ. «Ռուսները կհայտնեն, թե իրենք Բաքվի մեջ համաժողով մը պիտի գումարեն եւ կուզեն, որ մենք ալ, մասնակցինք: Ասոր վրա բոլորս Բաքու գացինք: Մեզի մեկ-մեկ թուղթ տվին եւ գացինք»:

Նայիմ ձեւատ, Նուրի փաշայի «Իսլամական Բանակին» մասնակցող գործոն իթթահատականներից մեկը ուշագրավ տեղեկուխյուններ է տալիս անմիջապես Հայաստանին վերաբերող դեպքերի մասին:

«1920թ. հունիսին Կարաբեքիր փաշային դիմելով՝ անոր հավանուխյունը ստացա: Երբ Ղարաբաղ հասա, նամակ մը ստացա. այդ նամակը ուղղված էր Ջավիտ բեյին, որ այդ ատեն Բայազետ կգտնվեր: Նամակը կհանձնարարեր չփման մեջ մտնել նահանջող բոլշեւիկական ուժերուն հետ: Այդ

չրջանին Նուրի փաշա բուլղեւիկներուն վրա հարձակում գործած էր, բայց չէր հաջողած: Կացութիւնը Բայազետ հաղորդեցի: Ասոր վրա Կարաբեքիր փաշային հեռագիր մը ստացա, որ կհրամայեր «Նայիմ Զեւատ բեյ ինչ կողք, թող ընէ, բուլղեւիկյան բանակը Նախիջեւան թող բերէ»:

Այս հրամանի վրա թուրքական ուժերը այդ շրջանը համախմբվեցան: Ես ալ արեւելյան ճակատի հրամատարութեան հեռագրեցի. «Զենք եւ ռազմամթերք առնելով՝ առաջացեք»: Հետո շփման մեջ մտա բուլղեւիկյան հրամանատարների հետ:

Կարաբեքիր փաշա Խալիլ փաշայի, Նարիման Նարիմանովի եւ բուլղեւիկյան բանակի հրամանատարութեան ուղղյալ երեք նամակ գրած էր: Այդ նամակներով բուլղեւիկներուն հետ գործակցութեան անհրաժեշտութիւնը կըատագովեր: Խալիլ փաշայի կողմէ կատարված ծառայութիւններուն համար անոր շնորհակալութիւն կհայտներ: Ասկէ զատ, թնդանոթի, զենքի եւ ռազմամթերքի փոխադրութեան ատեն օգտագործելու նպատակով Ազրպեջանի մեջէն ճամփա բանալու անհրաժեշտութիւնը պարզող երեք նամակներ ստացա Կարաբեքիր փաշային: Այս երեք նամակներն ալ իրենց հասցեներուն հանձնեցի:

Ապահովեցի որ օգոստոսին թուրքական եւ բուլղեւիկյան բանակները իրարու միանան: Հետո, իմ ստացած հրահանգներու համաձայն, Խալիլ փաշայի հետ աշխատեցա, որ երկաթուղիով ալ ապահովվի երկու բանակներու միացումը, եւ Հայաստան չկարենա ասոր ընդդիմանալ: Եվ այս նպատակով Մոսկվա գացինք: Էնվեր փաշան արդէն հոն կգտնվեր»:

Նայլիմ Զեւարդի պատմած դեպքերը տեղի ունեցան 1920թ. ամառը, երբ Կարմիր Բանակը Բաքվից հարձակվեցավ Ղարաբաղի վրա եւ Զանգեզուրի վրայով հասնելով Նախիջեւան՝ անմիջական կապ հաստատեց Քյազիմ Կարաբեքիրի զորքերի հետ: Կարմիր բանակի պաշտպանության տակ Բաքվից, Նախիջեւանի ու Մակուի վրայով Թուրքիա անցավ եւ Խալիլ փաշայի կազմած «Իսլամական ջոկատը»՝ հետը տանելով Մոսկվայի կառավարությունից ստացած մեկ ինքնաշարժ ոսկի»:

Վերջապես առաջ բերենք Իթթիհատի պատասխանատու պատվիրակ Նայիլ բեյի հետեւյալ ցուցմունքները Ազրբեջանի խորհրդայնացման մասին՝ թուրքերի աջակցությամբ:

«Նախ Գանձակ գնացի: Մեկ քանի ամիս հետո Նուրի փաշա բանտարկված էր Բաթումի մեջ: Խորհեցա, թե լավ կլլա, երբ հաջողիմ փախցնել զինքը: Մարդ զրկեցի իր փախուստին համար: Փախավ եւ Բաքու եկավ: Ես ալ հոն գացի, տեսակցեցա: Հետո Գանձակ վերադարձա: Քանի մը ամիս հետո ալ Խալիլ փաշան եկած էր: Անոր ալ բարի գալուստի գացի Բաքու եւ տեսակցեցա: Ինչպես հայտնի է, այն ատենները Մուսաֆաթ եւ Իթթիհատ կուսակցությունները կային:

Մուսաֆաթ կուսակցությունը մեր բանակին Ազրբեջանեն քաշվելուն պես 25 հազարանոց բանակ մը կազմած էր: Նույն միջոցին բուլշեւիկ ազմուկը ելած էր: Խալիլ փաշա՝ «աշխատինք» ըսավ: Ես Գանձակ կգտնվեի եւ «հոն պիտի մնամ» ըսի:

Երբ բուլճեւիկները մոտեցան, Բաքու եկա: Խալիլ փաշա իր ընկերներով Ղարաբաղ գացեր էր, հետո վերադարձեր էր: Օր մը «Չանազգալե» զբոսարանը նստեր էի Ջորի կառավարիչ Սալիհ Ջեքի պեյի հետ: Խալիլ փաշա եկավ. «Քու հետդ պիտի տեսակցիմ, ելիր երթանք», ըսավ:

Գացինք: Քյազիմ Կարաբեքիր փաշայեն նամակ առինք բուլճեւիկյան կացութեան վրա: Մուսաֆաթ կառավարութեան առաջարկեցինք, որ հրաժարի իշխանութիւնէն, մերժեց, ըսավ. «Եթե բուլճեւիկները գան, բոլորովին կճրգմեն»: Ըսի. «Խալիլ փաշա Ռեսուլ Ջադեի երթանք» ըսավ: Երեսփոխան ժողովին մեջ կուսակցութեան նախագահն էր: Հայտնեցի, թե հիմ մը պետք է ճշտել տեսակցելու համար: Հաջորդ օրը եկավ, էմին բեյի (Ռեսուլ Ջադե) գացինք: էմին բեյ «մեր վիճակին ձգեցեք մեզի: Հարյուր այնքան տարի է որ անոնց ձեռքն ենք, մենք գիտենք անոնք, կճգմեն մեզ» ըսավ:

Բայց Խալիլ փաշայի պնդումներուն վրա, ընդունեց: Հաջորդ օրը, հացկերույթի մը մեջ, վարչութիւնը Հասան Հաջինսկի բեյի պիտի փոխանցվեր: Այնպես ալ եղավ:

Էնվեր փաշա, Իբրահիմ Թալի եւ Ազըմի բեյերը եկան: Ավելի առաջ եկած էր Բեհհեդդին Շաքիր բեյ, որ ինձ մոտ մնաց: Ասոնք Երրորդ Միջազգայինի համար եկած էին»:

Արեւելյան ժողովուրդներու Համագումարեն հետո, «Նախիջեւանի ճամփով Անատոլու անցա: Հետս կային նաեւ Քյուչուկ Թալեաթ բեյ եւ Տրապիզոնի շրջանակէն եկած պատվիրակներ: 18 հոգի էինք: Բայազետ եկանք, ուր հրամանատար էր Ջավիտ: Տեսակցեցանք իրեն հետ:

Քյազիմ Կարաբեքիր փաշային հեռագրով դիմեցինք, որ պեսզի Խորհրդային կազմակերպություններ առաջ բերե: Սարը Գամիշ եկանք, ու տեսակցեցանք Քյազիմ Կարաբեքիր փաշայի հետ: Տեղեկություններ տվինք բոլշևեիկության հոլթյան մասին: Առարկեց: Երկու-երեք օր հետո դարձյալ տեսակցեցանք եւ ընդունեց մեր գաղափարը: Հետո էնկյուրի երկար տեղեկագիր մը դրկեցինք Բաքվի մեջ տեսածներու մասին: Հետո էրզրում եւ Տրապիզոն անցանք: Հոն իբեւ բոլշևեիկ ուզեցին մեզ չթողուլ. հետո հասկացան եւ թողուցին»:

Քաղվածքների թիվը կարելի է ավելացնել, բայց կարծում ենք, թե այսքանն էլ բավական է: Ի՞նչ են վկայում նրանք: Այն, որ 1918-ից սկսած բոլշևեիկների եւ թուրքերի միջեւ հաստատվում է մտտիկ բարեկամություն ու գործակցություն, որ բոլշևեիկները հովանավորել, ամեն կերպ քաջալերել եւ աջակցել են իթթիհատական ջարդարարներին, որ թուրք-բոլշևեիկ գործակցությունը առաձնապես շոշափելի կերպով տեղի է ունեցել Կովկասում, որ թուրքերի գործոն օգնությամբ խորհրդայնացավ Ազրբեջանը, որ թուրք-բոլշևեիկյան գործակցությունը ուղղված է եղել եւ Հայաստանի դեմ, եւ որ բոլշևեիկների եւ թուրքերի միահամուռ ջանքերով, 1920 թվի ամառը, Հայաստանից խլվեցան Ղարաբաղը, Ջանգեզուրը եւ Նախիջեւանը:

Այսքանով այս գլուխը կարելի էր փակել, բայց պատկերը ավելի կատարյալ դարձնելու համար առաջ բերենք եւ հետեւյալ վկայությունները.

1920թ. ապրիլ 15-ին, էրզրումում, Ազրբեջանի խորհրդրդայնացումից երկու շաբաթ առաջ, Ազրբեջանի գինվորա-

կան նախարարի օգնական զոր. Ալի աղա Շիրվազյանի եւ թուրքական 15-րդ բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան կնքեցին մի համաձայնություն, որ պիտի փոխարիներ 1919թ. նոյեմբերի 29-ին Պոլսում կնքված թուրք-ազրբեջանյան գաղտնի դաշնագիրը: Ինչպես եւ այս վերջինը, էրզրումի համաձայնությունն էլ, ի նկատի ունենալով բոլշևիկների բարեկամությունը եւ իր մի մասով ուղղված էր Հայաստանի դեմ:

Համաձայնագրի 5-րդ հոդվածն ասում էր. «Ազրբեջանի կառավարութայունը խոստանում է շարունակել նպաստել Խորհրդային Ռուսաստանին եւ «Անատոլուի ու Ռումելիայի Իրավունքների Պաշտպանութայան Կոմիտեի» միջեւ իրականացնելու մերձեցում: Անհրաժեշտ եղած պարագային ինքն էլ պիտի հարի այդ միութայան»: Իսկ 7-րդ հոդվածը ուղղված է անմիջապես Հայաստանի դեմ. «Անատոլուի եւ Ռումելիայի Իրավունքների Պաշտպանութայան Կոմիտեն վճռական կերպով խոստանում է, որ այն պարագային, երբ Հայաստանը հարձակում գործե Ազրբեջանի վրա, եւ Ազրբեջանի կառավարութայունը վճռական կերպով խոստանում է, որ այն պարագային, երբ Թուրքիայի արեւելայան շրջանները կտրվին եւ կմիացվին Հայաստանին, այս երկու դեպքում էլ համաձայնութայան եկած երկու կողմերը պաշտպանելու են միմյանց շահերը եւ գործելու են, որպես միացած բանակ»:

Ահա այս համաձայնութայան առթիվ էր, որ Քյազիմ Կարաբեքիրը գրում էր իր մի նամակում, թե «Մեր Ազրբեջանի եւ բոլշևիկների միջեւ կնքված պայմանների հիման վրա, մեր սպանների, բժիշկների եւ պաշտոնյաների

մեծ թիվ գնացել է Ազրբեջան: Բուլղերիկները մեզ առաջարկեցին անհապաղ պատերազմական գործողություններ սկսել հայկական սահմանների վրա՝ հայերի դեմ, Կիլիկիայի սահմաններում՝ Ֆրանսիացիների դեմ: Դադստանում կազմված կանաչ բանակը՝ Էնվերի, Նուրիի եւ Խալիլի ղեկավարութայամբ պետք է ապրիլի սկզբներին աշխատեմտնել Բաքու: Ազրբեջանի գորքերը պետք է ցույց տան կեղծ դիմադրություն, որպեսզի կարողանան իրենց արդարացնել Դաշնակիցների հանդեպ: Միանալով կանաչ բանակին՝ ազրբեջանյան գորքերը պետք է առիթ որոնեն ընդհարվելու Հայաստանի հետ եւ Անատոլիայում գտնվող թուրք գորքերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմաններն ու սկսեն զինվորական գործողություններ Հայոց Հանրապետութայան դեմ»:

Մոտավորապես նույն ժամանակները Մուստաֆա Քեմալ հետեւյալ հայտարարությունը արավ Ազգ. Մեծ Ժողովի ամբիոնից.

«Բուլղերիկները՝ իրենց ծրագիրները իրականացնելու համար թուրք ժողովրդի մեծ օգտակարությունը գնահատելով՝ մեր աջակցութայան դիմեցին: Նրանց առաջին ձեռնարկը եղավ 10-րդ եւ 11-րդ զորաբանակները կովկասյան ճակատ ղրկել: Այս բանակները դյուրութայամբ հաջողեցին անցնել Հյուսիսային Կովկաս եւ մտան Ազրբեջան՝ շնորհիվ մեր ընծայած դյուրությունների եւ առաջնորդութայան: Ազրբեջանցիները մեծ հաճույքով դիմավորեցին այդ զորամասերին: Այս բանակները մեկ կողմից Հայաստանի, մյուս կողմից էլ Վրաստանի դեմ հարկ եղած զինվորական միջոցներ ձեռնարկեցին»:

IV

ՀԱՅ ԲՈՒՇԵՒԻԿՆԵՐԸ

Այսպես, ուրեմն 1919-20 թվականներին, բուլղեւիկները եւ Թուրքահայաստանը բնաջնջող թուրք ջարդարարները միացած՝ դավեր էին լարում հայ ժողովրդի եւ Հայաստանի դեմ: Ի՞նչ էին անում այդ ժամանակ հայ բուլղեւիկները, ի՞նչ գործի վրա էին նրանք:

Փաստորեն մինչեւ 1919 թվականը Հայաստանում բուլղեւիկ կազմակերպություն գոյություն չունէր: Կային միայն մատի վրա համրվող անհատներ: Մի քանի ուսուցիչներ էջմիածնի ձեմարանում եւ Երեւանում (ինչպես Պողոս Մակինցյանը, Աշոտ Հովհաննիսյանը եւ Արշավիր Մելիքյանը), մի քանի աշակերտներ, թերեւս, մեկ-երկու հոգի էլ ուրիշ տեղ: Կազմակերպված բուլղեւիկություն չկար:

Համեմատաբար ավելի էր հայ բուլղեւիկների թիվը Թիֆլիսում եւ Բաքվում, բայց նրանց տեսակարար կշիռն էլ ազգային կյանքում խիստ աննշան էր: Շատ չէին հայ բուլղեւիկները եւ Ռուսաստանում, գլխավորապես մտավորականներ, աշխատում էին ռուսական կազմակերպությունների մեջ եւ հայ կյանքի վրա ազդեցություն չունէին:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, ազգությունների կոմիսարիատին կից, ստեղծվեց հայկական բաժին, որի գլուխը կանգնեց այն ժամանակ բավական անուն ունեցող, բայց իրապես անաժեք մի հայ բուլղեւիկ՝ Ավանեսովը: Այդ բաժնին էր վերապահված հայ ազգային գործերի վերատեսչությունը եւ գաղթականների հոգատարությունը: Ավանե-

սովի օգնականն էր բանաստեղծ Վահան Տերյանը: Նույն տեղ աշխատանքի մտան եւ Աչ. Հովհաննիսյանը, Պ. Մակինցյանը եւ ուրիշներ:

Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ժամանակ, հայ բուլշեւիկներից ոմանք, մասնավորապես բանաստեղծ Վահան Տերյանը, որոշ ջանք թափեցին պաշտպանելու համար թուրքահայաստանի դատը, բայց ինչպես արդեն տեսանք, հաջողություն չունեցան: Վ. Տերյանը նույնիսկ Բրեստ-Լիտովսկի հաշտարար պատվիրակության անդամ էր:

Ամեն տեղ էլ հայ բուլշեւիկները գործում էին իբրեւ ռուսական կուսակցության անդամներ եւ ազգային գետնի վրա կազմակերպվելու կամ ուրույն ազգային խնդիրներ դնելու փորձեր չէին անում: Հետաքրքրական է, որ հայկական բուլշեւիկյան կազմակերպություն ստեղծելու առաջին փորձի պատիվը պատկանում է թուրքահայերին: Բուլշեւիկ Բորյանը իր արդեն հիշատակված գրքի մեջ (Բ հատոր, էջ 24-26), պատմում է, որ 1917 թվականի ամառը «մի խումբ թուրքահայ մտավորականներ կազմակերպեցին Թիֆլիսում եւ մի ներկայացուցիչ ուղարկեցին Պետրոգրադ: Սա դրամ ստացավ կազմակերպական գործերի համար եւ վերադառնալով Թիֆլիս՝ ուրիշ ընկերների հետ միասին կազմակերպեց Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը, որ սկսեց հրատարակել թերթ: Այս Կուսակցությունը մեծ հաջողություն ունեցավ թուրքահայերի մեջ, որովհետեւ նպատակ էր դրել թուրքահայաստանի ազատագրումը: Ազգային հանրապետությունների կազմությունից հետո, վրա հասավ հալածանքի շրջանը կոմունիստների դեմ: Նրանք

վերջ տվին իրենց Թիֆլիսի գործունեությունն եւ տեղափոխվեցան Հյուս. Կովկաս, ապա Մոսկվա»:

Բորյանի պատմածի մեջ ճիշտ է միայն այն, որ այդ անունով կուսակցություն կազմվել է եւ Պետրոգրադից դրամ ստացվել ու թերթ է հրատարակվել, բայց «մեծ հաջողությունը» հեքիաթ է: Իրապես, նախկին Հնչակյան բախտախնդիրների մի խմբակ էր – Գուրգեն Հայկունի, Գրիգոր Վարդանյան եւ ուրիշներ, որոնք ճարակություն էին ունեցել գոյություն չունեցող «Հայաստանի կոմունիստական կուսակցության» անունով տեղեկագիրներ կայացնելու Համառուս. կոմունիստական կուսակցության կենտրոնին եւ բավական խոշոր գումար, ասում էին 30 միլիոն ռուբլի շորթել: Իրենց տեղեկագրի մեջ այդ պարոնները ցույց էին տվել «Հայաստ. կոմ. կուսակցության» բազմաթիվ մասնաճյուղեր, նույնիսկ... Բասենում, Ալաշկերտում, Խնուսում, Մուշում եւ այլն: Ստացած դրամով «Հայաստանի կոմունիստները» մի քանի թիվ թերթ հրատարակեցին Թիֆլիսում եւ մնացածը ծախսեցին թղթ-թախաղի ու քեֆերի վրա: Եվ զարմանալի չէ, որ նույն Բորյանի վկայությամբ, երբ տեղի վրա քննություն է կատարվել, պարզվել է, որ «Հայաստանի կոմունիստական կուսակցություն գոյություն ունի միայն մեր՝ մտավորականներին գլուխներում. այդպիսի կուսակցություն չկա Հայաստանում եւ չի կարող լինել. գյուղացիներն ու բանվորները լսել իսկ չեն ուզում այդպիսի կուսակցության մասին»:

Եվ ճիշտը այս էր: Հայաստանում բուլճեւիկներ չկային:

Բոլշեւիկները Հայաստանում սկսեցին երեւալ միայն 1918 թ. վերջերը, երբ Վրաստանում եւ Ազրբեջանում Կոմունիստական Կոուսակցությունը ենթարկվեց խիստ հալածանքի: Իրենց կյանքը ազատելու մտահոգությամբ, հայ բոլշեւիկները ապաստան էին փնտրում Հայաստանում: Հայաստանի կառավարությունը ընդունեց նրանց, տվեց ազատ ապրելու եւ աշխատելու հնարավորություն՝ պայման դնելով միայն, որ Հայաստանում քաղաքական գործունեություն չունենան: Հետզհետե Հայաստան եկան Թիֆլիսից եւ այլ վարերից փախած Ս. Կասյանը, Ա. Մուսվյանը, Ս. Խանոյանը, Դ. Շահվերդյանը, Մ. Սահակյանը, Ա. Երզնկյանը, Ավիս Նուրջանյանը, կեսբոլշեւիկ Արշ. Զոհրաբյանը եւ ուրիշներ, որոնց մեծ մասը պաշտոններ ստացավ պետական կամ քաղաքային հիմնարկությունների մեջ: Բոլորն էլ, իհարկե, «պատվո խոսք» տվին քաղաքականությամբ չզբաղվել: Բայց հարգեցի՞ն իրենց խոստումը:

Ա. Մուսվյանը պատմում է, որ արդեն 1919-ին, բոլշեւիկները Հայաստանում գաղտնի կազմակերպություն ունեին եւ ստորերկրյա աշխատանքներ էին կատարում: «Ղ. Ղուկասյանի եւ նրա մոտիկ ընկերներ Արմ. Բուդաղյանի եւ Աղասի Խանջյանի միջոցով,- գրում է Մուսվյանը,- մենք Երեւանում կատարում էինք գաղտնի մեր բոլոր գործերը: Թուուցիկներ տպել եւ կպցնել պատերին, գրականություն փոխադրել, ժողովատեղի գտնել, նամակ տանել Թիֆլիս՝ Երկրային Կոմիտեին եւ այլն. այս բոլորը նրանք կատարում էին արագ՝ գաղտնապահության բոլոր օրենքներով»:

Ղ. Ղուկասյանը «1919 թ. օգոստոսի վերջերին հատուկ հանձնարարությամբ անցնում է Դիլիջան, Ղարաքիլիսա,

Ալեքսանդրապոլ, տեղական կազմակերպություններին հայտնելու Երեւանում գումարվելիք կուսակցական խորհրդակցութեան, նրա օրակարգի եւ կազմակերպման հետ կապված հարցերի մասին:¹¹

Նույն 1919 թ. ամառը բոլշեւիկներին «Սպարտակ» խումբը թուուցիկներ ցրեց Երեւանում, որոնց մեջ բուռն հարձակումներ էր գործում կառավարութեան վրա եւ կոչ էր ուղղում գործերին, որ չկուվեն Բոյուք-Վեդիում ապստամբած թուրքերի դեմ:

Առանձնապես գործոն աշխատանքներ էին կատարում բոլշեւիկները Ալեքսանդրապոլում, Լոռիի չեզոք շրջանում եւ Հայաստանի օտար ցեղերի մեջ՝ թուրքերի, ռուսների եւ այլն:

Ալեքսանդրապոլը երկաթուղային հանգույց-կենտրոն էր, ուր գտնվում էր նորոգութեան գլխավոր արհեստանոցը՝ հարյուրավոր գործավորներով: Այս վերջիններես մեջ կային Բաքվից եկած բավական թվով բանվորներ՝ ծայրահեղ արմատական տրամադրություններով, կամ բոլշեւիկյան հակումներով եւ, բնականաբար, պարարտ հող էին ներկայացնում բոլշեւիկյան քարոզչութեան ու դավադրական գործողությունների համար: Գործավորների, եւ ընդհանրապես, երկաթուղային աշխատավորների մեջ, քիչ էին նաեւ ռուսներ, որոնք, առհասարակ, հակառակ վերաբերում ունեին դեպի անջատված ազգերի անկախությունը եւ անհամբեր սպասում էին, թե ե՞րբ պիտի վերադառնա Ռուսաստանը: Հայ բոլշեւիկներին համար նպաստավոր հող կար

¹¹ «Սորհրդ. Հայաստան», 14 մայիս, 1927 թ.:

Ալեքսանդրապոլում, եւ զարմանալի չէ, որ նրանք հենց սկզբից մեծ ուշադրութիւն դարձրին այս քաղաքի վրա:

1919-ին արդեն Ալեքսանդրապոլի երկաթուղային բանվորների մեջ կային գաղտնի բջիջներ, որոնք կոմունիստական քարոզչութիւնն էին անում, թուուցիկներ հրատարակում, հակապետական գործունեութիւնն ցույց տալիս, գործադուլներ կազմակերպում, սաբոտաժ անում եւ աշխատում էին ամեն միջոցով գրգռել գործավորների դժգոհութիւնը եւ դժվարութիւններ հանել կառավարութեան դեմ: Այդ աշխատանքի համար նրանք խոշոր գումարներ էին ստանում Ռուսաստանից:

Լոռիի չեզոք շրջանը ավելի մեծ հարմարութիւններ էր ներկայացնում բոլշեւիկյան գործունեութեան համար: Այս շրջանը վիճելի էր Վրաստանի եւ Հայաստանի միջեւ, անգլիացիների ճնշումով հայտարարված էր չեզոք, մինչեւ հաշտութեան վերջնական կնքումը, եւ կառավարվում էր խառն վարչութեան միջոցով: Եւ ու մուտքը ազատ էր եւ տեղական հայ բնակչութիւնը՝ դեպի վրացիները տածած թշնամութիւնից դրդված, բարյացկամ վերաբերում էր ցույց տալիս վրաց մենչեւիկների դեմ կռվող բոլշեւիկների հանդէպ: Բոլշեւիկների համար Լոռին, մի տեսակ, հենակետ էր, որտեղից նրանք կապ էին պահում Հայաստանի, Վրաստանի ու մյուս երկրների միջեւ եւ գաղտնի ճանապարհով մարդ, դրամ եւ հակապետական գրականութիւնն ներմուծում Հայաստան:

Հայաստանի օտար ցեղերն էլ, հատկապես թուրքերն ու ռուսները, բնական դաշնակիցներ էին հայ բոլշեւիկների: Այս երկու ցեղերն էլ թշնամական դիրքի մեջ էին դեպի

Հայաստանի անկախությունը եւ չէին ուզում հաշտվել հայկական ազգային իշխանության հետ: Թուրքերի աչքերը Թուրքիայի եւ Ազրբեջանի վրա էին, որոնց հետ կենդանի կապ էին պահում եւ որոնց ձեռքին կույր գործիք էին Հայաստանի Հանրապետության դեմ լարվող դավերի մեջ: Ռուսները անհամբեր սպասում էին Ռուսաստանի վերադարձին եւ ռուսական իշխանության վերահաստատմանը: Հայ բոլշեւիկները նույնպես Ռուսաստանի վերադարձն էին երազում եւ, հետեւաբար, ռուսական գործ էին կատարում: Մյուս կողմից, Ռուսաստանն ու Թուրքիան բարեկամներ եւ դաշնակիցներ էին: Այս գետնի վրա, Հայաստանի թուրքերի, ռուսների եւ հայ բոլշեւիկների համագործակցությունը տրամաբանական էր եւ հասկանալի: Եւ եթե ավելացնենք նրանց երեքի էլ կատաղի հակառակությունը Հ.Յ. Դաշնակցության և Հայաստանի կառավարության, պատկերը կլինի ավելի կատարյալ:

Հայաստանի կառավարությունը, հարկավ, անտեղյակ չէր բոլշեւիկների կատարած աշխատանքներին, բայց ներքին եւ արտաքին զանազան պատճառներով, խիստ միջոցների չէր դիմում: Այդ պատճառներից մեկն էլ այն էր, որ բոլշեւիկների մեջ համաձայնություն չկար քաղաքական անելիքների մասին: Մինչ երիտասարդական խավերը ձգտում էին գործոն պայքարի եւ հեղափոխական անմիջական ձեռնարկների, ղեկավար շրջանակները, մանավանդ 1919-ին կազմված Հայաստանի կոմիտեն՝ Արմենկոմը, ընդհանուր առմամբ, հակառակ էր ծայրահեղ քայլերի եւ ուզում էր, մինչեւ ռուս կարմիր բանակի մոտենալը, սահ-

մանափակվել միայն կազմակերպական նախապատրաստական աշխատանքներով եւ քարոզչութեամբ:

«Արմենկոմը,՝գրում է հայտնի բոլշեւիկ Շ. Ամիրխանյանը,՝իր աշխատանքը դիտում էր որպէս խաղաղ ագիտացիա եւ հանգիստ քարոզչութիւն եւ երբեք ապստամբութիւն եւ իշխանութիւնը գրավելու խնդիր չի դրել»:¹²

Նույն իմաստով արտահայտվում է եւ Ս. Կասյանը, որ պնդում է, թե 1919-ին եւ 1920-ին, մինչեւ Ազրբեջանի խորհրդարանացումը, հայ բոլշեւիկները Հայաստանի իշխանութիւնը գրավելու գործնական նպատակ չեն ունեցել:

Ավելի ճիշտ, հայ կոմունիստների մտքում այդ ժամանակները, տիրում էր շփոթ եւ անորոշութիւն: Կասյանի պէս մարդիկ հասկանում էին, որ ապստամբական ամեն փորձ ոչ միայն անողոք կերպով պիտի ճնշվի, այլեւ աղետավոր պիտի լինի երկրի համար: Բայց տաքարյուն երիտասարդութիւնը եւ Ավիսի պէս արծախնդիրները չէին ուզում հանգիստ նստել եւ աշխատում էին Հայաստանում էլ «պլորետարական հեղափոխութիւն» խաղալ:

Կառավարութիւնը տեղյակ էր այս բոլորին եւ զգուշանում էր բանտարկութիւններով եւ բռնի միջոցներով ուժեղացնել ծայրահեղների դիրքը: Միայն 1919-ի ամառը, Բեոյուք-Վեդիի կռիվների ժամանակ, հակապետական թռուցիկներ ցրելու համար ձերբակալվեցին «Սպարտակ» խմբի պարագլուխները: Այնուհետեւ, երբ այլեւս ակնհայտնի դարձավ, որ Արմենկոմի սկզբնական խոհեմ քաղաքականութիւնը անզոր է զսպելու ծայրահեղների դավադրութիւնները, կառավարութիւնը դիմեց խիստ միջոց-

¹² Շ. Ամիրխանյան, «Մայիսյան ապստամբութիւնը եւ Հայաստան(1920)»:

ների եւ 1920 թ. հունվարի 31-ին ձեռքազրկություններ արավ Երեւանում եւ Դիլիջանում:

Այդ առթիվ Սոց-հեղափոխականները, որոնց անդամները մի մասը համակրում եւ գաղտնի գործակցում էր բոլշեւիկներին, հարցապնդում մտցրին խորհրդարանում, որ բուռն վիճաբանությունների նյութ ծառայեց:

Ներքին գործոց նախարարը տվեց, ի միջի այլոց, հետեւյալ տեղեկությունները. «Հայաստանում կան բավականին թվով բոլշեւիկներ, որոնք, իրենց ասելով, եկել են այստեղ միայն ապաստան գտնելու եւ ոչ մի գործունեություն պիտի չունենան: Սակայն, դեռ հուլիս ամսին, Բեոյուք-Վեդիի կռիվների ժամանակ, նրանք տպեցին թռուցիկ, որով կոչ էին անում գործին չգնալ կռվի: Այնուհետեւ տեղի ունեցան մի քանի դեպքեր Սարըղամիշ-Ալեքսանդրապոլ երկաթուղագծի վրա եւն.: Հայաստանի անկախության տոնի օրը պատերի վրա փակցրին թռուցիկներ, որոնք ուղղված էին մեր պետական կազմի դեմ:

Վերջին տեղեկությունները ցույց են տալիս, որ օրեցօր Հայաստան են գալիս նոր մեծամասնականներ, որոնք իրենց հետ բերում են խոշոր գումարներ՝ ագիտացիայի համար: Մյուս կողմից, անհերքելի փաստ է, որ ռուս մեծամասնականները, դաշն են կապել երիտասարդ թուրքերի հետ: Այդ համաձայնությամբ տաճկական գործերը պիտի անցնեն Հայաստանի վրայով Դենիկինի թիկունքին խփելու համար: Ի՞նչ դրության մեջ կընկնի Հայաստանը այդ պարագային»:

Հայաստանի զանազան մասերում կատարված խուզարկություններն ու ձեռքազրկությունները երեւան բերին

ահագին նյութ եւ ամբողջութեամբ հաստատեցին կառավարութեան ունեցած տեղեկութիւնները հայ բուլշեւիկներին ունեցած հակապետական գործունեութեան մասին: Պարզվեց, որ բուլշեւիկները եռուն աշխատանքի մեջ են եւ գաղտնի կերպով պատրաստում են բռնի հեղաշրջում առաջ բերելու Հայաստանում:

Հետագային բուլշեւիկներն իրենք էլ հաստատեցին այս փաստը: Այսպես, Ս. Կասյանը վկայում է, որ «բուլշեւիկներին ակտիվ եւ խտացած գործունեութիւնը Հայաստանի տերիտորիայում իրապես սկսել է 1919թ. ամառվանից: Ճիշտ է, առաջ էլ եղել են այդտեղ խմբակներ, բայց որովհետեւ մեր կուսակցութեան Երկրային կոմիտեն կտրված է եղել Հայաստանից, նա չի կարողացել ո՛չ կազմակերպչական գործ կատարել այդ խմբակների հետ, ո՛չ էլ ուղղութիւն տալ նրանց գործունեութեանը: Անգլիացիների գալուց հետո, երբ Դաշնակները ավելի երես էին առել եւ իշխանութիւնն ամբողջապես կենտրոնացրել էին իրենց ձեռքը, այդ խմբակների գործունեութիւնը լիկվիդացիայի է ենթարկվում համարյա ամբողջապես: Նույն տարվա սեպտեմբերին, նախապատրաստական աշխատանքներից հետո, Երկրային Կոմիտեի ներկայացուցիչները կազմակերպում են Երեւանում գավառներից հրավիրված պատասխանատու ընկերների գաղտնի խորհրդակցութուն, ուր մշակվում է այդ երկրում մեր հիմնական տակտիկան եւ ստեղծվում կենտրոնական մարմին՝ Հայաստանի Կոմիտե»:¹³

Այս խորհրդակցութեան մեջ նշանաբան է ընդունվում նաեւ «Խորհրդային Հանրապետութեան հաստատումը Հայաստանում»:

¹³ «Նոր աշխարհ» ամսագիր, 1922 թ., սեպտ., թիվ 2:

«1920թ. հունվարի երկրորդ կեսին Երեւանում տեղի ունեցած կուսակցական անլեզալ կոնֆերենցիան, շարունակում է Կասպանը, հիմնվելով կուսակցության քառամսյա փորձառության վրա, ամբողջությամբ ընդունեց եւ հաստատեց այդ վարքագիծը...

Ալեքսանդրապոլի կազմակերպությունը, որ գլխավորապես բաղկացած էր համարյա Բաքվից ու Թիֆլիսից եկած երկաթուղային բանվորներից, իր ներկայացուցիչների բերանով հարց էր հարուցել իշխանությունը վերցնելու մասին, բայց կոնֆերենցիան կտրականապես մերժեց այդ», որովհետեւ «իշխանությունը ձեռքում պահելը անկարելի պիտի լինի այն հասարակ պատճառով, որ 1) կուսակցությունը բաղկացած լինելով ոչ ավելի քան 500 անդամից, չափազանց աղքատ լինելով փորձված ու պատրաստ ուժերով, պիտի չկարողանա ոչ միայն դիմադրել այն ժամանակվա քաղաքական եւ հոգեբանական սիտուացիայում անխուսափելիորեն առաջ գալիք քաղաքացիական կռվին, այլեւ իշխանություն կազմակերպել կենտրոնում եւ տեղերում. 2) որ նա հնարավորություն պիտի չունենա կազակերպելու այնպիսի բանակ, որը կարողանա առանց «դրսի» օգնության դիմադրել արտաքին թշնամիներին՝ մենչեւիկյան Վրաստանի, մուսաֆաթական Ազրբեջանի եւ քեմալական Տաճկաստանի ամենաթեթեւ անչավանքին անգամ. 3) որ ծայր աստիճան քայքայված եւ սովի ճիրաններում դալարվող երկրի ցուրտն ու քաղցը մի կողմից, իսկ տնտեսական անխուսափելի բլոկադան մյուս կողմից՝ հենց սաղմի մեջ պիտի խեղդեն խորհրդային իշխանությունը»:

Ուրիշ խոսքով, 1920թ. սկզբները, «սիտուացիան» այնպիսին էր Հայաստանում, որ Խորհրդային իշխանության մասին մտածելը անմտություն էր. ո՛չ արտաքին պայմաններն էին նպաստավոր, ո՛չ էլ ներքին ուժերի դասավորությունը: Հայաստանի ժողովուրդը, իշխանությունը եւ բանակը հակառակ էին բոլշեւիկությանը, իսկ հայ բոլշեւիկներն իրենք արհամարհելի քանակ էին ներկայացնում եւ անարժեք որակ, ընդամենը 500 անդամ, այն էլ չափազանց աղքատ՝ փորձված եւ պատրաստ ուժերով»: Եվ բնական է, որ կացության ըմբռնումը ունեցող իրատես մարդիկ չպիտի կամենային նետվել արկածախնդրության գիրկը:

Սակայն, իրատեսությունը շատ հեռու էր հայ բոլշեւիկներից, եւ Արմենկոմը միայն կասյաններից չէր բաղկացած: Ընդհակառակը, Կասյանի ասած «կոնֆերենցիայում» տիրող է եղել «Ալեքսանդրապոլի ներկայացուցիչների» տրամադրությունը եւ անցել է նրանց կողմից Ավիսի առաջարկած մարտական բանաձեւը, որով պահանջվում էր անմիջապես «վերցնել իշխանությունը» Հայաստանում: Խորհուրդների պաշտոնաթերթ «Իզվեստիայի» 1922 թ. հունիսի 25-ի համարում այդ բանաձեւը հրատարակված է որպես «կոնֆերենցիայի» կողմից ընդունված եւ պարտադիր որոշում: Հետեւաբար Կասյանի պնդումը, թե «իշխանությունը վերցնելու» առաջարկը «կոնֆերենցիան կտրականապես մերժեց», ճիշտ չէ: Ճիշտը՝ հակառակն է. Խորհրդաժողովը որոշել է ապստամբության միջոցով տիրանալ Հայաստանի իշխանությանը:

Այդ երեւում է եւ Հայ Կոմ. Կուսակցության հայտնի քարտուղար Աչ. Հովհաննիսյանի հետեւյալ տողերից.

«Մովեստիզացիայի խնդիրը պարտավորիչ էր ամենից առաջ Կոմունիստական Կուսակցության Հայաստանի Կոմիտեի՝ Արմենկոմի համար: Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունների գաղտնի կոնֆերանսը, որ տեղի ունեցավ Երեւանում, 1920թ. հունվարին, ընդունել էր թեզիսներ այն իմաստով, որ Կարմիր բանակի մերձեցման եւ հարեւան հանրապետությունների հեղաշրջում լինելու դեպքում պետք է առաջադրել Հայաստանի սովեստիզացիայի խնդիրը: Վերահաս դեպքերը հարկադրում էին նախապատրաստական քայլեր առնել այդ ուղղությամբ: Հայաստանի Կոմիտեն ենթադրում էր, որ Ղազախն ու Ղարաբաղը, որպես սահմանակից շրջաններ, հեղաշրջման հենակետեր պետք է դառնային Հայաստանի համար: Մինչ այդ, պետք էր խուսափել վճռական գործողություններից, բավականա՛նալ միայն կազմակերպչական աշխատանքով:¹⁴

Պարզ է, ուրեմն, որ հունվարի խորհրդաժողովում, բոլշևեիկները դրական մտքով են լուծել Հաստատանի խորհրդայնացման հարցը: Վեճը միայն երկու կետերի շուրջ էր: Առաջին՝ անմիջապե՞ս դիմել ապստամբության, ինչպես պահանջում էին արեքսանդրապոլցիները Ավիսի բերանով, թե՞ սպասել արտաքին նպաստավոր պայմանների: Որոշվել է սպասել, մինչեւ Վրաստանի եւ Ազրբեջանի խորհրդայնացումը եւ այնուհետեւ ապստամբության դրոշ բարձրացնել Հայաստանում:

Երկրորդ՝ որտեղի՞ց սկսել ապստամբությունը: Ալեքսանդրապոլցիները պնդում էին, որ իրենց շրջանից պիտի սկսել: Ուրիշներ առաջարկում էին Ղազախից եւ Ղարա-

¹⁴ «Խորհրդային Հայաստան», 1925 թ., մայիս 1:

բաղից, որոնք սահմանակից են Ազրբեջանին եւ, հետեւաբար, հեշտ կլիմերը ռուսական բանակից օգնութիւնն ստանալը: Այս տարակարծութիւնը, հետագային, բավական ծանր անդրադարձում ունեցավ մայիսյան ապստամբութեան դեպքերի վրա եւ պատճառ դարձավ, մասամբ, Ալեքսանդրապոլի բոլշեւիկների թուլութեան:

Այսպես թե այնպես, 1919թ. վերջերը եւ 1920թ. սկզբին, հայ բոլշեւիկները որոշ կերպով կանգնել էին Հայաստանը խորհրդայնացնելու տեսակետի վրա: Նրանք կապված էին ռուսների հետ Երկրային Կոմիտեի միջոցով, որ Թիֆլիսից դրամ, գրականութիւն, հրահանգներ եւ գործիչներ էր ուղարկում Հայաստան: Նրանք անհամբեր սպասում էին ռուս բանակի մոտենալուն, որպէսզի բարձրացնեն ապստամբութեան դրոշը ընդդէմ «Դաշնակ» Հայաստանի կառավարութեան: Կուսակցական կիրքն ու թշնամանքը այնքան կուրացրել էին նրանց, որ «դաշնակների» ետեւից չէին տեսնում Հայաստանն ու հայ ժողովրդին: Հայաստանը նրանց համար համաշխարհային հեղափոխութեան եւ կուսակցական հաշիվների առարկա էր:

Այժմ արդեն պատմական դեպքերով եւ վավերագրերով հաստատված փաստ է, որ Հայաստանի Հանրապետութեան հենց առաջին օրերից սկսած հայ բոլշեւիկները թշնամական դիրքի մեջ էին ոչ միայն դեպի Հայաստանի վարիչ տարրերը, այլեւ դեպի պետութիւնը: Երկրի ներսը հակապետական քարոզչութիւն էին անում, միջցեղային կրքեր էին հրահրում, դժվարացնում էին շինարարական աշխատանքը սաբոտաժի եւ այլ միջոցներով եւ, առհասարակ, օգտագործում էին ամեն առիթ՝ թուլացնելու համար

պետական մեքենան եւ վարկաբեկելու իշխանությունը հաչս հասարակության: Դուրսը, ստերով ու զրպարտություններով, թշնամական տրամադրություններ էին առաջ բերում դեպի Հայաստանի Հանրապետությունը ու նրա ղեկավարները՝ նույնիսկ գործակցելով հայության բացահայտ թշնամի տարրերի հետ:

Այս տեսակետից շատ բնորոշ է հետագային հայտնի բոլշեւիկներ (այժմ գնդակահարված) Ար. Երզնկյանի եւ Սիմ. Փիրումյանի մեկ վկայությունը:

Նրանք, 1920թ. ամառը, Թիֆլիսից Մոսկվա էին ուղարկվել՝ ապահովելու համար Ղարաբաղի կցումը Հայաստանին: Վերադարձին, ընդարձակ զեկուցում տվին, որից երեւաց, որ Խորհրդային Ռուսաստանում թշնամական վերաբերում է տիրում դեպի Հայաստանը: Կառավարական եւ կուսակցական պաշտոնաթերթերը՝ «Իզվեստիա» եւ «Պրավդա», կատաղի հարձակումներ էին գործում Հայաստանի վրա:

«Մոսկվայի լրագրական հոդվածներում, ասում է Ա. Երզնկյանը, շարունակ այն միտքն է արծարծվել, թե իմպերիալիստ Դաշնակիցները համարյա ամեն օր Հայաստան են ներմուծում լեռների չափ ռազմամթերք, զինագործական արհեստանոցներ, որոնք առանց դադար առնելու, ռազմամթերք են պատրաստում... Ամբողջ աշխարհի բոլրժուհաները հավաքվել են Հայաստանում շահագործելու համար պրոլետարիատին եւ այնպիսի քաղաքականություն են մտցրել, որ ուղղված է սոցիալիստական Ազրբեջանի եւ սոցիալիստական Թուրքիայի խեղճ ու կրակ աշխատավորության դեմ: Այդ երկու երկրների մահմեդական ժողովուրդները հանգիստ չունին հակահեղափոխական հայոց

կառավարութեան հսկայաթեւ գորքերի նվաճողական հարձակումներէ: Հայ հեղափոխականների ձեռքով ստեղծված Ղարաբաղի անցքերի ժամանակ տուժեցին ոչ թե հայերը, այլ Խորհրդային իշխանութեան մշտական կողմնակից մահմեդական աշխատավորութիւնը»:

Ովքե՞ր էին վարում այս հակահայ ստապատիր ու զզվելի քարոզչութիւնը: Երգնկյանը պատասխանում է.

Նախ՝ «կոմունիստական դիմակի տակ ծածկված Խալիլ փաշաները, Կազանի թաթարները, որոնք արտոնյալ դիրք ունեին Մոսկվայի ազգային գործերի ժողովրդական կոմիտեայի ստում եւ իրենց կոմունիստ անվանող Բաքվի թաթարները»:

Երկրորդ՝ հայ բուլշեւիկները, որոնց «մի մասը, Հայաստանից կտրված լինելու պատճառով, ոչ մի տեղեկութիւն չունենէր Հայաստանի եւ նրա բնակչութեան ծանր կացութեան մասին, իսկ մյուսներն էլ դեպի Դաշնակցութիւնը տածած ատելութիւնից կուրացած՝ դիտումնավոր, չափազանց միտումնավոր լուրեր էին տարածում ի վնաս հարազատ երկրի: Առանձնապէս այդ ուղղութեամբ ուժ էին տալիս Բաքվի, Վլադիկավկազի, Ռոստովի եւ այլ գավառական քաղաքների հայ կոմունիստները»:

Թե հայ բուլշեւիկները ինչպիսի հրեշային «դիտումնավոր լուրեր» էին տարածում ռուսների մեջ Հայաստանի դեմ, ցույց է տալիս եւ հետեւյալ հատվածը Բաքվից Հայաստանի կառավարութեանը ուղղված մեկ հեռագրից:

«Հենվելով մատուցելիս դահճապետ Սեպուհի եւ դենիկենյան սպանների վրա՝ դուք օրենքից դուրս եք հայտարարել Հայաստանի գյուղացիներին եւ բանվորներին: Զանգ-

վածային գնդակահարութիւնները Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարըղամիշում եւ այլ վայրերում, հեղափոխական բանվորներին, գյուղացիներին եւ նրանց ղեկավարներին անխնա ձերբակալելը, ծեծելը, թալանելը՝ այս ամենը վրդովում է Ազրբեյջանի պրոլետարիատի եւ Խորհրդ. Ռուսաստանի Կարմիր զորքերի հեղափոխական խիղճը...

Մեզ հայտնի է, որ ձեր կառավարութիւնը Կարսի շրջանում գնդակահարել է 300 հոգի: Կարսի հակահեղափոխականներին դատարանը, Խորենիի եւ Աղբալյանի գլխավորութեամբ, ձերբակալել է կոմունիստական կուսակցութեան անդամներին եւ գնդակահարել: Դուք գնդակահարել եք Խորհրդ. Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ բժ. Մելքոյանին, Կարսի հեղափոխական Կոմիտեի անդամ ընկ. Ղուկասյանին, Նոր Բայազետի Հեղափ. Կոմիտեի անդամ ընկ. Սարուխանյանին եւ մի շարք մեր ամենալավ ընկերներին: Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Հայաստանի ներկայացուցիչը՝ վրդովված այն դահճային անսրտութիւնից, որ դուք ցուցահանում եք Հայաստանում մեր ընկերների նկատմամբ, որոշել է դիմել Մոսկվա, որտեղ անամոթաբար դիմել եք եւ դուք՝ ուղարկելով ձեր ներկայացուցիչներին¹⁵ եւ միաժամանակ Հայաստանում անխնա կոտորելով կոմունիստներին: Մենք համոզված ենք, որ Խորհրդ. Ռուսաստանը ամեն միջոց ձեռք կառնե՝ վերջ տալու համար ձեր արյունոտ վարմունքին»:¹⁶

Հեռագրի տակ ստորագրել էին Ազրբեյջանի Կոմ. Կուս. Կենտր Կոմիտեի կողմից՝ Նանեշվիլի եւ Միկոյան, Ռուս.

¹⁵ Խոսքը Լեւոն Շանթի պատվիրակութեան մասին է:

¹⁶ Բաբվի «Կոմունիստ» օրաթերթ, 1920 թ., Հունիս 20:

Կոմ. Կուս. ներկայացուցիչ՝ Կոստանյան, Հայաստանի Ռազմահեղ. Կոմիտեի անունից՝ Ավիլա:

Համանման մի ուրիշ հեռագրի մեջ էլ ասված է «Թե Դաշնակցականները Հայաստանում կոտորել են մինչև երկու հազար կոմունիստներ»...

Եվ այս տեսակ ստերով հայ բուլշևեիկները մոլորեցնում էին ոչ միայն Ռուսաստանի հանրային կարծիքը, այլև կառավարութունը: Բաքվից ստացած չարամիտ զրպարտութունների հիման վրա, Չիչերինը հունիսի 4-ին, «մեծ վրդովմունքով» հեռագիր-բողոք է ուղարկում Երեւան, Հայաստանում, իբր Թե, կատարվող գնդակահարութունների դեմ: Եվ, ի միջի այլոց, ասում է, Թե՝ «հատկապես գնդակահարված է ընկ. Միկոյանը»:

Հայ բուլշևեիկները մեկ նպատակ էին հետապնդում՝ ինչ գնով էլ լինի վարկաբեկել ու տապալել Հայաստանի վարիչներին, ձեռք ձգել Հայաստանի իշխանութունը: Եվ այդ նպատակին հասնելու համար նրանք միջոցների մեջ խորութուն չէին դնում, փույթ չէ Թե դրանից մահացու վնաս կստանային Հայաստանն ու հայ ժողովուրդը:

Նրանք սրտատրոփ սպասում էին, Թե ե՞րբ պիտի մոտենա ռուսական բանակը, որպեսզի ներքին ապստամբութուն բարձրացնեն եւ խորտակեն «Դաշնակ»ների իշխանութունը: Եվ այդ օրը շատ չուշացավ. 1920 թ. ապրիլի 28-ին ընկավ Ազրբեջանը Թուրք-բուլշևեիկյան միացյալ զրոհի տակ: Ազրբեջանի խորհրդայնացումով, հայ բուլշևեիկները կարծիքով, հնչելու էր եւ Հայաստանի խորհրդայնացման ժամը:

V

ՄԱՅԻՍՅԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես տեսանք, 1920թ. ապրիլի 28-ին, բուլշևիկները, թուրքերի օգնութեամբ, գրավեցին Բաքուն՝ խորտակելով Ազրբեջանի անկախությունը: Հաջորդ օրն իսկ, Բաքվից Երեւանում ստացվեց հետեւյալ սպառնական հեռագիրը. «Ազրբեջանի Խորհրդային Հանրապետութեան բանվորագյուղացիական կառավարութեանը, հանձին Հեղափոխական կոմիտեի, պահանջում է նախ՝ մաքրել ձեր զորքերից Ղարաբաղի ու Ջանգեզուրի հողամասերը. երկրորդ՝ քաշվել դեպի ձեր սահմանները. երրորդ՝ դադարացնել ազգամիջյան կոտորածը: Հակառակ դեպքում, Ազրբեջանի ընկերվարական Խորհրդային հանրապետութեան հեղափոխական կոմիտեն իրեն կհամարե պատերազմական վիճակի մեջ Հայաստանի Հանրապետութեան հետ: Վերջնագրի պատասխանի համար տրվում է երեք օր ժամանակամիջոց: Ազրբեջանի Խորհրդ. հանրապետութեան արտաքին գործերի կոմիսար Հուսեյնով»¹⁷

Դեռ պատասխան չստացած, մայիսի 1-ին, Բաքվից Երեւան հասավ եւ մի ուրիշ հեռագիր՝ այս անգամ ոռուսական 11-րդ բանակի հրամանատարութեան կողմից՝ Օրջոնիկիձեի, Կիրովի, Մեխանոչինի եւ Լեւանդովսկիի ստորագրութեամբ: Հեռագիրը, «հանուն Ռուսաստանի Սոց. Ֆեդ.

¹⁷ Սա այն Հոսեյնովն է, որի հետ Խալիլ փաշան համաձայնութեան էր կնքել Ազրբեջանը խորհրդայնացնելու մասին՝ խոստանալով նրան վարչապետութեան պաշտոնը:

Խորհրդային Հանրապետութեան», առաջարկում էր Հայաստանի կառավարութեանը՝ «անմիջապէս դադարեցնել ռազմական բոլոր գործողութիւնները Խորհրդ. Ազրբեջանում եւ իր զորքերը դուրս հանել նրա սահմաններից: Այդ պետք է արվի ներկա հեռագրի ստացումից հետո՝ 24 ժամվա ընթացքում»:

Պետք է ասել, որ Հայաստանը «ռազմական գործողութիւններ» չուներ Ազրբեջանում: Այդ ժամանակ տեղի էին ունենում Ղարաբաղի դեպքերը: Ղարաբաղի բնակչութիւնը մերժում էր ճանաչել Ազրբեջանի իշխանութիւնը եւ ուզում էր միանալ Հայաստանին: Մուսաֆաթական կառավարութիւնը, Խալիլ փաշայի օգնութեամբ, իր ամբողջ բանակը ուղղել էր Ղարաբաղի դեմ եւ աշխատում էր բռնի ուժով հպատակեցնել Ղարաբաղցիներին, որոնց խնդրանքով՝ օգնութեան էր գնացել Դրոյի զորամասը: Ազրբեջանի խորհրդայնացման վայրկյանին գրեթէ ամբողջ Ղարաբաղը հայերի ձեռքին էր:

Թե՛ Հուսեյնովի, եւ թե՛ մյուս հեռագիրը բառ առ բառ կրկնութիւնն էր մուսաֆաթական կառավարութեան միջնաձեռն արած պահանջների: Հայաստանի կառավարութիւնը մերժեց ենթարկվել Բաքվի վերջնագրին եւ վճռական բողոք ուղարկեց Մոսկվա՝ Լենինին եւ Չիչերինին, ինչպէս նաեւ Բաքու՝ Օրջոնիկիձեին, բայց այդ բողոքները մնացին անպատասխան:

Հեռագրերի այս փոխանակութիւնը, որ ահագին վրդովում առաջ բերեց Հայաստանում, զուգադիպեց Մայիս 1-ի աշխատավորական տոնին: Այդ տարի, կառավարութեան որոշումով, Մայիս 1-ը պիտի տոնվեր առանձին շուքով:

Մայրաքաղաքում եւ գավառական կենտրոններում կազմակերպվեցին մեծահանդես թափորներ ու հրապարակային փառահեղ ժողովներ: Ճառախոսությունների գլխավոր նյութն էր Ազրբեջանի վերջնագիր-պահանջը՝ Ղարաբաղի եւ Զանգեզուրի մասին: Հայաստանի ողջ ժողովրդի այդ օրերի տրամադրության արտահայտություն կարելի է համարել Արհեստակցական Միությունների Միության առաջարկած բանաձեւը, որ Երեւանի բոլոր ժողովներում ընդունվեց միաձայնությամբ եւ որով ժողովուրդը «հայտնում էր իր բուռն զայրույթը թուրք գյուղացիության եւ բանվորության անունը շահագործող դահիճներին, որոնք Խորհրդային իշխանության եւ կոմունիզմի անունը օգտագործելով՝ շարունակում են նախորդ (մուսաֆաթական) կառավարության արյունոտ գործը: Հայաստանի աշխատավորությունը իր եղբայրական ձեռքն է մեկնում Ազրբեջանի աշխատավորության եւ պահանջում է վերջ տալ արշավանքին դեպի Ղարաբաղ եւ Զանգեզուր՝ թույլ տալով, որ այդ գավառների գյուղացիությունն ու բանվորությունը ինքը ազատորեն արտահայտե իր կամքը: Հայաստանի աշխատավորությունը խորապես հավատալով, որ Ռուսաստանի Խորհրդային իշխանությունը թույլ չի տա Ազրբեջանին հարձակողական քաղաքականություն, միեւնույն ժամանակ պահանջում է իր կառավարությունից անհողողդ պաշտպանել Հայաստանի եւ հայ աշխատավորության ազատությունն ու անկախությունը եւ առաջարկում է Արհեստակցական Միությունների Միության այս բանաձեւը անմիջապես հայտնել բոլոր երկրների սոցիալիստական Ֆրակցիաներին»: Բանաձեւը հեռագրվեցավ Մոսկվա ու Բաքու

եւ «ամենքին, ամենքին, ամենքին» եւ արժանացավ նույն ճակատագրին, ինչ որ եւ կառավարութեան հեռագրերն ու դիմումները:

Մինչ Երեւանում տոնական խրախճանքներ էին տեղի ունենում, Ալեքսանդրապոլից ստացվեցին մտահոգիչ լուրեր: Այնտեղ բոլշեւիկները, օգտվելով կառավարութեան բարյացկամ վերաբերումից, Մայիս 1-ի օրը վեր էին ածել քաղաքական ցույցի՝ ի նպաստ խորհրդային իշխանութեան, եւ օգտվելով տեղական իշխանութեան թուլութեամբ՝ խորհրդայնացման դրոշակ էին պարզել:

Հակապետական այս շարժման համար օգտագործվել էին Մայիս Մեկի տոնակատարութեանց ժամանակ բանվորների եւ զինվորների մի մասի արտահայտած բոլշեւիկյան տրամադրութեանները:

Մայիս Մեկի առթիվ, Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Ալեքսանդրապոլի Կոմիտեի անունով մի կոչ էր հրապարակվել, որով հայտարարվում էր, թե «Հայաստանի սովալլուկ եւ իրավագուրկ մասսաները պատրաստ են իրենց եղբայրական ձեռքը մեկնելու, Դաշնակցական կառավարութեան գլխի վրայով, Բաքվի դռները հասած հաղթական Կարմիր բանակին եւ Բաքվի պրոլետարիատին, որ այսօրվանից մեր կռիվը թուրք բանվորի ու գյուղացու դեմ չէ, այլ Դաշնակցական կառավարութեան, որ մոտ է այդ կառավարութեան տապալման օրը, որ եւ կլինի Հայաստանի բանվորների եւ գյուղացիների հաղթութեան օրը: Կոչը վերջանում էր՝ «Կեցցե՛ խորհրդային Հայաստանը», «Կեցցե՛ Երրորդ Ինտերնացիոնալը», «Կեցցե՛ ազատարար Կարմիր բանակը» խոսքերով:

Նույն օրը, հանուն միտինգի, Դոգունց եւ Արմենկոմի անդամ Ավիս Նուրիջանյանը ողջույնի հեռագիր են ուղարկում Բաքու «ընկեր Նարիմանովին»՝ խոստանալով Հայաստանի կառավարութեան հետ «այնպես վարվել, ինչպես դուք վարվեցիք թուրք դաշնակ-մուսաֆաթականների կառավարութեան հետ, որպեսզի մեծ Խորհրդ. Ռուսաստանի հետ միատեղ, միացած Արեւելքի ճնշված ժողովուրդների հետ՝ տանենք նրանց (Հայաստանի բանվորներին եւ գյուղացիներին: Ս.Վ.) միջազգային իմպերալիզմի դեմ»:

Մի երկու օր անցած, Նուրիջանյանը եւ Մուսայելյանը հեռագրում են «ընկեր Նարիմանովին», թե «Ալեքսանդրապոլի կարմիր պրոլետարիատը եւ կարմիր Խորհրդային զրահապատը, գլխավորութեամբ ՌԿԿ Ալեքսպոլի կոմիտեի, մայիս 1-ից սկսած, հայ Դաշնակցական հակահեղափոխական կառավարութեան հետ լարված պատերազմական դրութեան մեջ են գտնվում, սպասելով ամբողջ Հայաստանում ապստամբութեան կազմակերպմանը»: Ու ինդրում են օգնել պարենով. «Թախանձագին խնդրում ենք անմիջապես ռազիոյով հայտնել մեզ եւ հնարավորութեամբ ստեղծել շուտափույթ կերպով Ղազախով, գոնե սկզբնական շրջանում, մեզ աննշան պարեն օգնութեամբ հասցնել: Դրական պատասխան ստանալուց հետո մենք անհապաղ գրավում ենք իշխանութեանը եւ միասին ամբողջ Հայաստանին ապստամբութեան կոչ կանենք»:

Հակապետական շարժման կենտրոն դարձել էր «Վարդան Զորավար» զրահապատ գնացքը, Ալեքսանդրապոլի կայանում, գլխապետ Սարգիս Մուսայելյանի հրամանատարութեամբ: Վերջինս՝ մերժելով ենթարկվել սպարապետ Նա-

զարբեկյանի կարգադրութեանը՝ մեկնելու ճակատ, ապստամբութեան դրոշակ էր պարզել:

Արմենկոմը անակնկալի էր եկել. նա պատրաստ չէր նման բանի: Ընդհակառակը, նրա որոշումն էր շարժումը սկսել Ղազախի շրջանում, որպեսզի հնարավորութիւն լինի անմիջական օգնութիւն ստանալ Ազրբեջանից: Այդ հողի վրա տարակարծութիւնն է ծագում Արմենկոմի եւ Ալեքսպոլի Հեղկոմի միջեւ, որ տեղի է տալիս սուր բանավեճի: Արմենկոմը Երեւանից ուղարկում է իր անդամներից Դր. Տեր-Սիմոնյանին՝ բժ. Արտ. Մելքոնյանի հետ՝ տալով նրանց լիազորութիւն՝ խնդիրը տեղի վրա կարգադրելու: Սրանք, հասնելով Ալեքսանդրապոլ, միանում են խռովարարներին եւ որոշում են գրավել իշխանութիւնը:

Մայիսի 7-ին կազմվում է Ռազմահեղափոխական կոմիտե (Հեղկոմ), որի անդամներն էին նախագահ եւ գինվորական կոմիսար՝ Ս. Մուսայեւյան, արտաքին գործոց կոմիսար՝ Ավիս Նուրջանյան, նեքին գործոց՝ Արտ. Մելքոնյան: Մայիսի 10-ին Հեղկոմը հրապարակում է հետեւյալ հայտարարութիւնը, որով հռչակում է Հայաստանը խորհրդային:

«Պրոլետարիատի, չքավոր գյուղացիութեան, բանվորների եւ կարմիր զորքի կամքով Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանի Հանրապետութեան մեջ հռչակում է խորհրդային իշխանութիւն: Այսօրվանից մասուկերիցմի, խմբապետների, սպեկուլյանտների վրա հենված եւ բռնութեան, կողոպուտի, ինքնիշխանութեան վրա հիմնված Դաշնական կառավարութիւնը տապալված է: Ռազմահեղափոխական Կոմիտեն կոչ է անում երկրի բնակչութեանը

պահպանել հեղափոխական դիսցիպլինա եւ կարգ. ստեղծագործական աշխատանքի խանգարման ամեն մի փորձ կխեղդվի իր բնում՝ Խորհրդային Հայաստանի կարմիր զորքերի կողմից:

Ռազմահեղափոխական կոմիտեն առաջարկում է.

1. Բոլոր հիմնարկներին եւ կազմակերպություններին շարունակել սովորական զբաղմունքը, ծառայողներին մնալ իրենց տեղերում, որոնց անձի անձեռնմխելիությունը կպաշտպանվի Խորհրդային Հայաստանի կարմիր զորքերի միջոցով:

2. Ոգելից խմիչքների վաճառումը բոլոր ռեստորաններում, հյուրանոցներում դադրեցնել մինչեւ հատուկ կարգադրություն:

3. Բոլոր գինետները եւ խմիչք վաճառող խանութները փակել մինչեւ հատուկ կարգադրություն:

4. Սույն հայտարարության 2-րդ եւ 3-րդ կետը չկատարելու համար հանցավորները պատասխանատու են Ռազմահեղափոխական Տրիբունալի առաջ:

5. Երեկոյան ժամը 9-ից հետո բոլոր ակումբները, ռեստորանները, թատրոնները, կինոմատոգրաֆները փակվում են եւ հիշյալ ժամից հետո Ռազմահեղափոխական կոմիտեի թույլտվությունը չունեցողները փողոցում երեւալիս ձերբակալվելու են:

6. Հարբած դրության մեջ երեւացող մարդիկները եւ կողոպտիչները տեղն ու տեղը կգնդակահարվեն, քաղաքում խաղաղ կյանքի ընթացքը խանգարելու փորձերը անմիջապես կճնշվեն զինված ուժով, զենքերից կրակողները կգնդակահարվին տեղն ու տեղը:

7. Այն տները, որոնցից պրովոկացիոն հրացանաձգություն տեղի կունենա, կքանդվին հրետանու կրակով:

8. Ռազմահեղափոխական կոմիտեն, հաշվի առնելով երկրի ծանր դրությունը, գիտակցելով ներկա մոմենտի

պատասխանատվութիւններ, կոչ է անում բոլորին անխոնջ ձեռնամուխ լինել ազնիվ աշխատանքի՝ հանուն աշխատավոր ժողովրդի:

9. Ռազմահեղափոխական Կոմիտեն հասարակական եւ պետական հիմնարկների անարյուն անցումը խորհրդային իշխանութեան ձեռքը ապահովելու համար պահանջում է իր մոտ հետեւյալ քաղաքացիներին՝ որպէս պատանդ. բժիշկ Բաղդասարյանին, Միխիթար Տեր Աբրահամյանին, Արտաշէս Ստամբոլցյանին, Արամ Ալչուճյանին, գովառային կոմիսար Լոռեցյանին, Նորհատյանին, Արշակ Պոլոյանին, Վալադյանին, ինքնավարութեան անդամ Մարգարյանին, քաղաքային միլիցիայի պետ Բանվոր Սերգոյին, պառլամենտի անդամ Կարո Սասունիին:

Իշխանութիւնը հանձնելու ուղտիմատումի պատասխանը այսօր մայիսի 10-ին, երեկոյան ժամը 4-ին:

Հայաստանի Հանրապետութեան
Ռազմահեղափոխական կոմիտե.
Կարմիր բանակի հրամանատար՝ Սուսայելյան.
Շտաբի պետ՝ Կորգանով¹⁸

Թիվ 1

Ալեքսանդրապոլ, կայարան
10 մայիսի, 1920թ.

Միաժամանակ, կամ քիչ վերջը, բոլշեւիկները խռովութիւններ եւ ապստամբութիւններ առաջ բերին նաեւ Հայաստանի ուրիշ մասերում՝ Կարսում, Սարըղամիշում, Բայազետի, Բասար-Գեչարի եւ Դիլիջանի շրջաններում, այսինքն՝ գլխավորապէս այն վայրերում, ուր Հայաստանի իշխանութիւնից դժգոհ տարրեր կային՝ թուրքեր, մալա-

¹⁸ Այս եւ հետագա մի շարք վավերագրերը առնված են բոլշեւիկյան «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները» հատորից, որ լույս տեսավ 1932թ. Երեւանում եւ որ հետո խորհրդ. իշխանութիւնը արգելքի տակ դրեց, իբրեւ Հայաստանի բոլշեւիկների համար վարկաբեկիչ մի հրատարակութիւն:

կաններ եւ այլն: Տեղ-տեղ ապստամբներին միացան եւ զինվորական մասեր: Ապստամբների ընդհանուր կարգախոսն էր՝ «Ռուսաստանի Կարմիր բանակը գալիս է. «հաց, մանուֆակտուրա եւ խաղաղություն» բերելու Հայաստանին. կեցցե խորհրդ. Հայաստանը»:

Մի պահ վարանելուց հետո, կառավարութիւնը ձեռք առավ վճռական միջոցներ ըմբոստութիւնը տեղն ու տեղը ճնշելու համար: Եվ իր քայլերի մեջ հանդիպեց ժողովրդական բոլոր խավերի անվերապահ համակրանքի ու աջակցութեան: Բացի Սոց. հեղափոխականներից, որոնք երկդիմի դիրք էին բռնել, բոլոր կուսակցութիւնները՝ Ժողովրդական, Ռամկավար, Սոցիալ-Դեմոկրատ, Դաշնակցական, բոլոր հասարակական մարմինները, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, քաղաքային եւ արհեստակցական կազմակերպութիւնները, մի խոսքով, ողջ հայոց ժողովուրդը համախմբվեց կառավարութեան շուրջը եւ մամուլով ու կոչերով, խոսքով ու գործով, զորավիգ հանդիսացավ ազգային իշխանութեանը:

Կուսակցութիւնների վերաբերումի բնորոշման համար հիշենք, մայիս 13-ին, խորհրդարանի նախագահութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցած՝ Հայաստանի երեք կուսակցութիւնների՝ Ժողովրդականների, Ռամկավարների, Սոցիալ-դեմոկրատների եւ անկուսակցականների ներկայացուցիչների խորհրդակցութիւնը:

Ներկա էին վարչապետ Հ. Օհանջանյանը, նախկին վարչապետ Ա. Խատիսյանը, խորհրդարանի նախագահ՝ Ա. Սահակյանը, Ժողովրդական կուսակցութիւնից՝ Գր. Տեր Խաչատրյանը, Հ. Հովհաննիսյանը եւ Ե. Հարութիւնյանը,

Ռամկավարներից՝ Ա. Դարբինյանը, Սոց-դեմոկրատներից
Բ. Իշխանյանը, Դ. Անանունը, անկուսակցականներից՝ Գր.
Զալխուռյանը: Ներկա էին նաև Դաշնակցությունից՝ Ս.
Թորոսյանը, Ա. Սաֆրաստյանը եւ այլն:

Լսելով վարչապետի զեկուցումը կացության, ինչպես
նաև Ալեքսանդրապոլի վերջին իրադարձությունների մա-
սին, որոնք ստեղծել էին Հայաստանի թշնամիները՝ ցան-
կանալով հաստատել մեր երկրում Խորհրդային կարգեր,
կուսակցությունների ներկայացուցիչներն արտահայտե-
ցին իրենց տեսակետները:

Ժողովրդականների կողմից խոսեց Գր. Տեր Խաչատրյա-
նը, որ պատրաստակամություն հայտնեց կուսակցության
կողմից ամեն կերպ աջակցել կառավարության՝ երկրի
կարգը եւ Միաց. Հայաստանի անկախությունը պաշտպա-
նելու գործում: Ապա մի շարք ցանկություններ հայտնվե-
ցին, որոնք վարչապետը խոստացավ դնել կառավարու-
թյան քննությանը:¹⁹

Այդ խորհրդակցություններից հետո, երբ բուլեւերկները
Ազրբեջանի կողմից էլ փորձեցին հարձակվել Հայաստանի
վրա, Ռամկավար, Սոց.-Դեմոկրատ ու Ժողովրդական
կուսակցությունները եւ Անկուսակցականների Միությունը
նր ժողովրդին ուղղեցին հետեւյալ կոչը.

«Հայաստանի քաղաքացիներ.

Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Նոր-Բայազե-
տի խռովություններին հետեւեց Դիլիջանի գավառը:

¹⁹ «Ժողովուրդ» թերթ, Երեւան, 1920թ. մայիսի 16:
Հայ ժողովրդական կուսակցության պաշտոնաթերթ:

Ներքին ոճրագործ տարրերի պետական դավաճանութ-
յան հաջորդեց արտաքին նույնօրինակ տարրերի անհան-
դուրժելի արչավանքը դեպի մեր երկրի խորքերը:

Մեր հայրենիքի ներքին ու արտաքին թշնամիները
միացած՝ դիվային ծրագրեր են որոճում Հայաստանի ազա-
տության եւ անկախության դեմ: Հայ ժողովուրդը, որի
ինքնորոշված կամքի մարմնացումն է կազմում իր պետա-
կան անկախությունը, պիտի արթուն պահպանի, փայփայի
ու պաշտպանի իր այնքան թանկ զնով նվաճած ազատու-
թյունն ու անկախությունը:

Թող հայ քաջարի բանակը սուրբ ուխտի երդումը տա
կազմ ու պատրաստ դիմազրավելու համար Հայաստանի
անկախության բոլոր թշնամիներին-ով, որ կողմից եւ ինչ
անվան տակ ուզում են թող լինեն նրանք:

Իսկ դու, հա՛յ ժողովուրդ, մի սիրտ, մի հոգի դարձած՝
պետք է քո ուժն ու աջակցությունը չխնայես մեր քաջարի
բանակին եւ մեր կառավարության անչեղորեն ազատ ու
անկախ Հայաստանը մարմնացնելու գործում:

Կեցցե ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանը:

Կեցցե Հայաստանի դեմոկրատիկ Հանրապետությունը:

Հայ ժողովրդական կուսակցության
Հայաստանի Կենտրոնական Կոմիտե,
Հայաստանի Սոց.-Դեմ. կուսակցության
Երեւանի Կոմիտե,
Հայ Ռամկավար կուսակցության
Հայաստանի Խորհուրդ,
Հայ Անկուսակցականների Միության
Վարչություն»:

Բնորոշ էր Ռամկավարների դիրքը, որոնք այժմ դատա-
պարտում են Դաշնակցականներին «եղբայրասպան կռիվնե-
րի» համար: Հայ Ռամկավար կուսակցության Հայաստանի
Խորհուրդը առանձին էլ հրապարակ եկավ հետեւյալ կոչով.

«Մեր ավերակ ու քանդված հայրենիքի մեջ, հայ ժողովուրդը բնաջնջող, մեզ կոտորող, մեր հայրենյաց լեռ ու ձոր, գետն ու վտակը հայ արյունով ներկող իթթիհատ կուսակցությունը, որ Նուրի ու Խալիլ փաշաներու միջոցով փոխադրված է Ազրբեջան, գառան մորթը վրան առած՝ մի օր, հանկարծ, Բաքվի մեջ հայտարարեց սովետական իշխանություն եւ առաջին օրն իսկ իր նշանավոր ուլտիմատոմով պահանջեց հայկական հանրապետությունեն երեք օրեն հանձնել Ղարաբաղն ու Զանգեզուրը եւ իր զորախմբերն արդեն շարժման մեջ դրավ Հայաստանի վրայեն երթալ միանալու Մոստաֆա Քեմալ փաշայի հետ, որ մինչեւ այժմ կշարունակե ջարդել տասնյակ հազարավոր հայեր Կիլիկիո մեջ, հակառակ մինչեւ իսկ Փանսիական բանակի ցույց տված պաշտպանություն:»

Խելագար եւ երկու աչքերով կույրը միայն կարող էր չտեսնել այս կերպով հայկական հանրապետության ընդհանրապես եւ Թուրքահայաստանին մասնավորապես, սպառնացող նոր վտանգը. եւ, սակայն, գտնվեցան հայ անուն կրող մարդեր եւ հայ իրականություն մեջ գործող, բայց հայ ոգիին ու զգացումներուն խորթ խմբակներ, որոնք փոխանակ Հայաստանի սահմանները պաշտպանելու այդ վտանգին դեմ, կողմնակից հայտարարեցին զիրենք այդ հայադավ շարժման եւ Ալեքսանդրապոլի ու Կարսի մեջ դիմեցին եղբայրասպան կռիվի:

Այդ խելագարները ոչ միայն չմտածեցին, որ այդ կերպով վերջին անբուժելի հարվածը կուտան լուծման օրերու մեջ գտնվող Հայկական Հարցին, այլ մինչեւ անգամ հոգ չըրին, որ երկրի սահմանները կբանան եւ կհրավիրեն տա-

ճիկ-ազրբեջանյան գառնազգեստ գայլերը, որպեսզի մնաց-
յալ հայության դիակներու վրայեն երթան ու միանան մեր
դարավոր թշնամիին՝ էնվերի եւ Թալեաթի հարազատ հա-
ջորդ Մուստաֆա Քեմալին:

Տարակույս չկա, որ ամեն հայ մարդ, որ իր երակներուն
մեջ հայի արյուն կկրե եւ իր գլխուն մեջ փոքր ինչ խելք
ունի, կդատապարտե այդպիսի խելագար շարժումը. եւս
առավել թուրքահայերս, որ անոր անմիջական հետեւանք-
ները կկրենք: Այդ շարժումն ինչ տեսակ շարժառիթներ ալ
ունեցած լինի, չի կրնար արդարանալ, եւ մենք, մասնավո-
րապէս, պետք է ծառանանք անոր դեմ եւ մեր բոլոր ուժերը
ի սպաս դնենք կառավարութեան՝ իր բնին մեջ խեղդելու
զայն եւ շեղեցնելու իր ոճրադատ նպատակէն:

Հայ Ռամկավար կուսակցութեանը, մանավանդ որ տո-
գորված է եղած միշտ հայ ազգի կրած տառապանքներով,
որ կեցած է այն ուղիին վրա, որ նախորդ բազմահազար
նահատակներն իրենց արյունով գծած են նորա առաջ,
ամենէն ավելի իրավունք ունի զայրույթով մերժելու այդ
հայրենադավ ոճիրը, դատապարտելու անոր հեղինակները՝
միաժամանակ իր ուժերը տրամադրելով հայրենիքին
սպառնացող ներկա վտանգին հանդէպ:

Բնավ չենք կասկածեր, որ այդպէս կմտածեն նաեւ մեր
բոլոր ընկերները եւ բոլոր անոնք, որ հայ անուն եւ հայ
զգացում կկրեն:

Կորչի՛ եղբայրադավ եւ հայրենադավ ոճիրը: Կեցցե՛
հայ ոգին: Կեցցե՛ Միացյալ եւ անկախ Հայաստանը»:

Խռովութիւնները, զանազան շրջաններում, տեւեցին
մոտ երեք շաբաթ: Մայիսյան շարժումների ընդհանուր

նկարագրությունը արված է մեր «Հայաստանի Հանրապետություն» հատորում (էջ 348-371): Այստեղ կսահմանափակվենք միայն Ալեքսանդրապոլի շրջանով եւ կտանք գլխավորապես բուլղեհիկյան փաստերը՝ առնելով իրենց իսկ պատճառահան հրատարակություններից եւ ակնանավոր կոմունիստների վկայություններից:

Ինչպես ասինք, մայիսի 7-ին՝ Ալեքսանդրապոլում, կազմվեց Ռազմահեղափոխական Կոմիտեն (Հեղկոմ), որ մայիսի 10-ին հայտարարեց Հայաստանը խորհրդայնացած:

Մայիսի 11-ին, գրում է Բորյանը, «Թուրք եւ մալական գյուղացիների ներկայացուցիչները եկան Հեղկոմի մոտ եւ հայտնեցին, թե գյուղացիները պատրաստ են միացյալ ուժերով կռվելու Դաշնակցական կառավարության դեմ՝ հօգուտ խորհրդային իշխանության» (Բ հատոր, էջ 104):

Հեղկոմին իր գործակցությունը խոստացավ եւ Հայաստանի ռուս բնակչության Ազգային Խորհուրդը:

Իր կազմությունից անմիջապես հետո, Հեղկոմը հեռագրով պահանջեց, որ Հայաստանի կառավարությունը իսկույն իրեն փոխանցե իշխանությունը:

Կառավարությունը, խոսափելու համար քաղաքացիական ավերիչ կռվից ու արյունահեղությունից, փորձեց խաղաղ միջոցներով վերջ տալ խռովությանը:

Վարչապետը մի հեռագրով բացատրեց Մուսայելյանին քաղաքացիական կռվի ունենալիք աղետավոր հետեւանքները Հայաստանի համար եւ ներում խոստացավ հանցավորներին, եթե նրանք վերջ տան ըմբոստությանը: Նման հորդոր ուղղեց եւ ամենքից հարգված զոր. Ղամազյանը՝ կոչում անելով Մուսայելյանի հայրենասիրության եւ

աղերսելով «հետ կանգնել, չխորտակել հայրենիքը»: Մուսայելյանի պատասխանը եղավ մի հայհոյակից հեռագիր, որի մեջ ասված էր, թե՝ «ինքն իրեն Հայաստանի կառավարություն հորջորջող մարմինը մարդասպանների եւ ավազակների խումբ է» եւ որ Հայաստանի օրինավոր իշխանությունը Հեղկոմն է:

Ըստ երեւույթին, կառավարության այս փորձը ի նկատի ունի Բորյանը՝ գրելով, թե «կառավարությունը, հանձին արտաքին գործոց նախարար եւ Դաշնակցության Արեւելյան Բյուրոյի ղեկավար պր. Օհանջանյանի, անպաշտոն բանակցություններ է վարում կոմունիստների հետ կոալիսիոն կառավարություն կազմելու համար: Մի ուրիշ ականավոր դաշնակցական՝ Ս. Մանասյանը, հայտնում է, որ իրենք ոչինչ չունին բուլղերիկների դեմ եւ որ կենտրոնական կառավարությունը ինքը կհրաժարվի իշխանությունից, եթե իմանա, որ Կարմիր բանակը մտել է Հայաստան(Բ հատոր, էջ 105):

Բորյանը, իհարկե, սխալվում է: Կառավարության դիրքը շատ որոշ էր եւ նման բանակցություններ չէին կարող տեղի ունենալ:

Ճիշտ չէ, անկասկած, եւ Բորյանի վերագրումը Կարո Սասունիին, որ, իբր, թե, ասել է սպանների ժողովում, թե «եթե մի հատիկ ուրս գինվոր երեւա Հայաստանում, կառավարությունը ինքը կհանձնի նրան»:

Կառավարությանը ոչինչ չէր մտնում, քան կատարել իր պարտականությունները հայրենիքի հանդեպ, որքան եւ ծանր լիներ այդ պարտականությունը:

Սեպուհի զորամասը, որին հանձնված էր Ալեքսանդրապոլի խռովությունների հաշվեհարդարը, հրաման ստացավ վճռական գործողությունների դիմելու: Բուլչեւիկները անուժ էին դիմադրելու: «Հեղկոմը,- գրում է Բորյանը,- նստած է զրահապատ զնացքի մեջ, հրամաններ է արձակում, իրեն համարում է իշխանություն Ալեքսանդրապոլում եւ կառավարական գերագույն մարմին երկրում... Առանց զրահապատից դուրս գալու, ամբողջ ժամանակ ուղիղ հեռագրաթելով բանակցություններ է վարում Երեւանի կառավարութեան հետ... Բայց իրեն լսող չկա եւ չէր էլ կարող լինել, որովհետեւ ժողովուրդը հակառակ էր եւ ինքը երկրում հող չուներ: Փաստորեն՝ ապստամբները մի փոքրիկ խմբակ էին, որոնք զրահապատ զնացքում նստած՝ սպասում էին ռուս բանակի օգնութեանը, բայց ռուս բանակը չեկավ ու չէր էլ կարող գալ:

Մի անգամ միայն, մայիսի 13-ին, Հեղկոմը փորձեց դիմադրություն ցույց տալ Սեպուհին Անի եւ Աղին կայարանների միջեւ, բայց պարտված փախավ հետ: Եվ համոզվելով, որ իր գործը անհույս է, բռնեց նահանջի ճամփան:

«Ներքին գործոց կոմիսար» Մելքոնյանը ուղիղ հեռագրաթելով կապվեց Երեւան՝ խորհրդարանի անգամ Ս. Թորոսյանի հետ եւ փորձեց խոսել իբրեւ «միջնորդ» կառավարութեան եւ Ալեքսանդրապոլի միջեւ, բայց նրա խոսքերին կարեւորություն տվող չեղավ:

Այս անհաջողությունից անճրկած, նույն օրը, մայիսի 13-ին, Հեղկոմը Սեպուհի մոտ ուղարկեց մի պատվիրակություն՝ բաղկացած Ալեքսպոլի քաղաքագլուխ Լեւոն Սարգսյանից, Սոց. Հեղափոխական Իս. Տեր Ներսեսյանից եւ դաշ-

նակակցական Հիպ. Չոլախյանից: Պատվիրակության պաշտոնն էր՝ բանակցել պատերազմական գործողությունները կանգնեցնելու եւ Ալեքսանդրապոլը կառավարական զորքերին հանձնելու պայմանների մասին:

Սեպուհը պահանջեց, որ Հեղկոմը անձնատուր լինի առանց որեւէ պայմանի, եւ ինքը իր կողմից խոստացավ Հեղկոմի բոլոր անդամներին ապահով կերպով հասցնել Երեւան եւ միջնորդել կառավարության մոտ, որ նրանք չպատժվին, այլ արտաքսվին Հայաստանից:

Պատվիրակությունը արտոնություն է խնդրում գնալու Երեւան, անմիջապես կառավարության հետ բանակցելու համար, բայց Սեպուհը մերժում է:

Երեկոյան ժամը 10-ին, պատվիրակությունը Աղինից վերադառնում է Ալեքսանդրապոլ եւ ուղիղ հեռագրաթելով դիմում է Երեւան՝ զոր. Հախվերդյանին: Պատմելով վերոհիշյալ դեպքը, պատվիրակությունը ասում է. «Մենք վերադարձանք քաղաք եւ ահա բանակցում ենք ձեզ հետ, իսկ Կոմիտեն շարունակում է իր խորհրդակցությունը: Ռազմահեղափոխական կոմիտեն զայրացած է զոր. Խաչատուրովի²⁰ դեմ կատարած մահափորձի առթիվ, որ այսօր ծանր վիրավորված է փողոցում հինգ զնդակով»:

Հախվերդյանը պատասխանում է, թե՝ «կառավարությունը նույնպես դեմ է քաղաքացիական կռվին, սակայն որպես պայման դրան առաջադրում է Ռազմահեղափոխական կոմիտեի եւ ապստամբության բոլոր պարագլուխների, նրանց թվում եւ գլխապետ Մուսայելյանի, պորուչիկ

²⁰ Չոր. Խաչատուրյանը անցել էր բոլշևիկներ կողմը եւ մահափորձի ենթարկվել:

Եվանգելիստի, Արտաշես Մելքոնյանի եւ Ավիս Նուրիջանյանի անպայման հանձնումը, նույնպես եւ զրահապատ գնացքի հանձնումը անվնաս վիճակի մեջ: Կոմիտեն պարտավորվում է ձեռք առնել անհրաժեշտ միջոցները, որպեսզի ոչ մի ղեմադրություն եւ ոչ մի հրացանաձգություն տեղի չունենա կառավարական գործերի դեմ, որ եւ կապահովե ապստամբության անարյուն հաշվեհարդարը: Այդ պայմանները հանձնվելու են Սեպուհին՝ ճշգրիտ իրագործման համար»:

Պատվիրակությունը խնդրում է «ապահովել Ռազմահեղափոխական կոմիտեի անդամների եւ պարագլուխների կյանքը»:

Հախվերդյանը պնդում է անպայման հանձնումի վրա, իսկ ինքը իր կողմից խոստանում է պաշտպանել Սեպուհի միջնորդությունը նրանց կյանքի ապահովության մասին:

Գիշերը, առանց բանակցությունների արդյունքին սպասելու, Հեղկոմի անդամները եւ մյուս պարագլուխ բոլշեւիկները թողին զրահապատ գնացքը եւ ով ուր կարողացավ՝ փախավ կամ պահվեց:

Մայիսի 14-ի առավոտյան ժամը 10-ին, Ադին կայարանից հեռագրաթելով, գնդ. Վեկիլովը հայտնեց գլխավոր հրամանատարությունը, թե՛ «կառավարության հրամանով Սեպուհի ջոկատը կատարեց իր վրա դրված խնդիրը: Ալեքսանդրապոլի կայագորը արտահայտեց կառավարությունը իր հնազանդությունը: Զրահապատ գնացքը գտնվում է մեր գործի տրամադրության տակ: Սեպուհի գործը առաջ է շարժվում դեպի Ալեքսանդրապոլ՝ քաղաքն ընդունելու եւ պաշտպանելու համար: Ալեքսանդրապոլ քաղաքում տի-

րում է լիակատար կարգապահութիւն: Սեպուհի անունից Հայաստանի կառավարութեան եւ Մեծ, Ազատ Հայաստանի պատվին արտահայտում ենք մեր ցնծութիւնը: Հիմա Սեպուհը, գորավար Ղամազյանը եւ ես մեկնում ենք Ալեքսանդրապոլ»:

Ձոր. Նազարբեկյանը շնորհակալութիւն հայտնեց եւ հրամայեց կապել նաեւ Կարսի ու Սարըղամիշի հետ եւ այնտեղ էլ վերականգնել կարգը միեւնոլյն պայմաններով:

Նույն օրն եւեթ ձերբակալվեցին Մուսայելյանը, Մելքոնյանը եւ ուրիշներ, իսկ Ավիս Նուրիջանյանը կարողացավ փախչել եւ անցնել Ազրբեջան:

Հետզհետե հաշվեհարդարի ենթարկվեցին եւ մյուս շրջանների խռովութիւնները: Իջեւանում բռնկեցին ինչքանիցս հաջողվեց բռնել եւ Բաքու գերի տանել ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասյանին, գավառական ինքնավարութեան նախագահ Ն. Ջաղեթյանին, գոր. Բաղդասարյանին եւ մի քանի ուրիշ պաշտոնյաներ ու զինվորականներ, որոնք բոլորն էլ սպանվեցին Բաքուում:

Այսպիսով, Մայիսյան շարժումը վերջացավ բռնկեցիկների ջախջախիչ պարտութեամբ, բայց Հայաստանի նորաստեղծ պետութեան համար էլ ունեցավ ծանր հետեւանքներ:

Բռնկեցիկների պարտութեան գլխավոր պատճառը այն անվիճելի փաստն էր, որ բռնկեցիկները հայ ժողովրդի մեջ ոչ մի լուրջ հող չունէին: Հայ ժողովուրդը չէր համակրում բռնկեցիկներին, բացի այն սակավաթիվ հայերից եւ օտարներից, որոնք բռնկեցիկութեան մեջ Ռուսաստանն էին

տեսում: Հայաստանի առարկայական եւ ենթակայական պայմանները հակառակ էին խորհրդային իշխանության:

Իսկ ինչպե՞ս են բացատրում բուլղեւիկները իրենք իրենց պարտությունը:

Հունիսի 1-ին, Ալեքսանդրապոլի բանտից Թիֆլիսի Երկրային կոմիտեին ուղարկած մի զեկուցման մեջ, Մուսայելյանը, ապստամբության դեպքերը մանրամասնորեն պատմելուց հետո, անհաջողության պատասխանատվությունը ձգում է Արմենկոմի եւ Ալեքսանդրապոլի բուլղեւիկների վրա: Նա գրում է. «Արմենկոմը, որի գործունեությունը մասին ես առանձին զեկուցում եմ տալու, դժբախտաբար, այդպիսի մի սուր մոմենտում բավականաչափ գործունեություն չցուցադրեց: Վերջապես, մայիսի 7-ին եւ 8-ին մեր հարցապնդման հետեւանքով, Արմենկոմից մեզ մոտ եկան բժ. Մելքոնյանը եւ Դրաստամատ Տեր Սիմոնյանը, որոնք ծանոթանալով դրոլթյանը՝ վավերացրին վճռականապես հանդես գալու մեր որոշումը: Զորքերը մարտական դրոլթյան մեջ դնելով՝ ամսի 10-ին մենք Ռազմահեղափոխական կոմիտեի անունից քաղաքը հանձնելու համար վերջնագիր ներկայացրինք իշխանություններին: Քաղաքը հանձնվեց առանց մի զնդակ արձակելու:

Սրանից հետո է, որ մեզ մոտ սկսվում է ներքին տրագեդիան. տեղական ընկերները ստեղծարար, օրգանական աշխատանքներին բացարձակ անընդունակ գտնվեցին: Աշխատանքը վաղօրոք բաշխված էր ընկերների միջեւ, սակայն իշխանությունը գրավելուց հետո, նրանցից ոչ մեկը գրեթե մատը մատին չիսկեց իրեն գիրքերում: Ամբողջ աշխատանքը գլխավորուպես ինձ վրա էր բարդվել: Ես ֆիզի-

կապես ի վիճակի չէի բոլորը ինքս անելու եւ միաժամանակ, իբրեւ Կարմիր գործերի հրամանատար, տանելու իմ հատուկ աշխատանքը: Իսկ Երեւանի կողմից արդեն թշնամու ուժերը շարժվում էին: Արմենկոմի անդամները համարյա ոչինչ չէին անում: Ամբողջ Հայաստանում գործերը գրեթե մեր կողմն էին, բայց տեղերում ուժեղ ձեռքեր չգտնվեցին: Ամենուրեք պահանջվում էր իմ ներկայությունը, իսկ Ալեքսանդրապոլը թողնել՝ ինձ թույլ չէին տալիս:

Կառավարությունը մեր դեմ գինեւ էր գրեթե բացառապես տաճկահայերին, գաղթականներին, մաուզերիստներին եւ կուսակցական Դաշնակներին: Մեր պարենավորման կոմիտեն ոչինչից ոչինչ չէր անում: Իշխանության ներքին ճգնաժամը, պարենավորման բացակայությունը եւ այլ բազմազան պատճառներ ստիպեցին համաձայն Ռազմահեղափոխական Կոմիտեի որոշման քաղաքն առանց կռվի հանձնել»:

Որքան եւ երկար՝ մենք առաջ կբերենք նաեւ հետեւյալ երկու վավերագրերը, որոնք առաջին անգամ են լույս տեսնում արտասահմանում:

Առաջին վավերագիրը Ալեքսանդրապոլի Կոմիտեի հետեւյալ նամակն է Հայաստանի Կոմիտեին՝ կազմված եւ ստորագրված Ավիս Նուրիջանյանի ձեռքով.

«Կոմունիստական Կուսակցության Ալեքսանդրապոլի Կոմիտեն մայիսի 1-ից 10-12 օր առաջ, հետեւապես, Բաքուն գրավելուց առաջ, ընդունեց մայիսմեկյան լոզունգները. այդ թվում էին՝ «Կեցցե՛ խորհրդային Հայաստանը», «Կորչի կոտորածներ սարքող կառավարությունը» եւ այլն: Հեն-

վելով բանվորական մեծամասնության, մանավանդ, երկաթուղու վրա, Կոմիտեն որոշեց առանձին երթով դուրս գալ՝ ուժերի հաշվառման համար: Ազրբեջանում տեղի ունեցած հեղաշրջումը վաղօրոք ապահովեց մեր հաջողությունը. չնայած ճնշումներին եւ զուսպ նախազգուշացումներին, տենդային աշխատանքը կատարվում էր: Ապրիլի 30-ին ձերբակալեցին ընկերներից մեկին, որին մի քանի ժամից ազատ արձակեցին, նախազգուշացնելով՝ «Կորչի՛ Դաշնակների կառավարությունը» եւ մյուս լոգոնգների անթույլատրելիությանց մասին: Մյուսներին ձերբակալելու փորձ եւս կատարվեց, սակայն նրանց չգտան: Մայիս մեկի ելույթը մի զորատես էր Ալեքսանդրապոլի պրոլետարիատի եւ զորքի համար, որ դուրս եկավ բուլչեհիկյան դրոշակի տակ եւ Հայաստանի պատմության մեջ չտեսնված լոգոնգներով: Մեր դեմ էին մի բուռ սպեկուլիանտներ Դաշնակների դրոշակների տակ՝ 200 մարդուց ոչ ավելի: Մեր մասսան 5000-ից ավելի էր: Դաշնակների տապալումը կատարյալ էր: Սկզբում ամեն ինչ ընթանում էր առանց միջադեպերի, սակայն Ալեքսանդրյան փողոցի անկյունում մաուզերիստ Դաշնակցականներից մեկը Խորհրդային Ազրբեջանի հասցեին պրովակացիա արեց եւ դրանով վրդովեցրեց զինվորներին եւ բանվորներին: Դրա հետեւանքն այն եղավ, որ հենց տեղն ու տեղը, Դաշնակների Բյուրոյի մոտքի առաջ, զինվորները ծեծեցին դաշնակ վարժապետ սպեկուլյանտ Մացոյին: Դրան իբրեւ պատասխան՝ մաուզերիստները երկու զնդակ արձակեցին եւ թեթեւ վիրավորե-

ցին հենց իրենցից՝ Դաշնակներից մեկին:²¹ Մեր կողմից նույնպես երկու գնդակ արձակվեց օդի մեջ:

Շնորհիվ զինվորների ու բանվորների գիտակից վերաբերմունքին, որով նրանք ենթարկվում էին բուլշեւիկների կոմիտեի պահանջներին, միջադեպը սպառվեց եւ մատուցեցին ստաների պրոպոկացիան չհաջողվեց: Զինվորների փորձը դիմել դեպի բանտ՝ ձերբակալվածներին ազատելու համար՝ չիրագործվեց դարձյալ կուսակցական կոմիտեի պահանջի հետեւանքով, որ խուսափում էր Դաշնակների նոր պրոպոկացիայից: Յուլյցը, Ավիսի եւ մյուսների ճառերից հետո, ժամը 4-ին, կայարանի մոտ ցրվեց, մինչդեռ երթը սկսվել էր առավոտյան ժամը 10-ին: Անհրաժեշտ է նկատել, որ այդպիսի հաջողութուն կուսակցությունը չէր սպասում նույնիսկ այդ օրն առավոտյան: Ընդունված էին մեր առաջարկութուն-պահանջները՝ ձերբակալվածներին ազատ արձակելու, պատգամավորների խորհուրդը կազմակերպելու եւ խորհրդային Ազրբեջանը ողջունելու մասին: Ողջունյի հեռագիրը կազմված էր կոմունիստական եւ շատ սուր ոգով՝ հիշատակելով հայ մուսաֆաթիստների խմբապետական կառավարության դեմ միասնորեն կռվելու մասին, խորհրդային Ազրբեջանի բանվորների, գյուղացիների եւ ասկյարների պատգամավորների խորհուրդը ողջունելու մասին եւ այլն: Բանաձեւն ընդունվում է միաձայն, բոլորն եւ երկարատեւ ծափահարութուններով, «ուռա»յի բացահանչութուններով: Եթե այդ օրն իշխանությունը գրավված չէր, այդ ոչ թե այն պատճառով էր, որ մենք անգոր էինք, այլ միայն զինվորական մասսայի անբավարար

²¹ Գնդակ արձակողները բուլշեւիկներն էին: Ս.Վ.:

կազմակերպված լինելու եւ թալաններից երկյուղ կրելու պատճառով:

Նույն գիշերը ձերբակալված է ընկերներից մեկը, մյուսների մոտ էլ են եղել, բայց նրանց տներում չեն գտել: Այժմ դրուժյունը այսպես է: Այդ օրը բոլոր զինվորական մասերը կազմել են գնդի կոմիտեներ եւ ներկայացել ընկ. Մուսայելյանի զրահապատ գնացքը՝ բանակցությունների համար: Հաստատված է ամենասերտ կապը: Ամբողջ գործը Մուսայելյանի զրահապատի հետ մեր տրամադրության տակ է: Ավելին. քաղաքային եւ երկաթուղային միլիցիայի մեծագույն մասը եւս մեր ձեռքն է: Զորքի մեջ կարգապահությունը պաշտպանվում է հենց իրենց ղեկավարների միջոցով, ընդ որում, ավելի լավ, քան մինչեւ այժմ: Հնարավորություն չկա կանգ առնելու բոլոր այն մանրամասնությունների վրա, որոնք բնորոշում են Դաշնակների կուսակցության կատարյալ սնանկությունը եւ մեր կուսակցության հսկայական բարոյական ուժը եւ ֆիզիկական գորությունը:

Համենայն դեպս իշխանությունը գրավելու խնդիրը, դա մեր ցանկության հարցն է, ոչ թե օրվան, այլ բոլոր խնդիր է: Դաշնակների այն պրովակացիան, թե իբր խորհրդային Ազրբեջանի կողմից Հայաստանի դեմ պատերազմ է սկսված, որ իբր թե նպատակ ունի հայ բուլճերիկների հետ միացած՝ ոչնացնելու բոլոր հայերին, ոչ մի հաջողություն չունեցավ եւ այժմ էլ չունի: Պրովոկատորները քիչ էր մնում ծեծի ենթարկվեին կանանց եւ զինվորների ձեռքով: Այժմ Դաշնակները մտածում են զինաթափ անել զրահապատը: Վերջինս ռազմական դրության մեջ է գտնվում,

ամբողջ օր ու գիշեր հերթապահություն կա. որոշակի հայտնված է՝ զրահապատը չենք հանձնելու: Ջրահապատի զինվորները երգվել են մինչեւ վերջին մարդը մեռնել, բայց անձնատուր չլինել:

Ջորջը ամեն ընդհանուր կարելի էր ոտքի կանգնեցնել մեկ մարդու նման: Ջրահապատի զինաթափման փորձը կլինի մի մարտակոչ, որ մենք ամեն ընդհանուր պատրաստ ենք ընդունելու: Հայաստանի Կոմիտեի որոշումը՝ սկսել Ղազարի գավառից, իսկ Ալեքսանդրապոլը դեռ սպասի, մեզ դնում է անել դրության մեջ: Մենք ամեն ջանք գործ ենք դնում խուսափելու համար կոնֆլիկտից, ձեռքազրկություններից, զրահապատը զինաթափ անելուց, տեռորներից եւ այլն: Սակայն, հակառակ սպասածին, եթե այդպիսիք տեղի ունենան, մարտակոչը պետք է ընդունվի: Այս է Ալեքսանդրապոլի կոմիտեի անչեղ որոշումը. մենք թույլ չենք տա գլխատել այն մասսան, որի ուժի ու կարողության վրա հենվում ենք հենց ինքներս:

Մենք խնդրել ենք տալ մեզ հրահանգներ՝ ինչպե՞ս վարվենք: Հայաստանի Կոմիտեի ամեն մի որոշում մենք պատրաստ ենք կատարելու, սակայն նախագգուշացնում ենք Հայաստանի Կոմիտեին, եթե վերջինս մեզանից պահանջելու լինի՝ ձեռքազրկություններին, գաղտագողի տեռորին, զրահապատի զինաթափման եւ այլն, չպատասխանել իշխանությունը գրավելով, ապա մենք մեզանից վերցնում ենք ամեն մի պատասխանատվություն այն անխուսափելի հետեւանքների նկատմամբ, որ պետք է որ նախատեսնի եւ Հայաստանի Կոմիտեն: Հայաստանի Կոմիտեն Ռուսաստանի Խորհրդային իշխանության եւ պատմության

առաջ պատասխան պիտի տա կուսակցութեան կազմակերպութեան ջախջախման եւ իշխանութեան գրավումը մեկ ամսով, գուցե երկու ամսով հետաձգելու համար: Մենք խնդրում ենք Հայաստանի Կոմիտեին այսօր ելեթ պատասխան տալ մեզ՝ համաձայն է արդյոք նա մեր բռնած դիրքին, այն է՝ մենք ամեն ջանք գործ ենք դնում էքցեսները կանխելու համար, մինչեւ ձեզնից հրահանգներ ստանալը, իսկ մասսայական ձերբակալությունների, անկյունից կատարվող տեռորների եւ, առավել եւս, զրահապատը զինաթափ անելու փորձերի դեպքում, մենք ընդունում ենք մարտակոչը եւ գրավում ենք իշխանությունը: Եթե Հայաստանի Կոմիտեն սրան համաձայն չէ, խնդրում ենք անհապաղ կերպով հրահանգներ տալ:

1. Եթե դուք լիովին համաձայն եք մեր տեսակետին, ապա հայտնեք ուղիղ գծով՝ Միշան առողջ է:
2. Եթե դուք կարծում եք, թե անհրաժեշտութեան դեպքում պետք է հանձնել զրահապատը, կազմակերպությունը ցրել տալ եւ մինչեւ ձեր հրահանգներն ուղարկելը ելույթ չունենալ, ապա նույնպես ուղիղ գծով ասացեք՝ «Միշան վախճանվեց»:
3. Ավիսը՝ Գրիշան է:
4. Զրահապատը՝ հիվանդանոց:
5. Ապստամբությունը՝ դեղորայք:
6. Պարենավորումը քիչ է, չի բավականացնի իշխանությունը գրավելու դեպքում, մինչեւ Ռուսաստանից ստանալը՝ անմիջապես փող փոխադրիր:
7. Տասը-տասնհինգ օր լիովին կբավի հացը եւ այլ մթերքներ՝ փողը փոխադրված է: Մնացածն ամբողջ այնպես կազմեցեք, որ մոտավորապես կարելի լինի հասկանալ: Այսօր երեկոյան ժամը 9-ից մինչեւ 10-ը դուք ուղիղ գծով կանչեցեք Ալեքսանդրապոլից այն ընկե-

րոջը, որին դուք գիտեք եւ խոսեցեք հիշյալ ութ կետերի համաձայն: Եթե ուղիղ գծով չհաջողվի, հեռագիր տվեք Ալեքսանդրապոլ՝ ընկ.՝... (անունը չկա. Ս.Վ.) հասցեով նույն կետերի համաձայն:

Ավիս:

Ալեքսանդր. Կոմիտեի կնիքը,

3 մայիսի, 1920թ.»:

Ավիսի այս թեթեւոլիկ ու պարծենկոտ գրության վրա էր, որ Արմենկոմը Դր. Տեր Սիմոնյանին եւ Արա. Մելքոնյանին ուղարկեց Ալեքսանդրապոլ:

Պետք է համաձայնվել Բորյանի հետ, որ Արմենկոմը իսկապես որ անջիղ եւ ղեկավարելու անընդունակ մարդկանցից էր բաղկացած: Արմենկոմը, 1919-ի գաղտնի ժողովում կազմված էր հետեւյալ անձանցից՝ Ս. Կասյան, Ա. Մուսվյան, Ավիս Նուրիջանյան, Ս. Ալլահվերդյան, Դան. Շահվերդյան, Դ. Տեր Սիմոնյան, Հ. Կոստանյան, եւ Ղ. Ղուկասյան:

Ահա եւ Արմենկոմի սեփական բացատրությունները ապստամբության պարտության մասին:

«Ընկերներ,-գրում է Արմենկոմը Կովկասյան Երկրային Կոմիտեին²²,-Արմենկոմը կամենում էր Դո.այի միջոցով ուղարկել գրավոր զեկուցում Հայաստանի դեպքերի մասին, բայց որովհետեւ բոլոր մեկնողներին հետեւում էին, այդ պատճառով այն ժամանակ չհաջողվեց այդ անել: Ուղարկում ենք հիմա:

²² Այդ Երկրային Կոմիտեին Կովկասի կոմունիստական բոլոր գործերը վարող վերին մարմինն էր, որ ենթարկվում էր Մոսկվային եւ որին ենթարկվում էին Հայաստանի, Վրաստանի, Ազրբեջանի եւ Կովկասի մյուս մասերի համայնապար կազմակերպությունները: Ս. Վ.:

Ազրբեջանի դեպքերից, այլեւ Հյուսիսային Կովկասում մերոնց տարած հաղթանակներից հետո, այստեղ տրամադրուեթ յունը խիստ փոխվել է մեր օգտին:

Հաշվի առնելով այդ ամենը եւ նկատի ունենալով Հայաստանի կազմակերպութիւնների կոնֆերանսի որոշումը՝ Հայաստանում, Խորհրդային զորքերը մոտենալիս, այլեւ հարեւան հանրապետութիւններում հեղաշրջումներ լինելուց հետո իշխանութիւնը գրավելու նպատակով ելույթ ունենալու մասին, Արմենիոմը սկսեց այդ ուղղութիւնով աշխատանք կատարել:

Շարժման սկզբի համար իբրեւ բազա նշանակված էր Ղազախը եւ դրա հետ միաժամանակ ելույթներ պետք է սկսեին ամենուրեք: Արմենիոմը կանգնեց հենց այդ տեսակետի վրա, որովետեւ նախ՝ Ղազախը կված էր Խորհրդային Ազրբեջանին, իսկ մյուս կողմից՝ նկատի ունենալով դազախեցիների հեղափոխականութիւնն ու տոկունութիւնը: Այդ նպատակով համապատասխան հրահանգներ ուղարկվեցին այնտեղ: Առաջարկված էր այնտեղից եկած ընկերոջը կազմել Ռազմ. Հեղկոմիտե, մոբիլիզացիայի ենթարկել բոլոր ուժերը եւ պատրաստվել ելույթի՝ կապվելով միաժամանակ Ազրբեջանի ընկերների եւ Ազրբեջանի միջոցով այն կողմի հետ: Նույնը կատարված էր եւ Ղարաբաղի վերաբերմամբ (մոտավորապես ապրիլի վերջին), բայց ընկերների ուղարկելու գործը ձգձգվեց:

Մայիսի մեկի ելույթի համար մենք պատրաստվում էինք ամենուրեք. մեզ համար այդ օրը խաղաղ ցույցի միջոցով մեր ուժերի զորատեսի օր պիտի հանդիսանար:

Մալխոմեկյան ցույցերի հաջողութիւններն ամենուրեք ակնհայտորեն ցույց տվին, թե որպիսի խոր արմատներ է ձգել կուսակցութիւնը լայն մասսաների՝ այդ թվում նաեւ զինվորական մասսաների մեջ: Եղել էին տեղեր, որտեղ բնակչութիւնը եւ զորքը բացառապէս մեր դրոշակի տակ էին հավաքվել (Ղարաքիլիսա, Սարըղամիշ):

Այդ օրը (մալխոմեկ) իշխանութիւնը գրավելու խնդիրը չէր դրված մեր առաջ, սակայն, այդ օրվանից արդեն պարզ էր, որ այդ հարցը ամենամոտ ապագայի հարցն է հանդիսանում: Այդ ուղղութիւնով տենդային աշխատանք սկսվեց եւ այդ իսկ նպատակով կազմակերպութիւնները ռազմական դրութիւն մեջ էին դրված:

Մալխոմեկյան մենք Թիֆլիս ուղարկեցինք ընկ. Հ. Հայկազին, որպէսզի արտակարգ կերպով այստեղ ուղարկեն Ս. Կասյանին եւ Ասքանազ Մուսայանին, արդէն պատրաստվելով Հայաստանում հաստատել խորհրդային իշխանութիւն, որովհետեւ, կրկնում ենք, հավատացած էինք, որ դա ամենամոտ ապագայի խնդիր է:

Մալխոմեկյան մենք տեղեկութիւն ենք ստանում Ալեքսանդրապոլում կատարած մալխոմեկյան տոնի մասին, այլեւ ընկ. Ավիսի լրիվ անունով ստորագրած ողջույնի մի ընդարձակ հեռագիրը Բաքու ընկ. Նարիմանովի անունով: Քանի որ մեկ կողմից ինքը՝ Արմենկոմը, ողջույնի հեռագիր էր ուղարկել Խորհրդային Ազրբեյջանին դեռեւս մալխոմեկին եւ մյուս կողմից՝ ի նկատի ունենալով Ավիսի հեռագրի յուրահատուկ տողը, որ անընդունելի էր տակտիկական տեսակետից, Արմենկոմը որոշեց այդպիսին չուղարկել եւ ամեն կողմից ստացված տեղեկութիւնների հի-

ման վրա կազմել արդեն ընդհանուր բնույթ կրող մի ողջույն:

Այդ արված է:

Մայիս 3-ին մենք ընդարձակ զեկուցում ստացանք Ալեքսանդրապոլի դեպքերի մասին:

Ալեքսանդրապոլի բոլոր փաստաթղթերի պատճենները սրա հետ ուղարկում ենք: Ջեկուցման մեջ մանրամասնորեն հաղորդվում էր այնտեղ՝ Ալեքսանդրապոլում տիրող դրուժյան, զրահագնացքի մասին եւ այլն: Այդ զեկուցումը, ինչպես ինքներդ էլ կտեսնեք, լի է հակասություններով եւ բավական տարօրինակ տպավորություն է թողնում:

Ելույթի տարերայնությունն ու անկազմակերպությունն արդեն երեւում են հենց այն բանից, որ նրանք իրենք են գրում, թե՛ «առավոտյան այդպիսի հաջողության չէինք սպասում»: Պարզ է, որ եթե նրանք հույս չէին ունեցել մայիսմեկյան ցույցի հաջողության վրա, ապա եւս առավել խոսք անգամ չէր կարող լինել արդեն իշխանությունը գրավելու նպատակով հաջող եւ կազմակերպված ելույթ ունենալու մասին:

Այստեղ ամբողջ բանակն ու բնակչությունը մեկ անգամից անցան նրանց կողմը եւ որ Դաշնակների մոտ երկու հարյուր մարդ կար, իսկ նրանց կողմում՝ հինգ հազար: Եթե նույնիսկ «իշխանությունը չէր գրավված, ապա ոչ այն պատճառով, որ մենք անգոր էինք, այլ զինվորական մասսաների անկազմակերպության պատճառով եւ թալաններից երկյուղ կրելուց»: Հանկարծ, մեկ անգամից ամբողջ «գործն ու զրահապատը մեր տրամադրության տակ են անցնում եւ այդ պատճառով այստեղ իշխանություն

գրավելու հարցը մեր ցանկութեան խնդիրն է եւ ոչ թե օրվան, այլ ընդհանուր հարցը: Իսկույն եւեթ, մի օրվա ընթացքում, կազմակերպված գինվորներն արդեն երգվեցին մինեւ վերջին մարդը մեռնել, բայց անձնատուր չլինել: Թե ինչպես նրանք այդ իրագործեցին, ձեզ՝ ընկերներ, արդեն հայտնի է: Այնուհետեւ, այդ բանն ընդգծում ենք, ընկերներ, որ Ալեքսանդրով նրանք իշխանությունը ձեռք ձգելու խնդիրը կապում էին ձերբակալությունների, անկյունից կատարվող տեռորների հետ: Միաժամանակ հաղորդում են, թե պարենը շատ քիչ է, իշխանությունը գրավելու դեպքում մինչեւ Ռուսաստանից ստանալը չի բավականացնի եւ այլն:

Առաջինը, ուշադրութեան առնելով նրանց այսօրինակ հաղորդագրությունները, ընկեր Ավիսի մշտական հափշտակվիրը, որ մինչեւ արկածախնդրութեան էր հասնում (մենք նկատի ունենք հինգ ամիս սրանից առաջ Բաքվում եղած նրա ելույթը, որով նա հանուր աշխարհին ազդարարում էր կոմունիզմի լիակատար հաղթանակը Հայաստանում եւ Գաշակների սնանկութեան մասին) եւ որ այդ բոլորը նրանք կատարում էին գրահապատի մեջ նստած, այսինքն՝ լարված, ներվային դրութեան մեջ, նրանց վախը ձերբակալություններից, ճշումներից եւ «անկյունից կատարվող տեռորից»,՝ մենք հավատացած էինք, որ այդ բոլորը հափազանցված է, եւ որ, նույնիսկ այնտեղ ինչ որ լինի, ելույթի խնդիրն արդեն կաշվի խնդիր է հանդիսանում նրանց համար, սեփական կյանքը փրկելու մի հարց եւ այլն:

Դեռ ավելին. մենք հավատացած էինք, որ նրանց հաջողութունը չի կարող կայուն լինել, որ անհրաժեշտ է ամենուրեք համաձայնեցնել մեր գործողութունները, քանի որ անջատ ելույթները փոշիացման եւ պարտության կհասցնեն, որ անհրաժեշտ է բոլոր շրջանների հետ կապ ունենալ, եւ այլն, եւ այլն:

Ազդանշան տվողը Ղազարը պետք է լիներ, ահա Արմենկոմի նախագիծը: Այս որոշումն էլ տեղեկացված էր ավեքսանդրապոլցիներին եւ առաջարկված էր նրանց սկսած գործը անհիվանդագին կերպով լիկվիդացիայի ենթարկել ըստ կարելվոյն, կամ գոնե ձգձգել:

Ալեքսանդրապոլի բուլեւիկները չցանկացան հաշվի առնել այդ: «Ինչու Ղազարը եւ ոչ Ալեքպոլը»,-ահա նրանց պատասխանը: Մենք նույնիսկ հակառակ ենք սկզբից կապ հաստատելուն»:

Նրանք առաջնության մասին էին դրել խնդիրը, մոտենալով այն հարցին, ըստ երեւույթին, սպորտի տեսակետից:

Նրանք սկսում են ռմբակոծել մեզ իրենց պահանջներով ելույթին սանկցիա տալու մասին, մինչդեռ բանից դուրս եկավ, որ այդ բանը նրանք արդեն արել են եւ այժմ այլեւս ոչ մի կասկած չկա, որ այդ հաղորդագրութունները մեզ ուղարկելիս են եղել հենց այնպես, նույնիսկ դիտավորյալ, որովհետեւ բնավ հաշվի չառնելով Արմենկոմին եւ բացահայտորեն նախատեսելով իրենց ելույթի անհաջողությունը՝ նրանք դիտամամբ ռմբակոծում էին մեզ իրենց պահանջներով, որպեսզի հետեւանքների մեղքը մեզ վրա ձգեն:

Եվ այսպես ահա՝ Խորհրդային իշխանութունը, թեպետեւ բավականին յուրահատուկ (ապստամբության պարա-

գլուխները 12 օր նստած էին զրահապատի մեջ եւ համառոտ-
րեն չեն իջնում այնտեղից): Պարզ է, որ եթե նրանք լուրջ
տրամադրութիւններ ունենային, ապա դեպքերի բնական
ընթացքով պետք է իրենց հաջողութիւնը զարգացնէին եւ
ծավալէին մոտակա շրջանների հետ եւ նուազագուծապէս
զացման դիմեին Երեւանի ուղղութիւնը:

Ամսի 5-ին գալիս է այնտեղից նրանց կողմից ուղարկ-
ված մի ընկեր, երկաթուղային մի բանվոր, որ իր բանավոր
զեկուցման մեջ արդեն ինֆորմացիա է տալիս իրերի դրու-
թյան մասին, որ հիմնովին հակասում է ընկ. Ավիսի հաղոր-
դագրութիւններին: Այդ բանի վրա ուշադրութիւն է
դարձրել ամբողջ Արմենկոմը: Ի դեպ, նա ասաց, որ «այն-
տեղ ընկերները չափազանց ոգեւորված են» եւ այլն: Հենց
նա էլ բերել էր ակնբացող փաստերի նամակը:

Հենց նույն գիշերը, այսինքն մայիսի 5-ին, մենք Ա-ի եւ
Մ-ի²³ ստորագրութիւններ կրկին մի հեռագիր ենք ստանում
դարձյալ Բաքու ուղարկելու համար, որ մենք պետք է
ուղիորդով հաղորդեինք ընկեր Նարիմանովի անունով:

Նման բովանդակութիւնով հեռագիր մենք այն պահին իս-
պառ անընդունելի համարեցինք, մի հեռագիր, որ այն ժա-
մանակ ստեղծված պայմաններում անպայման պրովոկա-
ցիոն դեր էր խաղալու: Դա վերջնականապէս պիտի խոր-
տակեր մեր կազմակերպութիւնները: Մի մոռանաք, ըն-
կերներ, որ մեզ հաղթեցին նրանով, որ անտանելի ծանր
միջոցառում ստեղծեցին Ազրբեջանի շուրջը, ազգայնական
թշնամանք առաջ բերին եւ Հայաստանի սահմաններում
ամենուրեք հակամոտուստական ելույթներ էին նախա-

²³ Ավիս եւ Մուսայեւյան:

պատրաստում (դրա մասին տես ստորեւ): Այդ օրերին դրուժյան տերերն էին հանդիսանում սասունցի, գեյթունցի, վանեցի մառգերիստները, գլխավորապես տաճկահայերը: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ էր հարկավոր ալեքսանդրապոլցիներին այս ամենը: Հեռագիրը որոշ տեսակի ուկրամային բնույթ էր կրում, իսկ գործին խոշոր վնաս հասցնում, քանի որ առանց այն էլ մեր թշնամիները խոսում էին «Զանգի Բասար-Բոյուքվեդյան բոլշեւիկյան ելույթների մասին»:

Հենց այդ միջոցին էլ Մ.-ից²⁴ հրաման ստացվեց իր օգնականի անունով՝ Ղամարլուում կանգնած զրահապատի հետ միասին շարժվել դեպի Ալեքսանդրապոլ:

Պարզ է, որ մենք գործ ունեինք արդեն կատարված փաստի հետ եւ որոշեցինք գործին միջամտել, նրան կազմակերպված բնույթ տալ եւ դիմանալ, մինչեւ այլ վայրերում գործողությունների սկսվելը, նույնիսկ Երեւանում:

Ուրիշ ելք մենք այլեւս չունեինք: Այդ նպատակով մյուս օրը, այսինքն՝ մայիսի 6-ին, ուղարկեցինք այնտեղ ընկերներ Դ.-ին եւ Ա.-ին²⁵, լայն լիազորություն տալով նրանց եւ պարտավորեցնելով, որ եթե չի կարելի կասեցնել ապստամբությունը, որ անհրաժեշտորեն պետք էր անել, ապա միաժամանակ կապվել Ղարաքիլիսայի շրջանների, չեզոք գոտու եւ հարակից շրջանների հետ:

Այստեղ զինվորական մասերում տենդային աշխատանք էր կատարվում: Ընկերներից մեկին՝ Արմենկոմի անդամի միջոցով այն զինվորականների հետ, որոնք այդ ժամանա-

²⁴ Մուսայելյան:

²⁵ Դրաստամատ Տեր Միմոնյան եւ Արտաշես Մելքոնյան:

կում կազմակերպված էին՝ շարունակաբար խորհրդակցութ-
յուններ էին կազմակերպում:

Կապ է հաստատված Քանաքեռում կանգնած գործարար-
հետ, եւ երբ որ մայիսի 7-ին Դ-ից եւ հանգուցյալ Ա-ից
մենք գրություն ստացանք, որ նրանք կանգնած են կատար-
ված փաստի առաջ եւ խնդրում են ագիտացիա մղել
ուղարկվելիք գինվորական մասերում, այլեւ թիկունք տալ
իրենց Նոր-Բայազետի շրջանում, Ելենովկայի ուղղու-
թյամբ, երկուստեք համերաշխ գործողությունների
համար, ապա մենք այդ ուղղությամբ ինչ որ կարելի էր,
անում էինք: Համապատասխան հրահանգով մենք Նոր-
Բայազետի շրջան ուղարկեցինք այժմ հանգուցյալ ընկեր
Սարուխանյանին (նա մեկնեց 9-10-ին), որ ի կատար ածեց
Արմենկոմի առաջարկությունը եւ սկսեց
գործողությունները:

Անհրաժեշտ է նշել, որ Նոր-Բայազետի շրջանի ուժեղ
կազմակերպությունը, որի մեջ մտնում էին նաեւ գինվո-
րականները, ապրիլի կեսերին ջախջախված էր եւ ընկեր-
ները ընկ. Սարուխանյանի գլխավորությամբ եւ մի սպայի
հետ արտաքսվել էին Նոր-Բայազետի շրջանի սահման-
ներից: 6-ի գիշերը լույս 7-ին այստեղ սկսվեցին բռնու-
թյուններ եւ չտեսնված հալածանքներ: Դա կապ ուներ
Ալեքսանդրապոլի հետ: Մենք անցանք անլեզալ դրության:
Կազմակերպության հետ կապը չէր կորցված:

Հետեւյալ օրը՝ մայիսի 8-ին, այն գինվորներին, որոնց
հետ կապ էինք հաստատել, մեր կողմից շեշտակի հարց
դրվեց՝ կարելի է արդյո՞ք այստեղ հենց հիմա ելույթ ունե-
նալ: Այդ հարցին նրանք պատասխանեցին, որ առայժմս

այդ հնարավորութիւնը չկա, որ զորամասերում տատանումներ կան, որ դեռ պետք է աշխատել, սակայն Ալեքսանդրապոլի ուղղութիւնով առաջացող զինվորական մասերը խոստացան Ալեքսանդրապոլին մոտենալուց անցնել ապստամբներին կողմը:

Այդպիսի պատասխան ստացանք մենք գիշերվա ժամը մեկին. միջնորդը հետզհետե խտանում էր: Թերթերում աննախընթաց ցուցադրանք սկսվեց, կազմակերպվեցին արտակարգ դատարաններ, մահվան պատիժը սահմանված, պառլամենտը արդեն ցրված էր:

Իշխանութիւնը իրենց ձեռքին պահելու նպատակով, Դաշնակները պրովոկացիայի ենթարկեցին թուրքերի շարժումը Ջանգիբասարի, Փարաքարի եւ այլ շրջաններում. կազմակերպում էին հարձակումներ, ջուր չէին բաց թողնում, անասունները գրավում էին եւ այլն: Թերթերում գրում էին, թե այդ ելույթը բուլղերիկներն են կազմակերպել: Մինչեւ ատամները զինեցին բոլորին՝ սպեկուլիանտներից սկսած մինչեւ զիմնազիստները: Մեր դեմ պայքարը Դաշնակցութիւն կուսակցութիւնը վերցրել էր իր ձեռքը: Ձերբակալումները համար բացառապես մտուզերիստներին էին ուղարկում: Մեզանից ոմանք փաստորեն օրենքից դուրս էին հայտարարված: Ձերբակալում էին նույնիսկ նրանց, ովքեր հենց միայն հանդիպում էին մեզ:

Այսպիսի պայմաններում աշխատանքն այնուամենայնիվ շարունակվում էր, եւ Արմենկումը ոչ մի ընդհատում կազմակերպութիւնների հետ կապը չկորցրեց: Պետք է նկատել, որ սկզբի օրերին ակտիվ ընկերներից քչերը ձերբակալվեցին այստեղ:

Այդպիսի միջնորդում, ամսի 8-ին-9-ին, Արմենիոմին Հաջողվեց իր ստորագրութամբ բաց թողնել երեք օր առաջ պատրաստած թերթիկը (մինչ այդ ժամանակ ՀՀ-Նողվեց տպագրել)։ այդ թերթիկով մենք ցանկանում էինք ցրել թունավորված այն միջնորդը, որ ստեղծված էր Ազրբեջանի շուրջ: Տպարանը կնքված էր, եւ մեզ ՀՀ-Նողվեց թերթիկը բաց թողնել:

Մայիսի 12-ին թերթերից իմանում ենք, որ Ալեքսանդրապոլը բանակցություններ է վարում կառավարական ներկայացուցիչների հետ: Դաշնակները գրում էին. «Ալեքսանդրապոլի դավաճանները փրկություն են խնդրում»: Դա բոլորի վրա ճշող տպավորություն թողեց: Մայիսի 13-ին Ալեքսանդրապոլի ընկերները, առանց կովի հանձնում են քաղաքը եւ այստեղ, իհարկե, ամեն ինչ վճռվում է: Եվ այսպես արագ կերպով գրավելով իշխանությունը՝ նրանք նույնպիսի արագութամբ անձնատուր եղան:

Ինչպես պարզվում է, ալեքսանդրապոլցիներն ամբողջ ժամանակ թերթ չեն եղել բաց թողած. եթե նրանք մի երեք օր էլ դիմանային, բանն ուրիշ ընթացք կստանար, որովհետեւ Ալեքսանդրապոլի ընկերուց սկսվեց ապստամբությունը Նոր-Բայազետի շրջանում, որտեղ ղեկավարում էր ամբողջ ժամանակ դիրքերում գտնվող ընկ. Սարուխանյանը: Այնտեղ նրանք կարծում էին, թե Ալեքսանդրապոլը դեռ դիմանում է եւ իրենք էլ սկսում են առաջխաղացումը: Եղավ մի մոմենտ, երբ կառավարական զորքերը տատանվեցին եւ սկսեցին նահանջել, սակայն, վերջիններս թվական գերակշռությունը (նրանց օգնելու մեկնեցին Ալեքսանդրապոլից արդեն վերադաձած մտուցերիստները), եւ

մի խմբի դավաճանությունը, ինչպես ասում են, հարցն այլ կերպ վճռեց եւ 4-5 օրվան համառ դիմադրությունից հետո, նորբայագետցիները կռվով հանձնեցին քաղաքը: Այս բոլոր դեպքերին ականատես եղած ընկերն անձամբ այս ամենը գեկուցեց Արմենկոմին:

Եվ այսպես, համառ դիմադրությունից հետո, Նոր-Քայագետը հանձնվեց: Ապստամբների մի մասը քաշվեց սարերը, մի մասը ձերբակալվեց եւ նրանցից մի քանիսը, ընկ-Սարուխանյանի գլխավորությամբ, գնդակահարվեցին: Սարսափելի կերպով վարվեցին ընկ. Սարուխանյանի հետ, ուղղակի ինկվիզատորների նման: Այսպես, օրինակ, երկու ձիավոր նրա երկու ձեռքից բռնած եւ ձիերը քշելով քարշ էին տալիս քաղաքի միջով: Մեր ընկերները տեսել են նրան Փուրգոնի մեջ պառկած, ուշաթափ վիճակում: Ռազմադաշտային դատարանի որոշմամբ նա գնդակահարվել է: Նրա վերջին խոսքերի մասին «Հառաջ»-ի մեջ գրվածը ամբողջովին մտացածին է:

Ղազախում ելույթն սկսվեց նույնպես Ալեքսանդրապոլի եւ նույնիսկ Նոր-Քայագետի անկումից հետո: Մեր կողմից երեք օր առաջ Դիլիջան էր ուղարկված մի ընկեր՝ ինֆորմացիայի համար: Գիտենք, եւ ձեզ էլ հայտնի է, որ այնտեղ մտել են խորհրդային զորքերը եւ իրենց հետ տարել են Դաչնակներին: Կարսում եւ Սարիղամիչում նույնպես տեղի են ունեցել ապստամբության ելույթներ, սակայն այդպիսիներն այնտեղ էլ են ճնշվել: Այնտեղ, ընդհարման ժամանակ, ընկավ ընկ. Ղուկասը (այսպես են մեզ հայտնում), այլ ընկերների հետ (դեռեւս ստուգված չէ):

Մենք չէինք կարող ավանտյուրայի դիմել եւ արդեն հավանություն էինք տվել Իգդիրի ելույթներին, որտեղ այդ միջոցին շատ ուժեղ գինվորական կազմակերպություն կար եւ անձնվեր գործամաս: Այժմ այնտեղի ամբողջ շտաբը (5-ը՝ գինվորական եւ 5-ը՝ քաղաքացիական) գտնվում է Երեւանի բանտում:

Ինչպես ինքներդ էլ տեսնում եք, հողը գրեթե ամենուրեք լրջորեն պատրաստված էր. դա մի պատահական արմատագուրկ ապստամբություն չէր, բնավ երբեք: Եթե այդ բոլորն անհաջող վերջացավ, դա միմիայն ակեքսանդրապոլցիների վաղաժամ ելույթի պատճառով էր:

Անհնար լինելով ամենուրեք արագորեն կազմակերպել գործողություններ եւ անջատ գործողություններին ձեւավորում տալ, այլեւ շնորհիվ շրջանների միջեւ երկաթուղային հաղորդակցության բացակայության, կանոնավոր ինֆորմացիան եւ գործողությունների համաձայնեցումը հնարավոր չէրավ:

Բնականաբար, այդպես չէր լինի մի երկու շաբաթ հետո:

Ընկ. Արտաշեսը ձերբակալվելուց հետո խիստ ծեծի ենթարկվեց: Եվ երբ նրան էջմիածնի վրայով բերում էին Երեւան, քաղաքից 5 վերստի վրա գնդակահարվեց: Այդ բանին սանկցիա էր տրված Դաշնակիների կուսակցության եւ կառավարության կողմից:²⁶ Այսպես վարվեցին ահա մեր ընկերների հետ մեր հակառակորդները, մինչդեռ այն տեղերում, որտեղ իշխանությունը մերոնք էին գրավել, ոչ մի բռնություն չէր գործադրված մեր հակառակորդների վերաբերմամբ: Այդ բանն իրենք էլ չեն ժխտում: Այսպես,

²⁶ Բացարձակապես անճիշտ է: Ս.Վ.:

օրինակ, Նոր-Բայազետում գերի առնված զորավար Սիլիկովը հենց ինքը հաստատում է այդ:

Ներկայումս ամբողջ քաղաքը (Երեւանը) զինվորական ճամբարի է վերածված: Աննկարագրելի բաներ են կատարվում. բռնում են փողոցում ում ասես, ինքը՝ ներքին գործերի մինիստրը, «ձախ» դաշնակցական Ջամալյանը փողոցում ձերբակալում էր մեր ընկերներին: Կուսակցության (Դաշնակցության) ամեն մի անդամ օգտվում է ինչպես փողոցներում, այնպես էլ տներում ձերբակալություններ կատարելու իրավունքից:

Կուսակցական աշխատանքն այստեղ չի ընդհատվել. ընկերներին ամեն օր հրահանգներ են տրվում. տասն օր առաջ հրավիրված էր արտակարգ քաղաքային խորհուրդ, որտեղ լսվեց Արմենկոմի զեկուցումը: Ընտրվեց Քաղաքային Բյուրոն, որի վրա ժամանակավորապես դրված էր Քաղաքային Կոմիտեի Ֆունկցիաները: Գրեթե ամեն օր Բյուրոն նիստեր է ունենում. կազմակերպված էր «Կարմիր Խաչը», որ կապված է կալանավորների հետ: Վերականգնվում են կապերը շրջանների հետ՝ տեղերում կազմակերպությունները վերականգնելու նպատակով: Ներկայումս Արմենկոմը բաղկացած է երկուսից: Մենք մեր դիրքերում ենք, բայց այս վիճակում Երեւանում երկար մնալու ոչ մի հնարավորություն չկա: Ձերբակալությունն այժմ անխուսափելի հատուցմամբ է սպառնում յուրաքանչյուրին, որովհետեւ Դաշնակների կուսակցությունը այդ ոգով որոշում է կայացրել: Վրաստանում կուսակցության լեզալիզացիայի հետեւանքով անհրաժեշտ է այնտեղից սրանց սղմել: Ուղարկեցեք ընկերները: Թող Բաքվում Դաշնակցա-

կաններին չարձակեն, սրանք այդ բանից արդեն չփոթված են:

Երեւանում ձերբակալված են 50 մարդ, որոնցից 14-ը ուղարկված են Սեւանի կղզի: Սարիղամիչից բերված են 5 (զինվորական), Իգդիրի շրջանից՝ 9 (զինվորական), 64 մնացյալներից: Աշտարակից՝ 3, Արտաշատից՝ 3 եւ Ղամարլուից՝ 4: Մի քանի ընկերներ թաքնվել են: Հաղորդում են, որ Ալեքսանդրապոլում նստած են 100-ից ավելի ընկերներ: Կարիքը մեծ է: Նախահաշիվը կարող ենք ուղարկել միմի-այն տեղերում կազմակերպությունները վերականգնելուց հետո: Ուղարկված դրամը մի կաթիլ է ծովի մեջ:

Կազմակերպությունը վերականգնելու նպատակով մենք ընկերներ ենք ուղարկել Դիլիջան: Ուղարկում ենք Ղարաքիլիսա: Շրջանների համար ազատ ընկերներ քիչ կան: Ահա ընդհանուր գծերով երկրի ներկա դրությունը, մեր վերաբերմունքը դեպքերին եւ նրանց գնահատումը: Մենք ամեն ժամանակ պատրաստ ենք բանավոր բացատրություններ եւս տալու, եթե այդպիսին կպահանջվի:

Այսօր տեղեկություն ստացանք, որ մաուզերիստները խմբերը ուղարկված են եւ ուղարկվում են Ղարաբաղ: Շըրջապատում են նաեւ Զանգիբասարի շրջանը:²⁷

Ռ.Կ.Կ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ
(ԱՐՄԵՆԿՈՄ)

1920թ. մայիսի 31, Երեւան

²⁷ Ինչպես այս, այնպես եւ Ավիսի գեկուցման մեջ կան շատ անճիշտ վերագրումներ ու մեղադրանքներ Հայաստանի կառավարության եւ Հ.Յ.Դաշնակցության հասցեին: Ավելորդ ենք համարում դրանցով զբաղվել: Վավերագրերի արժեքը բողջելիկների արած խոստովանությունների մեջ է: Ս.Վ.:

Ինչ եւ լինին Արմենկոմի եւ մյուս պատասխանատու բոլշեւիկների չքմեղանքները, փաստը մնում է փաստ. Հայաստանի քաղաքական կյանքի ամենածանրակշիռ վայրկյանին, հայ բոլշեւիկները չքաշվեցին խռովություններ հանելու երկրի ներսը, եղբայրասպան քաղաքացիական պատերազմ ստեղծելու եւ զինված ապստամբության միջոցով Հայաստանի անկախությունը խորտակելու եւ պետական իշխանությունը հափշտակելու փորձ անելու: Հայ ժողովրդի կամքով այդ դավը վիժեց, բայց անհաշիվ վնասներ ունեցավ թե՛ ներքին, եւ թե՛ արտաքին կյանքում:

VI

ՀԱՅ ԵՒ ԱԶՐԲԵՋԱՆՑԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԴԱՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Մայիսյան ապստամբությունը վերջացավ բոլշևեիկների ջախջախիչ պարտությունից, բայց եւ շատ ծանր նստեց հայ ժողովրդին:

Հայաստանը ավելի քան երբեք, կարիք ուներ ներքին եւ արտաքին խաղաղության: Չպետք է մոռանալ, որ 1920 թվականն էր: Հայ պետությունը նոր էր ոտքի կանգնել, եւ երկիրը լծված էր վերաշինական տենդոտ աշխատանքի: Թե՛ կառավարությունը, եւ թե՛ ժողովուրդը, ուժերի արտակարգ լարումով եւ անձնվիրությունից, դարձանում էին հին վերքերը եւ տնտեսական ու քաղաքական նոր շենք կառուցում - պետական կազմակերպություն, հարեւանների հետ վիճելի խնդիրներ կարգադրություն, խաղաղության դաշնագրի նախապատրաստություն, ներգաղթ, արտաքին փոխառություն, «Ոսկի Փոնդի» կազմակերպում, հաղորդակցություն միջոցների կանոնավորում, ներքին անդորրություն հաստատում, տնտեսական ու մշակութային ձեռնարկներ, հողային հարցի կարգադրություն, հացի պաշարը ապահովելու համար համատարած սերմնացան՝ կառավարության օժանդակություն... 1920-ի սկզբները Հայաստան եղողը կհիշե, թե ինչ արտասովոր ոգեւորություն ու եռուզեռ էր տիրում երկրում:

Բոլշևեիկյան խռովությունները անասելի հարված տվին այդ ոգեւորություն ու ստեղծագործական թափին, խախտեցին ներքին կյանքի ընթացքը եւ մեծապես վարկաբեկեցին

հայ պետութեանը հաջա արտաքին աշխարհի: Բավական է ասել միայն, որ տարվա ամենալավ եղանակին, ամբողջ մի ամիս, ժողովուրդը ձեռնաթափ եղավ աշխատանքից՝ ստիպված կռվով հայրենիքի ազատութիւնը եւ իր իրավունքները պաշտպանելու:

Լեռնային շրջաններում վար ու ցանքը նոր էր սկսված եւ ընդհատվեցավ: Երկաթուղային հաղորդակցութիւնը խանգարվեց եւ դրսից պարեն այլեւս չէր գալիս, որով երկրի տնտեսական վիճակը էլ ավելի ծանրացավ: Արդյունաբերութիւնը եւ առեւտուրը կանգ առին: Զորքը քաշվեցավ քաղաքացիական կռվի ասպարեզ եւ բարոյալքման մատնվեցավ: Օտար ցեղերը՝ թուրքերն ու մալալկանները գլուխ բարձրացրին եւ ըմբոստացան հայկական իշխանութեան դեմ: Հայաստանի պետական վարկը, ճիշտ խաղաղութեան դաշնագրի ստորագրութեան նախօրյակին, ընկավ մեծ պետութիւնների աչքին եւ չափազանց աննպաստ անդրադարձում ունեցավ Հայաստանի Հանրապետութեան միջազգային դիրքի վրա:

Այս ամենը, անտարակույս, չէին կարող չտեսնել ու չգիտակցել նաև հայ բոլշեւիկները, բայց նրանք չբավականացան մայիսյան արկածախնդրութեամբ, այլ ավելի մեծ թափով շարունակեցին պայքարը Հայաստանի պետութեան եւ իշխանութեան դեմ, այս անգամ Ազրբեջանից ու Ռուսաստանից՝ աշխատելով գրգռել ռուսների եւ թուրքերի թշնամանքը «Դաշնակ» Հայաստանի դեմ:

Պետք է որոշ կերպով ասել, թե ուսու բոլշեւիկների վերաբերումի մեջ դեպի Հայաստանի Հանրապետութիւնը խոչոր բաժին ունեցան հայ բոլշեւիկները: Եթե Հայաստանի

վարիչները ազատ լինեին իրենց հարաբերությունների մեջ ռուսների հետ եւ ամեն ընդհանուր չհանդիպեին հայ բոլշևեիկների չարախոսությանց ու դավերին, հայ ժողովրդի գլխին եկած աղետների մի կարեւոր մասը տեղի չէր ունենա:

Հայաստանի ներկայացուցիչները եւ ռուս բոլշևեիկների փոխհարաբերությունները խորհրդային հեղաշրջման սկզբի շրջանում բնավ թշնամական չէին: Ընդհակառակը, բազմաթիվ փաստեր կան, որոնք ցույց են տալիս, որ հայերի ու բոլշևեիկների միջեւ հնարավոր էր որոշ հասկացողություն կայացնել, նույնիսկ հակառակ բոլշևեիկների ակնհայտնի թրքասիրության եւ Հայկական Հարցը թուրքերին զոհելու պատրաստակամության:

Այսպես, 1918 թ. կեսին, Հայաստանի Խորհրդի ներկայացուցիչի դիմումի հիման վրա, Խորհրդային իշխանությունը, հանձին Լ. Տրոցկու, սիրով հոժարեցավ որոշ քանակությամբ ռազմամթերք եւ պատերազմական զանազան միջոցներ տրամադրել հայերին, ինչպես նաեւ թույլ տալ, որ ռուսական զորամասերում ծառայող հայ զինվորներն ու սպաները անարգել անցնեն Հայաստան՝ մտնելու համար նորաստեղծ հայկական բանակի մեջ:

Ստ. Շահումյան, Հ. Նազարեթյան եւ ուրիշներ իրենց կյանքը պարտական էին Դաշնակցականներին, որոնք պատսպարան տվին նրանց իրենց տներում եւ պահեցին ու պաշտպանեցին մենշևեիկների խիստ հետապնդումների դեմ:

Դաշնակցության հավանությամբ էր, որ 1918թ գարնանը, Երեւանում ուսուցչություն անող հայտնի բոլշևեիկ Պ.

Մակինցյանը (այժմ գնդակահարված), Արամի հանձնարարությունյամբ ու տված դրամով գնաց Մոսկվա՝ Խորհրդ. Ռուսաստանի արևելակողմյանը ապահովելու համար թուրքերի դեմ օրհասական կռիվ մղող հայ ժողովրդին:

Բաքվում ամիսներ տեւող հայ-բուլղարական գործակցությունը թուրք-ազրբեջանյան բանակի դեմ հայտնի է ամենքին:²⁸ Նույն Բաքվից, 1918թ. մայիսին, Ստ. Շահումյանի եւ Հայ Ազգ. Խորհրդի համաձայնությունյամբ, Արտ. Չիլինգարյանից (Ռ. Դարբինյան) եւ Սիմ. Հակոբյանից բաղկացած մի պատվիրակություն ուղարկվեց Մոսկվա, ապահովելու համար Խորհրդային իշխանության գինվորական ավելի գործոն օգնությունը Բաքվին:

Մոսկվայում այդ ժամանակ գոյություն ունեւ Հայկական Կոմիտեն, որ զբաղված էր հայերի գործերով եւ հայ գինվորների փոխադրությունյամբ դեպի Կովկաս: Կոմիտեի մեջ մտնում էին Մոսկվայի մի շարք ականավոր հայ դեմքեր՝ պրոֆ. Ճիվեկեյանի գլխավորությամբ: Խորհրդային իշխանությունը լավ աչքով էր նայում նրանց, Հայկ. Կոմիտեի տրամադրության տակ էր դրել Լազարյան ձեմարանի հսկա շենքը, որ, մի տեսակ, հայկական ներկայացուցչության էր վերածված: Այդ շենքում էին տեղակայված, ի միջի այլոց, եւ դեպի Կովկաս մեկնելու պատրաստվող հայ գինվորների գեները: Մոսկվայի գինվորական շրջանի պետ Մուրալովը հատուկ հրամանագիր էր տվել, որ ապահովում էր Հայկական Կոմիտեի շենքի անձեռնմխե-

²⁸ Մանրամասնությունները տես մեր «Հայաստանի Հանրապետություն» գրքում, գլուխ ԺԵ, էջ 135-155:

լիությունը: Հայկական Կոմիտեն գրկաբաց ընդունեց Բաքվի ներկայացուցիչներին:

Ըստ ամենայնի, ջերմ ընդունելություն ցույց տվեց եւ Խորհրդային Կենտրոնական կառավարությունը Բաքվի Հայ Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին եւ պատրաստակամություն հայտնեց ամեն աջակցություն ցույց տալու: Ընդհակառակը, հայ բոլշեւիկները՝ Վահան Տերյան, Պողոս Մակինցյան եւ ուրիշներ, ամեն միջոց գործադրեցին ձախողեցնելու համար պատվիրակության առաքելությունը: Եվ նույնիսկ մատնությունների դիմեցին՝ ներկայացնելով Հայկական Կոմիտեն որպէս հակահեղափոխական մարմին: Հետեւանքը եղավ այն, որ Չեկան խուզարկություն կատարեց Լազարյան ճեմարանում, գրավեց այնտեղի գույքերն ու զենքերը եւ փակեց Հայկական Կոմիտեն:

Հակառակությունը ծայր տվեց եւ աստիճանաբար սաստկացավ այն օրից, երբ հայ բոլշեւիկները, անընդունակ Ռուսաստանում որեւէ գործի տիրանալու, սկսեցին հետաքրքրվել Հայաստանով: Մեծ մասը միջակություններ ու միջակությունից ցած որակի մարդիկ՝ նրանք հույս չունեին համառուսական չափանիշով դեր կատարելու, մինչդեռ Հայաստանում կարող էին հասնել բարձր դիրքերի եւ իշխանություն դառնալ: Կար եւ հին ատելությունը դեպի Դաշնակցությունը, որը խորունկ արմատներ էր ձգել հայ իրականության մեջ, գրավել էր ազգային կյանքի բոլոր ասպարեզները եւ ազատ տեղ չէր թողել մյուս փոքրաթիվ խմբակցություններին՝ ի թիվս որոնց եւ հայ բոլշեւիկներին համար:

Արդեն տեսանք, թե Հայաստանի ներսը ինչ ձեւերի եւ աստիճանի հասավ հայ բոլշեւիկների թշնամանքը Հայաստանի Հանրապետութեան եւ, ի մասնավորի, հայ դեկավարութեան դեմ: Այդ թշնամանքը, ավելի բուռն կրքով ու կատաղութեամբ, մանավանդ, մայիսյան խռովությունների զսպումից հետո, շարունակվեց եւ դուրսը՝ գործակցաբար ադրբեջանցի եւ ուսու բոլշեւիկների հետ: Պայքարը հակադաշնակցական դրոշի տակ էր, բայց իրապես ուղղված էր Հայաստանի դեմ եւ անհաշիվ վնասներ պատճառեց հայ ժողովրդին:

Գլխավոր գեները հայ բոլշեւիկների ձեռքին՝ սուտն ու զրպարտությունն էր: Ի՛նչ թունավոր ստեր ասես չէին հնարվում վարկաբեկելու համար Հայաստանի վարիչներին ուսնների աչքում եւ գրգռելու նրանց ատելությունը դեպի հայերը:

Այդպես վարվեցին հայ բոլշեւիկները եւ մայիսյան խռովություններից հետո փախչելով Հայաստանից: Ահա մի նմուշ եւս հայ բոլշեւիկների շարախոսություններից:

Բաքվի «Կոմունիստ» թերթի մայիս 28-ի համարում «Դիլիջանի Ռազմահեղափ. Կոմիտեի անդամ Կոստիա Այվազյանը եւ տեղական Կոմունիստ. կուսակցութեան ներկայացուցիչ Հակ. Հակոբյանը», ի միջի այլոց, գրում էին.

«Մայիսի 12-ին Ալեքսանդրապոլի պրոլետարիատը չքավոր գյուղացիութեան եւ զինվորների հետ տապալեց Ալեքսանդրապոլում Դաշնակների ատելի իշխանությունը եւ սկսեց առաջ շարժվել Կարսի, Սարըղամիշի, Ղարաքիլիսայի եւ Երեւանի ուղղութեամբ: Ի պատասխան դրան, Դաշնակները արտաքին պատերազմ առաջացրին Բոյուք-

Վեդիցիները եւ Իգդիրի, Սարըղամիչի ու Կարսի քրդերի հետ, որով գրավեցին Կարմիր զինվորների ուշադրութիւնը, մինչեւ որ իրենք մտուցերիստների 3000-անոց բանդայի ու կաշառված ղենիկինյան սպաների գլուխ անցած՝ թիկունքից հարձակվեցին Կարմիր Ալեքսանդրապոլի փոքրաթիվ պահակախմբի վրա: Կոտորելով երկու հազար անպաշտպան բանվորներ ու գյուղացիներ՝ նրանք վերականգնեցին իրենց հակահեղափոխական իշխանութիւնը: «Դաշնակների ահաբեկման սիստեմը սոսկալի է. ամեն մի կոմունիստի տեղն ու տեղը խփում են»:

Ինչքան էլ վրան բաց եւ անհիմն լինեին հայ բոլշեւիկների հորինած հերյուրանքները, նրանց պատճառած վնասը մեծ եղավ Հայաստանի համար: Ստերով ու չարախոսութիւններով զինված հայ բոլշեւիկները Մոսկվա էին դիմում այն պահուն, երբ Հայաստանի Հանրապետութեան պատվիրակութիւնը Լեւոն Շանթի գլխավորութեամբ բանակցութիւններ էր վարում խորհրդային կենտրոնական կառավարութեան հետ:

Շանթի պատվիրակութիւնը Մոսկվա էր հասել մայիսի 20-ին՝ ունենալով կառավարութեան կողմից հրահանգ՝ Խորհրդ. Ռուսաստանի հետ դաշնագիր ստորագրելու հետեւյալ պայմաններով.

1. Խորհրդ. Ռուսաստանը պետք է ճանաչի Հայաստանի անկախութիւնը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում եւ Ղարաբաղն ու Գյուլիստանը:
2. Խորհրդ. Ռուսաստանը, գոնե սկզբունքով, պետք է ընդունի թուրքահայ հողերի կցումը Հայաստանին:

3. *Խորհրդ. Ռուսաստանը չպետք է միջամտե Հայաստանի ներքին գործերին. չպետք է կոմունիստական գործունեությունն ցույց տա Հայաստանում:*

4. *Խորհրդ. Ռուսաստանը պետք է թույլ տա, որ Հյուս. Կովկասում եւ Ռուսաստանում գտնվող հայ գաղթականները վերադառնան Հայաստան:*

Եւ մի շարք ուրիշ, պակաս արժեք ներկայացնող պայմաններ:

Բանակցությունները սկսվել էին բավական հաջող, եւ հունիսի 10-ին Շանթը հեռագրել էր Երեւան, թե ռուս-հայկական դաշնագիրը արդեն կազմված-պատրաստ է եւ մի երկու օրից պիտի ստորագրվի: Սակայն, 20 օր անցած, հուլիսի 1-ին Շանթը տարբեր բովանդակությամբ հեռագիր էր ուղարկում կառավարությանը:

«Հենց առաջին տեսակցությունից,-հաղորդում էր նա,- պարզվեց, որ միակ դժվարությունը Ազրբեջանի սահմանն է, որովհետեւ Բաքվից ամեն կերպ աշխատում են խանդարել դաշնագրի կնքումը: Խորհրդային կառավարությունը ընդունում է մեր պահանջների արդար լինելը եւ չի փափագում գոհացում տալ Խորհրդ. Ազրբեջանի եւ հայ բուլղերիկների բաղձանքներին: Այնուամենայնիվ, վերջիններիս համառ պնդումի եւ սուտ տեղեկությանց ազդեցության հետեւանքով դաշնագրի կնքումը դանդաղում է: Խորհրդ. Ազրբեջանի վարիչները ցանկանում են օգտվել ռուսական հեղինակությունից եւ ռուս զորքի ներկայությունից՝ իրագործելու համար մուսաֆթական ծրագիրը՝ գրավել Ղարաբաղն ու Զանգեզուրը եւ անվիճելի հայկական հողերը՝ այդպիսով ամրապնդելու համար իրենց դիրքը թուրք ազ-

գաբնակչութեան մեջ: Ռուսաստանը ցանկանում է ստանձնել իրավարարի դեր հայ-թաթարական վեճը լուծելու համար: Մոսկվայի կառավարութիւնը պատրաստակամութիւն է հայտնում թուրքահայաստանի ինդերում հանդես գալ միջնորդի դերում Հայաստանի եւ Մոստաֆա Քեմալի միջեւ»:

Ովքե՞ր էին այդ «հայ բոլշեւիկները», որ միացած ազրբեջանցի բոլշեւիկների հետ՝ ճնշում էին գործ դնում Մոսկվայի վրա եւ պահանջում դաշնագիր չստորագրել Հայաստանի պատվիրակութեան հետ: Վերեւը տեսնեք արդեն դրանցից երկուսին՝ Անաստաս Միկոյան եւ Ավիս Նուրիջանյան: Այդ ժամանակ Բաքվում էին եւ ուրիշ հայտնի կոմունիստներ՝ Ս. Կասյան, Ա. Մռավյան եւ այլն: Սրանք, համախորհուրդ ազրբեջանցիների հետ՝ ամեն ջանք թափեցին, որ Շանթի պատվիրակութիւնը չկարողանա համաձայնութեան գալ Զիչերինի եւ Կարախանի հետ: Եւ հաջողեցան: Ազրբեջանցի եւ հայ բոլշեւիկները, Միկոյանի եւ Ավիսի մասնակցութեամբ, հատուկ պատվիրակութիւն ուղարկեցին Մոսկվա եւ կարողացան համոզել, որ դաշնագրի ստորագրութիւնը հետաձգվի եւ բանակցութիւնները փոխադրվին Երեւան, որի համար Խորհրդային կառավարութիւնը լիազոր պատվիրակ նշանակեց Լեգրանին: Ազրբեջանցի եւ հայ բոլշեւիկների հաշիվը պարզ էր: Նրանց նպատակն էր բանակցութիւնները դանդաղեցնելով՝ ռուս բանակի միջոցով ստեղծել փաստական այնպիսի կացութիւն, որ Հայաստանի խորհրդայնացումը դառնա անխուսափելի:

Եվ հիրավի, մինչ Մոսկվայում տեղի էին ունենում այս բանակցությունները, Հուլիսի 5-ին, 11-րդ Կարմիր բանակի զորամասերը Ղարաբաղի կողմից, հարձակվեցին Ջանգեզուրի վրա: Ռուս զորքերը կռվով առաջ շարժվեցին, գրավեցին Գորիսը եւ մոտեցան Դարալագյազի սահմաններին: Հայկական զորքը, Դրոյի հրամանատարությամբ, դիմեց հակահարձակման եւ վերագրավեց ամբողջ Ջանգեզուրը: Բոլշեւիկները փախան խուճապահարձակման նախօրոք վայրագորեն սպանելով Խորհրդարանի անդամներ Վահան Խորենիին, Արշակ Շիրինյանին եւ մոտ 15 տեղական գործիչներին:

Ռուս զորքը, օգնական նոր ուժեր ստանալով, նորից հարձակվեց Ջանգեզուրի վրա, նորից գրավեց Գորիսը եւ անցավ Ղափանի կողմը, ուր երեք շաբաթ տեղի ունեցան կատաղի կռիվներ, մինչեւ որ հայկական զորամասերը, թշնամու ուժեղ ճնշման տակ, հեռացան Ջանգեզուրից, իսկ ռուսները միացան Նախիջևանի ապստամբ թուրքերի հետ:

Մինչ Կարմիր բանակը կռիվների մեջ էր Ջանգեզուրում, Հուլիսի 20-ին, Լեգրանը՝ ընկերակցությամբ Խալիլ փաշայի եւ ազրբեջանցի ու հայ կոմունիստների, հասավ Բաքու: Խալիլ փաշան, «խլամական զորամասի» գլուխն անցած, Ղարաբաղ-Ջանգեզուր-Նախիջևանի վրայով դիմեց դեպի Թուրքիա, իսկ Լեգրանը, Ազրբեջանի վարիչներին եւ 11-րդ բանակի հրամանատարության հետ խորհրդակցելուց հետո, մեկնեց Թիֆլիս՝ այնտեղից Երեւան անցնելու նպատակով:

Ջանգեզուրի հետ մեկտեղ, ռուսական բանակը հարձակման էր դիմել եւ Ղազախի ուղղությամբ, բայց հանդիպե-

լով հայերի ուժեղ դիմադրութեանը՝ չէր կարողացել առաջ շարժվել: Հյուսիսից եւ արեւելքից Հայաստանը ընկել էր Կարմիր բանակի ճնշման տակ: Յանկանալով վերջ տալ անտեղի եւ անխորհուրդ պատերազմին՝ Երեւանի կառավարութիւնը դիմեց Մոսկվայի միջնորդութեանը եւ օգոստոսի 10-ին, Թիֆլիսում, Լեգրանի եւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչներ Ա. Զամալյանի եւ Բժ. Ա. Բաբալյանի միջեւ ստորագրվեց հաշտութեան ժամանակավոր համաձայնութիւն, որով Զանգեզուրը, Ղարաբաղը ու Նախիջեւանը ժամանակավոր պիտի մնային բոլշեւիկների ձեռքը:

Նոյն օգոստոսի 10-ին, Փարիզում, ստորագրվեց Սեւրի դաշնագիրը:

VII

ՀԱՅ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ

Շանթի պատվիրակութիւնը Մոսկվայից Երեւան վերադարձավ սեպտեմբերի 14-ին, շարունակելու համար բանակցութիւնները Լեզրանի հետ: Հոկտեմբերի 11-ին, Լեզրանը հասավ Երեւան 47 հոգանոց պատվիրակութեան²⁹ գլուխն անցած: Հայաստանն արդեն պատերազմի մեջ էր թուրքիայի հետ: Լեզրանը, անշուշտ, Բաքվում եւ թիֆլիսում հող էր պատրաստում Հայաստանի խորհրդայնացման համար:

Ինչպէս արդեն տեսանք, համագործակցութեան որոշ գիծ էր հաստատուած բոլշեւիկների, ազրբեջանցիների, իթթիհատականների եւ քեմալականների միջեւ:

Այդ գծի հետեւանք էր Ղարաբաղ-Ձանդեզուր-Նախիջեւանի գրավումը Կարմիր բանակի կողմից: Այդ գծի մեկ մասն էին կազմում եւ թուրքերի պատերազմական գործողութիւնները Հայաստանի դեմ: Անկասկած, ճիշտ է ասում Օլիվեր Բոլդուինը, որ այդ ժամանակ Հայաստանում էր եւ դեպքերին լավատեղյակ, թե՛ թուրքերի պատերազմը Հայաստանի դեմ «Դաշնակիցներին նեղելու նպատակով ռուսների կողմից թելադրուած՝ համաձայնուած մի հարձակում էր»:

²⁹ Այդ պատվիրակութեան մեջ էին Սաւ. Տեր Գաբրիելյանը (հետագայում Հայաստանի ժողկոմխորհի նախագահ), Աշ. Հովհաննիսյանը (հետո՝ Հայկոմկոմի քարտուղար) եւ ուրիշ հայ ու ռուս բոլշեւիկներ, որոնք գալիս էին ոչ թե բանակցելու, այլ Հայաստանը ներսից պայթեցնելու նպատակով:

Հայաստանի կառավարութիւնը իր ժամանակին, որոշ չափով, իրազեկ էր թուրքերի ծրագրերին եւ թուրք-բոլշեւիկյան միացյալ ճակատի գոյութիւնը: 1920թ. ամառը երեւանում ստացվել էին Մուստաֆա Քեմալի Ազգ. Մեծ Ժողովում արտասանած ճառի մանրամասնութիւնները, ինչպես նաեւ սպայակոչտի պետ Իսմեթ փաշայի եւ Քյազիմ Կարաբեքիր փաշայի միջեւ տեղի ունեցած գրագրութիւնը Հայաստանին վերաբերող խնդիրների մասին: Այդտեղից որոշ կերպով երեւում էր, որ թուրքերը ծրագրում էին հարձակվել Հայաստանի վրա եւ այդ մասին բանակցութիւն մեջ էին բուլշեւիկների հետ: Մուստաֆա Քեմալը Ազգ. Մեծ Ժողովում հայտնում էր, թե շուտով Կարսից, Կարսի եւ Բաթումի ճամփով Մոսկվա է մեկնելու թուրքական մի պատվիրակութիւն եւ թե հունիսի 6-ին բանակին հրաման է տրվել պատրաստվելու Սարըղամիշի եւ Սողանլուի կիրճի գրավման համար:

Բայց այդ պահուն, Մուստաֆա Քեմալի ասելով, «Մոսկվայից վերադարձավ մեր պատվիրակութիւններից մեկը՝ հետը բերելով Չիչերինի նամակները», եւ Կարին է հասնում մի ռուս գործակալ: Մոսկվան առաջարկում էր իր միջնորդութեամբ կարգադրել Պարսկաստանի, Հայաստանի եւ Թուրքիայի սահմանների խնդիրը: Բայց, ասում է Մուստաֆա Քեմալը, «բուլշեւիկների առաջարկի եւ «արդեն իսկ մեր տված որոշումի միջեւ որեւէ հակասութիւն չնկատեցինք եւ հրամայեցինք մեր արեւելյան հրամանատարութիւնը՝ կարելի եղածի չափ շուտ եւ արագ կերպով շարունակել հարձակողականը»:

Բայց որովհետեւ թուրքերը պետք ունեին բուլղերիկների օգնութեան, Մուստաֆա Քեմալը կարգադրում է միառժամանակ հետաձգել պատերազմական գործողութիւնները:

Մուստաֆա Քեմալի այս կարգադրութեան դեմ, սակայն, ըմբոստանում է Քյազիմ Կարաբեքիր փաշան: Նա ուզում էր, հակառակ Մուստաֆա Քեմալի հրամանի, ինքնագլուխ հարձակվել Հայաստանի վրա, մանավանդ որ, ինչպես տեսանք Էնկյուրիի դատավարութիւնից, նա ուներ արդեն Ռուսաստանում գործող իթթիհատական պետերի աջակցութիւնը եւ Ազրբեջանի բուլղերիկների հավանութիւնը: Այս առթիւ գրագրութիւն է տեղի ունենում ըմբոստ փաշայի եւ Իսմեթ փաշայի միջեւ: Վերջինս, 1920թ. օգոստոսի 1-ին հորդորական ու միանգամայն սպառնողական մի նամակով, պահանջում է Քյազիմ Կարաբեքիրից՝ հետ կենալ «անջատ գործողութիւնից» եւ չխանգարել «այն դեպքերը, որոնք պիտի վճռեն մեր ժողովրդի, եւ նույնիսկ ամբողջ մահմեդական աշխարհի ու իսլամութեան ճակատագիրը»: Իսմեթը հայտնում է, թե՛ «քիչ հավանական է, որ Հայաստանը, զբաղված մեր դաշնակից Ազրբեջանի կողմից, ընդունակ լինի հարձակվելու ձեր շրջանի վրա: Խալիլ փաշան, որ գտնվում է թուրք-ազրբեջանցի-ռուս ուժերի հրամանատարական կազմում, մեզ հանգստացնում է Մոսկվայից՝ հավաստիացնելով, որ Հայաստանը մեր սահմանների վրա հարձակվելու դեպքում՝ սպառնական ուժի կհանդիպի իր թիկունքում»: Եվ Իսմեթը պահանջում է, որ Քյազիմ Կարաբեքիր փաշան իր զորամասերը ուղարկէ հունական ճակատ:

Քյազիմ Կարաբեքիրը տեղի չի տալիս եւ սեպտեմբերի սկզբները մեկնում է Էնկյուրի՝ անձամբ համոզելու համար Մուստաֆա Քեմալին եւ Իսմիթին, որ անհրաժեշտ է անմիջապես պատերազմ սկսել Հայաստանի դեմ: Նրա գործը դյուրանում էր այն բանով, որ մի կողմից կնքվել էր Սեւրի դաշնագիրը, որ Հայաստանին էր տալիս Թուրքահայաստանի չորս նահանգների մեծ մասը, իսկ մյուս կողմից՝ գործակցութեան որոշ համաձայնությունն էր կնքվել Բաքվի Արեւելյան Ազգերի համագումարում թուրքերի եւ բոլշեւիկների միջեւ: Խալիլ փաշան, Քյուչուք Թալեաթը եւ ուրիշներ, իսլամական գործադասով եւ բոլշեւիկյան ոսկով, արդեն հասել էին Կարին³⁰ եւ վստահեցրել Քյազիմ Կարաբեքիրին, թե բոլշեւիկների համաձայնությունն ու օգնությունը ապահովված է թուրքերին: Սրա վրա Էնկյուրին տեղի է տալիս եւ հրամայում Քյազիմ Կարաբեքիրի բանակին հարձակվելու Հայաստանի վրա: Եւ սեպտեմբեր 23-ին սկսվեց թուրք-հայկական պատերազմը:

Դրանից երեք շաբաթ վերջն էր, որ Երեւան հասավ Լեգրանը իր բազմանդամ պատվիրակութեամբ: Եվ հաջորդ օրն իսկ Հայաստանի կառավարութեանը ներկայացրեց Մոսկվայի պահանջները.

1. Հրաժարվել Սեւրի դաշնագրից
2. Թույլ տալ խորհրդային զորքերին, որ իրենց ռազմամիտերքով միասին անցնեն Հայաստանի վրայով՝ միանալու Մուստաֆա Քեմալի բանակին՝ կռվելու համար Դաշնակիցների դեմ:

³⁰ Մյուս կողմից ծովով էլ Նովոռուսիյակ-Տրապիզոն գծով բոլշեւիկները նավերով գենք ու ռազմամիտերք էին հասցնում թուրքերին: Հայաստանի կառավարութեանը տեղյակ էր եւ մի քանի անգամ բողոքեց:

3. Սահմանավեճը Հայաստանի եւ հարեւանների միջեւ լուծելի խորհրդ. Ռուսաստանի միջնորդությամբ:

Հայաստանի կառավարությունը կտրուկ կերպով մերժեց առաջին կետը եւ ընդունեց մյուս պահանջները: Մի քանի օրից կողմերը եկան համաձայնության եւ կազմվեց, դաշնագրի նախագիծը, որի գլխավոր կետերն էին.

1. Խորհրդ. Ռուսաստանը ճանաչում է Հայաստանի անկախությունը եւ անձեռնմխելիությունը:

2. Զանգեզուրը պիտի մտնեւ Հայաստանի սահմանների մեջ, իսկ Ղարաբաղի եւ Նախիջեւանի հարցը պիտի լուծվեւ իրավարարությամբ:

3. Խորհրդ. Ռուսաստանը անմիջապէս պիտի միջամտեւ՝ կասեցնելու համար պատերազմը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ:

4. 1914թ. սահմանի վրա պիտի ստեղծվեւ չեզոք գոտի եւ հայ-թուրքական սահմանավեճը պիտի լուծվեւ Խորհրդ. Ռուսաստանի բարեկամական միջամտությամբ:

5. Հայաստանի կառավարությունը համաձայնվում էր իր երկաթուղիներով եւ խճուղիներով ճամփա տալու ռուսական զորքին անցնելու համար Թուրքիա: Հայաստանի վրայով փոխադրվելիք ռազմամթերքի 30 տոկոսը պիտի հանձնվեւ Հայաստանին:

6. Հայաստանը ընդունում էր Խորհրդ. Ռուսաստանի միջնորդությունը իր եւ հարեւանների միջեւ եղած հողային վեճերը լուծելու համար:

7. *Խորհրդ. Ռուսաստանը համաձայնվում էր վճարել Հայաստանին երկու եւ կես միլիոն ոսկի ռուբլի, թույլ տալ քարյուղի ազատ մուտք, տալ երկրագործական գործիքներ, վերադարձնել էջմիածնի Մոսկվա տարված գույքը, աջակցել հայ գաղթականների վերադարձին եւ այլն:*

Լեզրանը դաշնագրի նախագիծը պիտի տաներ Բաքու, ստանար Մոսկվայի հավանությունը եւ շուտով վերադառնար Երեւան՝ ստորագրելու համար «բարեկամության եւ խաղաղության դաշնագիր Խորհրդ. Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ»:

Լեզրանը դեռ Երեւան չհասած՝ հոկտեմվերի 4-ին, Թիֆլիսում, պատերազմի առիթով, 10000-ոց մի բազմություն բողոքի ցույց կազմակերպեց խորհրդային դեսպանատան առջեւ, ուր հուզումնալից ճառեր արտասանվեցան: Առանձնապես ուժեղ ճառ խեսեց «Աշխատավորի» խմբագիր Կորյուն Ղազազյանը: «Մենք այօր այստեղ,-ասաց նա,-բողոքում ենք իբրեւ հեղափոխականներ նրանց դեմ, որոնք վարկաբեկում են հեղափոխությունը, զազիր գործ են կատարում եւ հարյուր հազարավոր անմեղ կյանքերի դահիճ էնվեր փաշաներին, Թալիաթներին ձեռք են մեկնում ու հեղափոխական կարմիր դրոշակով քողարկվում: Դեմ առ դեմ կանգնած՝ մենք ուղղում ենք այս հարցը բոլշեւիկներին եւ սպասում ենք պատասխանի»:

Բնորոշ էր Խորհրդային ներկայացուցիչ Ստարկի պատասխանը: Նա չհերքեց թուրք-բոլշեւիկյան գործակցությունը, այլ բավականացավ միայն հարձակումներով՝ Հայաստանի վրա:

«Դուք ուզում եք,-ասաց նա,-գիտենալ մեր վերաբերմունքը դեպի Հայաստանի սահմաններում կատարվող դեպքերը: Ռուսաստանի բանվորագյուղացիական հանրապետությունը իր գոյության հենց առաջին օրերից վճռեց ճանաչել ազգերի ինքնորոշումը, նույնիսկ մինչև անջատում եւ անկախութիւն: Մենք այդ իրավունքը ճանաչեցինք ոչ միայն խոսքով, այլեւ գործով: Մենք ճանաչեցինք Էստոնիայի, Լիտվայի, Ֆինլանդիայի, Լեհաստանի անկախութիւնը: Ճանաչել ենք, ճանաչում ենք եւ պիտի ճանաչենք նաեւ Հայաստանի անկախութիւնը, քանի որ այդպես է ցանկանում հայ աշխատավոր ժողովուրդը: Մեր քաղաքականութիւնը եղել է խաղաղության քաղաքականութիւն: Բազմաթիվ ճակատներում մեր թափած արյան մեղքը մերը չէ: Այդ արյունը ընկնում է Դաշնակիցների վրա: Արեւելքում մենք օգնում ենք եւ պաշտպանում ենք ճնշված ազգերին ընդդեմ Դաշնակիցների: Մեզ համար թանկ են հայ աշխատավոր զանգվածների շահերը: Թանկ են եւ՝ Պարսկաստանի, Հնդկաստանի եւ Թուրքիայի աշխատավորության շահերը: Բայց Դաշնակցութիւնը իմպերիալիստների կողմն է անցել եւ Հայաստանը գենք է դարձնում իմպերիալիստների ձեռքին: Հայ ժողովուրդը պետք է ընտրե երկուսից մեկը՝ ցանկանում է լինել մե՞զ հետ, թե շարունակել հին քաղաքականութիւնը:»³¹

Պարզ է, թուրքերը մեղք չունին. դատապարտության ոչ մի խոսք, որ հարձակվել էին Հայաստանի պատերազմներից ուժասպառ եւ անպաշտպան աշխատավորության վրա: Մեղավորը Դաշնակցութիւնն էր:

³¹ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետութիւն, 1928, Փարիզ, էջ 422-26:

Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա մեծ հրճվանք պատճառեց բուլղերիկներին: Թիֆլիսի «Կոմունիստ» թերթը գրում էր ցնծությամբ, հոկտեմբերի 24-ին. «Մնում է միայն ուրախանալ, որ Դաշնակցական Հայաստանը գտնվում է այն պոզահարող կովի վիճակում, որին Աստված եղջյուրներ չի տվել»: Իսկ Բաքվի «Կոմունիստը» փառաբանական խմբագրականներ էր հրատարակում Մուստաֆա Քեմալի հասցեին: Բուլղերիկյան ժողովներում անվերապահ կերպով գովաբանվում էին թուրքերը, որ գալիս էին ազատելու Հայաստանի աշխատավորությանը:

Ի՞նչ էին անում այդ միջոցին հայ բուլղերիկները: Մտածեցի՞ն մի վայրկյան Հայաստանի պաշտպանության մասին:

Բաքվի «Կոմունիստ» թերթում լույս տեսավ «Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանվորներին եւ գյուղացիներին» ուղղված մի կոչ, որի տակ ստորագրել էր եւ «Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն»: Այդ կոչը ստերով, զրպարտություններով, հայհոյանքներով ու սպառնալիքներով համեմված զգվելի մի գրություն էր: Այն պահուն, երբ Հայաստանի ժողովուրդը մահու եւ կենաց օրհասական կռիվ էր մղում ջարդարար թշնամու դեմ, հայ բուլղերիկները, միացած ազրբեջանցի իրենց ընկերների հետ, շանթ ու կայծակ էին թափում Հայաստանի գլխին: «Հայաստանի մռայլ ու խոնավ բանտերը, գրում էին ավիսներն ու միկոյանները, որոնք շատ կյանքեր խլեցին արյունոտ ցարի օրոք, այժմ վերածվել են կառավարական տաճարների, ու մատուցելիստները արյունալի խնջույքներ են սարքում Հայաստանի»:

տանի կոմունիստների նկատմամբ: Հայաստանի ներսում կոմունիստական բանվորական շարժումը հաղթահարելով միայն Դաշնակները կարողացան Հայաստանը վերածել իմպերիալիստների համար հուսալի հենարանի՝ Արեւելքի հեղափոխության դեմ կռվելու համար:

Այն ժամանակ, երբ ամբողջ Արեւելքը բռնված է ապստամբության հրդեհով, երբ Արեւելքի ժողովուրդների համագումարը երդվեցնում էր արեւելյան ժողովուրդներին ոտքի կանգնելու Կոմունիստական Միջազգայինականի դրոշակի տակ՝ միջազգային իմպերիալիզմի դեմ վերջին վճռական կռիվը մղելու համար, այդ ժամանակ Հայաստանի սպիտակ ավազակային կառավարութունը, հրով ու սրով չափելով ամբողջ հեղափոխական Հայաստանը, քայքայելով բոլոր բանվորական արհեստակցական կազմակերպությունները՝ անգլիական եւ ամերիկյան իմպերիալիստների հետ միացած նոր Գողգոթա է պատրաստում Արեւելքի հեղափոխական զանգվածներին...

Մենք ուխտ ենք տալիս Հայաստանի արյունաքամ բանվորա՝գյուղացիական զանգվածներին՝ չենթարկվել ավազակային խմբերի ցածոգի պրոֆոկացիային... Մա՛հ Հայաստանի բանվորների եւ գյուղացիների վրա բռնութուն կատարողներին»:

Եվ ոչ մեկ խոսք ո՛չ պատերազմի, ո՛չ էլ Հայաստանի «աշխատավորութունը» կոտորող թուրքերի մասին: Հայ բուլճեհիկները, անշուշտ, գիտեին, որ թուրքերը խորհրդային իշխանության գործոն աջակցությամբ էին պատերազմի ելել Հայաստանի դեմ: Թուրքերը նրանց սրտին ավելի

մոտ էին, քան Հայաստանի «սպիտակ ավազակային կառավարութիւնը», քան Հայաստանն ինքը:

Բայց միայն նման խոսքերով չէր, որ հայ բոլշեւիկները պայքար էին մղում Հայաստանի կառավարութեան դեմ: Նրանք գործով էլ աշխատում էին դյուրացնել Քյազիմ Կարաբեքիրի աշխատանքը: Պատերազմի ընթացքին, թե ընդհանուր գորակոչի ենթարկվածների, եւ թե դրսից եկած կամավորների մեջ սպորդէլ էին բազմաթիվ բոլշեւիկներ, որոնք, գաղտնի կերպով, զինվորների մեջ քարոզում էին պարտվողական գաղափարներ եւ գրգռում Հայաստանի կառավարութեան, զինվորական հրամանատարութեան դեմ: Նրանք հավատացնում էին հայ զինվորներին, որ թուրքերը չէ որ հարձակվել էին Հայաստանի վրա, այլ «Դաշնակներն» են պատերազմ սկսել, որ թուրքերը բարեկամ են բոլշեւիկներին ու դաշնակից խորհրդային իշխանութեան, որ թուրք բանակի մեջ կան եւ ռուս ու հայ զինվորականներ եւ որ Հայաստան եկող թուրք զորքերը չեն կոտորի հայերին, այլ միայն «Դաշնակներին» իշխանութիւնը կտապալեն եւ կօգնեն խորհրդային կարգերի հաստատման:

«1920-ի արյունոտ օրերին,- գրում է Վ. Նավասարդյանը,- երբ թուրքական բանակը, գրավելով Սարիղաիչը, հաղթականորեն արշավում էին դեպի Կարս, այդ գերագույն տագնապի եւ համազգային մեծ աղիտի օրերին, հարյուրավոր թուղցիկներ էին շրջան անում ժողովրդի ու բանակի մեջ, ուր բոլշեւիկյան կուսակցութիւնը սեռով սպիտակի վրա ժողովրդին հայտարարում էր մոտավորապես հետեւեալը.

«Հայ բանվոր, հայ գյուղացի ու հայ զինվոր.

Քեմալական հեղափոխական բանակը՝ թուրք բանվորը, աշխատավոր գյուղացին ու հեղափոխական ասկյարը, պարզած խորհրդային կարմիր դրոշը, գալիս են փրկելու քեզ քո դահիճների ձեռքից եւ տապալելու քո արյունը ծծող դաշակների անարգ լուծը:

Չկրակես, հա՛յ աշխատավոր զինվոր, եղբայրական թուրք բանակի վրա, նա քեզ բերում է ոչ թե ստրկություն, այլ ազատություն, նա գալիս է օգնելու քեզ քո սրբազան պայքարի մեջ: Երբ տեսնես կարմիր դրոշը, ա՛ն զենքերդ եւ միացիր եղբայրական թուրք բանակին ընդդեմ քո ոխերիմ թշնամիների, ընդդեմ անարգ դաշակիների»:

Մեր տկարացած հիշողությունը թերեւս մի քիչ թոշնած գույներով է տալիս այն՝ ինչ մենք կարդացել ենք սրանից մոտ չորս տարի առաջ.

«Այս տողերը չափազանց խոշոր գրերով ու Մեսրոպյան տառերով, ստորագրված էին հատուկ թռուցիկների վրա ու տարածվում էին ժողովրդի ու բանակի մեջ:

Նրանք տպագրված էին բոլշևեիկյան կուսակցության անունից»:³²

Հոգնած, տնից եւ աշխատանքից կտրված հայ զինվորը ականջ էր դնում այդ գաղտնի փսփսուքներին: Եվ, հիրավի, ինչո՞ւ պատերազմել, եթե թուրքն ու ռուսը միացած են, ինչո՞ւ վախենալ ջարդերից, եթե թուրք զինվորը գալիս է կարմիր դրոշի տակ, ձեռք ձեռքի ռուս զինվորի հետ: Մինչեւ ե՞րբ այս ավերիչ եւ անտանելի պատերազմը: Մեծ Ռուսաստանը կգա, կարգ ու խաղաղություն կվերահաստա-

³² Վ. Նավասարդյան «Հ.Յ.Դաշնակցության անելիքը», Կահիրե, 1924, էջ 222-24:

տե, հաց եւ հագուստ կբերե: Տարիներ անխաղաղ ապրած հայ գյուղացու եւ քաղքենու ականջին հաճելի էին այս քարոզները: Վերջ տալ պատերազմին, տուն երթալ ու խաղաղ նստել ոռւս բանակի հովանավորութեան տակ՝ ի՞նչ ավելի հրապուրիչ հեռանկար:

Բուլշեւիկ Բորյանը³³ հաստատում է, որ «Հայաստանի բանվորա-գյուղացիական զանգվածները» պատերազմի ընթացքին ասում էին. «Ռուսաստանը մեր բարեկամն է. բուլշեւիկները մեր փրկիչներն ու ազատարարներն են, բուլշեւիկների դեմ մենք չենք պատերազմի» եւ չէին կովում թուրքերի դեմ՝ այն համոզումով, որ թուրքերը գալիս են ոռւսների դրդումով եւ այն հույսով, որ իրենք կօգնեն բուլշեւիկներին տապալելու դաշնակիցների կառավարութեանը եւ կազմակերպելու բանվորական եւ գյուղացիական պետութիւն Հայաստանում»:

Բորյանը, սակայն, իրենց հանցանքը ձգում է Հայաստանի կառավարութեան վրա, որ, իբր թե, դիտմամբ թուրք-բուլշեւիկյան բարեկամութեան մասին սուտ լուրեր էր տարածում: Տարօրինակ արդարացում: Նախ՝ բուլշեւիկները եւ թուրքերը բարեկամութիւնը ինքնին արդեն անհերքելի փաստ էր, որ Բորյանը ինքն էլ հաստատում է: Երկրորդ՝ ի՞նչ հաշվով Հայաստանի կառավարութիւնը իրեն համար աննպաստ լուրեր պիտի տարածեր: Իրողութիւնն այն է, որ հայ բուլշեւիկները դեպի դաշնակցականները ունեցած ատելութիւնից կուրացած եւ հոսալով թուրքերի օգնութեամբ խորտակել Հայաստանի անկախութիւնը՝ ամեն մի-

³³ Բ Հատոր, էջ 121:

Չոց գործադրեցին կոտրելու համար հայկական բանակի դիմադրական գորությունը:

Կարսի եւ Ալեքսանդրապոլի շրջանում հայկական հրամանատարությունը պարտվողական քարոզչության եւ դասալքության մեկից ավելի դեպքեր է արձանագրել: Եղան եւ ձերբակալություններ ու դատավարություններ: Տողերիս գրողը անձամբ ականատես է եղել նման երեւույթների Կարսում եւ հարցաքննել է դասալիք սպա Գարագաշին եւ ուրիշներին, որոնք բռնվել էին խռովության եւ դասալքության հանցանքի մեջ:

Կարսի անկման պատասխանատվությունը հանրային կարծիքը վերագրեց թուրք-բոլշեւիկյան գործակցությանը: Այդ վերագրումը արձանագրվեց եւ մամուլում: Այսպես, Երեւանի «Հառաջ»-ը գրում էր նոյեմբերի 9-ին. «Կարս մտնող տաճիկների հետ կան նաեւ բոլշեւիկ գործակալներ, որոնք ավելի եւս գրգռում են թուրքերին հայերի դեմ եւ մատնում նրանց ձեռքը քիչ-չատ աչքի ընկնող հայ հասարակական գործիչներին»:

Պատմում են, որ բոլշեւիկները դեռ Կարսի անկումից առաջ ունեցել են գաղտնի կազմակերպություն, որը գաղտնի հարաբերության մեջ է եղել տաճիկ հրամանատարության հետ, որոշ աշխատանքներ է կատարել տեղում եւ ջանացել է քայքայել մեր զորքերը՝ հրավիրելով նրանց չդիմադրել տաճիկներին:

Տաճիկների այդ գաղտնի գործակալ բոլշեւիկները մեր ճակատի ամենաստույգ տեղեկությունները հաղորդել են տաճիկներին. հայ դավաճանների այդ ջանքերի հետեւանքով տաճիկներին հեշտությամբ հաջողվեց գրավել Կարսը:

Նույն դավաճան կազմակերպության գաղտնի գործակալները երեւան են եկել նաեւ Ալեքսանդրապոլում. «Վերջին հաստատ տեղեկությունների համաձայն բուլղեւիկ կոչվող հայ դավաճանները, որոնք փախել են Ալեքսանդրապոլի բանտից, անցել են թշնամու կողմը եւ պրովոկացիոն լուրեր հաղորդելով՝ աշխատում են գրգռել թշնամուն, անվստահություն ներշնչել կնքված զինադադարի նկատմամբ, որպեսզի տաճիկ հրամանատարությունը խախտի զինադադարը եւ ուժակոծի քաղաքը: Նրանք լուրեր են տարածում, որ, իբր թե, դաշնակցականները, չնայած կնքված զինադադարին, պատրաստվում են դավադրորեն հարձակվել տաճիկ զորքերի վրա: Հայ դավաճանների նպատակն է ստիպել տաճիկներին մտնել Ալեքսանդրապոլ քաղաքը, որը համաձայն զինադադարի պայմանների, չպիտի ենթարկվի տաճիկան գրավման: Տաճիկ զորքերի միջոցով հայ դավաճանները ձգտում են հասնել իշխանության»:

«Հառաջի» նույն համարը հաղորդում էր. «Ալեքսանդրապոլի բանտից փախած հայ բուլղեւիկները ընդառաջ են գնացել Ալեքսանդրապոլ մտնող տաճիկ զորքերին եւ իրենց խնդակցությունը հայտնելով՝ ձեռք են մեկնել տաճիկ զինվորներին»: «Հառաջի» այս մերկացումները լրիվ կերպով եւ ավելիով հաստատվեցին հետագային:

Մասնավորապես անպատիվ դիրք էին բռնել բուլղեւիկները Ալեքսանդրապոլի շրջանում: Այն պահուն, երբ Քյազիմ Կարաբեքիրի բանակը, իր շուրջը սփռելով ավեր, թալան ու կոտորած, գրավել էր մաբողջ Վանանդը եւ մտել Շիրակի սահմանները, Ալեքսանդրապոլում հայ բուլղեւիկները, դավադրություններով եւ գրգռիչ թուուցիկներով

անհնազանդության էին մղում հայ զինվորներին եւ կոչ էին ուղղում ըմբոստանալու եւ սվինները փոխանակ թշնամու՝ կառավարության դեմ ուղղելու: Գտնվեցին նույնիսկ հայանուն բռնաբարներ, որոնք ուղղակի հարաբերությունների մեջ մտան թուրք հրամանատարության հետ եւ վերջինիս քաջալերանքով պայքարեցին Հայաստանի իշխանության դեմ:

Պատերազմից հետո, այդ բոլոր փաստերը երեւան եկան, եւ հայ բռնաբարները իրենք էլ, իրենց կաշիի փորձով, համոզվեցին, որ չարաչար խաբված էին: Ահա, օրինակ, ինչ է պատմում Հայաստանի նախարար բժ. Ա. Բաբայանը, որ Կարսի անկումից հետո գերի էր ընկել թուրքերի ձեռքը: «Մեր գերության հինգերորդ օրը մեզ այցելեցին հինգ հայեր՝ մի քանի տաճիկ սպաների հետ՝ զարդարված կարմիր լաթերով: Կարսի հայ կոմունիստներն էին դրանք. պտտում էին հանրակացարանները եւ իրենց թշնամիներին մատնում տաճիկներին: Հեղկոմի անդամներ էին: Այնպես էին հավատացրել սրանց տաճիկ սպաները, որ, իբր թե, Կարսը պիտի հանձնեն բռնաբարի իշխանությանը: Եվ ամեն կերպ փայփայում էին կոմունիստ տակաճիկներին. փոխարենը սրանք մատնություններ էին անում եւ ցույց տալիս պահեստների տեղերը եւ անհրաժեշտ տեղեկություններ էին տալիս հայ զորքի եւ երկրի վերաբերյալ»:

Իսկ Բաքվի «Կոմունիստ» թերթը ավելի ազդակող փաստեր էր հաղորդում: Հոկտեմբերի 30-ին,՝գրում է նա (թիվ 42), «Թուրքական զորքերի առաջապահ մասերը գրավեցին Կարսը: Մինչեւ թուրքական զորքերի մուտքը հայ զորքերը խորապես համոզված էին, որ Կարսի վրա

հարձակվող զորքերը բուլչեւիկներ են, որի պատճառով էլ դիմադրություն ցույց չափին թուրքերին: Նույն կարծիքի էր եւ Կարս քաղաքի աշխատավոր ժողովուրդը, որ բացարձակապես համոզված էր, թե կարմիր դրոշակներով հարձակվողը թուրքիայի հեղափոխական բանակն է: Բայց քաղաք թափված այդ զորքերը չխնայեցին ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին եւ ո՛չ էլ ծերերին: Հինգ օր անընդհատ արյունուշտ զինվորները եւ քուրդերը խաղաղ ժողովրդի գլխին գործադրեցին մարդկային երեւակայությունից վեր իրենց բոլոր գազանությունները: Սպանում էին բացառապես հայերին: Թալանում էին ամենքին առանց խտրության: Չէին խնայում նույնիսկ կոմունիստներին, որոնք իրենց կոմունիստ լինելը ապացուցող վկայականներ էին ներկայացնում: Թուրքական գազանություններին միայն Կարսում զոհ գնացին 6000 հայեր»:

Պատերազմը վերջացավ հայերի պարտությամբ եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Հայաստանը լքված էր բոլորից: Դաշնակիցները ոչ մի օգնություն չհասցրին, Վրաստանը բարեկամ էր քեմալական թուրքիային եւ մնաց չեզոք. Ազրբեջանը թշնամի էր. թշնամի էր եւ Խորհրդ. Ռուսաստանը, որ գործոն կերպով աջակցում էր թուրքերին հայերի դեմ:

«Ես,-գրում է Ա. Խատիսյանը,-քայլ առ քայլ եւ օրը օրին ուսումնասիրած եմ արտաքին քաղաքականության ազդեցությունները եւ փաստերը եւ եկած եմ այն անխախտ հա-

մոզման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը, որ թուրքերը ատկե լայնորեն օգտվեցան, բայց թուրքերու գլխավոր զինակիցները բողջեւիկներն էին, որոնք ույժ եւ հնարավորություն տվին թուրքերուն հարձակվելու Հայաստանի վրա: Այդ անվիճելի փաստ է: Փաստ է նույնպես, որ իրար օգնել ետքը՝ իրար մեջ բաժնեցան Հայաստանը»:³⁴

Ի՞նչ կարող էր անել այսպիսի պայմաններում փոքրիկ եւ ուժասպառ Հայաստանը: Նա ստիպված էր ընդունել հաղթողի թեւադրած պայմանները: Կառավարությունը, նոյեմբերի 23-ին, Ալեքսանդրապոլ ուղարկեց մի պատվիրակություն՝ Ա. Խատիսյանի գլխավորությամբ, կնքելու համար հաշտության դաշնագիր թուրքերի հետ: «Մեկնումից առաջ, պատմում է Խատիսյանը, մենք խնդրեցինք Խորհրդային Ռուսիո ներկայացուցիչներեն (Լեգրան եւ Բ. Մդիվանի, որոնք մի քանի օր առաջ եկել էին Երեւան: Ս.Վ.) ազդեցություն գործ դնել թուրքերու վրա մեզ համար նպաստավոր մտքով: Մենք ծանոթացուցինք Լեգրանին եւ Մդիվանիին մեր ցանկություններուն եւ ի պատասխան լսեցինք խոստում օգնելու»:³⁵ Բ. Մդիվանին, Մոսկվայի լիազորությամբ, պիտի մեկնէր Ալեքսանդրապոլ եւ պիտի մասնակցեր բանակցություններին, իբրեւ միջնորդ թուրքերի եւ հայերի միջեւ:

Մդիվանին Հայաստան էր ուղարկվել Մոսկվայի կառավարության կողմից, որի օգնությանն էր դիմել Հայաստանի կառավարությունը:

³⁴ Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 255:

³⁵ Նույն տեղը, էջ 257:

Թե Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչները ինչպես օգնեցին Հայաստանին, այդ երեւում է նույն Խատիսյանի պատմածից: Բանակցությունների ընթացքին թուրքերը մերժեցին որեւէ միջամտություն Խորհրդային Ռուսաստանի կողմից, ոչ էլ ընդունեցին Մղիվանիի միջնորդությունը: Խատիսյանի դիմումի վրա՝ Մղիվանին խոստանում է դրսից աջակցություն ցույց տալ, բայց, ասում է Խատիսյանը. «Հարկ կհամարեմ վճռականապես հայտարարելու, թե ան ավելի շատ խանգարեց մեզ, քան թե օգնեց: Խանգարեց այն բանով, որ ինչպես Ալեքսանդրապոլի, այնպես եւ Կարսի մեջ, կկազմեր միտինգներ, ճառեր կարտասաներ մեր դեմ, կպախարակեր Հայաստանի կառավարությունը եւ պատվիրակությունը, կքարոզեր բոլշեւիկյան ծրագրեր եւ այսպիսով ցույց կուտար թուրքերուն, թե ան իրոք մեր դեմ է եւ ոչ թե մեզ հետ... Ես կարող եմ հաստատել, որ Ալեքսանդրապոլի մեջ Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչը բացարձակապես ոչ մի օգնություն ցույց չտվավ Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը»:³⁶

Տարբեր չէր եւ Լեզրանի ընթացքը, նա գնաց Բաքու եւ վերադարձավ միայն հոկտեմբերի սկիզբը: Ի՞նչ արավ նա Բաքվում կամ ի՞նչ տեղի ունեցավ այնտեղ, մանրամասնությունները հայտնի չեն մեզ, բայց ինչ որ հայտնի է՝ կասկած չի թողնում, որ Բաքվում որոշվեց, օգտվելով դեպքերի նպաստավոր դասավորությունից, Հայաստանը ենթարկել խորհրդայնացման:

³⁶ Նույն տեղը, էջ 262-3:

Այսպես՝ նոյեմբերի 4-ին, Բաքվում, տեղի է ունենում Ազրբեջանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Պոլիտբյուրոյի եւ Համամիութենական Կոմունիստական Կուսակցության Կենտր. Կոմիտեի Կովկասյան Բյուրոյի անդամների լիազուսմար ժողովը, որին մասնակցում է եւ ինքը՝ Ստալինը: Օրակարգի հարցերն են լինում՝ բանակցություններ վարել Վրաստանի հետ եւ կացությունը Հայաստանում:³⁷

Պաշտոնական հաղորդագրությունն չկա այդ ժողովի որոշումների մասին, բայց զարտուղի տեղեկություններից եւ դեպքերի հետագա ընթացքից կարելի է ստույգ կերպով ասել, թե այնտեղ ծանրակշիռ որոշում է արվել Հայաստանի մասին՝ միջոցներ ձեռք առնել անմիջապես խորհրդային վարչաձեւ մտցնել Հայաստանում: Ըստ երեւույթին, որոշված է եղել նաեւ, արտաքին աշխարհի առջեւ «զավթիչ» չէրեւալու համար, խորհրդայնացումը կատարել «խաղաղ» եղանակով, այսինքն՝ Հայաստանի կառավարության «հոժարությամբ»: Դրանով են բացատրվում Լեզրանի հետագա քայլերը:

Անկասկած, նոյեմբերի 4-ի այդ ժողովը, ի նկատի ունի տիկ. Օրջոնիկիձեն՝ այն օրերին Ստալինի աջ բազուկ եւ նույն Ստալինի կողմից հաշվեհարդարի ենթարկված Սերգո Օրջոնիկիձեի այրին, երբ իր ամուսնուն նվիրած «Մի բուլշեւիկի ուղին» իր հատորում գրում է. «Երբ 1920-ին Կովկաս ժամանեց Ի. Վ. Ստալինը, հետեւյալ առաջադրանքը արավ. «Օժանդակել Հայաստանի ապստամբ աշխատավորությանը»:

³⁷ Ի.Ստալին՝ «Ամբողջական երկեր», հատոր 4, 1947, Մոսկվա, էջ 476:

Դադստանի եւ Թերեքի համագումարների ավարտումից հետո, Սերգոն Բաքու վերադարձավ եւ 19 նոյեմբ. 1920-ին, 11-րդ բանակի գորամասերը ուղարկեց տապալելու համար դաշնակների ատելի կառավարությունը»:

Եվ Օրջոնիկիձեն ինքն էլ հաստատում է այս փաստը: Նա վկայում է, որ «Պարտիան» որոշել էր Հայաստանում իշխանությունը գրավելուց հետո զգույշ քաղաքականութուն վարել: Ուստի Ռեւկոմը ստեղծվեց այնպիսի ընկերներից, որոնց դիրեկտիվ տրվեց չչտապեցնել Հայաստանի կոմունիզացիան, ստեղծել հայկական ժողովրդական կառավարություն, չվանել ինտելիգենցիայի լայն շրջանները եւ այլն»:³⁸ Եվ մեղադրում է հայ բուլշեւիկներին, որ սրանք «պարտիայի» գծից շեղվել են, բայց ինքը, իր ընթացքով, թե՛ Փետրվարյան ապստամբության օրերին, թե՛ դրանից առաջ համամիտ ու գործակից էր հայ բուլշեւիկներին: Քիչ վերջը կտեսնենք, թե ինչպես վարվեց նա իր գլխությունը ողորդող Հ. Թումանյանի հետ:

Բայց այդպես չէր Օրջոնիկիձեի վերաբերումը դեպի վրացի բուլշեւիկներն ու վրացի ժողովուրդը: Նա պահանջում էր վրացի կոմունիստներից «ճկուն» քաղաքականություն վարել եւ թույլ չտալ, որ Վրաստանում դաժանություններ կատարվին: Երբ Հայաստանի Հեղկոմը խելագար բռնություններ էր գործադրում Երեւանում եւ գավառներում, Օրջոնիկիձեն եւ նրանից բարձր կանգնած Լենինն ու Ստալինը լուռ հանդիսատես մնացին: Երբ հերթը հասավ Վրաստանին, լեզուները բացվեցին եւ տեսեք, թե ինչ էր

³⁸ Գ. Կ. Օրջոնիկիձե. «Ընտիր Հոդվածներ եւ ճառեր», Երեւան, 1950, էջ 58:

հեռագրում Լենինը, Օրջոնիկիձեի միջոցով, վրաց համայնավարներին. «Անհրաժեշտ է զիջումների հատուկ քաղաքականություն վարել վրացական մտավորականության եւ մանր առեւտրականների նկատմամբ... Վիթխարիորեն անհրաժեշտ է ընդունելի կոմպրոմիս փնտրել բլոկ կազմելու ժորդանիայի, կամ նրա նման վրացական մենչեւիկների հետ: Խնդրում եմ հիշել, որ Վրաստանի ներքին եւ միջազգային պայմանները վրացական կոմունիստներից պահանջում են ոչ թե կիրառել ռուսական շաբլոնը, այլ հմուտ եւ ճկուն կերպով ստեղծել յուրահատուկ մի տակտիկա, որը հիմնված լինի ամեն տեսակ մանր-բուրժուական տարրերին մեծ զիջողություններ անելու վրաց»:³⁹

Հայաստանի «ներքին եւ միջազգային պայմանները» չէին թելադրում «մեծ զիջողություններ» անել, այնտեղ կարելի էր «կիրառել ռուսական շաբլոնը»: Եվ կիրառեցին: Եվ Օրջոնիկիձեն եղավ գլխավոր կիրառողներից մեկը...

Նոյեմբեր 20-ին, Մոսկովանիի հետ, Բաքվից Երեւան վերադառնալով՝ Լեգրանը շարունակեց իր երկդիմի ընթացքը՝ մի կողմից ձեւանալով հայ ժողովրդի անկեղծ բարեկամ, մյուս կողմից աշխատելով փութացնել Հայաստանի խորհրդայնացումը՝ թե՛ անձամբ եւ թե՛ դեսպանության հայ բոլշեւիկների միջոցով:

Կարսի անկումից հետո, պատերազմի ընթացքը հայերի համար դարձավ այլեւս հուսահատական: Տեղի ունեցավ կառավարության փոփոխություն, եւ ինձ վիճակվեց ցմրուր ըմպել դառնության բաժակը: Իբրեւ վարչապետ եւ

³⁹ Գ. Կ. Օրջոնիկիձե.«Ընտիր հոդվածներ եւ ճառեր», Երեւան, 1950, էջ 38:

արտաքին գործերի նախարար այնուհետև ես գործ ունեցա
Լեգրանի հետ եւ, ուրեմն, կարող եմ խոսել, որպես
դեպքերի անմիջական մասնակից: Հայ ժողովրդի եւ
պատմութեան դատաստանի առաջ ես պատասխանատու եմ
իմ արձանագրած յուրաքանչյուր բառի համար:

Պաշտոնի անցնելուց անմիջապես հետո, ես հարաբերու-
թեան մեջ մտա Լեգրանի հետ: Կառավարութեան նպատակն
էր սերտ բարեկամութիւն հաստատել Խորհրդ. Ռուսաստա-
նի հետ եւ ապահովել նրա աջակցութիւնը: Ամենքի համար
պարզ էր այն օրերին, որ Հայաստանը կամ Ռուսաստանի
հետ պետք է լինի, կամ պետք է դառնա թուրքերի ձեռքին
խաղալիք, եթէ չբնաջնջվի իսպառ: Ես հարցը դրի հստակ
ու վճռական կերպով՝ Ռուսաստանը կարո՞ղ է մեզ օգնել եւ,
եթէ այո՝ ինչո՞վ եւ ինչպե՞ս: Նույնքան պարզ ու վճռական
եղավ եւ Լեգրանի պատասխանը: Նա առաջարկեց հետ կան-
չել Խատիսյանի պատվիրակութիւնը Ալեքսանդրապոլից,
մերժել թուրքերի պահանջները եւ խորհրդային զորք
մտցնել Հայաստան:

Իմ հարցումին՝ թե՞ ինչ երաշխավորութիւն, որ մինչեւ
խորհրդային զորքերի տեղ հասնելը թուրքերը չեն շարժվի
Երեւանի վրա ու նոր կոտորածներ առաջ չեն բերի, Լեգ-
րանը պատասխանեց, թէ թուրքերը այդպիսի քայլ չեն առ-
նի: Ես ցույց տվի Լեգրանին, որ մինչեւ որ ռուսները
կարողանան շոշափելի ուժ հասցնել Երեւան, առնվազն մեկ
չաբաթ պիտի պահանջվի, մինչդեռ թուրք բանակը կանգ-
նած էր Արաքսի ափին, Մարգարայի կամուրջի մոտ, հազիվ
20-25 մղոնի վրա Հայաստանի մայրաքաղաքից: Եթէ կա-
ռավարութիւնը խզե բանակցութիւնները, այդ պիտի

նշանակե պատերազմի վերսկսում. Ի՞նչ ուժ կարող է արգելել թուրքերին Հայաստանի մնացած մասն էլ գրավելու: Խորհրդային իշխանության խոսքը: Ի՞նչ երաշխիք, որ թուրքերը կարեւորություն կտան այդ խոսքին:

Մեզ ծանոթ էր բուլղարիկյան զորքերի քանակն ու որակը մեր հյուսիսային սահմանների մոտ: Նրանք ի վիճակի չէին պաշտպանելու Հայաստանը թուրքերի ներխուժման դեպքում: Փորձից գիտեինք նաեւ, որ թուրքերը հաշվի չէին առնում բուլղարիկյան սպառնալիքներ:

Այն ժամանակվա պայմաններում այս հարցերը խիստ ծանրակշիռ նշանակություն ունեին, իսկ այսօր, արդեն գիտենք, որ բուլղարիկները շատ ավելի մեծ կարեւորություն էին տալիս թուրքերին, քան այս վերջինները՝ բուլղարիկներին: Կասկած չկա, որ բուլղարիկները Հայաստանի պատճառով կռիվ չէին անի թուրքերի հետ, եթե այս վերջինները չանսային Լեզրանի խոսքին եւ նորից հարձակվեին Հայաստանի վրա:

Լեզրանի խոսքերից պարզ էր եւ մի ուրիշ պարագանրան հայ ժողովրդի ապահովությունից ավելի հետաքրքրում էր Հայաստանի խորհրդայնացման հարցը, բայց այդպիսի պահանջ դեռ չէր կարող դնել, որովհետեւ շատ լավ տեսնում էր, որ հայ ժողովուրդը համակիր չէր Հայաստանի խորհրդայնացման:

Կառավարությունը նորից ու նորից պնդեց Խորհրդ. Ռուսաստանի դիվանագիտական արագ աջակցության վրա: «Եթե,» համոզում էի ես Լեզրանին, «դուք վստահ եք, որ թուրքերը խորհրդային իշխանության հակառակ քայլ չեն առնի, ուրեմն, ձեր խոսքն էլ բավական պիտի լինի,

որպեսզի թուրքերը ծայրահեղ պահանջներ չդնեն Հայաստանին: Իսկ եթե կարծում եք, որ ձեր խոսքին ականջ չեն դնի, նշանակում է մի քանի հարյուր ուսուցիչներին մոտաքն էլ Հայաստանի սահմաններից ներս արգելք չի լինի թուրքերին վերջնականապես մաքրելու իրենց հաշիվը հայերի հետ, մանավանդ որ թուրքերի գլխավոր մեղադրանքը հայերի դեմ այն է, թե նրանք գործիք են ուսուցիչների ձեռքին: Ուրիշ ինդիք, եթե ուսուցիչները խոչոր բանակ ունենային Հայաստանի մոտ եւ պահանջված վայրկյանին կարողանային բավարար ուժ հասցնել այն ժամանակ, հավանական է, թուրքերը չհամարձակվեին առաջ շարժվելու, բայց բոլշեւիկները այդպիսի բանակ չունեին մերձակա վայրերում:

Խորհրդային զորքեր մտցնելու, որ ասել է՝ Հայաստանը խորհրդայնացնելու դեմ առաջ բերի եւ այլ կարգի առարկուլթյուններ: Խորհրդայնացման դեպքում Հայաստանը բոլորովին պիտի կտրվեր Եվրոպայից ու Ամերիկայից եւ պիտի զրկվեր այն պարենից, որ ստանում էր այնտեղից: Այդ պիտի նշանակեր սովամահուլթյուն հայ ժողովրդի համար, որովհետեւ Ռուսաստանն ինքն էլ սովահար՝ ի վիճակի չէր Հայաստանին ուտելիք հասցնելու:

Երկրորդ՝ Հայաստանի խորհրդայնացումը մահացու հարված պիտի հասցներ Հայկական Խնդրին եւ Հայաստանին տրված բոլոր միջազգային հանձնառուլթյուններին ու դաշնագրերին: Մինչդեռ, եթե Հայաստանը պահվեր անկախ, թե՛ դրսի աշխարհից չէր կտրվի, թե՛ կմնար Հայկական Հարցի իրավատեր: Խորհրդ. Ռուսաստանին հարկավոր է Հայաստանի բարեկամուլթյունը՝ մենք այդ կապահո-

վենք: Բուլղերիկների համար անհրաժեշտ են Հայաստանի ճանապարհները՝ մենք կտանք:

Լեգրանը պատասխանեց. «Հայերը ընդմիջտ պետք է հրաժարվեն Եվրոպայից ու Ամերիկայից եւ խաչ քաշեն Սեւրի դաշնագրի վրա: Հայերը իրենց հույսը պետք է կապեն միայն համաշխարհային հեղափոխութեան եւ բանվորա-գյուղացիական Ռուսաստանի հետ: Ծիծաղելի է խոսել ինչ որ ալյուրի մասին, որ ամերիկյան բանկիրներն ու պատվելիները, իբրեւ ողորմություն, չպրտում են հայերի առջեւ. ի՞նչ բան է Ռուսաստանի համար Կուբանից մի քանի միլիոն փութ ալյուր հասցնելը Հայաստան:

Լեգրանը առարկեց եւ Հայաստանի սահմանների վրա ռուս զորքեր կենտրոնացնելու դեմ. այդ կարող էր դժգոհուլթյուններ առաջացնել թուրքերի կողմից եւ առիթ դառնալ անբաղձալի հետեւանքների: Թուրքերին պետք է դնել կատարված փաստի առջեւ եւ մինչեւ Ալեքսանդրապոլ գրավել ռուսական զորքերով:

Բանակցությունները դրական արդյունք չտվին. Կառավարությունը վախենում էր, որ եթե Կարմիր բանակը Հայաստան մտներ հյուսիսից, թուրքերը առաջ կշարժվեին հարավից եւ ռուսների հասնելուց շատ առաջ կգրավեին Երեւանը: Այդ պատճառով, կառավարությունը աշխատում էր Ալեքսանդրապոլի բանակցությունները չխզել եւ հաշտութեան հարցը հասցնել իր տրամաբանական վախճանին: Բայց այդ էլ հեշտութեամբ լուծվելիք խնդիրներից էր. թուրքերը անզիջող էին եւ խոսում էին վերջնագրերով:

Մինչ բանակցությունները Լեգրանի հետ շարունակվում էին, վերջինս, նոյեմբերի 29-ին, վերջնագրի ձեւով, կառա-

վարուժյանն արավ հետեւյալ հայտարարութիւնը. «Ռուսաստանի Կոմունիստ. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր: Հայաստանի հեղկոմը արդեն ոտք է դրել Հայաստանի հողի վրա: Դանդաղելը հղի է ծանր հետեւանքներով: Ես ուզում եմ իմանալ՝ ի՞նչ է լինելու ձեր դիրքը»: Եվ հաջորդ առավոտ ներկայացրեց Հայաստանի խորհրդայնացման գրավոր պահանջ:

Եվ հիրավի, ինչպէս հետո իմացանք, նոյեմբերի 29-ին Բաքվից մի քանի հայ բոլշեւիկներ մտել էին Իջեւան գյուղը, Ազրբեջանի սահմանի վրա, եւ Հայաստանի խորհրդայնացման հայտարարութիւնն արել:

Այսպէս, ուրեմն, մի կողմից թուրքերն էին սպառնալիքով եւ վերջնագրերով խոսում, մյուս կողմից՝ հայ եւ ռուս բոլշեւիկները: Հայաստանը ընկել էր երկու կրակի միջեւ: Կառավարութեանը ուրիշ ելք չէր մնում, բայց եթէ տեղի տալ եւ հասկացողութեան գալ Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցչի հետ: Հայաստանի խորհրդայնացումը այլեւս դառնում էր անխուսափելի:

Նոյեմբերի 30-ին սկսվեցին բանակցութիւնները կառավարութեան ներկայացուցիչ Դրոյի ու Հ. Տերտերյանի եւ Լեգրանի միջեւ, որոնք տեւեցին երկու օր:

Եւ մինչ Երեւանում տեղի էին ունենում ողբերգական բանակցութիւնները, անդին Բաքուն ցնծութեամբ տոնում էր իր դավադրութեան հաղթանակը:

Դեկտեմբերի 1-ին, երբ Հայաստանը դեռ խորհրդայնացած չէր, տեղի ունեցավ Սովետների հանդիսավոր նիստը «Հայաստանի սովետացման առթիվ»: 11-րդ բանակի ռազ-

մահում իսար Օրջոնիկիձեն վերամբարձ հռետորությամբ սկսեց իր ճառը. «Ընկերներ, դժվար թե որեւէ մի տեղ կարելի է գտնել երջանիկ մի սրահ, որքան այս սրահը... Այսօր, հենց այս սրահում, Բաքվի պրոլետարիատը ողջունում է հայկական սովետական ռեսպուբլիկայի ծնունդը...»:

Նույն նիստում Ազրբեջանի Հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը կարգաց Հեղկոմի դեկլարացիան, որով հանդիսավոր կերպով հայտարարվում էր, որ Սովետ. Ազրբեջանը գիշում է եղբայրական Հայաստանին Լեռնային Ղարաբաղը, Ձանգեզուրը եւ Նախիջեւանը:

Օրջոնիկիձեն այդ մասին էլ բարձր հռետորություն արավ. «Ընկերներ, ասաց նա, շատ բնորոշ է ընկ. Նարիմանովի ելույթը. նա մեզ կարգաց իր դեկլարացիան: Ձանգեզուր, Նախիջեւան եւ Ղարաբաղ անունները այդ խոսքերի բովանդակությանն անձանոթ ուս մարդու ականջին բոլորովին ոչինչ չեն ասում: Ինչ որ Ձանգեզուր՝ անբերրի լեռներ. ո՛չ հաց կա, ո՛չ ջուր: Այնտեղ ոչինչ չկա: Ինչ որ Նախիջեւան՝ ճահիճ, մալարիա եւ ուրիշ ոչինչ: Ինչ որ Լեռնային Ղարաբաղ: Ի՞նչ կա այդ Ղարաբաղում: Ոչինչ չկա: Եվ ահա ընկ. Նարիմանովը ասում է. «Դրանք ձեզ, վերցրեք: Այդ անբերրի հողերը վերցրեք Հայաստանի համար»: Կարծես թե սովետական Ազրբեջանը ազատվում է ավելորդ բեռից: Բայց ո՛չ: Այդ գավառներում, այդ անբերրի հողերի մեջն է կայանում այստեղ, Անդրկովկասում, այսպես կոչված, հայ-մուսուլմանական հարցի հանգույցը»: Եվ հիշելով ցարական շրջանի հայ-մուսուլմանական արյունոտ բախումները՝ Օրջոնիկիձեն ոգեւորությամբ ասում է. «Եվ ահա այսօր՝ Ազրբեջանական ռեսպուբլիկայի դեկավարը հանդես

է գալիս ու ասում. «Այդ սարսափելի հարցն այլեւս գոյութիւն չունի»: Այստեղ կարդացված այս ակտը մեծագույն կարեւորութիւն ունեցող ակտ է. սա պատմական մի ակտ է, որը մարդկութեան պատմութեան մեջ իր օրինակը չունի»:⁴⁰

Վերջը հայտնի եղավ, որ թե՛ Նարմանովի, թե՛ Օրջոնիկիձեի ճառաբանութիւնները անկեղծ չէին, այլ նպատակ ունեին խաբել հայ բոլշեւիկներին եւ հանրային կարծիքը. Ղարաբաղն ու Նախիջեւանը մնացին եւ մինչեւ այսօր էլ մնում են Ազրբեջանի տիրապետութեան տակ: Մի խաբեութիւն, որ «մարդկային պատմութեան մեջ իր օրինակը չունի»:

Այս նույն պատմական անօրինակ դեպքի մասին իր հիացումը հայտնեց եւ Ստալինը. «Դեկտեմբերի մեկին,՝ գրում էր նա,՝«Պրավդայի» դեկտեմբերի 4-ի համարում Խորհրդ. Ազրբեջանը հոժար կամ քով հրաժարվում է վիճելի գավառներից եւ հայտարարում է Զանգեզուրի, Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի հանձնումը Խորհրդ. Հայաստանին... Դարավոր թշնամութիւնը Հայաստանի եւ նրան շրջապատող մոսկովմանների միջեւ վճռվեց մեկ հարվածով՝ եղբայրական համերաշխութեան հաստատումով աշխատավոր Հայաստանի, Ազրբեջանի եւ Թուրքիո միջեւ»:⁴¹

Դեկտեմբերի 2-ին ստորագրվեց հետեւյալ համաձայնագիրը Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչներին եւ Լեզրանի միջեւ:

⁴⁰ Գ. Կ. Օրջոնիկիձե. «Ընտիր Հոգւածներ եւ ճառեր», Երեւան, 1950, էջ 32-33:

⁴¹ Ի. Ստալին. «Երկեր», Մոսկվա, Հատոր 4, էջ 414:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

«2 դեկտեմբերի 1920թ., մի կողմից Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. լիազոր ներկայացուցիչ ընկ. Լեզրանը Ռ.Կ.Կ.Կ.Կ.-ի լիազորությամբ, ի դիմաց Ռուսաստանի Խորհրդային կառավարության եւ մյուս կողմից ընկերներ Դրոն եւ Տերտերյանը՝ ի դիմաց Հայաստանի Հանրապետության կառավարության, կնքեցին համաձայնություն հետեւյալի մասին.

1. Հայաստանը հայտարարվում է անկախ սոցիալիստական Խորհրդային հանրապետություն:
2. Մինչեւ Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը, կազմվում է ժամանակավոր Ռազմա-Հեղափոխական Կոմիտե, որին կանցնի բոլանդակ իշխանությունը Հայաստանում:
3. Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ Երեւանի նահանգը իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինվորական տեսակետից կապահովե երկաթուղու տիրապետությունը Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Ջանգեղուր գավառը եւ Ղազախ գավառի մի մասը օգոստոս 10-ի համաձայնության սահմաններում, եւ Թիֆլիս նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչեւ 1920թ. սեպտեմբերի 28:

4. Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում պատասխանատվության այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարումը:
5. Դաշնակցության եւ ուրիշ սոցիալիստական կուսակցությունների (Ս.Յ. Ս.Դ.) անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկվեն կուսակցության պատկանելու եւ Կոմունիստական Կուսակցության դեմ մղված կռիվներին մասնակցելու ու խորհրդային Հայաստանի հայտարարությունից առաջ կատարած գործերի համար:
6. Ռազմա-Հեղափոխական Կոմիտեի մեջ մտնում են հինգ անդամներ Կոմունիստական Կուսակցության կողմից նշանակված եւ երկու անդամ ձախ դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով Կոմունիստական Կուսակցության հետ:
7. Ռուսաստանի խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում անմիջապես կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական խորհրդ. Հանրապետության պաշտպանության համար անհրաժեշտ զինվորական ուժեր:
8. Սույն համաձայնագիրը ստորագրվելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը քաջվում է իշխանությունից: Իշխանությունը ժամանակավոր կերպով, մինչև Հեղափոխական Կոմիտեի գալը, անցնում է զորահրամանատարության, որի գլուխն է կանգնում Դրոն: Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. կողմից

Հայաստանի զորահրամանատարութեան կից
կոմիսար է նշանակվում ընկ. Սիլիինը:

Պատրաստված է երկու օրինակ:

Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. լիազոր ներկայացուցիչ՝ Լեզրան: Հայաստա-
նի Հանրապետութեան կառավարութեան լիազորու-
թեամբ՝ Դրո եւ Տերտերյան»:⁴²

Լեզրանի եւ կառավարութեան միջեւ համաձայնութիւն
կայացավ, որ դեկտեմբերի 2-ի գիշերվա ժամը 12-ին իշ-
խանութիւնը հանձնվի գին. նախարար Դրոյին եւ սա,
խորհրդական ունենալով Լեզրանի ներկայացուցիչ Սիլի-
նին, կառավարե երկիրը, մինչեւ հեղկոմի ժամանումը
Ազրբեջանից: Նույն իմաստով խմբագրվեց եւ հրատարա-
կութեան տրվեց նաեւ հետեւյալ «ակտը», որ հեռագրվեց
գավառական իշխանութիւններին ու զորամասերի պետե-
րին ու փակցվեց Երեւանի պատերին:

Ա Կ Տ

«Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնոր-
հիվ երկրում ստեղծված կացութիւնը՝ Հայաստանի
Հանրապետութեան կառավարութիւնը իր 1920 թվի դեկ-
տեմբերի 2-ի նիստում որոշեց՝ հրաժարվել իշխանութիւ-
նից եւ հանձնել զինվորական եւ քաղաքացիական բովան-
դակ իշխանութիւնը զորաբանակի ընդհանուր հրամանա-

⁴² «Ժողովածու Գործող Դաշնագրերի», ռուսերեն, 3-րդ պրակ, Մոսկվա՝
1922 թիվ 79, էջ 14-15, հրատ. Ռուսաստանի Արտաքին Գործավարութիւն:

տարին, որպիսի պաշտոնում նշանակել Ռազմական նախարար Դրոյին:

Նախարարների խորհրդի նախագահ՝ Ս. Վրացյան

Նախարարներ՝ Ա. Հովհաննիսյան, Ա. Խոնդկարյան, Հ. Տերտերյան, Դ. Կանայան

Իսկականի հետ ճիշտ է՝

Դիվանապետ՝ Հ. Թումանյան»:

Բայց այս հարցի մեկ մասն էր միայն. կար եւ պատերազմի ինդերը: Թուրքերը ծանոթ էին Երեւանի դեպքերին եւ շտապում էին կանխել:

Նոյեմբերի 30-ի երեկոյան, Քյազիմ Կարաբեքիր փաշան Հայաստանի պատվիրակութեանը ներկայացրեց թուրքական պայմանները եւ հաջորդ առավոտյան վերջնագրի ձեւով պահանջեց այդ պայմանների ընդունումը, հակառակ պարագային սպառնալով վերսկսել պատերազմական գործողութիւնները:

Թուրքական պահանջները քննութեան առկեցին նոյեմբերի 30-ի գիշերը, հատուկ մի ժողովում, որին մասնակցում էին Խորհրդարանի Դիվանը, երեսփոխաններ, կառավարութեան անդամներ, Հ.Յ.Դ. Բյուրոն իր ամբողջ կազմով եւ մի շարք անհատ գործիչներ ու գինվորականներ:

Հաշտութեան ինդերից առաջ արդեն որոշված էր ընդունել Լեզրանի վերջնագիրը, այժմ պետք էր գտնել թուրքական դաժան պայմաններից խուսափելու միջոցը: Ձեւականորեն այդ միջոցը արդեն գտնված էր. որոշված էր իշխանութիւնը գիջել բոլշեւիկներին, հեշտ էր դաշնագրի ստորագրութիւնն էլ թողնել նրանց: Բայց արդյոք անձր կլինէր լավագույն ելքը: Անձնապես մեզ համար, իհարկե, այդ

կլիներ բարիք. պատմության առաջ մենք ազատ կլինեինք Ալեքսանդրապոլի «խայտառակ» դաշնագիրը ստորագրելու պատասխանատվությունից, բայց դրանից հայ ժողովուրդը կչահե՞ր:

Այս անողոք հարցը ցցված էր նոյեմբերի 30-ի գիշերվա ժողովին մասնակցողների առջեւ: Եթե մերժեինք դաշնագրի ստորագրությունը, թուրքերը Հայաստանի մնացած մասն էլ չէին՞ն կործանի: Բոլշեւիկները կկարողանայի՞ն ազդել թուրքերի վրա, ընդունակ կլինեին՞ն փրկելու երկիրը վերահաս վտանգից:

Լավեցավ գինվորական մասնագետների կարծիքը: Պատասխանը եղավ բացասական. եթե մերժեինք Քյազիմ Կարաբեքիրի պահանջը, թուրք բանակը, ամենայն հավանականությամբ, առաջ պիտի շարժվեր եւ մինչեւ ռուս զորքերի հասնելը էջմիածինն ու Երեւանն էլ պիտի գրավեին՝ հարակից շրջաններով միասին: Հետագային ռուսները կարող էին հեռացնել թուրքերին, բայց սրանք արդեն ավերն ու կոտորածը գործած կլինեին:

Նույն էր եւ գրեթե բոլոր ժողովականների կարծիքը: Հանուն հայ ժողովրդի փրկության, պետք էր ստանձնել պատասխանատվությունը պատմության առջեւ եւ ստորագրել դաշնագիրը: Եթե բոլշեւիկները, իրոք, այնքան ազդեցիկ էին թուրքերի առջեւ, նրանց համար դժվար չէր լինի մերժել «Դաշնակների» ստորագրությունը եւ Հայաստանի համար ավելի նպաստավոր դաշնագիր կնքել: Եթե բոլշեւիկները այդ կարողությունը պիտի չունենան վաղը, նշանակում է այսօր էլ նրանց խոստումները անարժեք էին:

Այս նկատումներով եւ այս գիտակցութեամբ ժողովը որոշեց լիազորել Ալեքսանդրապոլի պատվիրակութեանը ընդունելու թուրքական պայմանները եւ ստորագրելու հաշտութեան դաշնագիրը:

Կրկնում եմ՝ ձեւականորեն մենք ամեն իրավունք եւ հնարավորութիւն ունինք խուսափելու եւ այդ անախորժ պարտականութիւնը ձգելու բոլշեւիկներին: Մեր կողմից այդ կլիներ ճարպիկ մի խաղ, որ ծանր դրութեան մեջ պիտի դներ հայ բոլշեւիկներին, որոնք, ինչպէս քիչ վերջը կտեսնենք, թուրքերի աչքին ավելի արժեք չունենին, քան դաշնակցականները: Կասկած չկա, որ հայ բոլշեւիկներն էլ, այս անգամ Մոսկվայի ճնշումով, ստիպված պիտի լինեն ստորագրել Ալեքսանդրապոլի դաշնագիրը, ինչպէս մոտ մի տարի վերջը ստորագրեցին Կարսի ավելի խայտառակ դաշնագիրը: Դրանով մենք անհատապէս կամ կուսակցականորեն, թերեւս, ազատ կլինենք հակառակորդների ամբաստանութիւններից, եթե, իհարկե, այս անգամ էլ մեզ չամբաստանեն, թե քաղաքացիական քաջութիւն չունեցանք պատասխանատվութիւն ստանձնելու եւ դաշնագիրը չստորագրելով՝ նոր աղետների պատճառ եղանք:՝ բայց ազգային տեսակետով Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատմական անհրաժեշտութիւն էր, դժբախտ, բայց անխուսափելի:

Դեկտեմբերի 2-ի գիշերը ստորագրվեց հայ-թուրքական հաշտութեան դաշնագիրը, որի ամփոփումը հետեւյալն է: Այս ամփոփումը արել է Պատվիրակութեան նախագահ Ա. Խատիսյանը: Դաշնագրի բնագիրը, որ ժամանակին հանձնվել է Հեղկոմի նախագահ Ս. Կասյանին, չէ հրատարակված:

1. Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը պարտավորվում է ճանաչել Հայաստանի անկախութիւնը հետեւյալ սահմաններում. Ախալքալաքի դավառի հարավային մասից Ուչ-Թափալար սարը դեպի հարավ մինչեւ Բաշ Շորագյալ, մինչեւ Արփաշայ-Արփաշայի հոսանքը մինչեւ նրա խառնվելը Արաքսի հետ, Արաքս գետի հոսանքը մինչեւ Արաքս կայարանը, այստեղից դեպի Մարտիրոս մինչեւ Չայքենս գյուղը:

2. Կարսի նահանգը եւ Սուրմալուն համարվում են վիճելի, մինչեւ երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարութիւնը կարող է հայտարարել հանրաքվե՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների: Հանրաքվեի ժամանակ պետք է մտնէ այնտեղ խառն հայ-թուրքական ժանդարմերիա:

3. Հայերը հրաժարվում են Սեւրի դաշնագրից. հետ են կանչում բոլոր այն կոմիտեները եւ ներկայացուցիչները, որոնք գոյութիւն ունին Եվրոպայում, չեն պահում Հայաստանում Դաշնակիցների ոչ մի ներկայացուցիչ, մինչեւ որ թուրքիան հաշտութիւն դաշն կնքէ նրանց հետ:

4. Հայաստանը իրավունք ունի պահելու զորաբանակ ոչ ավելի քան 1500 սվին եւ դրան համապատասխան քանակով սպաներ, նաեւ անհրաժեշտ քանակութեամբ ժանդարմերիա: Երկիրը պաշտպանելու համար կարող են լինել ամրոցներ, որոնք կարող են գինվել միայն պաշտպանողական ծանր թնդանոթներով: Վերացվում է պարտադիր զինվորութիւնը:

5. Հայաստանի վրա հարձակման դեպքում Թուրքիան պաշտպանում է հայոց կառավարութայան պահանջմամբ եւ աջակցում է Հայաստանին գործով:

6. Թուրքիան եւ Հայաստանը փոխադարձաբար օգտավում են ազատ տրանզիտից, ինչպես երկաթուղիներով, այնպես եւ բոլոր ճանապարհներով:

7. Երկու կողմերն էլ չեն վճարում պատերազմական ծախսեր:

8. Պայմանները կնքելուց հետո, սկսում են աշխատել երկաթուղիները, վերադառնում են քաղաքացիական մասի գերիները, իսկ երբ սկսվում են աշխատանքները Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանները որոշելու համար, վերադառնում են բոլոր ռազմագերիները:

9. Հայաստանի կապած բոլոր պայմանները Թուրքիայի դեմ համարվում են անվավեր:

10. Բոլոր գաղթականները կարող են վերադառնալ իրենց տեղերը մի տարվա ընթացքում՝ օգտվելով բոլոր քաղաքացիական իրավունքներից, բացի այն գաղթականներից, որոնք զինված դիմադրությունն են ցույց տվել իրենց կառավարութայան դեմ:

11. Հայերը Թուրքիայում եւ Թուրքերը Հայաստանում վայելում են հավասար քաղաքացիական իրավունքներ:

12. Դիվանագիտական, ինչպես եւ հյուպատոսական հարաբերությունները, ինչպես եւ քաղաքացիական ազատ երթեւեկությունը երկու երկրների միջեւ, սկսվում է դաշնագիրը ստորագրելուց հետո, որից հետո վերսկսվում են եւ՛ փոստային, եւ՛ հեռագրական հաղորդակցությունները Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ:

13. Շարունքը եւ Նախիջեւանը ժամանակավորապես օժտվում են ինքնավարությամբ՝ գտնվելով Թուրքիայի հովանավորության տակ, մինչեւ որ որոշվի նրանց բախտը:

14. Այս դաշնագիրը պետք է ենթարկվի վավերացման Հայաստանի Խորհրդարանի եւ Ազգ. Մեծ Ժողովի կողմից մի ամսվա ընթացքում:

15. Թուրքիան պարտավորվում է Հայաստանի գրաված հողամասերը դատարկել, երբ Հայաստանը կսկսե գորացրումը եւ վերջնականապես կդատարկե, երբ հայկական զորքի թիվը կհասնի պայմաններում որոշված չափին»:

Տարիներ հետո, Ազգ. Ժողովի մեջ արտասանած իր նշանավոր ճառում, Մուստաֆա Քեմալը այսպես արտահայտվեց այդ դաշնագրի մասին. «Հաշտության բանակցությունները, որոնք սկսվել էին նոյեմբերի 26-ին, վերջացան դեկտեմբերի 2-ին եւ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը ստորագրվեց Գյումրիի դաշնագիրը: Պարոններ, Գյումրիի դաշնագիրը առաջին դաշնագիրն է, որ ստորագրել է ազգային կառավարությունը... Արեւելքում առաջ եկած կարեւոր փոփոխությունների հետեւանքով այս դաշնագիրը փոխարինվեց հետագային կնքված դաշնագրով, այսինքն՝ 1921թ. մարտի 16-ի՝ Մոսկվայի եւ 1921թ. հոկտեմբերի 13-ի՝ Կարսի դաշնագրերով»⁴³

Ճակատագրի ինչ հեզնանք. 1918թ. հունիսի 4-ին, Բաթումի դաշնագրով Թուրքիան եղավ առաջին պետությունը, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը: Այժմ Հայաստանը առաջին պետությունն էր, որ ճանաչում էր քեմալական Թուրքիայի անկախությունը

⁴³«Discours du Chazi Moustafa Kemal», 1929, Leipsig, p.p.390-92.

Ալեքսանդրապոլի դաշնագրի մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում վեր առնել եւ հետեւյալ կետը՝ ի՞նչ իրավական հիմք ունի այս դաշնագիրը: Բոլշեւիկները եւ ուրիշները ասում են, որ Հայաստանի կառավարութիւնը, դեկտեմբերի 2-ին, Լեզրանի հետ Հայաստանի խորհրդայնացման պայմանը ստորագրելուց հետո, այլեւս իրավունք չունեն օտար պետութիւնների հետ դաշնագիրներ ստորագրելու: Սրան կարելի է առարկել այն փաստով, որ, ըստ Լեզրանի հետ կնքած պայմանի, իշխանութեան փոխանցումը տեղի պիտի ունենար դեկտեմբերի 2-ի գիշերը եւ, ուրեմն, մինչեւ այդ՝ Հայաստանի կառավարութիւնը սահմանափակված չէր իր իրավունքների մեջ: Դաշնագիր ստորագրելու լիազորութիւնը Խատիսյանի պատվիրակութեան՝ կառավարութիւնը տվել էր դեկտեմբերի 1-ին, հետեւաբար, միջազգային օրենքի եւ փաստական կացութեան տեսակետով՝ Հայաստանի կառավարութեան ընթացքը հակաօրինական հանգամանք չունեն:

Մյուս կողմից, ինչպէս ասում էր Մուստաֆա Քեմալը «դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը», եւ ինչպէս վկայում է Ա. Խատիսյանը, դաշնագիրը ստորագրվել է դեկտեմբ. 2-ի գիշերվա ժամը 12-ից հետո: Արդյո՞ք այս պարագան բավարար հիմք է մերժելու համար դաշնագրի օրինականութիւնը: Այս առթիվ էլ կարելի է դիտել տալ, որ Հայաստանի կառավարութեան հրաժարումից հետո եկող նոր իշխանութիւնը, Դրո ե Սիլին, տեղյակ էր, որ դաշնագիրը պիտի ստորագրվի եւ կարող էր արգելել, բայց չի արգելել: Դեկտեմբերի 2-ի երեկոյան հետեւյալ խոսակցութիւնն է տեղի ունենում Ալեքսանդրապոլի պատվիրակութեան

նախագահ Ա. Խատիսյանի եւ Հայաստանի նոր իշխանության ներկայացուցիչ Դրոյի միջեւ. «Երեկոյան՝ ժամը 6-ին,- պատմում է Խատիսյանը,- ինձ հրավիրեց ուղիղ հեռագրաթելի մոտ Դրոն, որ ըսավ հետեւյալը. «Հեղափոխական կառավարության անունից հայտնում եմ ձեզ, որ դուք ազատ եք ստորագրել կամ ոչ»: Լավ գիտակցելով դաշնագիրը ստորագրելու կամ մերժելու ամբողջ պատասխանատվությունը, ես երկրորդ անգամ հարցուցի. «Արդյոք կառավարությունը ստորագրելու՞ կողմն է, թե մերժելու: Մենք սպասում ենք որոշ եւ պարզ հրահանգների»:

Դրոն պատասխանեց. «Ես ձեզ ասացի արդեն: Գործեցեք համաձայն ձեր հասկացողության: Ես խոսում եմ ընկեր Սիլինի եւ իմ անունից»:

Սիլինը բուլչեւիկներու ներկայացուցիչն էր:⁴⁴

Այստեղից պարզ երեւում է, որ ոչ միայն Դրոն, խորհրդային իշխանության ներկայացուցիչն էլ առարկություն չունեւ Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրելու դեմ եւ, բնականաբար, Հայաստանի այն ժամանակվա պայմաններում չէր էլ կարող ունենալ:

Մինչեւ այստեղ, թե՛ կառավարության, եւ թե՛ Պատվիրակության արածը, իրավական տեսակետից, օրինական էր: Բայց դաշնագրի մեջ կար իրավական մի կարեւոր պայման: Ստորագրությունից հետո, մեկ ամսվա ընթացքում, դաշնագիրը պետք է վավերացվեր Հայաստանի Խորհրդարանի եւ Թուրքո Ազգ. Մեծ Ժողովի կողմից: Այդ վավերացումը տեղի չունեցավ, հետեւաբար, եւ դաշնագիր-

⁴⁴ Ա. Խատիսյան, «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը», էջ 270:

րը իր օրինական հանգամանքը կորցրեց: Միակ այս փաստը բավական էր, որպեսզի Հայաստանի Հեղկոմը չճանաչեր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, եթե իսկապես բոլշեւիկները ուզում էին Հայաստանի համար ավելի նպաստավոր պայմաններ ապահովել: Բայց, ինչպես վերը տեսանք, բոլշեւիկները չուզեցին, կամ չկարողացան օգտվել այդ փաստից:

VIII
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՂԿՈՄԻ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Այսպես, ուրեմն, ոչ հայ ժողովրդի հոժար կամ քով, այլ արտաքին ուժերի ճնշման տակ, 1920թ. դեկտեմբերի 2-ին, Հայաստանում տեղի ունեցավ վարչաձեռքի փոփոխություն. ժողովրդավար իրավակարգի տեղը բռնեց բռնատիրական կարգը. խորհրդարանական կառավարությունը հաջորդեց Հայաստանի Հեղկոմի միահեծան տիրակալությունը:

Ի՞նչ էր Հայաստանի ժողովրդի վերաբերումը դեպի նոր վարչաձեռք ու իշխանությունը:

Մայիսյան շարժումներին եւ հայ-թուրքական պատերազմի առաջին օրերին հայ ժողովուրդը, իր բոլոր խավերով, երեւան բերեց միահամուռ եւ վճռական կամք՝ պաշտպանելու հայրենիքի անկախությունը՝ հյուսիսից ու հարավից սպառնացող վտանգի դեմ: Անհաշիվ զոհերի եւ արյան գնով ձեռք բերված անկախության գաղափարը այլեւս խորունկ արմատներ էր ձգել, սակավ բացառություններ, բոլոր հայերի գիտակցություն մեջ:

Ռազմաճակատի անհաջողությունները, ինչպես եւ Եվրոպայի ու Ամերիկայի Պիղատոսի դիրքը արյունաքամ եղող Հայաստանի հանդեպ՝ աստիճանաբար բեկում առաջ բերին հայ ժողովրդի միաձուլյ կամքի մեջ. ո՞ւր ենք գնում այսպես, ի՞նչ պիտի լինի գահավեժ դեպքերի վախճանը, ո՞վ կարող է մեզ օգնել:

«Խորհրդային Ռուսաստանը, պատասխանում էին հայ բոլշևեիկները: Կարմիր բանակը, որ մոտեցել էր Հայաստանի սահմաններին, նա է հայ ժողովրդի փրկիչը: Թո՛թա-

փեցե՛ք ձեր ուսերից դաշնակների լուծը, բացե՛ք երկրի դռները ոուս զորքի առջեւ, եւ ձեր դժբախտությունը վերջ կգտնե՛ք»:

Բողեւիկները խայծերը անծանոթ չէին. հայ ժողովուրդը պատրանքներ չուներ նրանց արժեքի մասին, բայց ուրիշ ի՞նչ ելք էր մնացել: Թուրքը առաջանում էր՝ իր հետ բերելով անխնա ավեր ու կոտորած: «Մեր մեծ դաշնակիցները», պղատոնական խոսքերից զատ, մատը մատին չէին խփում օգնելու համար իրենց ուժասպառ «փոքր դաշնակիցին»: Ո՞ւր էր փրկության լաստը:

Եվ հետզհետե հայության սրտերում, վա՛յ պարտվածներին, սկսեց նորից տեղ գրավել «խաչապաշտ ոուսը»: Նոյեմբերի կեսերին այլեւս նշմարելի էր շերտավորումը պետական գործիչների եւ հասարակության զանազան խավերի մտքերում: Կառավարությունը իր մեծամասնությամբ դեռ շարունակում էր կանգնած մնալ հակառուս գետնի վրա: Անհաշտ հակառակորդ էր խորհրդային Ռուսաստանին եւ հայ սոցիալ-դեմոկրատների փոքրաթիվ խմբակը՝ Բախչի Իշխանյանի եւ Դավիթ Անանունի գլխավորությամբ: Հայ սոցիալիստ-հեղափոխականների զգացումները, դեպի բողեւիկները մնալով հանդերձ բացասական՝ ուսն ու Ռուսաստանը քաղաքական դրական գործոն էին նրանց աչքում: Հայ ժողովրդական կուսակցությունը, քաղքենիները այդ անջիղ կազմակերպությունը, բերանի մեկ կողմով անկախություն էր հույսվում, մյուս կողմով ուսասիրություն քարոզում: Մեզ այսօր հակաբողեւիկության համար դատապարտող ռամկավարները խորհրդային

Ռուսաստանը նկատում էին Հայաստանի և Հայ դատի մահացու թշնամի:

Անկեղծ պետք է լինել ասելու համար նաեւ, որ կառավարական կուսակցութեան շարքերում էլ վարանում ու շփոթ էր տիրում: Անկախութեան շուրջ տատանում չկար, բայց ստեղծված կացութիւնից ելք գտնելու համար կարծիքները տարբերվում էին: Ոմանք պնդում էին, թե պետք է շարունակել անհաշտ թշնամական դիրքը դեպի Ռուսաստանը, առանց սակայն կարողանալու ցույց տալ, թե ի՞նչ պետք է անել վերջնական կործանումից խուսափելու համար: Ուրիշներ անհրաժեշտ էին համարում անմիջապես «լեզու գտնել» խորհրդ. Ռուսաստանի հետ: Իսկ շարքայինները տատանվում էին հույսի եւ վհատութեան միջեւ:

Անկուսակցական զանգվածը, մանավանդ, քաղքենի տարրը սկսում էր օրորվել հին հուշերով Ռուսաստանի մասին. կգա ռուսը, կբերի հետը խաղաղութիւն, «հաց ու մանուֆակտուրա», կառնե երկիրը իր հովանու ներքեւ, եւ ռուս զինվորի սվինի պաշտպանութեան տակ գյուղացին, արհեստավորն ու խանութպանը, հին տարիների օրինակով, հանգիստ կապրեն եւ դրամ կվաստակեն:

Ավելի հռոտն չէին մտածում: Ոչ էլ ծանոթ էին բոլշեւիզմի բնույթին եւ Ռուսաստանի ներսերը կատարվող քառսին:

«Խաչապաշտ ռուսն» էր եկողը, վերջապես. հո նա էլ թուրքի պես մեզ չէր կոտորի: Բարի՛ թող գա:

Այսպես էին, ընդհանուր առմամբ, Հայաստանում տիրող տրամադրութիւնները 1920թ. նոյեմբեր ամսին, կարսի անկումից հետո: Հոռետես թե լավատես՝ չէին կարող

պատկերացնել իրական դալիքը: Հոռետես թե լավատես՝ սպասում էին որ.

1. Վերջ կգտնե երկրում պատերազմի առաջ բերած քայքայումը:
2. Վերջ կգտնե պատերազմը, եւ թուրքը կհեռանա Հայաստանի սահմաններից:
3. Խորհրդ. Ռուսաստանի միջամտությամբ բարեկամական հարաբերություններ կհաստատվին Հայաստանի եւ թուրքիայի միջեւ. Խորհրդ. Ռուսաստանի աջակցությամբ, այս կամ այն ձեւով կլուծվի թուրքահայկական հարցը:
4. Կվերականգնվի երկրի ներքին անդորրությունը, եւ ժողովուրդը նորից հնարավորություն կստանա լծվելու խաղաղ ու շինարար աշխատանքի:

Այսպիսի պայմաններում եւ այս տրամադրությամբ ու հույսերով Հայաստանի Հանրապետությունը դարձավ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն՝ 1920թ. դեկտեմբերի 2-ին:

Բոլշեւիկները առանց ծիծաղելի լինելու վախի, շարունակում են պնդել, թե Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի գյուղացիության եւ բանվորության ապստամբության հետեւանքով: Նոյեմբերի 29-ին, հայ բոլշեւիկները մի փոքրաթիվ խումբակ, մտավ Ազրբեջանին սահմանակից Իջևան գյուղը եւ ցրվեց Բաքվից բերված թռուցիկներ, որ հայտարարում էին, թե «դաշնակները» կառավարությունը տապալված է եւ տեղը բռնած է խորհրդային իշխանությունը: Մինչ նույն այդ միջոցին Խորհրդ. Ռուսաստանի լիազոր ներկա-

յացուցիչը Երեւանում խաղաղ բանակցություններ էր վարում «դաշնակիներին» կառավարութեան հետ: Երեք օր վերջը, դեկտեմբերի 2-ին միայն, Հայաստանի կառավարութեան եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ կնքված համաձայնութեան հիման վրա, Հայաստանը հայտարարվեց խորհրդային: Ոչ մի գնդակ չարձակվեց այդ առթիվ, ոչ մի ապստամբութիւն տեղի չունեցավ. ոչ մեկի քիթը չարյունեց, իսկ Հայաստանի գյուղացիութիւնն ու բանվորութիւնը լուռ էր: Լուռ էր ու կսկիծը սրտում՝ ողբում էր հայրենիքի կործանումը: Եվ սպասում էր «խաչապաշտ ուսիին»:

Սպասում էին, որ դա ուսը. բայց ուսի փոխարեն Հայաստան մուտք գործեց Հեղկոմը եւ հետը մի քանի հարյուր քոսոտ կարմիր բանակայիներն ու հայ բուլշեւիկներ՝ շատերը ծանոթ մայիսյան խռովութիւններից իրենց զանազան արարքներով՝ Ս. Կասյան, Ասք. Մռավյան, Ավիս Նուրիջանյան, Աշ. Հովհաննիսյան, արյունակալ Աթարբեկյան եւ ուրիշներ: Ես ասում եմ «մուտք գործեց», որովհետեւ Հեղկոմը իսկապէս իրեն պահում էր իբրեւ հաղթական կերպով մուտք գործող մի ուժ, որ իր ոտքերի տակ պատրաստ էր տրորելու պարտված թշնամուն:

Հակառակ որ ժողովուրդը եւ նախկին իշխանութեան մարդիկ խիստ բարյացկամ վերաբերում ցույց տվին եւ պատրաստակամութիւն հայտնեցին ամեն բանով աջակցելու նոր կառավարութեանը, Հեղկոմը առաջին օրից իսկ թշնամական դիրք բռնեց դեպի երկրի բոլոր ոչ բուլշեւիկ տարրերը եւ իրեն պահում էր ճիշտ այնպէս, ինչպէս պահում է թշնամի երկիրը մտնող նվաճող մի բարբարոս ուժ:

Լեզրանի հետ ստորագրված դաշնագիրը հայտարարվեց չեղյալ: Դեկտեմբերի 6-ին կազմվեց եւ անմիջապես գործի անցավ Չեկան, ու սկսվեցին ձերբակալությունները: Իրար ետեւից բանտարկվեցին նախկին վարչապետ Հ. Օհանջանյանը, նախկին նախարար Ռ. Չիլինգարյանը (Ռ. Դարբինյան), Խորհրդարանի անդամներ բժ. Հ. Տեր Դավթյանը, Վահ. Նավասարդյանը, Վ. Բաբայանը, Գ. Վարչամյանը, Երեւանի Քաղաք. Խորհրդի անդամ Ա. Աստվածատրյանը, Սոցիալ-դեմոկրատ պարագլուխ Բ. Իշխանյանը, խմբապետ Համազասպը եւ ուրիշներ: Քիչ վերջը, բանտ նետվեցին Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, Առողջապահության եւ Գյուղատնտեսության նախարարների օգնականներ բժ. Հ. Տեր Միքայելյանը եւ Թ. Տոչյանը, Խորհրդարանի անդամ բժ. Ա. Ղազարյանը եւ շատ ուրիշներ:

Դեկտեմբերի վերջերը արձանագրության ենթարկվեցին հայկական բանակի բոլոր սպաները եւ 70 ընտիր զինվորականներ անմիջապես աքսորվեցին Բաքու:

Հունվարի 10-ին Ռուսաստան աքսորվեց Դրոն իր զինակից սպաների հետ:

Հունվարի 24-ին Ռուսաստան աքսորվեցին եւ Հայաստանի բանակի մնացած սպաները, 1200 հոգի, որոնց մեջ էին եւ սպարապետ Նազարբեկյանը, զորավարներ Սիլիկյանը, Հախվերդյանը, Ղամազյանը: Ձմռան անասելի ցրտին ու ձյունին, չըջապատված ռուսական հրացանավոր ու զնդացրավոր պահակներով, հետիոտն, ժողովրդի ընդհանուր սուգի մեջ, հայկական բանակի զինվորականները քվեցին անձանոթ ուղղությամբ:

Երկրի բոլոր կողմերում խուզարկություններ եւ անվերջ ձերբակալություններ էին տեղի ունենում: Հայաստանի բանտերը բերնե բերան լցվեցին կալանավորներով: Բացի վերոհիշյալներից՝ բանտարկվեցին եւ Լեւոն Շանթը, Հովհ. Քաջազնունին, Նիկոլ Աղբալյանը, Երեւանի քաղաքագլուխ Մ. Մուսխիյանը, Ս. Մելիք-Յուլյանը եւ ուրիշ հարյուրավորներ: Բանտարկյալները պահվում էին անտանելի պայմաններում, զնդակահարության մշտական սպառնալիքի տակ:

Միեւնույն ժամանակ, Երեւանում եւ ամբողջ երկրում կատարում էին անկանոն եւ անհաշիվ բռնագրավումներ: Գրավում էին ամեն ինչ՝ բնակարան, կարասիներ, հագուստ, ուտելիք, ձի, տավար, հավ ու հավկիթ, մինչեւ իսկ թեւ ու ասեղ: Ժողովուրդը Ռուսաստանից էր սպասում օգնություն, այժմ իրենից էր խլվում հացի վերջին պատառը եւ ուղարկվում Ռուսաստան: Հայաստանից բեռնակիր ինքնաշարժերով «ընկեր Լենինին» կամ «կարմիր բանակին» նվեր էր ուղարկվում պետական պահեստների եւ ժողովրդից բռնագրավված պաշարը՝ սպիտակ ալյուր, խտացված կաթ, կակաո, շաքար, կոշիկի կաշի, հագուստեղեն եւ այլն:

Թե ինչ էր կատարվում այդ օրերին Հայաստանում, շատ ցայտուն կերպով նկարագրել է բուլղեւիկ պատմաբան Բորյանը: Ավելի լավ է խոսքը տանք նրան:

«Հեղկոմը, -ասում է նա,- ձեռնարկեց անխնա եւ վճռական բռնագրավումներ, առանց խտրության եւ առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշվի առնելու գյուղացիության ընդհանուր տնտեսական դրությունը եւ նրա հոգեբանական վիճակը: Բռնագրավումը տեղի էր ունենում

անկազմակերպ ձեւով, ծրագրված ու հեղափոխական-դասակարգային բնույթ չուներ եւ կատարվում էր անհարկի բռնութիւններով: Առանց կազմակերպված ու կարգապահ մեքենայի, առանց նախնական քարոզչական պատրաստութեան եւ առանց հաշվի առնելու երկրի յուրահատուկ պայմանները, Հեղկոմը կարգախոս է ուղղում՝ բռնագրավել եւ պետականացնել պարենը քաղաքներում, մասնավոր մարդկանցից եւ հացի պաշարը՝ գյուղացիներից: Անկարգ կերպով գրավվում ու պետականացում էր ամեն ինչ՝ զինվորական հագուստներ, արհեստավորների գործիքները, մասնավոր եւ ամեն տեսակ բրնձի աղորիներ, անխտիր բոլոր ջրաղացները, սափրիչի գործիքներ, մեղվի փեթակներ, սպիտակեղեն, հագուստ, քաղաքացիների տան կահ-կարասիները, առանց ի նկատի ունենալու նրանց դասակարգային վիճակը եւ այլն: Բնական է, որ այս բռնի միջոցները եղան երկրի ապստամբութեան հիմնական պատճառները:⁴⁵ Խոսքը փետրվարյան ապստամբութեան մասին է:

Ու Բորյանը մեկիկ-մեկիկ թվում է Հեղկոմի հանած հակաօրինակ հրամանագրերը եւ կատարած ապօրինի գործերը:

Յոույց է տալիս, որ Հայաստանի բուլճեւիկները ոտքի տակ էին տվել խորհրդային օրենքներն ու հրամանագրերը եւ կատարել էին բազմաթիվ հակաօրինական եւ վնասակար գործեր, որոնց պատճառով ժողովուրդը, որ սկզբից համակրական վերաբերում ուներ դեպի խորհրդային իշխանու-

⁴⁵ Բ. Բորյան՝ «Հայաստան, դիվանագիտութիւն եւ Խորհրդային Միութիւն», Բ Հատոր, էջ 126:

թյունը, ի վերջո, ստիպված եղավ ապստամբության դրոշ
բարձրացնել նույն այդ իշխանության դեմ:

Մի ուրիշ վկայություն, որ, կարծում ենք, նույնպես
կարող է համարվել անկողմնակալ եւ, համենայն դեպս,
վստահության արժանի: Խոսքը տանք Հայաստանի Հանրա-
պետության անդրանիկ վարչապետ Հովհ. Քաջազնունուն,
որ հետո, ինչպես հայտնի է, անցավ բոլշեւիկների կողմը:

«Անցել էր մոտ երկու ամիս այն օրից,- գրում է նա իր
հուշերում,-երբեք բոլշեւիկները մտել էին Հայաստան,
կազմակերպվել եւ հաստատվել էին:

Հայկական Եռագույն դրոշակը եւ «Մեր հայրենիքը»,
իբրեւ հակահեղափոխական սիմվոլներ, վերացվել էին աս-
պարեզից. նրանց փոխարինել էին պրոլետարական կար-
միրն ու պրոլետարական «Ինտերնացիոնալը»:

Կարմիր բանակի գինվորները տեղավորվել էին քաղա-
քացիների բնակարաններում, ուտում էին նրանց հացը եւ
վառում էին նրան վառելիքը:

Պաշտոնյաններն ու կուսակցական գործիչները գրավել
էին քաղաքի լավագույն տները, կահ-կարասին, անկողին-
ները:

Հեղկոմը հրատարակում էր ամեն օր դեկրետներ ու
հրամաններ, որոնք նպատակ ունեին ամրացնելու Հայաս-
տանում պրոլետարական դիկտատուրան եւ միաժամանակ
լայնացնելու ու խորացնելու համաշխարհային մեծ հեղա-
փոխությունը:

Չեկաները անսպառ եռանդով կատարում էին իրենց
փրկարար գործը՝ այնպիսի մեծ եռանդով, որ Հայաստանի
բանտերում այլեւս ասեղ ձգելու տեղ չէր մնացել:

Ժողովրդական (կամ հեղափոխական) տրիբունալներում (դատարաններում) ընկեր դատավորները դատում էին ու լուծում քաղաքացիների մեջ ծագած վեճերը, դրական օրենքի բացակայության պատճառով, համաձայն իրենց «հեղափոխական գիտակցության»:

Գյուղերում «կոմբջիջները» հին ու նոր հաշիվներ էին մաքրում անհաճո դրացիների հետ:

Քաղաքներում հաստատվել էին քաղաքային ու տնային կոմիտեներ: Ամեն մի տասնյակ տան վրա կարգված էին տասնապետեր: Տասնապետերն ու տանտերերը հսկողություն պիտի ունենային իրենց տների վրա եւ եթե նկատեին որեւէ «հակահեղափոխական» երեւույթ, անմիջապես պետք է տեղեկացնեին Չեկային:

Վարչական սիստեմը հիմնված էր ամբողջովին փոխադարձ հսկողության ու փոխադարձ լրտեսության վրա: Հսկելու, լրտեսելու եւ տեղեկություններ հաղորդելու պարտականությունը դրված էր ոչ միայն պաշտոնյաների, այլեւ ամեն մի քաղաքացու վրա: Քաղաքացին պարտավորված էր ոչ միայն ինքը բարեմիտ լինելու խորհրդային իշխանության հանդեպ, այլեւ արթուն աչքով հսկելու հարեւանների բարեմտության վրա. եթե չաներ, անձնապես կնկատվեր «հակահեղափոխական», այսինքն՝ ենթակա Չեկայի խնամատարության:

«Կոմունիստը» (կառավարական պաշտոնական օրաթերթը) շարունակ գրում էր ջարդարար հոդվածներ: «Հեղափոխության հաղթանակը, շատում էր, շապահովված չէ Հայաստանում, որովհետեւ այստեղ չէ եղել քաղաքացիական պատերազմ: Կռիվ է հարկավոր, որպեսզի իսկապես բնա-

ջինջ լինին հակահեղափոխական տարրերը. կռիվ է հարկավոր, որպեսզի խորանա բանվորա-գյուղացիական դասակարգային գիտակցությունը: Հեղափոխական պրոլետարիատը պիտի թափե իր ձեռքով բուրժուազիի արյունը, որպեսզի անանցանելի վիճ բաց անի իր եւ նրա միջեւ»:

Նույն բովանդակությունով ճառեր էին արտասանում եւ կոչեր արվում հրապարակային միտինգներում:

Պատերի վրա փակցվում էին Ֆուտուրիստական ոճով նկարված ահագին պատկերներ, ուր գետերով հոսում էր «Դաշնակիների» եւ ուրիշ հակահեղափոխականների պիղծ արյունը... Ասենք՝ արյունը հոսում էր ոչ միայն պատկերների վրա, այլեւ «չեկայական բանտերում»:

Բնակչությունը բաժանված էր երկու անհավասար մասի. բոլշեւիկներ (կամ բոլշեւիկ ձեւացողներ), որոնց տրված էին բոլոր իրավունքները եւ ոչ բոլշեւիկներ (այսինքն՝ ահագին մեծամասնությունը), որոնց վրա դրված էին բոլոր պարտականությունները:

Եվ առաջին հերթին՝ բոլշեւիկներին կերակրելու, նրանց բոլոր կարիքները հոգալու պարտականությունը:

Բոլշեւիկյան եռանդի մի կեսը ծախսվում էր Չեկայի եւ հարակից գործողությունների վրա, մյուս կեսը՝ խուզարկությունների ու բռնագրավումների վրա:

Բռնագրավվում էր ամեն բան՝ սկսած տնից, կառքից, գրաստից, վառելիքից եւ վերջացրած երաժշտական գործիքով, լվածքի սապոնով, թել-ասեղով... Բավական է որքան բուրժուաները վայելեցին կյանքի բարիքները, այժմ հերթը կարմիր բանակին է եւ հեղափոխական պրոլետարիատի:

Մա մի սկզբունք էր, որ գործադրվում էր ամեն ուղղութիւնով, ամենայն հետեւողականութիւնով ու արտակարգ եռանդով:

Ժողովուրդը հանկարծակիի էր բերվել, շշմել, ահաբեկվել էր: Չէր հասկանում, թե ինչ էր կատարվում շուրջը: Չէր հասկանում, թե ինչ են ուզում իրանից այս կարմիր աստղանի, պոպոզավոր գլխարկներ կրող անծանոթները, այս մտուզներն ու նագաններով զինված, երեսները փիս ներկած դեռահաս օրիորդները, այս բազմաթիվ կոմիսարներն ու կոմընկեները, որ օտոմոբիլները նստած՝ օր ու գիշեր վեր ու վար էին անում Երեւանի փողոցներում...

Մենակ «բուրժուան» չէր, որ շշմել էր. շշմել էին նաեւ աշխատավոր զանգվածները, որոնք «բուրժուազիի» հետ հավասար տուժում էին բոլշեւիկյան իրավակարգից: Մենակ «բուրժուան» չէր, որ թալանված էր, անարգված, իրավազրկված. նույնն էր եւ ամբողջ ժողովուրդը (բացի բոլշեւիկներից, իհարկե), օրվան աշխատանքով ապրող բազմությունները:

Այլեւս ոչ ոք տեր չէր ո՛չ իր ունեցածի, ո՛չ իր աշխատանքի: Կոմունիզմը հասկացվել էր ու իրականացվում էր այն մտքով, թե ոչ բոլշեւիկի ունեցածը հալալ է բոլշեւիկին»:

Բորյանի եւ Քաջագնունու առաջ բերած փաստերը բավական են հասկանալու համար այն ներքին պայմանները, որոնք առաջ բերին հակախորհրդային համաժողովրդական հեղափոխությունը փետրվարին: «Փաստերի այս բավական մակերեսային թվումը,՝եզրակացնում է Բորյանը,՝բա՝

ցատրում է Հայաստանի ժողովրդական ապստամբութեան պատճառները»:

Բայց միայն ներքին պատճառները չէին, որոնք հայ ժողովրդին ոտքի հանեցին խորհրդային իշխանութեան դեմ: Հակառակ իրենց տված հանդիսավոր խոստումների եւ հանձնառությունների՝ բոլշեւիկները ապիկար գտնվեցին եւ արտաքին քաղաքականութեան մեջ:

Նրանք խոստանում էին Հայաստանը խորհրդայնացնելուց անմիջապես հետո, վերականգնել հարաբերությունները արտաքին աշխարհի հետ, Ռուսաստանից բերել «հաց եւ մանուֆակտուրա», կարգադրել հարեւանների հետ հողային վեճերը եւ Ռուսաստանի օգնութեամբ բարի-հարեւանական կապեր հաստատել Թուրքիայի հետ: Արդ՝ Հայաստանի հեղկոմը ինչպե՞ս արդարացրեց ժողովրդի հույսերը:

Նախ՝ ճանապարհների խնդիրը: Խորհրդայնացումից հետո էլ Հայաստանը կտրված մնաց արտաքին աշխարհից: Բաթումի պահեստներում դիզված հայկական պարենն ու ապրանքները տեղից չչարժվեցին, եւ Վրաստանը ավելի եւս ամուր գոցեց իր դռները հայերի առջեւ: Հեղկոմի դիմումները, թախանձանքներն ու սպառնալիքները ոչ մի ազդեցութեւն չգործեցին Վրաստանի կառավարութեան վրա: Անօգուտ անցավ եւ Մոսկվայի միջամտութեւնը:

Այսպես, Խորհրդ. Ռուսաստանի լիազոր դեսպանը, 1920թ. դեկտեմբերի 25-ի դիմումնազրով, մատնանշելով, որ «սովահար Հայաստանի շրջափակումը շարունակվում է ամբողջ ծավալով»՝ պահանջեց բանալ երկաթուղային հողորդակցութեւնը Հայաստանի հետ: Պատասխանը եղավ մերժում: 1921թ. հունվարի 21-ին Մոսկվան նորից պահան-

ջեց «անմիջապես իրականացնել տրանզիտի իրավունքը Վրաստանի վրայով Հայաստան»: Արդյունքը եղավ նույնը. վրաց կառավարութիւնը մերժեց:

Վրաստանը տեղի չտվեց եւ սահմանավեճի հարցում: Իշխանութեան գլուխ անցնելուց անմիջապես հետո, Հայաստանի Հեղկոմը, իրար հետեւից, մի շարք հեռագրերով պահանջեց, որ վրացիները հեռանան հայկական հողերից եւ վրացական զորքերը հետ քաշվեն Լոռիի չեղոք գոտուց: Վրացիները բնավ կարեւորութիւն չտվին այդ պահանջներին:

Ահա մեկ նմուշ Հայաստանի Հեղկոմի կատարած դիմումներին:

Դեկտեմբերի 30-ին, Խորհրդ. Հայաստանի արտաքին գործավար Ա. Բեգզադյանը հետեւյալ ծանուցագիրը ուղղեց վրաց կառավարութեանը.

«Երեւան, 30 դեկտեմբերի (ուղիւ).- Վրաստանի դեմոկրատիկ Հանրապետութեան արտաքին գործոց նախարարին:

Ձեզոք գոտուց ձեր զորքերը հետ քաշելու մասին սույն դեկտեմբերի 7-ին եւ 10-ին ձեզ ուղղված դիմումներին մեջ Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը արտահայտել էր ազատագրված ժողովրդի կամքը՝ վերադառնալու խաղաղ աշխատանքի իր երկրի այն մասում, որ թեւ պատերազմող կողմերի թշնամական գործողութիւնների անմիջական վայր չէր, սակայն Թուրքիայի հետ վարած պատերազմի ընթացքում ձեր կառավարութեան կողմից աստիճանաբար վերածված էր զինվորական գրավման վայրի՝ իր բոլոր քաղաքացիների համար անտանելի ծանր հետեւանքներով:

Նկատի ունենալով, որ ձեր կառավարութիւնը իր սույն դեկտեմբերի 10-ի եւ 21-ի պատասխաններով մերժում է գոհացում տալ չեզոք գոտու հայ աշխատավոր բնակչութեան այնքան հասկանալի ցանկութեան եւ ձեր կրկնակի մատնանշումները, թե ձեր կառավարութիւնը Դաշնակցականների հետ սույն տարվա նոյեմբերի 13-ին համաձայնութիւն է կնքել այդ մասին, Հայաստանի Ս.Խ. Հանր. կառավարութիւնը ստիպված է նորից մատնանշել այն հանգամանքը, թե նա ինքը առհասարակ մերժում է ամեն մի հնարավորութիւն ձեր կառավարութեան կողմից մատնանշելու նոյեմբերի 13-ի համաձայնագիրը, որ ձեր իսկ կառավարութեան գործողութիւններով չեղյալ է նկատված: Ձեր կառավարութեան ձեւական պնդումը, թե իր կողմից ճշտիվ կատարվում են նոյեմբերի 13-ի համաձայնագրի պայմանները, չի կարող ընդունվել Հայաստանի Ս.Խ. Հանր. կառավարութեան կողմից՝ նկատի ունենալով այն հանրածանոթ իրողութիւնները, որ ձեր գործերը համաձայնութեան առաջին իսկ օրերն անցել են չեզոք գոտու սահմանները, գրավել են Քոլագերանը, Շահալին, Ջալալ-Օղլին, Նիկոլաեւկան եւ Հայաստանի տերիտորիայի ուրիշ անվիճելի կետեր, որ այդ տեղերում նշանակված են վրացի հրամանատարներ, արձակված են հայ ծառայողները եւ փոխարինված են վրացիներով. որ նոյեմբ. 19-ին բռնագրավված է Քոլագերան կայարանի գործիքների սենյակը, ձերբակալված են առանց պատճառների որեւէ բացատրութեան եւ հրամանի կայարանի հեռագրական պաշտոնյաներ Գարեգին Տեր Հարութիւնյանը, Համբարձում Պետրոսյանը եւ Արտաշես Շահվերդյանը, որոնք հետո տարված

են Աշաղա-Մարայլ, որ, վերջապես, պատժիչ զորամաս է ուղարկված Շնող գյուղի հայ գյուղացիների դեմ եւ ուժազոծված է հիշյալ գյուղը:

Սրանից անկախ, Հայաստանի Ս.Խ. Հ. կառավարությունը չի կարող նույնպես համաձայնվել ձեր կառավարության նոյեմբերի 13-ի համաձայնագրի վրա ունեցած հայեցակետին, որովհետեւ այդ համաձայնագիրը չի պայմանավորված ոչ մի փաստացի հանգամանքով: Բացի այդ, որ խնդրի այդպիսի մեկնաբանությունը, առհասարակ, անընդունելի է պայմանագրի փոխհարաբերությունների ասպարեզում, որքան վերջիններս միշտ հենվում եւ պահպանում են իրենց օրինական ուժն ու նշանակությունը միայն իրենց առաջ քաշող պայմանների սահմաններում, -նոյեմբերի 13-ի համաձայնության բնագիրն ինքն իսկ լիովին բացասում է մի այդպիսի մեկնաբանություն: Այդ բնագիրը, իբրեւ կնքված համաձայնության հիմունք, ճշտիվ առաջ է քաշում երկու հանգամանք՝ Անատոլուի կառավարության զորքերի հարձակումը Հայաստանի Հանրապետության վրա եւ այդ բանի հետեւանքով չեզոք գոտիի եւ բուն Վրաստանի համար ստեղծվող սպառնալիքը: Այդ երկու հանգամանքների վերացվելուց հետո, վրաց զորքերի մնալը չեզոք գոտում այլեւս կորցնում է ամեն արդարացում եւ չի կարող ընդունվել Հայաստանի Ս.Խ.Հ. կառավարության կողմից: Հայաստանում քաղաքական նոր իրավակարգ եւ ընկերային նոր փոխհարաբերություններ հաստատվելուց հետո, հնացած են դառնում այն արհեստական կապերը, որոնք փաթաթվում են Անդրկովկասի հանրապետությունների վզին նրանց հովանավորների կողմից: Շահագրգռված լի-

ներով վերջ տալու հիշյալ կացության չեզոք գոտու եւ Հայաստանի անվիճելի երկրամասի սահմաններում, որ գրավել են վրաց զորքերը, Հայաստանի Խորհրդային կառավարութիւնը՝ ելնելով ինչպէս Խորհրդային կառավարության ընդհանուր քաղաքականութիւնից, այնպէս եւ նրա հռչակած սկզբունքներից՝ պատրաստ է օգտագործել ամենից առաջ վիճելի խնդիրների խաղաղ լուծման եղանակը: Իսկ հիշյալ վեճը արագորեն լուծելու եւ այդպիսի դեպքերում սովորական ձգձգումների առաջն առնելու համար, իմ կառավարութիւնը ամենից ավելի նպատակահարմար է համարում չեզոք գոտու վիճելի խնդիրը լուծել Ռուսաստանի Ս.Ֆ.Խ. Հանրապետութիւնի ներկայացուցչի մասնակցութեամբ:

Այս խնդրի վերաբերմամբ Հայաստանի Ս.Խ.Հ. կառավարութիւնը սպասում է ձեր կառավարութիւնի շուտափուլից պատասխանին»:

Խորհրդ. Ռուսաստանի դիմումն ու վերջինիս միջնորդութիւնն էլ չօգնեցին. վրացիները մնացին անդրդվելի եւ շարունակեցին գրաված պահել Լոռին եւ երկաթուղային հաղորդակցութիւնը չվերականգնեցին:

Ավելի փայլուն չէր վիճակը եւ «եղբայրական» Ազրբեջանի ուղղութեամբ, հակառակ որ այնտեղ իշխանութիւնը բոլշեւիկների ձեռքին էր:

Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերին Ազրբեջանի կառավարութիւնն պետ «ընկեր Նարիման Նարիմանովը» Հայաստանի Հեղկոմին ուղղված հեռագրով ծանուցեց, որ այլեւս Հայաստանի եւ Ազրբեջանի միջեւ ամեն վեճ վերջացած է, եւ Խորհրդ. Ազրբեջանը եղբայրա-

բար զիջում է Ղարաբաղը Հայաստանին: Այսուհետեւ Ղարաբաղը պետք է մտնէր Խորհրդային Հայաստանի սահմանների մեջ, եւ այդ հանգամանքը գոհունակությամբ ընդունվեց հայերի կողմից: Բայց հետո ի՞նչ անցավ-դարձավ, հայտնի չէ, հավանաբար, թուրքերը ճնշում գործ դրին Մոսկվայի վրա, եւ Ղարաբաղը Հայաստանին չմիացվեց: Այդ առթիվ, հայ կոմունիստական շրջաններում տրվում էր այն բացատրությունը, թե Նարիմանովը Ղարաբաղը զիջելու մտքով չէր արել հայտարարությունը, այլ իբրեւ պրոպագանդ, հայ բոլշեւիկների գործը դյուրացնելու նպատակով:

Ղարաբաղը մնաց Ազրբեջանի ձեռքը, Նախիջեւանն էլ՝ թուրք-բոլշեւիկյան գրավման տակ:

Ռուսաստանից պարեն ստանալու հույսն էլ ի դերեւ ելավ: Նախ՝ Ռուսաստանը ինքը անոթի էր: Երկրորդ՝ ձմռան սառնամանիքների եւ բուք ու բորանի պատճառով հաղորդակցությունը շատ էր դժվարացել, թեեւ, ինչպես տեսանք վերը, հաղորդակցության դժվարությունները արգելք չէին Հայաստանի պարենն ու ապրանքները փոխադրելու Բաքու եւ Մոսկվա:

Ավելի վատ եղավ հայ բոլշեւիկների գործը թուրքերի հետ: Նրանք հավատացնում էին ամենքին, թե թուրքերի թշնամությունը դեպի հայերը հետեւանքն էր դաշնակցականների վերաբերմամբ տաժաժ ատելության. բավական է Հայաստանը հայտարարել Խորհրդային եւ եղբայրական ձեռք մեկնել թուրքերին, թուրք-հայկական հարաբերությունները կբարելավվեն, եւ թուրք բանակը անմիջապես կհեռանա Ալեքսանդրապոլից եւ Կարսից:

Այս ոգիով էր ներշնչված եւ Հեղկոմի առաջին դեկլարացիան, ուր հետեւեալ տողերն էին նվիրված Թուրքիային. «Հայաստանի Հեղափոխական Կոմիտեն լի է հավատով, որ ինքը վայելում է Թուրքիայի աշխատավոր զանգվածների վստահությունն ու համակրանքը, այն ժողովուրդի, որ արդեն հասկացել է Անտանտի դարավոր լծից ազատվելու անհրաժեշտությունը եւ որ կոչված է խոշոր դեր կատարելու Արեւելքի հեղափոխականացման գործում: Հավատում ենք, որ իմպերիալիստական լծից ազատագրվող հասարակական Թուրքիան, հաշվելով մեզ Թուրքիայի հետ միասին Սելրի դաշնագրի թշնամի, անմիջապես եղբայրական ձեռք կմեկնես մեզ, երբ մենք կտապալենք մեր թշնամուն (դաշնակցականներին) եւ նրա հետ միասին պայքար կմղենք Անտանտի գիշատիչների դեմ: Մենք համոզված ենք նույնպես, որ հաղթողի սուրբ չէ որ պիտի թելադրես առաջիկա հաշտության դաշնագիրը Խորհրդ. Հայաստանի եւ աշխատավոր Թուրքիայի միջեւ, այլ Խորհրդ. Հայաստանի եւ աշխատավոր Թուրքիայի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխությունն ու համաձայնությունը»:⁴⁶

Ինչպե՞ս պատասխանեց «աշխատավոր Թուրքիան» Հեղկոմի պարզած «եղբայրական ձեռքին»:

«Դուրս եկավ,-ասում է Բորյանը,- որ Հեղկոմը շատ մեծ հույսեր էր կապում «աշխատավոր Թուրքիայի» հետ: «Հասարակական Թուրքիան» մեկից ավելի անգամներ ցույց է տվել իր «համակրանքը» հայերին ու Հայաստանին: Նա դաշնագրով պարտավորեց Խորհրդ. Ռուսաստանին ճնշում գործ դնել Խորհրդ. Հայաստանի վրա»: (Բ. հատոր, էջ 151):

⁴⁶ Բորյանի գիրքը, Բ հատոր, էջ 151:

Եվ, հիրավի, խորհրդայնացումը ոչ մի նշանակութուն չունեցավ թուրքերի համար. նրանք մազաչափ անգամ չփոխեցին իրենց վերաբերումը դեպի հայերը, չպարպեցին Ալեքսանդրապոլը, վերջ չտվին հալածանքներին, բռնություններին, թալանին ու սպանություններին հայկական շրջաններում:

Հայաստանը գրավված էր ռուսական զորքերով, Հայաստանում տիրում էր խորհրդային իշխանություն, Ալեքսանդրապոլում էլ Հեղկոմ էր հաստատված, Հայաստանի Հեղկոմը «եղբայրական ձեռք» էր մեկնում թուրքերին եւ կաշվից դուրս գալիս ցույց տալու համար, որ ինքը «Գաշնակներից» տարբեր բան է, թուրքիային բարեկամ իշխանություն է, Երեւանից բարեկամական հավաստիացումներ էին ուղարկվում Էնկյուրի. այդ ամենը չփոխեց թուրքերի հակահայ ընթացքը: Ընդհակառակը, կարծես էլ ավելի գրգռեց նրանց հայերի դեմ, որ նորից բռնել էին ռուսների փեշը՝ շարունակելու համար իրենց ռուսասիրական ավանդական քաղաքականությունը: Երեւանից «եղբայրական» ոգիով հեռագրեր էին քաշվում Էնկյուրի, իսկ թուրք կառավարությունը պատասխանում էր, թե ինքը ոչ մի տարբերություն չի տեսնում «գաշնակների» եւ հայ բուլշեւիկների միջեւ: Եւ ռուսների աչքի առջեւ, թուրք զորքերը շարունակում էին դաժանորեն ամայացնել Շիրակի հայկական գյուղերը, ավերել ու կողոպտել եւ հազարներով հայեր կոտորել:

Հայաստանի Հեղկոմը բազմաթիվ առիթներով դիմեց Էնկյուրի՝ աղաչանքով ու բողոքով՝ վերջ տալու համար թուրք բանակի կողմից հայ խաղաղ բնակչության դեմ

գործվող դաժանություններին, բայց ոչ մի հաջողություն չունեցավ. թուրքերը պարզապես արհամարհում էին հայ բոլշեակներին, երեւի, վստահ, որ ռուսները չեն պաշտպանի նրանց:

Մոսկ նմուշի համար առաջ բերենք Հայաստանի արտաքին գործավար Ա. Բեգզադյանի 21 հունվար հեռագիրը թուրք կառավարութեան: Նա ավելի պերճախոս է, քան որեւէ խոսք:

«Անգարա, Տաճկաստանի Մեծ Ազգային Ժողովի կառավարութեան արտաքին գործերի կոմիսարին: Պատճենը՝ Մոսկվա, արտ. գործ. ժող. կոմիսար Ջիչերինին, Տեր Գաբրիելյանին: Պատճենը՝ Բաքու, արտ. գործ. ժող. կոմ. Հուսեյնովին, Աթաբեգովին.

Խորին վրդովմունքով հաղորդում է ձեզ Հայաստանի կառավարութեան այն անբնական երեւույթների մասին, որոնք ստացել են մասսայական եւ քրոնիկական բնույթ եւ որոնք նկատվում են մեր սահմանակից շրջաններում: Խորհրդ. Հայաստանի կառավարութեան ստացած ստույգ տեղեկությունների համաձայն, Կարսի, Ալեքսանդրապոլի գավառներում եւ չեզոք գոտիում ձեր գրավման գործերի կողմից տեղի են ունենում խաղաղ աշխատավոր բնակչութեան վրա՝ անընդհատ բռնություններ, թալան եւ սպանություններ: Տաճիկ գործերի կողմից գրավված բոլոր վայրերից ժողովվում են Խորհրդ. Հայաստանին պատկանող պետական գույքերը, ավարի եւ ենթարկվում մասնավոր անձերի գույքն ու տնտեսությունը, քշվում են գյուղացիների անասունները եւ գրավվում է բնակչութեան վերջին պարենավորումը: Այդպես, Ալեքսանդրապոլ քաղաքից վերջին ամսվա ընթացքում տարված են գյուղա-

տնտեսական մեքենաները, շոգեկառքերը, հեռագրի եւ հեռախոսի կազմածնները, օթոմոբիլները, մասնավոր գույքը եւ այլն: Գավառն ամայացած է, բոլոր անասունները քշված: Նալբանդ կայարանում կենտրոնացած է հացահատիկի մեծ պաշար Տաճկաստան ուղարկելու համար, որպիսին խլված է շրջակա գյուղերում եւ այդպիսով գյուղացիները դատապարտվում են սովամահության:

Աշխատանքի ընդունակ բոլոր 18-50 տարեկան հասակի տղամարդիկ բռնի քշվում են իրենց հայրենի տեղերից եւ խլելով նրանցից ալյուրի պարկերից կարված ամբողջ վերնագրեստը, քշում, տարվում են ձմեռվան ցրտին դեպի Սարըղամիշի եւ Էրզրումի շրջանները՝ ծանր ու բռնի աշխատանքների: Այնուհետեւ, Ղարաքիլիսայից եկող փախստականների խմբերին ձեր գրավման գործասերի ներկայացուցիչները փորձում են ուղարկել Կարսի վրայով դեպի Էրզրում՝ նույնպես բռնի աշխատացնելու համար վերոհիշյալ պայմաններում:

Կարսում, ձեր գործերի կողմից գրավվելուց հետո, առաջին երեք օրերը տեղի են ունեցել եւ մասսայական բնույթ են ստացել թալանը, բռնություններն ու սպանությունները, որոնք ավելի կրճատված չափերով շարունակվում են մինչեւ օրս: Հիշյալ գյուղերի ամբողջ վառելիքը գրավված է, մինչեւ իսկ վառելիք չէ թողնված նաեւ որբանոցներում: Տղամարդիկ քշված են Սարըղամիշ եւ Էրզրում, պարենավորումը խլված է եւ տավարը քշված: Աղբուլաղի եւ Համամլուի շրջաններում, ասկյարների առանձին գինված խմբեր ներս են խուժում հայ գյուղերը, թալանում եւ սպառնում են, իսկ կանանց բռնաբարում:

Դեկտեմբեր 13-ին Կուլինջի գյուղում տեղի ունեցավ այդպիսի դեպք: Դեկտեմբերի 26-ին տաճկական 36-րդ զնդի զորամասի կողմից Քաֆթաուլի գյուղը գրավվելուց հետո, բանվորների թվում, նույն գյուղացիներից ինը հոգի երիտասարդ կոմունիստներ՝ Վարդ Տեր Պետրոսյան, Պետրոս Մինասյան, Իգնատիոս Վարդանյան, Մարտին Մուրատյան, Ստեփանոս Մուրատյան, Մանուել Ամանյան, Թումաս Ատոմյան, Խաչատուր Կուսիկյան եւ Մանուել Ասլանյան, աշխատանքների վերջացնելուց հետո, գաղտնաբար սպանվեցին նույն գյուղի մի դարձանոցում: Նրանց դիակները դուրս բերվեցին Քաֆթաուլի բնակիչ Ստեփաննոս Բոյաճյանի սայլով, եւ ոճրագործության հետքերը ծածկելու համար՝ սպանվեց սայլի տերը: Հունվար 13-ին, ասկյարների մի խումբ, առանց պատճառի, հարձակվեցին Եգանեսատ գյուղի վրա եւ կատաղի կրակ բացեց վրան:

Չեզոք գոտու կից գյուղերում գյուղացի խաղաղ հայ բնակչության վրա կատարված թալանը, բռնություններն ու սպանությունները սովորական երեւույթ են դարձել: Միայն չորրորդ կոմիսարիատի գավառամասում ցուցակագրված են ավելի քան երկու հարյուր այդպիսի սպանություններ:

Շրջանի բակչությունը տեռորի է ենթակված, բնակիչների գյուղական եւ տնային տնտեսութունն ավերված է, անասունները՝ քշված եւ հարկերի անվան տակ խլված են բնակչության բոլոր կենսամթերքները: Զինված զորամասերի հարձակումները չեզոք գոտու վրա վերջերս քրոնիկական բնույթ են ստացել եւ եթե այդպես շարունակվի, նույն ավերումը տեղի կունենա ինչ որ կատարվեց Ալեք-

սանդրապոլի շրջանում, ուր ավերված են ավելի քան 50 գյուղեր:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի բնակչության, չնայած այն հանգամանքին, որ հազորդակցությունը դժվար է եւ կաշկանդված մեր հեռագրի վրա դրված ձեր կոնտրոլով (մինչեւ իսկ Հեղկոմի վերաբերմամբ), այլեւ այն հանգամանքին, որ ձեր կողմից չի թույլատրվում մեր ընկերներին դուրս գալ Ալեքսանդրապոլից, բայց այնուամենայնիվ մեզ հաջողվեց անկասկածելիորեն հաստատել, որ Հեղկոմի իշխանությունը ձեր գործերով գրավված քաղաքում ոչ այլ ինչ է, եթե ոչ մի Ֆիկցիա եւ կարող է իրական լինել այն չափով, ինչ չափով կարեւոր է գինվորական հրամանատարության:

Զինվորական հրամանատարության կողմից հեղափոխական կոմիտեին ներկայացված մշտական պահանջները եւ վերջնագրերը, որոնք ոչ մի առնչություն չունին Հեղկոմի խնդիրների հետ, որպես խորհրդային իշխանության օրգանի (ինչպես բռնի աշխատանքների համար մարդիկ տալը, 10 հազար հրացանների պահանջը, ասկյաներ սպանողին հանձնելը, որ հայտնի չէ թե ո՞վ է սպանել, ե՞րբ եւ կամ որտե՞ղ եւ այլն), որ ստորացրել է Ալեքսանդրապոլի հեղափոխական կոմիտեին եւ փաստորեն դարձրել է նրան զենք Ալեքսանդրապոլը գրավող զորամասերի ձեռքին,- Հայաստանի հեղափ. կոմիտեն ստիպված է, այսուհետեւ, նման օրգանի գոյությունը բոլորովին ավելորդ համարել, քանի որ դա խորհրդային իշխանության վարկը ձգում է թե՛ աշխատավոր մասսաների, թե՛ քաղաքացիների աչքում:

Այնտեղ ուր գոյություն ունի վերոհիշյալ տեսակի զինվորական գրավում եւ ուր ստրկացնում եւ ավերում է տիրում, այնտեղ չի կարող տեղի ունենալ բանվորա-գյուղացիական իշխանություն:

Հիշատակված բոլոր փաստերի անկողմնաւ վերլուծությունը ակներեւ է դարձնում, որ Հայաստանի խորհրդային կառավարությունը չի կարող թույլ տալ նման արարքներ այն հողամասերի վրա, որոնք իրավամբ նա ճանաչում է իր սեփականությունը, որովհետեւ դրանց նպատակն է հայտնապես երկիրը տնտեսապես ավերել եւ նրա բնակչությունը դատապարտել քաղցի եւ արհեստական ոչնչացման:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը, այդպիսով, ստիպված է նայել ձեր հրամանատարութան գործողությունների վրա այն հայեցակետով, որ դրանք բերում են անխուսափելի արյունաքամում եւ լիակատար տնտեսական քայքայում այն շրջաններում, որպիսիները պատերազմի ժամանակ, տաճկական զենքի հաջողությամբ, ընկել են եւ գտնվում են նրա ժամանակավոր տիրապետության տակ եւ որոնք պետք է անցնեն մի այլ պետության: Ձեր զորքերի մեջ գտնված կարգապահության հանրաժանոթ փաստը եւ ասկյարների ունեցած անկասկած համակրանքը դեպի խորհրդային իշխանությունը ենթադրել չեն տալիս, որ վերը հիշատակած բռնության դեպքերը ինքնակամ գործողություններ են, որով ուժեղանում է կատարվող անկարգությունների նշանակությունը:

Խորհրդային Հայաստանի աշխատավոր բնակչության անունից, որ խորհրդային իշխանությունն ընդունելուց հետո ցույց է տվել իր ջերմ ցանկությունը ապրելու

հեղափոխական Տաճկաստանի հետ խաղաղությամբ եւ եղբայրաբար եւ որ միանգամ ընդմիջտ ազատվել է իր հայրենիքի նացիոնալիզմի լծից, ես ստիպված եմ մատնանշել, որ վերոհիշյալ փաստերը, որպես սպառնալից նշան, կարող են արգելք լինել Խորհրդային Հայաստանի եւ ազատվող Տաճկաստանի հեղափոխական խնդիրների իրականացման:

Լիապես հավատացած, որ ցույց տված փաստերի վերաբերությամբ մեր մեջ տարակարծութուններ չեն լինի, իմ կառավարությունը չի կասկածում, որ Տաճկաստանի կառավարությունը չի հապաղի արմատական միջոցներ ձեռք առնել դադարեցնելու նման փաստերը, որին ամենաչուտ կերպով կարելի է հասնել միայն հեռացնելով զորքերը Ալեքսանդրապոլի գավառից եւ Կարսի հյուսիսային եւ արեւելյան շրջաններից: Խորհրդային Հայաստանի կառավարությունը լիովին հավատացած է, որ նրա արդարացի պահանջները չեն կարող չճանաչվել Տաճկաստանի Ազգային Մեծ Ժողովի բարեկամ կառավարության կողմից եւ շուտափույթ պատասխանի է սպասում ձեր կառավարությունից՝ այդ աննորմալ կացության վերջ տալու համար ձեռնարկված քայլերի մասին, որոնք պետք է հաստատեն նրա անկեղծ մտադրությունների զգացմունքները դեպի իր հարեւան խորհրդային իշխանությունը:

21 հունվար, 1921:

Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդկամ իսար՝ Ա. Բեզգադյան»:

Այս հեռագիրն էլ արժանացավ նույն բախտին, ինչպես սրանից առաջ եւ հետո տրված մյուս հեռագրերը: Թուրքերը ոչ մի կարեւորութիւն չտվին նրան: Փաստորեն մատը մատին չզարկեց եւ Մոսկվան՝ սանձահարելու համար թուրքերին: Եվ հասկանալի է, թե ինչ հրասթափութիւն եւ հոսահատութիւն առաջ եկավ հայ ժողովրդի մեջ:

«Խորհրդային իշխանութիւնը,՝գրում է Բորյանը,՝ ոչ մի գործնական քայլ չառավ հեռացնելու համար թուրքերին Հայաստանից, այնինչ ժողովուրդը համոզված էր, որ խորհրդայնացումից եւ Խորհրդ. Ռուսաստանի հետ բարի դրացիական հարաբերութիւնների հաստատումից հետո, թուրքերը այլեւս անելիք չունեին Հայաստանում, եւ Ռուսաստանը թույլ չի տա թուրքերին գրավելու Հայաստանի հողերը, որոնց վրա թուրքերը ոչ մի իրավունք չունեին: Ժողովուրդը «համոզված» էր, որ թուրքերը եկել են Խորհրդ. Ռուսաստանի գիտութեամբ եւ օգնութեամբ, որպէսզի տապալեն դաշնակցականների կառավարութիւնը եւ Խորհրդ. Հայաստանի վրայով կապ հաստատեն Ռուսաստանի հետ: Մինչդեռ պարզվեց, որ թուրքերը եկել են իբրեւ նվաճողներ, եւ երկրի վիճակը վատթարացավ, մի բան, որ ժողովուրդը չէր կարող սպասել խորհրդային իշխանութեան «գալուց» Հայաստան... Թուրքերի ավանդական քաղաքականութիւնը հայերի նկատմամբ եւ հայերի պատմականորեն հաստատված ոչ բարեկամական հարաբերութիւնները թուրքերի հանդէպ ստեղծեցին անտանելի ծանր մթնոլորտ հայկական զանգվածների համար, եւ նրանք ազատութիւն էին սպասում: Բայց միայն սպասում էին, որովհետեւ Հեղկոմի եւ Ռուսաստանի քաղաքականու-

Թյունը, որ հիմնված էր արեւելյան օրինտանցիայի վրա, ցույց տվեց ժողովրդին, որ Թուրքերը չպիտի հեռանան: Ժողովուրդը ջղայնանում էր, եւ հակահեղափոխական քարոզչությունը նպաստավոր հող էր գտնում նրա մեջ»:⁴⁷

Հայ բուլեւիկները, իհարկե, այնքան անխելք ու անմիտ չէին, որ չըմբռնեին իրենց վիճակի անհույս լինելը: Նրանք գիտեին, որ այն ժամանակ, երբ Քյազիմ Կարաբեքիրի գործերը անպատիժ քարուքանդ էին անում հայկական գյուղերը եւ բնաջնջում հայությանը, Մուստաֆա Քեմալի ներկայացուցիչները Չիչերիի հետ բանակցություններ էին վարում Մոսկվայում, որոնք հանգեցին 1921թ. մարտ 16-ի «բարեկամության եւ եղբայրական դաշնագրության», որ Հայաստանի համար անհամեմատ ավելի ծանր պայմաններ էր պարունակում, քան նույնիսկ Ալեքսանդրապոլի դաշնագիրը:

Այսպես, Ալեքսանդրապոլի դաշնագրով «Կարսի նահանգը եւ Սուրմալուն համարվում էին վիճելի մինչեւ երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարությունը կարող է հայտարարել հանրաքվե՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների»: Մոսկվայի դաշնագրով այդ նահանգները վերջնականապես հանձնվում էին Թուրքիային:

Ալեքսանդրապոլի դաշնագրով «Շարուրն ու Նախիջեւանը ժամանակավորապես օժտվում էին ինքնավարությամբ՝ գտնվելով Թուրքիայի հովանավորության տակ, մինչեւ որ որոշվի նրանց բախտը»: Մոսկվայի դաշնագրով Շարուրն ու Նախիջեւանը հանձնվում էին Ազրբեջանին, եւ այս վեր-

⁴⁷ Հատոր Բ, էջ 135-36:

ջինը իրավունք չուներ փոխանցելու մի երկրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին:

Մոսկվայի դաշնագիրը վերջը վավերացվեց եւ Կարսի դաշնագրով Անդրկովկասյան հանրապետութունների եւ Թուրքիայի միջեւ, Խորհրդ. Ռուսաստանի խնամակալության ներքո:

Եթե ավելացնենք, որ հետագային, Ստալինյան սահմանադրությամբ, Ախալքալաքն ու հայկական Լոռիի մի մասն էլ վերջնականապես հանձնվեցին Վրաստանին եւ հայկական Ղարաբաղը՝ Ազրեջանին, պատկերը կլինի կատարյալ:

Ահա այս ներքին եւ արտաքին, առարկայական ու ենթակայական պատճառները, հաստատված հենց բոլշևեիկյան վկայություններով, փաստերով ու վավերագրերով, կարճ ժամանակամիջոցում, ընդհանուր հիասթափություն եւ զայրույթ առաջ բերին հայ ժողովրդի մեջ եւ, ի վերջո, հանգեցին համաժողովրդական տարերային ապստամբության՝ փետրվար 18-ին:

Բորյանը շատ ճիշտ է դատում, երբ գրում է, թե արտաքին քաղաքականության եւ, մասնավորապես, Թուրքիայի խնդրում կրած պարտության եւ ներքին սխալների եւ անուժության հետեւանքով էր, որ Հեղկոմը մատնվեցավ ձախողանքի: «Այդ բոլորը անմիջապես մի շարք բախումներ առաջ բերեց բնակչության հետ եւ հանգեց այն բանին, ու Հայաստանի խորհրդայնացումից երկու եւ կես ամիս հետո, հակահեղափոխությունը, օգտագործելով իրեն համար ստեղծված չափազանց նպաստավոր պայմանները՝ ապստամբություն առաջ բերեց երկրում: Հեղկոմը հասկանալով իր անզորությունը՝ օգնություն խնդրեց Խորհրդա-

յին Ռուսաստանից եւ փախուստի մեջ փնտրելով իր փրկութիւնը, փոքրաթիվ գորամասի պահպանութեան տակ, Հայաստանի փրկութեան գործը փոխանցեց կարմիր բանակի ձեռքը»:⁴⁸

«Քաղաքացիական կռիվը, ասում է Բորյանը, շատ համառ բնույթ էր կրում: Ապստամբութեան գլխին գտնվեցին դաշնակցականները, որոնք երեւան բերին, բավարար չափով կազմակերպութիւն Հեղկոմի դեմ մղած կռիվում, եւ նրանց ուժերի գերազանցութիւնը սպառնում էր խորհրդադային իշխանութեան Հայաստանում: Ապստամբութիւնը եւ «Դաշնակցական» իշխանութեան մնացորդները հաշվեհարդարի ենթարկվեցին կարմիր բանակի ուժերով, 1921թ. ապրիլի սկզբին»:⁴⁹

Փետրվարյան ապստամբութեան պատմութիւնը այս գրքույկի սահմաններից դուրս է: Բայց ինչքան որ հարցը վերաբերում է մեր ընդգրկած նյութին, պետք է ասենք, որ փետրվարյան ապստամբութիւնը, ինչպես հաստատում են եւ բուլղեհիկներն իրենք, նախամտածված ու ծրագրավորված քաղաքականութեան արդյունք չէր: Ընդհակառակը, այն ժամանակվա պայմաններում, ոչ մի լուրջ մարդ չէր կարող մտածել ապստամբութեան մասին: Եթե մի օր այդ շարժման իսկական պատմութիւնը գրվի, պիտի երեւա, որ շատեր այն գործիչներից, որոնք այսօր խաչվում են, իբրեւ եղբայրական կռիվ հեղինակ, բնավ մասնակցութիւն չեն ունեցել իրենց վերագրվող գործերի մեջ եւ կամ, եթե անգամ ունեցել են, բնավ, ոչ այն ձեւով, ինչպես որ այսօր

⁴⁸ Հատոր Բ, էջ 159:

⁴⁹ Նույն տեղը, էջ 140:

ներկայացնում են կրթից եւ ատելությունից կուրացած մարդիկ:

Փետրվարյան ապստամբությունը համազգային ցասումի տարերային պոռթկում էր: Դաշնակցությունը միայն վերջին վայրկյանին ստանձնեց այդ անկազմակերպ շարժման ղեկավարությունը եւ իր դերը կատարեց փայլուն կերպով: Ապացույց, որ փետրվարյան ապստամբությունից հետո եկող իշխանությունը հիմնովին փոխեց առաջին Հեղկոմի խուժողութ քաղաքականությունը, եւ Հայաստանի ու հայ ժողովրդի համար ստեղծվեցին ավելի տանելի պայմաններ, գոնե որոշ ժամանակի համար:

Ավելորդ չենք համարում այստեղ առաջ բերել նաեւ հետեւյալ երկու վավերագրերը:

Փետրվար 18-ի հեղաշրջումից հետո, բուլշեւիկյան ռադիոն հաղորդել էր «ամենքին, ամենքին, ամենքին», թե Երեւանի պետական հարվածը «մի խումբ մտուզերիստների գործն է՝ ավազակապետ Վրացյանի գլխավորությամբ»: Այս եւ այնուհետեւ քաղաքացիական կռիվների լուրը ճնշիչ տպավորություն էր գործել թիֆլիսի հայության վրա: Այդ առթիվ, Կովկասի փոխարքա Օրջոնիկիձեի արտոնությամբ, գուցե եւ հրահանգով, Երեւան էր եկել բանաստեղծ Հովհ. Թումանյանը:

Թումանյանը Երեւան հասավ մարտի 20-ին, եւ նույն օրն իսկ ես, իբրեւ Փրկության Կոմիտեի նախագահ, Օրջոնիկիձեին ուղարկեցի հետեւյալ հեռագիրը.

«Այսօր Երեւան եկավ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որի հաղորդածներից երեւում էր, որ դուք բոլորովին անճիշտ տեղեկություններ ունիք Հայաստանի դեպ-

քերի մասին: Հեղաշրջումը Հայաստանում անպատասխանատու խմբակների գործ է, այլ տառացի կերպով ամբողջ ժողովրդի, որ կովում է իր գոյության համար: Իմացեք, որ միայն հայ գյուղացիների ու բանվորների դիակների վրայով կարելի է հասնել Երեւան: Թումանյանին տրվում է կատարյալ հնարավորութուն ծանոթանալու իրերի իսկական կացության եւ հաղորդելու ձեզ»:

Հինգ օր վերջը, մարտի 24-ին, Թումանյանը ինքը տվեց հետեւյալ հեռագիրը Օրջոնիկիձեին.

«Թիֆլիս. ընկեր Օրջոնիկիձեին.

Արդեն հինգերորդ օրն է ես Երեւանում եմ: Ծանոթանալով գործերի վիճակին՝ լիովին համոզվեցի, որ մեզ մոտ՝ Թիֆլիսում, կազմված կարծիքը Հայաստանի դեպքերի բնույթի մասին, իրականության համապատասխան է: Շարժումը սկսվել է գյուղացիության մեջ, զանազան շրջաններում. տարածվել-հասել է Երեւան եւ գրավել է մտավորականութունը: Ստեղծվել է հետեւյալ դրութունը: Զենքն ի ձեռքին միմյանց դեմ են ելել մի կողմից Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիութունը, մյուս կողմից զինված ուժերը համայնավարների, եւ հոսում է արյունը առանց որեւէ հիմքի թշնամության եւ փոխադարձ բնաջնջման: Ռազմաճակատում ընկեր համայնավարները որոշ կերպով ասում էին, թե ամբողջ հեղափոխության ընթացքին կարմիր բանակը ավելի անմիտ կռիվ չի մղել: Ուստի՝ ջերմորեն խնդրում եմ ձեր հեղինակավոր միջամտութունը արագ կերպով վերջ տալու այս ոչ մեկի համար անհրաժեշտ արյունահեղության: Պետք կգտնամ ավելացնելու, որ հեղաշրջումից հետո

ձերբակալված ոչ մեկ համայնավար եւ ոչ մեկ ռազմագերի
այստեղ գնդակահարված չեն: Նման հաղորդագրություն
անում եմ եւ ռազմաճակատի համայնավարներին: Եթե
կպահանջվին լրացուցիչ տեղեկություններ, խնդրեմ
կանչեցեք ինձ ռազիոյի մոտ: Հովհաննես Թումանյան»:

Բանաստեղծն իզուր սպասեց ռազիոյի հրավերի կամ
որեւէ պատասխանի. Օրջոնիկիձեն տարբեր նպատակով էր
ուղարկել նրան Երեւան...

IX

ՀԱՅ ԲՈՒՇԵՒԻԿՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փետրվարյան ապստամբությունը եւ հաջորդող համառ կռիվները հաստատեցին մի բան, որ խորրհրդային իշխանությունը Հայաստանում գոյության ոչ մի իրավունք չուներ: Եթե խնդրի լուծումը թողնվեր հայ ժողովրդին, Հեղկոմը այլեւս երբեք Հայաստանի երես չէր տեսնի:

Այս փաստը ճշող տպավորություն թողեց բոլշևեիկներին վրա. կարմիր բանակը, հանուն բանվորագյուղացիական իշխանության, կռվում էր Հայաստանի բանվորների եւ գյուղացիների դեմ: Եվ զարմանալի չէր ռազմաճակատի համայնավարների խոստովանությունը Թումանյանին, թե՛ «ամբողջ հեղափոխության ընթացքին կարմիր բանակը ավելի անմիտ կռիվ չի վարել», որովհետեւ բոլշևեիկյան ամբողջ տիրապետության ընթացքին ոչ մի ժողովուրդ այնպես բուռն ու համառ չի կռվել իր կյանքի եւ արժանապատվության, իր հայրենիքի ազատության համար, որքան հայերը 1921թ. փետրվար-մարտ ամիսներին:

Հայաստանի անօրինակ դեպքերը արձագանք գտան եւ Մոսկվայում, ուր Լենինը ինքը անձամբ ձեռք առավ կովկասյան խորհրդային գործերի կարգադրությունը:

Մոսկվան փոխեց Հայաստանի նախկին հեղկոմը եւ արգելեց Ավիս Նուրիջանյանի պես բախտախնդիրների մոտաքը Հայաստան: Լենինը զգաստության եւ խոհեմության հրավիրեց Կովկասի կոմունիստներին եւ Հայաստան ուղարկեց Ալ. Մյասնիկյանին՝ հատուկ հանձնարարությամբ:

Հայաստանը պետք է անցներ առաջին Հեղկոմի խելացնոր «գինվորական կոմունիզմի» բովից եւ փետրվարյան ապստամբութեան փոթորիկներին, որպեսզի իրավունք ստանար գեթ աննշան ազատութեան եւ մարդկային տարրական կյանքի:

Լենինը Մյասնիկյանին տվեց մի նամակ, որի հրահանգներով պետք է դեկավարվեին այնուհետեւ Կովկասի բոլշևիկ իշխանավորները: Առաջ բերենք այդ հետաքրքրական մարդկային վավերագիրը, որ այնքան աններդաշնակ էր Կասյան-Ավիս-Աթարբեգյանի մինչեւ այդ հետապնդած քաղաքականութեան:

ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԸ

«Ազրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի եւ Լեռնական հանրապետութեանց ընկեր կոմունիստներին.

Ձերմագին ողջունելով Կովկասի Խորհրդային Հանրապետութեանները՝ թույլ եմ տալիս ինձ հայտնելու այն հույսը, որ նրանց սերտ միութեանը կստեղծե հաշտութեան այնպիսի մի օրինակ, որ չի տեսնված բուրժուազիայի օրով եւ հնարավոր չէ բուրժուական կարգերում:

Բայց որքան էլ ազգային հաշտութեանը կարեւոր լինի Կովկասի ազգութեանց, բանվորների եւ գյուղացիների միջեւ, ավելի կարեւոր է պահպանել ու զարգացնել Խորհրդային իշխանութեանը, որպես ընկերվարական փոխանցման շրջան: Դժվար է այդ խնդիրը, բայց կատարելապես իրագործելի: Նրա հաջող լուծման համար ամենից կարեւորը այն է, որ Անդրկովկասյան կոմունիստները հասկանան իրենց կացութեան յուրատեսակութեանը, իրենց հանրա-

պետութիւնները կարգ ու սարքը, որ տարբեր է Ռ.Ս. Ֆ. Խ. հանրապետութեան կացութիւնից եւ պայմաններից, հասկանան, որ անհրաժեշտ է ոչ թե ընդօրինակել մեր գործելակերպը, այլ մտածված կերպով ձեւափոխել այն՝ կոնկրետ պայմանների տարբերութեան կիրառելի եղանակով:

Ռուսաստանում Խորհրդային իշխանութիւնը ունեցել է Ռ.Ս. Ֆ. Խ. հանրապետութեան քաղաքական եւ փոքր չափով էլ զինվորական աջակցութիւնը: Այդ արմատական տարբերութիւն է:

Երկրորդ. Այժմ Դաշնակիցներից վախենալու հարկ չկա արշավանքների տեսակետից, ոչ էլ վրացական, ազրբեջանյան, հայկական, Դաղստանի, Լեռնական սպիտակ զվարդիականների աջակցութիւնից:

Երրորդ. Ռուսաստանը տնտեսապէս կտրված է եղել եւ մեծ չափով մնում է կտրված առաջավոր դրամատիրական երկրներից: Կովկասը կարող է ավելի շուտ եւ ավելի հեշտ «համակեցութիւն» եւ ապրանքային փոխանակութիւն հաստատել դրամատիրական Արեւմուտքի հետ:

Ամբողջ տարբերութիւնը այդ չէ: Բայց մատնանշված տարբերութիւններն էլ բավական են՝ հասկանալու համար, որ անհրաժեշտ է այլ գործելակերպ:

Ավելի մեղմութիւն, զգուշութիւն, զիջողութիւն դեպի մանր բուրժուազիան, մտավորականութիւնն ու, հատկապէս, գյուղացիութիւնը: Տնտեսական մեծ թափով եւ շուտափույթ օգտագործել դրամատիրական Արեւմուտքը՝ մենաշնորհների եւ ապրանքային փոխանակութեան քաղաքականութեամբ: Նավթը, մանգանեզը, ածուխը, տկվարչելյան հանքերը, պղինձը՝ այս է հանքային ահագին հարստու-

թյունների ոչ լրիվ ցուցակը: Լիակատար հնարավորու-
թյուն կա լայն չափով զարգացնելու մենաշնորհների եւ
ապրանքային փոխանակութայան քաղաքականությունը ար-
տասահմանի հետ:

Այդ պետք է անել լայն չափով, հաստատակամորեն,
հնարամտությամբ՝ ամեն կերպ օգտագործելով այդ՝ բարե-
լավելու բանվորների եւ գյուղացիների վիճակը եւ հրավի-
րելու մտավորականությունը տնտեսական շինարարու-
թյան գործին: Օգտագործելով ապրանքային փոխանակու-
թյունը Իտալիայի, Ամերիկայի եւ այլ երկրների հետ՝ բո-
լոր ուժով զարգացնել հարուստ երկրի արտադրական ուժե-
րը, սպիտակ ածուխը, ռոռգոլմը: Ոռոգումը առանձնապես
կարեւոր է, որպեսզի ամեն գնով բարձրացվի հողագործու-
թյունն ու անասնապահությունը:

Ավելի դանդաղ, ավելի զգուշավոր, ավելի սիստեմատիկ
փոխանցում դեպի ընկերվարությունը, ահա թե ինչ է հնա-
րավոր եւ անհրաժեշտ: Կովկասի հանրապետությունների
համար, ի զանազանություն Ռ.Ս.Ֆ.Ս. Հանրապետությու-
նից, ահա թե ինչ պետք է հասկանալ եւ կարողանալ իրա-
գործել՝ տարբերելով մեր գործելակերպից:

Մենք բացինք առաջին ճեղքը համաշխարհային դրամա-
տիրութայան մեջ: Ճեղքը բացված է: Մենք պաշտպանեցինք
մեզ բոլոր Դաշնակիցներից: Նրանց պաշարման աջակցու-
թյունը, նրանց զինվորական օգնությունը վայելող սպի-
տակների՝ էսէռերի, մենչեւիկների դեմ՝ կատաղի, գերբնա-
կան, ծանր ու դժվարին, դաժանորեն գահավեժ պատերազ-
մում:

Ձեզ՝ Կովկասի կոմունիստ ընկերներ, հարկավոր չէ ձեզքեր բանալ. պետք է գիտենալ մեծ զգուշավորությամբ ու սիստեմատիկորեն ստեղծել նորը՝ օգտագործելով 1921 թվականի ձեզ համար նպաստավոր միջազգային կացությունը: 1921-ին ե՛լ Եվրոպան, ե՛լ ամբողջ աշխարհը այն չեն՝ ինչ որ էին 1917 եւ 1918 թվականներին:

Ոչ թե պետք է ընդօրինակել մեր գործելակերպը, այլ անկախորեն խորհրդածել նոր յուրատեսակության, պայմանների եւ արդյունքների պատճառների մասին. ձեզ մոտ պետք իրագործել 1917-1921 թվականների փորձի ոչ թե տառը, այլ ոգին, միտքը, դասերը:

Տնտեսապես՝ միանգամից պետք է հենվել դրամատիրական արտասահմանի հետ ապրանքային փոխանակության վրա, ժլատ չլինել. թող նա ստանա տասնյակ միլիոնավոր հանքային ամենաթանկագին արտադրություններ:

Աշխատել միանգամայն բարելավել գյուղացիների վիճակը եւ ձեռնարկել էլեկտրականացման, ոռոգման խոշոր աշխատանքներ: Ոռոգումը ամենից շատ է հարկավոր եւ ամենից ավելի կկերպարանափոխե երկիրը, կվերածնե այն, կթաղե անցյալը, կամրապնդե ընկերվարության փոխանցումը:

Ներողություն նամակիս անխնամության համար, որ պետք է գրեի հապճեպորեն՝ ընկեր Մյասնիկյանի հետ ուղարկելու համար: Կրկին անգամ ուղարկում եմ ամենաջերմ ողջուններս եւ բարեմաղթություններս Կովկասի խորհրդային հանրապետությանց բանվորներին եւ գյուղացիներին:

Վ. ԼԵՆԻՆ

Մոսկվա, 14 ապրիլի, 1921

Այս նամակը որքան որ արդյունք էր այն ժամանակվա Ռուսաստանի ընդհանուր պայմանների, Անդրկովկասին վերաբերող մասում մեծապես թելադրված էր Հայաստանի փետրվարյան ապստամբության թողած տպավորությունից: Այս տեսակետից կարելի է չընդունել, որ Հայաստանի փետրվարյան շարժման ազդեցությունը շատ ավելի լայն էր, քան Հայաստանի սահմանները:

Համենայն դեպս, ինչ վերաբերվում է Հայաստանին, փետրվարյան ապստամբությունը ցնցող ու զգաստացնող տպավորություն թողեց խորհրդային իշխանության վրա:

Թիֆլիսում, եւ ապա, ապրիլի 19-ին Երեւանում արտասանած իր ճառի մեջ Կոմկուսի Անդրկովկասյան Կոմիտեի քարտուղար Ս. Օրջոնիկիձեն մեկնախիստ խոսքերով դատապարտեց հայ կոմունիստներին, որոնք պատճառ էին դարձել փետրվարյան ապստամբության եւ քաղաքացիական ավերիչ կռիվների՝ միաժամանակ զգաստության, աչալըջության եւ խոհեմության հրավեր կարգալով Հայաստանի բոլշեւիկ իշխանավորներին: Մի ամիս առաջ, սակայն, նույն Օրջոնիկիձեն արհամարհանքով հետ էր մղում Հայաստանի կառավարության հաշտարար ոգիով տոգորվո՞ծ հեռագրերը եւ անպատասխան էր թողնում Հովհաննես Թումանյանի աղերսագին դիմումը:

Այսպես թե այնպես, Կասյանի Հեղկոմին հաջորդող կառավարությունը, Ա. Մյասնիկյանի գլխավորությամբ, ջանաց մեղմ, խոհեմ եւ հաշտարար քաղաքականության հետեւիլ: Այն եւս պետք է ասել, որ ամբողջ Ռուսաստանում նոր շրջան էր բացվում. որդեգրվել էր ՆԵՊ-ը՝ տնտեսական նոր քաղաքականությունը, որ վերջ տվեց «գինվորական

կումունիզմի» վայրենուծյուններին: Հայաստանն էլ մի պահ հանգիստ շունչ քաշեց եւ մի քանի տարիներ անխռով զբաղվեցավ ներքին ցավերի դարմանումով՝ իր ճակատագիրը կապելով Խորհրդ. Ռուսաստանի հետ:

Եվ ահա տասնյակ տարիներ բռնաբարելու ընկերային փորձեր են կատարում Հայաստանի գլխին: Խաղաղության կարճատեւ շրջաններում հայ ժողովուրդը կրկին ու կրկին փայլեցնում է իր ստեղծագործական հրաշագործ հանճարը, բայց վրա են հասնում բռնության բիրտ օրերը եւ ինչ որ շինված էր երեկ գերմարդկային ճիգերով՝ ոչնչանում է վայրագորեն: Վերելքի եւ անկման շրջանները հաջորդում են իրար, բայց հայ ժողովուրդը, անընկճելի հավատով ու տոկունությամբ, ապրելու անսահման տենչով՝ շարունակում է պահել ու շենացնել իր տունն ու հայրենիքը:

Հաջողեցա՞ն բռնաբարելու արդարացնել հայ ժողովրդի հույսերն ու ակնկալությունները:

Առնենք, օրինակի համար, հայ ժողովրդի համար ամենեն կենսական խնդիրը՝ Հայկական Հարցը, որ ասել է՝ Հայաստանի սահմանների հարցը: Հայ բռնաբարելու խոստանում էին այդ հարցը հիմնովին լուծել Խորհրդ. Ռուսաստանի օգնությամբ եւ ավելի նպաստավոր ձեւով, քան Դաշնակցականները: Ի՞նչ արդյունք ստացվեց, ի վերջո, նրանց քաղաքականությունից:

Հայաստանի Հանրապետությունն ուներ սահմանավեճ Վրաստանի եւ Ազրբեջանի հետ եւ հողային պահանջներ թուրքիայից: Ինչպե՞ս լուծեցին այդ կենսական հարցերը հայ բռնաբարելու:

Վրաստանի հետ բարեկամությունն հաստատելու համար նրանք հրաժարվեցին զուտ հայկական եւ Հայաստանի անբաժան մաս կազմող Ախալքալաքի շրջանից եւ հայկական Լոռիի մի մասից, եւ այդպիսով խնդիրը փակված հայտարարեցին: Ուրիշ խոսքով, ամբողջապես բավարարեցին վրացի ազգայնականներին՝ ի վնաս Հայաստանի եւ հայ ժողովրդի:

Ազրբեջանին ավելի ծայրահեղ գիշումներ արին: Հակառակ Նարիմանովի ծանոթ հայտարարության, որով Խորհրդ. Ազրբեջանը հրաժարվում էր Ղարաբաղից հոգուտ Խորհրդային Հայաստանի, հայ բուլջեւիկները, վերջ ի վերջո, համաձայնվեցին, որ Ղարաբաղը իր ավելի քան 150.000-նոց զուտ հայ բնակչությամբ մնա Ազրբեջանի սահմաններում եւ, իբրեւ վերադիր, թույլ տվին նաեւ, որ Ազրբեջանի քոչվորները ամառները օգտվին Զանգեզուրի, Դարալագյազի, Բասար-Գեչարի ու Ղազախի հայկական արոտավայրերից, առանց որեւէ փոխարինության Հայաստանին:

Այսքանն էլ բավական չեղավ. հայ բուլջեւիկները համաձայնվեցին, որ Ազրբեջանին տրվին Նախիջեւանն ու Շարուրը, որոնք նույնիսկ ընդհանուր սահման չունին Ազրբեջանի հետ եւ գտնվում են Հայաստանի սրտում:

Փոխարենը հայ բուլջեւիկները ոչինչ չստացան Վրաստանից եւ Ազրբեջանից հոգուտ Հայաստանի: Այս պայմաններով, իհարկե, առաջ էլ դժվար չէր խաղաղությունն հաստատել: Եթե Երեւանն ու Էջմիածինն էլ հանձնեին, խաղաղությունն ավելի կատարյալ ու տեւական կլիներ:

Շուրջ 10.000 քառ. կիլոմետր հող, այսինքն՝ ներկա Հայաստանի մեկ երրորդին հավասար տարածություն, եւ ավելի քան 300.000 զուտ հայկական բնակչություն - ահա գինը այն երեւութական խաղաղության, որ բուլղերիկները զոհեցին Հայաստանից: Եւ այս վիճակը, հետագային, նվիրագործվեց նաեւ Խորհրդ. Միության, այսպես կոչված, Ստալինյան Սահմանադրությամբ:

Բայց սա չէ ամենագլխավորը: Ավելի ծանր ու անփառունակ եղավ բուլղերիկների դերը հայ-թուրքական հարաբերությունների խնդրում:

Ինչպես հիշեցինք, 1921թ. մարտ 16-ին, Մոսկվայում, ստորագրվեց «բարեկամության եւ եղբայրության դաշնագիր» Խորհրդ. Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ: Այս դաշնագրով վերջնականապես հաստատվում էին սահմանները Թուրքիայի եւ Խորհրդ. Ռուսաստանի, հետեւաբար եւ կովկասյան հանրապետությունների միջեւ: Ահա այդ դաշնագրի Հայաստանին վերբերող մասերը.

Սահմանը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ հաստատվում էր հետեւյալ ձևով. Սահմանագիծը սկսվում էր Սարի գյուղի մոտից Սեւ ծովի եզերքին, կտրում էր Խեզիս-Մտա սարը եւ հետեւում էր Շավշեթ եւ Քանի Դաղ լեռների ջրաբաշխական գծով: Ապա անցնում էր Արդահան եւ Կարս գավառների հյուսիսային սահմանագծով եւ Ախուրյան եւ Արաքս գետերի ավազանով մինչեւ Վարի Կարա-Սու գետի բերանը:

Ուրիշ խոսքով, ոչ միայն ամբողջ Կարսի եւ Արդահանի գավառները, այլեւ ամբողջ Սուրմալուն անպայման կերպով հանձնվում էին Թուրքիային:

Նախիջեւանի շրջանը առնվում էր Հայաստանից եւ իբր «ինքնավար հողամաս» հանձնվում Ազրբեջանին՝ պայմանով, որ վերջինս իրավունք չունենա ուրիշի փոխանցելու:

Թուրքիայի եւ Ռուսաստանի մասին ստորագրված եւ երկու կողմերի շահերին անհամապատասխան համարված բոլոր դաշնագիրները համարվում էին ջնջված: Այս կետը ի նկատի ունեն, հատկապես, Սեւրի դաշնագիրը, որ որոշում էր Հայաստանի միջազգային իրավական վիճակը եւ սահմանները:

Երկու կողմերը պայմանավորվում էին, որ իրենց երկրներում պիտի չկազմվին եւ պիտի գոյություն չունենան խմբակցություններ, որոնք իրենց վերագրեն մյուս կողմի որեւէ երկրամասի կառավարության դերը, կամ խմբեր, որոնք նպատակ ունենան կռվելու մյուս կողմի դեմ: Այս հոդվածի մեջ ղեփար չէ տեսնել թուրքերի ճիգը՝ անհնար դարձնելու հայ հեղափոխականների գործունեությունը Թուրքիայի դեմ:

Մոսկվայի այս դաշնագիրը, հետագային, հիմք դարձավ Կարսի դաշնագրին՝ Թուրքիայի եւ Հայաստանի, Ազրբեջանի ու Վրաստանի միջեւ, որ կրկնությունն է Մոսկվայի դաշնագրի պայմանների:

Ինչպես հայտնի է, մարտի 16-ի դաշնագրի կնքման օրերին Հայաստանը ապստամբ վիճակի մեջ էր եւ երկրի մեկ մասի իշխանությունը անցել էր Փրկության Կոմիտեի ձեռքը, բայց Ս. Կասյանի Հեղկոմը գտնվում էր Դավալուկի շրջանում, զրահապատ զնացքի մեջ, հետեւաբար Հայաստ-

տանից դուրս չէր եւ Մոսկվայի աչքին համարվում էր Հայաստանի օրինական իշխանութիւնը:

Հայաստանի Փրկութեան Կոմիտեն, ինչպես ուրիշ պետութիւններին, Մոսկվայի կառավարութեանը եւս հայտարարել էր, թէ Հեղկոմը այլեւս Հայաստանի իրավական իշխանութիւն չէ եւ նրա ներկայացուցիչները չեն կարող Հայաստանի անունից խոսել եւ պայմաններ ստորագրել:

Այժմ արդարացնելու համար իրենց անհաջողութիւնը հայ ժողովրդի եւ պատմութեան առջեւ, հայ բուհեւիկները փետրվարյան ապստամբութեանն են վերագրում Մոսկվայի դաշնագրի անհանդուրժելի պայմանները Հայաստանի համար: Դեպքերին ծանոթ որեւէ խելահաս մարդ չի կարող համաձայնվել նրանց հետ:

Փետրվարյան ապստամբութիւնը քաղաքացիական կռիւմների անբնականոն մի վիճակ էր. երկու հակառակորդ ուժեր բախման մեջ էին, եւ Հեղկոմը դեռ հեռացված չէր Հայաստանի հողից, որ ասել է թէ՛ օրինական իշխանութիւն էր Մոսկվայի աչքին: Ինչ եւ լինէր Հայրենիքի Փրկութեան Կոմիտեի Մոսկվա քաջած հեռագրի բովանդակութիւնը, Չիչերինի համար չէր կարող արժեք ներկայացնել: Նրա համար Հայաստանի օրինավոր կառավարութիւնը Կասյանի Հեղկոմն էր, որի պաշտոնական ներկայացուցիչները՝ Ալ. Բեգազադյան եւ Ս. Տեր Գաբրիելյան, Մոսկվայում էին, երբ ստորագրվեցավ մարտի 16-ի դաշնագիրը թուրքերի հետ: Եթէ, այնուամենայնիւ, այդ դաշնագրի մեջ դրվեցին հայերի համար սպանիչ պայմաններ, նշանակում է, որ Հայաստանը ի հառաջագունե, դատապարտված էր զոհվելու. Մոսկվայի համար թուրքերը

չատ ավելի մեծ արժեք ու կարեւորություն ունեին, քան Հայաստանը:

Մյուս կողմից՝ այդ փաստը ցույց է տալիս նաեւ, թե հայ բուլշեւիկները ինչպիսի արհամարհելի քանակ էին Մոսկվայի համար: Եւ այդ տեսանք արդեն, երբ թուրքերը, բոլշեւիկների աչքի առջեւ, վայրագորեն շարունակում էին ավերել ու բնաջնջել Շիրակի հայ գյուղերը, եւ Հայաստանի Հեղկոմի բոլոր դիմումները ոչ մի գործնական արդյունքի չէին հասնում Մոսկվայում: Մարտի 16-ի դաշնագրի ստորագրությունից հետո էլ, բավական ժամանակ, թուրքերը չպարպեցին գրաված շրջանները եւ վերջ չտվին գազանություններին: Միայն ապրիլի 22-ին ռուսական զորամասերը, Վելիկանովի հրամանատարության տակ, մտան Ալեքսանդրապոլ՝ համատարած քայքայումի, հազարավոր դիակների եւ ընդհանուր թշվառության մեջ: Թուրքերը իրենց բարեկամ դաշնակիցներին փոխանցեցին ավերված եւ քաոսի վերածված մի երկիր:

Եվ այնուհետեւ էլ ոչնչով չբարելավվեց Հայաստանի եւ Թուրքիայի փոխհարաբերությունը. մերձեցման եւ իրական բարեկամության ոչ մի նշան: Երեւանն ու Էնկյուրին, ըստ հոլթյան, մնացին նույնքան հեռու իրարից ու խորթ, որքան եւ առաջ: Թերեւս, եւ ավելի վատ, այն պարզ պատճառով, որ թուրքերը հայերի վրա նայում էին իբրեւ քաղաքական կույր գործիքի ռուսների ձեռքին:

Թե «բարեկամական» եւ «եղբայրական» թուրքիան իրական ինչ զգացմունքներ էր տաժում դեպի Հայաստանն ու հայերը, առանձին մերկությամբ, երեւան եկավ Կարսի

խորհրդաժողովի բանակցությունների ժամանակ, 1921թ. սեպտեմբեր-հոկտեմբերին:

Այդ խորհրդաժողովը կոչված էր խաղաղության դաշնագիրը ստորագրելու Թուրքիայի եւ Անդրկովկասյան երեք հանրապետությունների միջեւ՝ հիմք ունենալով Մոսկվայի մարտի 16-ի դաշնագիրը:

Կարսի խորհրդաժողովի եւ դաշնագրի մասին գրեթե ոչինչ հայտնի չէ արտասահմանում, այդ պատճառով ավելորդ չենք համարում տալ այստեղ մի քանի ծանոթություններ «Խորհրդ. Հայաստանի» 1921թ. հոկտեմբերի 21 եւ 23 համարներում տպված արձանագրությունների ամփոփումներից:

Խորհրդաժողովը հրավիրված էր թուրքերի պահանջով՝ նաեւ Անդրկովկասյան երեք հանրապետությունների կողմից վավերացնելու համար Մոսկվայի մարտի 16-ի դաշնագիրը: Թուրքիայի պատվիրակության պետն էր Քյազիմ Կարաբեքիր փաշան, Հայաստանի՝ Ասք. Մուսվյանը, Ազրբեջանինը՝ Բ. Շախթախտինսկին, Վրաստանի՝ Շ. Էլիավան: Սակայն, այս երեք հանրապետություններին փաստորեն ներկայացնում էր եւ նրանց անունից խոսում էր Խորհրդ. Ռուսաստանի արտաքին գործավարության ներկայացուցիչ Գանեցկին:

Խորհրդաժողովը տեւեց սեպտեմբերի 26-ից մինչեւ հոկտեմբերի 13-ը եւ ունեցավ 6 պաշտոնական եւ 9 անպաշտոն նիստեր:

Առաջին նիստում Թուրքիայի պատվիրակը պահանջում է, որ դաշնագիրը ստորագրվի կովկասյան երեք հանրապետությունների հետ առանձին-առանձին: Անդրկովկասյան

պատվիրակների անունից Գանեցկին կտրուկ կերպով մերժում է եւ հայտնում, որ Անդրկովկասի պետութիւնները հավաքաբար պիտի կնքեն մեկ դաշնագիր: Քյազիմ Կարաբեքիրը առարկում է, թե ինքը նման լիազորութիւն չունի եւ ստիպված է հեռագրով հրահանգ ստանալ կառավարութիւնից:

Երրորդ նիստում Քյազիմ Կարաբեքիրը հայտնում է, թե ինքը ստացել է կառավարութիւնի պատասխանը, որ պնդում է, թե դաշնագիրները պետք է ստորագրվեն երեք հանրապետութիւնների հետ առանձին-առանձին: Եվ Գանեցկին նորից առարկում է այդ ձեւին:

Չորրորդ նիստը ամբողջապէս նվիրվում է նույն հարցին: Տեղի են ունենում երկար վիճաբանութիւններ: Ի վերջո, Քյազիմ Կարաբեքիրը համաձայնվում է ստորագրել մեկ դաշնագիր՝ պայմանով, որ Հայաստանին, Ազրբեջանին եւ Վրաստանին վերաբերվող խնդիրները առանձին-առանձին բաժանված լինեն դաշնագրի մեջ: Սակայն, Գանեցկին այս ձեւն էլ է մերժում: Նորից տեղի են ունենում վիճաբանութիւններ եւ որոշվում է մի անգամ էլ դիմել Անգորա, որ կրկին պնդում է իր տեսակետի վրա: Ի վերջո, Գանեցկին համաձայնվում է Քյազիմ Կարաբեքիրի առաջարկած վերջին ձեւին:

Այս վիճաբանութիւնն, անշուշտ, որոշ իմաստ ուներ. թուրքերն ուզում էին, որ Հայաստանը, Վրաստանը եւ Ազրբեջանը դիտվին որպէս անկախ պետութիւններ եւ թուրքիան գործ ունենար ամեն մեկի հետ առանձին-առանձին, իսկ Ռուսաստանը նախորոշել էր արդեն այդ հանրա-

պետութիւնները անկախութեան ջնջումն ու կցումը Ռուսաստանին, ինչ որ եւ շատ չուշացավ:

Երկրորդ նիստի սկզբին, Քյազիմ Կարաբեքիրը առաջարկում է առանց փոփոխութեան ընդունել Մոսկվայի մարտի 16-ի դաշնագիրը, հակառակ պարագային սպառնում է ընդհատել խորհրդաժողովի աշխատանքները, մինչեւ որ նոր հրահանգներ ստացվի Անգորայից: Գանեցկին Հայաստանի, Վրաստանի եւ Ազրբեջանի կողմից ընդունում է առաջարկը, միայն խնդրում է սահմանային երկու փոքրիկ սրբազրութիւններ մտցնել դաշնագրի մեջ. առաջին՝ Հայաստանին թողնել Անիի ավերակները, որոնք «հայերի համար ունին պատմական եւ գիտական մեծ արժեք»: Երկրորդ՝ նույնպէս Հայաստանին թողնել Կողբը, որ «իր ազահանքերով ներկայացնում է համակովկասյան նշանակութիւն»:

Թուրք պատվիրակութեան նախագահը պատասխանում է, թե իրենք ոչ մի իրավասութիւն չունեն Մոսկվայի դաշնագրով գծված սահմանների մեջ փոփոխութիւններ մշտնջելու եւ թե այդ մասին հրահանգ պետք է ուզեն Անգորայից:

Հինգերեքը նիստում կարդացվում է դաշնագրի նախօրոք պատրաստված բնագիրը եւ կետ առ կետ վավերացվում:

Այս առթիվ Գանեցկին անում է հետեւյալ հայտարարութիւնը Անիի եւ Կողբի մասին:

«Մենք այն հույսն ունեինք, որ թուրք պատվիրակութիւնը դրական պատասխան պիտի տար Անիի մասին Հայաստանի արած պահանջին, որ զուրկ էր ամեն տեսակ

զինվորական, տնտեսական եւ աշխարհագրական նկատումներից եւ մեզ համար ունի զուտ գիտական, մշակութային արժեք: Վերջին պահուն, ինչպես Կողբի, նույնպես եւ Անիի մասին թուրք պատվիրակությունը մերժողական պատասխան տվեց՝ առարկելով, թե Անին Ախուրյանի արեւմտյան եզերքին է գտնվում, ուստի հայերին տրվելով, կխախտվի Մոսկվայի դաշնագրի սկզբունքը:

Անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակությունները ամենախորունկ ցավով արձանագրում են Անիի մասին իրենց արած առաջարկի մերժումը, Անիի, որ ներկայացնում է հայերի համար ազգային-պատմական եւ գեղարվեստական արժեք: Ավելացնում ենք նաեւ, թե Անդրկովկասի ժողովուրդները այդ մերժումը պիտի ընդունեն ճշմարիտ ցավով:

Կողբի աղահանքերի մասին, որ համակովկասյան նշանակություն ունի, որովհետեւ տարիներ շարունակ հայթայթել է Անդրկովկասի աղի պահանջը, մենք նախապես ներկայացրել էինք աղահանքերը Հայաստանին թողնելու առաջարկ: Բայց նկատելով թուրք պատվիրակության առարկությունները դրա դեմ՝ մեր այս պահանջը փոխեցինք Կողբի աղահանքերը Հայաստանի կառավարության մենաշնորհ տալու առաջարկով:

Թուրք պատվիրակությունը ներկայումս մերժում է նաեւ այդ առաջարկը. մենք արձանագրում ենք նաեւ այս մերժումը թուրքիայի կողմից՝ համակովկասյան նշանակություն ունեցող այս խնդրի մասին եւ անցնում ենք մյուս հողվածների քննությանը»:

Թուրք պատվիրակութեան նախագահ Քյազիմ Կարաբեքիր փաշան, հայտնապես նեղված տոնով, ի պատասխան Գանեցկիի, անուժ է հետեւյալ հայտարարութիւնը.

«Անիի մասին մեր մերժումը կայանում է Մոսկվայի դաշնագիրը չխախտելու սկզբունքի մեջ: Այսուհանդերձ, ամեն ապահովութիւն կտրվի այնտեղ ապրողներին եւ գիտական աշխատանքներ կատարողներին համար»:

Մերժելով Կողբի մասին արված առաջարկը՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան հայտարարում է, թե Կողբը առաջվա պես պիտի գոհացնէ Անդրկովկասի պահանջները:

Ապա Նախիջեւանի անկախութեան վերաբերյալ հողվածների ընթերցումից հետո, Քյազիմ Կարաբեքիր փաշան մի քանի հարցեր է անում Նախիջեւանի ինքնավարութեան վերաբերող մի շարք խնդիրներին՝ պաշտոնական լեզվի, կրթական, ամուսնական իրավունքների, կրոնական ազատութեան, գերիներին եւ այլնի մասին:

Ազրբեջանի ներկայացուցիչ Բ. Շախթախտինսկին պատասխանում է. թե Մոսկվայի դաշնագրի տրամադրութեան համաձայն, Նախիջեւանը ինքնավարութիւնն է ստանալու Ազրբեջանի սահմաններում:

Վերջապես, վեցերորդ նիստում, հոկտ. 13-ի կեսօրին, տեղի է ունենում դաշնագրի ստորագրութեան արարողութիւնը: «Ստորագրութեան պահուն, հաղորդում է «Խորհրդ. Հայաստանի» թղթակիցը, Կարսի բերդից արձակվեցին թնդանոթի չորս հարվածներ, եւ թուրքական նվազախումբը նվազեց «Ինտերնացոնալը» եւ թուրք ազգային քայլերգը»:

Ահա Կարսի դաշնագրի Հայաստանին վերաբերող մասը.

Առաջին հոդվածով չեղյալ են հայտարարվում Թուրքիային վերաբերող բոլոր դաշնագիրները, որոնք ստորագրված են Թուրքիայի եւ Ռուսաստանի ու Անդրկովկասյան երեք հանրապետութիւնների միջեւ, բացի 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի դաշնագրից: Ասել է, թե չեղյալ են հայտարարված եւ Ալեքսանդրապոլի ու Սեւրի դաշնագիրները:

Երկրորդ հոդվածով Ռուսաստանը եւ Անդրկ. հանրապետութիւնները պարտավորութիւն են ստանձնում չճանաչելու Թուրքիային վերաբերող որեւէ միջազգային համաձայնութիւն, որ ճանաչված չէ Ազգ. Մեծ Ժողովի Թուրքիայի կառավարութեան կողմից: Այս վերջինս էլ, իր հերթին, պարտավորվում է չճանաչել որեւէ դաշինք, որ չի ճանաչվում Հայաստանի, Ազրբեջանի եւ Վրաստանի կառավարութիւնների կողմից:

Չորրորդ հոդվածով գծվում է Թուրքիայի եւ Անդրկովկասյան հանրապետութիւնների սահմանը՝ բառացի կերպով կրկնութիւնը Մոսկվայի մարտի 16-ի դաշնագրի համապատասխան հոդվածի:

Հինգերորդ հոդվածով Նախիջեւանը վեր է ածվում ինքնավար շրջանի Ազրբեջանի հովանավորութեան տակ:

Ուրիշ խոսքով, Կարսի դաշնագիրը, որ կոչված էր վերջնականապէս կարգավորելու Թուրքիայի եւ Հայաստանի փոխհարաբերութիւնները, ոչ միայն ոչ մի խոսք չի անում թուրքահայոց հողերի եւ իրավունքների մասին, այլեւ, առանց առարկութեան, թուրքերին է թողնում Արդահանի, Օլթիի, Կարսի, Կաղզվանի եւ Մուրմալուի շրջանները, այսինքն՝ ամբողջ Հայաստանը՝ Ախուրյանից եւ Արաքսից դեպի հարավ: Բացի այդ, Հայաստանի սրտում գտնվող

Շարուր-Նախիջեւանը խլվում է Հայաստանից եւ տրվում Ազրբեջանին, փոխանակ Ղարաբաղը հանձնելու Հայաստանին:

Ինչպես տեսնում է ընթերցողը, Կարսի խորհրդաժողովում թուրքերը թեւադրեցին իրենց կամքը, եւ հաղթական բոլշեւիկները հլու կամակատարությամբ ենթարկվեցին: Ինչո՞ւ, ուրեմն, զարմանալ, որ Հայաստանի պարտված կառավարությունը ստորագրեց Ալեքսանդրապոլի դաշնագիրը:

Եվ ինչպես վերը նկատեցինք, եթե Ալեքսանդրապոլի դաշնագիրը համեմատելու լինենք Կարսի դաշնագրի հետ, կտեսնենք, որ բոլշեւիկների ընդունած պայմանները շատ ավելի ծանր էին Հայաստանի համար, քան Ալեքսանդրապոլի դաշնագրի պայմանները:

Կարսի դաշնագիրը կատարյալ անձնատվություն էր բոլշեւիկների համար, եւ հասկանալի է բոլշեւիկ Բորյանի վրդովումը. «Ուրիշ ավելի անտանելի եւ ավելի աննպաստ դաշնագիր, քան Կարսի դաշնագիրն է, հագիվ թե կարելի լինի գտնել պատմության էջերում», - գրում է նա:⁵⁰

«Այս ծանր դաշնագիրը, Խորհրդ. Հայաստանի համար, - շարունակում է նա, - որի նմանը պատմությունը չգիտե, թե լազրվեցավ «հեղափոխական» Թուրքիայի կողմից հեղափոխական պատերազմից հաղթական դուրս եկած հայ աշխատավոր ժողովրդին, որ հեղափոխական խանդավառությամբ աջակցեց Դաշնակցական կառավարության պարտության եւ «բոլշեւիկյան» Թուրքիայի հաղթանակին: Հայ աշխատավոր զանգվածները հույս ունեին, որ «Թուր-

⁵⁰ Հատոր Բ, էջ 163:

քիայի եղբայրական աշխատավոր ժողովուրդը» եւ նրա կառավարութիւնը խորհրդ. Հայաստանի հետ կինքեն եղբայրական ու պատմավոր հաշտութեան»:

Ասենք՝ «հայ աշխատավոր զանգվածները» այդպիսի հույս չունեին ու չէին կարող ունենալ. հայ բռնաբեկներն էին միայն, որ միամտորեն հավատում էին, թե Մոսկվան կօգնէ իրենց «պատմավոր» հաշտութիւն կնքելու թուրքերի հետ:

Մոսկվան չօգնեց ու չէր կարող օգնել, որովհետեւ, ինչպէս ճիշտ բացատրում է Բորյանը «Թուրքիայի հետ կնքվելիք հաշտութեան հարցում հայ աշխատավոր զանգվածները եւ խորհրդային իշխանութիւնը կանգնած էին անհաղթելի մի փաստի առջեւ, այն, որ արեւելյան հարցը անկյունաքար էր համաշխարհային հեղափոխութեան եւ խորհրդային երկրների միջազգային քաղաքականութեան համար, որոնց կարծիքով Թուրքիան Արեւելքի ազգային-ազատագրական շարժումների կազմակերպիչ կենտրոնն էր եւ գաղափարական առաջնորդը, ուստի եւ Թուրքիայի Արեւելքում ունեցած քաղաքական գործունեութիւնից էր «կախված ամբողջպէս» Արեւելքի իմպերիալիզմի ճակատագիրը: Այսպիսի պայմաններում էր, որ խորհրդ. Հայաստանը հաշտութեան դաշնագիր պետք է կնքեր Թուրքիայի հետ: Պատմական հանգամանքներով Թուրքիային տրված էր կատարյալ ազատութիւն խորհրդային Հայաստանի սահմանների որոշման խնդրում: Թուրք դիվանագիտութիւնը պատրաստել էր հաշտութեան դաշնագրի նախագիծ, որի համաձայն խորհրդ. Հայաստանը կամ պետք է ստորագրեր դաշնագիրը, կամ պետք է մերժեր խորհրդային եղբայրական հանրապետութիւնների արեւելյան քաղաքականութիւնը...

«Խորհրդային Հայաստանի համար եղբայրական խորհրդային հանրապետությունների առաջարկի մեծումը պիտի նշանակեր քաղաքական եւ տնտեսական խզում վերջիններիս հետ եւ անխուսափելի կերպով պատերազմ թուրքիայի հետ, որ նա չէր կարող վարել: Միեւնույն ժամանակ, առանց հարեւան խորհրդային հանրապետությունների տնտեսական օգնության եւ քաղաքական աջակցության Հայաստանը ի վիճակի չէր Խորհրդային պետություն կառուցելու:

Ընտրությունը Խորհրդային Հայաստանի համար նախորդված էր քաղաքական հանգամանքներով: Հայաստանը Խորհրդ. Վրաստանի եւ Ազրբեջանի հետ միասին, Ռուսաստանի մասնակցությամբ, ստորագրեց հաշտության դաշնագիրը թուրքիայի հետ, որով Հայաստանը դարձավ «փրկագին» խորհուրդների արեւելյան քաղաքականության մեջ համաշխարհային հեղափոխության շահի համար:

Սա մի ծանր դաշնագիր էր, որ կնքվեց համաշխարհային բանվորության ու խորհրդային երկրների եւ համաշխարհային հեղափոխության շահի համար: Նրա քաղաքական եւ տնտեսական աննպաստ հետեւանքները Խորհրդ. Հայաստանի համար հատուցին Խորհուրդների երկրները՝ նյութական նպաստ տալով ավելված Խորհրդ. Հայաստանին»:⁵¹

Կարսի դաշնագրի եւ, առհասարակ, հայ բոլշեւիկների քաղաքականության համար ավելի զարհուրելի եւ սպանիչ դատավճիռ կարելի չէ երեւակայել:

Եվ այդ, հայերի համար ամեն տեսակետից վնասակար դաշնագիրը, Հայաստանի Կենտր. Գործ. Կոմիտեի նախա-

⁵¹ Նույն տեղ, էջ 165:

գահ Արտ. Կարինյանի համար կարեւոր մի նվաճում էր: «Կարսի դաշնագրությունը,-հայտարարեց նա,-մեր արեւելյան քաղաքականութեան հիմնաքարն է: Նրան իր տեղից խախտել՝ նշանակում է մեր արեւելյան քաղաքականությունը փլուզման ենթարկել»:

Մի քար, որ անտանելի ծանրնությամբ մինչեւ այսօր էլ ճնշում է Հայաստանի մարմինը եւ մեկ միլիոն հայութեան ցրիվ է տվել չորս հովերին:

Կարսի դաշնագիրը, սակայն, վերջինը չէր. Լոզանում էլ բռնաբարեկցութեան ծախսերն հայերին՝ թեւ ու թիկունք հանդիսանալով թուրքերին: Չիչերինի գործոն օգնությամբ էր, որ Իսմեթ փաշան Լորդ Քրոֆֆերին թաղել տվեց հայկական հարցը: Եվ խորհրդաժողովից հետո, Չիչերինը ՏԱՄՍ պաշտոնական գործակալութեան միջոցով, պարծանքով հայտարարեց, թե՛ «Խորհրդ. Ռուսաստանի ուղղակիանը սավառնում էր Լոզանի խորհրդաժողովի կանաչ սեղանի վրա, եւ հենց նա էր, որ խանգարեց մեծ պետություններին հարձակվելու եւ ճզմելու փոքրիկ Թուրքիան»:

Հարձակվելով եւ ճզմելով փոքրիկ Հայաստանը,-կարող է ավելացնել ընթերցողը:

Ավելի քան քառորդ դար թուրքերի հետ «եղբայրորեն» գործակցելուց, նրանց անհաշիվ նյութական, ռազմական ու դիվանագիտական օգնություն հասցնելուց հետո, Մոսկվան, վերջապես, խելքի եկավ: Նա համոզվեց, որ էնկյուրին միայն ժամանակավոր շահով էր իրեն բարեկամ եղել. ըստ

էության, իրենց հիմնական քաղաքականությամբ, թուրքերը Արեւմուտքի հետ էին: Եվ 1945 մարտի 19-ին, հասավ թուրք եւ ռուս ամուլի ապօրինի կենակցության վերջը: Այս թվականից սկսած մինչեւ այսօր բուլղերիկները եւ թուրքերը գտնվում են հակառակ ճակատների վրա:

Թուրք-սովետական բարեկամական հարաբերությունների խզումը նորից վառ հույսերով լցրեց հայության սրտերը: Հայկական Հարցը պիտի լուծվեր խորհրդային իշխանության միջոցով, մանավանդ որ Խորհրդ. Միությունը զինակից ու բարեկամ էր Անգլիոն եւ Ամերիկայի: Երեք մեծերը միասին ապահովել էին հաղթանակը, միասին էլ համերաշխ պիտի հաստատեին արդար եւ տեւական խաղաղություն՝ ազատագրելով նաեւ ճնշված ժողովուրդներին:

Տրամաբանորեն անհիմն չէին այդ հույսերը. եթե Մոսկվան անկեղծորեն ուզեր լուծել իր իսկ պատճառով անելի մատնված Հայկական Հարցը, 1945-46-ի պայմաններում, ոչ մեկ ուժ չէր կարող արգելք լինել նրան: Բայց Կարմիր բանակը փոխանակ շարժվելու Կարինի եւ Տարոն-Վանի ուղղությամբ, մտավ Ատրպատական, իսկ Հայկական Հարցը դարձավ սոսկ քարոզչության եւ դիվանագիտական խաղերի առարկա:

Դեպքերը դեռ թարմ են ամենքի հիշողության մեջ. Ամենայն Հայոց կաթողիկոսության կողմից Չորեքչյանի տեսակցությունը գեներալիսիմոս Ստալինի հետ եւ տեսակցության հետեւող խորհրդավոր շշուկներ: Կաթողիկոսի դիմումը երեք մեծերին: Դիմումները Միացյալ Ազգերին, հիմնադիր ժողովին՝ Սան Ֆրանցիսկոյում: Հայաստանի ժողովրդի հուզումնալից ժողովներն ու դիմումները ի

նպաստ թուրքահայ հողերի կցման ներկա Հայաստանին: Հայաստանի համայնավար կուսակցությունն առաջին քարտուղար Հարությունյանի մեծադմուկ ճառը, որով Խորհրդ-Հայաստանը պահանջատեր էր կանգնում թուրքահայոց ժառանգությունը: Ապա ներգաղթի շարժումը: Եվ այս ամենը՝ Մոսկվայի քաջալերանքով: Ինչպե՞ս չհուսալ եւ չուրախանալ. չէ՞ որ Հայաստանի հողերի եւ հայությունն ամբողջացումը տեղի պիտի ունենար

Եվ Հայաստանի ժողովուրդը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսից եւ կոմկուսի քարտուղարից ու հանապետությունն ախազահ Մացակից սկսած մինչեւ կոլխոզներին հետին հովիվն ու կով կթողը, ցնծություն մեջ էր: Թերթերը լեցուն էին հողվածներով: Բեմերից ճառեր էին խոսում: Ամեն բերան արձակ ու ոտանավորով փառաբանում էր ամենայն իմաստությունց աղբյուր Արեւ-Առաջնորդը, որ իր հայրական գթառատությունը Հայաստանին պիտի պարզեւեր թուրքահայոց հողերը:

Ոգեւորությունը մեծ էր, մանավանդ, Հայաստանի բանաստեղծների շրջանում (արդեն հայերս նախ բանաստեղծ ենք, վերջը քաղաքացի): Ոմանք սավառնում էին Արարատի գագաթին, ուրիշների երեւակայությունը հասնում էր մինչեւ Վանի ծովի ափերը, մինչեւ Նեմրոթ ու Մովսար, նույնիսկ՝ մինչեւ Միջերկրական. «Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա», լսվում էր Երեւանի ռադիոկայանից

Արքունական բանաստեղծը երգում էր՝ նստած Արագի ձախ ափին.

Երկու աղբյուր են Արագը թափվում,
Մեկն աղի արցունք, մյուսը՝ ծիծաղ,

Երկու ծառեր կան աջ ու ձախ ավուսմ,
Մեկը չոր, մյուսը ծաղիկ ու ծառ:

Նույն գուլն է գարնան, նույն գարնան արիին,
Եվ հողը նույնն է երկու ավերին.
... Ծառը պարզած իր ճյուղերն անբերրի՝
Մեզ օգնության է կանչում այն ավից:(Գ. Էմին)

Այսպես էին տրամադրությունները Հայաստանում, եւ ողջ հայության մեջ, երբ մի օր էլ՝ շմեցնող լուր. երկու վրացի պատմաբաններ, ակնհայտնի կերպով, Մոսկվայի ներչնչումով, հրապարակ ելան խորհրդային պաշտոնաթերթում՝ պահանջելով կցել Վրաստանին Թուրքահայաստանի մեկ մասը՝ գրեթե մինչեւ կարին: Ապա՝ Վիչինսկիի շնական հայտարարությունը ՄԱԿ-ում, թե այդ հողերը պատկանում են վրացիներին: Ապա՝ վերջ ներգաղթի: Ապա՝ երկաթե վարագույր Հայկական Հարցի շուրջ: Մոսկվան սկսեց հետաքրքրվիլ քրդական հարցով. հայերը այլեւս հետաքրքրություն չէին ներկայացնում նրա աչքում. մավրը կատարել էր իր դերը, մավրը կարող էր հեռանալ:

Ո՛չ մի անգամ եւ ո՛չ մի տեղ Խորհրդ. Միությունը պաշտոնապես հրապարակ չեկավ ի նպաստ Հայ Դատի:

Միայն հրահրեց ու գրգռեց հայերին, ինչպես վարվում էին, իրենից առաջ, կայսերապաշտ պետությունները: Ոչ մի փաստով ցույց չտվեց, թե իրեն համար գոյություն ունի Հայ Դատ անունով մի հարց, կամ որեւէ հանձնառություն իր կողմից ի նպաստ Թուրքահայաստանի:

Հետագա դեպքերը հաստատեցին, որ խորհրդային իշխանության հետաքրքրողը ոչ թե թուրքահայ դատն էր,

այլ արտասահմանի հայ տարագրությունը, իբրեւ թնդանութի միս «անգլո-ամերիկյան զավթիչների» դեմ, իբրեւ գործիք խորհրդային արտաքին քաղաքականության ձեռքին: Թե՛ Հայկական Հարցը եւ թե՛ ներգաղթը Մոսկվան օգտագործեց արտասահմանի հայությունը պառակտելու եւ իր նպատակներին ծառայեցնելու համար:

Հայկական Հարցը այլեւս գոյություն չուներ բոլշեւիկների համար: Չէ՞ որ Ստալինը հանդիսավորապես հայտարարել էր, թե Հայկական Հարցը լուծված-վերջացած է:

Պալատական երգիչները կարող էին զրնգացնել իրենց ստալինապարգեւ քնարի լարերի վրա, թե

... Ծառը պարգած իր ճյուղերը անբերրի
Մեզ օգնության է կանչում այն ամից...

Բայց օգնության կանչը լսող չկար, Հայկական Հարցը լուծված-վերջացած էր:

Անհունորեն աղետավոր եղավ Սովետների եւ, մասնավորապես, հայ բոլշեւիկների քաղաքականությունը նաեւ Արտասահյաստանի մեկ միլիոնանոց հայ տարագրության համար:

Անկախության տարիներին Հայաստանը դարձել էր մագնիսական մի հզոր ուժ, որ իրեն էր քաշում աշխարհացրիվ հայությունը: Հանրապետական կառավարությունը հրապարակել էր քաղաքացիության օրենք, որով բոլոր հայերը, ուր եւ լինեին, կարող էին արձանագրվել Հայաստանի քաղաքացի: Հայաստանի դեսպանատներն ու հյու-

պատասարանները միջոց չէին գտնում բոլոր դիմողներին անմիջապես բավարարութուն տալու: Տարերային մի շարժում էր սկսվել Հայոց ժողովրդի մեջ ամեն կողմից դիմելու «դեպի իրենց սիրուն հայրենիք»: Հայաստանի Հանրապետութունը դարձել էր Ավետյաց երկիր հայրենակարոտ բազմութունների համար: Ծայր էր տվել համազգային ներգաղթը, Հայկի գավակների հավաքը Մասիսի հովանու ներքո:

Հայաստանի խորհրդայնացումը խորտակեց բոլորի վառ հույսերը եւ վերջ տվեց հայահավաքման շարժումին: Ավելին, Հայաստանից եւս շատերը, չկարողանալով դիմանալ բարբարոս վարչաձեւին, այլեւայլ հնարքներով, փախան արտասահման: Եւ հայրենիք վերադառնալու հույսը կտրած՝ հայ տարագրութունը հաստատվեց զանազան երկրներում եւ իր միտքն ու բազուկը նվիրեց այդ երկրների շինարարությանը:

Հայաստանի եւ Արտահայաստանի միջեւ քաջվեց երկաթե անթափանց վարագույրը: Տարագրութունը բոլորովին կտրվեց մայր հայրենիքից, որի կառավարութունը այլեւս «Ամենայն Հայոց կառավարութուն» չէր: Տարագրության ամենամռայլ օրերին Կիլիկիայի, Պոլսի եւ Իզմիրի աղետից հետո, երբ քարացած սրտերն անգամ ցնցվեցին, հասան օգնության թուրքական յաթաղանից ճողոպրած, մերկ եւ անոթի, մազապուրծ փախստականներին, Հայաստանի բոլշեւիկները մեկ կոպեկ անգամ չուղարկեցին, կարեկցանքի մեկ խոսք չարտասանեցին ամոքելու համար իրենց ազգակից թշվառների վիշտը:

Ընդհակառակը, Երեւանի ոչ ամենայն հայոց կառավարութիւնը իրար հետեւից պատվիրակներ ու պատվիրակութիւններ էր ուղարկում իրեն համար դրամ հավաքելու տարագիր հայերից, դրամ, որ գլխավորապէս ծախսվում էր բուլղեւիկյան քարոզչութեան վրա՝ նույն այդ տարագիրներէ մեջ:

Դեռ մոռացված չեն Ալ. Մյասնիկյանի եւ իր ընկերների կոչերը, որով նրանք հրավիրում էին թուրքական կրակից ճողոպրած հայերին ըմբոստանալու հյուրընկալ երկրների կառավարութեանց դեմ:

Բուլղեւիկներին չէր հետաքրքրում հայ աշխատավորութեան բարեկեցութիւնը. հայը դրամատիրական երկրներում նրանց համար պետք է լինէր «կապիտալիզմի դեմ պայքարող պրոլետարիատի մարտական ավանգարդը համաշխարհային Հեղափոխութեան ռազմաճակատում»(Լենին):

Հայ աշխատավոր ժողովրդի արյուն-քրտինքով վաստակած անհաշիվ գումարներ՝ հավաքված զանազան ՀՕԿ-երի եւ այլ միջոցով Հայաստանի բարեշինութեան նպատակով, վատնվեցին պառակտելու եւ այլասերելու համար դադութահայութիւնը: Կաշառեցին թուլամորթ մտավորականներին, պղծեցին էջմիածինը եւ արծաթասեր կրոնավորներին՝ լծելու համար նրանց իրենց կուսակցական նպատակներին: Շահագործեցին հայ ունեւոր դասի միամիտ հայրենասիրութիւնը: Պառակտեցին եւ իրար դեմ կռվի մղեցին աշխատավորութիւնը: Ջանացին իրենց հակալիռի տակ առնել եկեղեցական հաստատութիւններն ու դպրոցները: Նույնիսկ ներգաղթի նման բոլոր հայերի համար նվիրական մի գործ, համայնավար քարոզչութեան

ու պայքարի զենք դարձրին՝ չարաշահելով հայրենաբաղձ հայ մարդու սրբազան զգացմունքները:

Եվ ահա արդյունքը:

Այսօր այլեւս, խորհրդ. Միության սահմաններից դուրս, միացյալ, մեկ հայություն գոյություն չունի. կա հայապաշտ հայություն. կա սովետապաշտ հայություն՝ ատելավառ կրքերով միմյանց ատող, իրարու դեմ պայքարող հայություն:

Եկեղեցի, մշակույթ, դպրոց, ազգային հաստատություններ, հանրային եւ նույնիսկ առտնին կյանք խռովված են, պառակտված, քայքայման ու բարոյալքման ճանապարհի վրա:

Հայրենիքը դարձած է կռվախնձոր՝ «հայաստանասերներ» եւ «հայրենիքի թշնամիներ»: Հայրենասիրությունը շուկայի ապրանք է համայնավարների եւ նրանց անգիտակից ուղեկիցների համար:

Երկաթե վարագույրով շրջապատված Հայաստանը կորցրել է իր բարոյական հմայքն ու ազդեցությունը, իր ձգողական գորությունը արտասահմանի հայության աչքին: Երեւանից ու էջմիածնից այլեւս չեն լսվում կենսանորոգ խոսքեր հայ տարագիր ականջներին: Հայաստանը դարձել է խորթ մայր արտասահմանի նոր սերունդների համար, որոնք դատապարտված են աստիճանական ուժացման ու փոշիացման:

Հայոց պատմության ամենասեւ օրերին անգամ այսպիսի մռայլ վիճակ գոյություն չի ունեցել, որ հայրենիքը լքեր իր զավակներին, գիտակցորեն մղեր նրանց դեպի կորուստ: Հայ ժողովրդի ինքնապաշտպանության հզոր ոգին

*միայն, նրա հրաշագործ հայրենասիրությունը հայու-
թյունը պահում են կենդանի օտարության մեջ:*

*Բուլչեւիկները կարող են պարծենալ իրենց հաղթանակով,
բայց հայոց պատմությունը ամոթանքի սեւ կնիքով պիտի
դրոշմե նրանց ճակատը բարոյական թե նյութական այն
ավերի համար, որ նրանք գործեցին հայրենագուրկ եւ
բախտահալած հայ տարագրության անարեւ կյանքում:
Գալիք սերունդները Վասակների եւ Նիկոլ Թորոսովիչների
չարքին պիտի դասեն հայ բուլչեւիկներին:*

X

ՎԵՐՉԱԲԱՆ

Մենք ջանացինք, որքան հնար է, տալ առարկայական ու մերկ փաստեր: Այս են եղել բոլշեւիկների եւ թուրքերի համագործակցութեան ընթացքը եւ հետեւանքները Հայաստանի վերաբերմամբ:

Եզրակացութեան: Ճշմարտութեան հետամուտ աննախապաշար մարդու համար դժվար չէ եզրակացութեան հանելը:

Սակայն, կարող են առարկել, եւ առարկում էլ են, թե պատմութեանը վերջացած չէ եւ դեռ շատ բաներ կարող են տեղի ունենալ: Անշուշտ, կարող են: Բայց ինչ որ արված է մինչեւ այսօր՝ պերճախոս է եւ իրավունք է տալիս, եղածի վերաբերմամբ, որոչ եզրակացութեաններ հանելու:

Հաջողեցին՞ հայ բոլշեւիկները իրենց նպատակների եւ խոստումների մեջ, կարողացա՞ն իրականացնել հայ ժողովրդի տենչերը եւ իրենց տված խոստումները:

Խնդիրը այն չէ, թե Հայաստանում այսօր այսքան շենքեր են շինված, այսքան ճանապարհներ ու դպրոցներ են բացված, այսքան գրքեր են հրատարակվում, այսքան արտավար հող է ցանված, կամ այսքան գործարաններ ու էլեկտրակայաններ են հաստատված. հայ ժողովուրդը, եթե ազատ ձգվեր իր բախտին, բազմապատիկ ավելի կշիներ ու կճոխացներ իր հայրենիքը: Ոչ էլ համոզեցուցիչ փաստ է, որ այսքան տարիներ համեմատական խաղաղութեան է տիրում սահմանների վրա. տեսանք արդեն, թե ինչ գնով է ձեռք բերված այդ խաղաղութեանը. տեսանք նույնպես, որ

Հայաստանի խաղաղությունը վրդովող գլխավոր ուժը հենց իրենք՝ բոլշեւիկներն էին:

Կարեւորն այն է, թե հայ բոլշեւիկները կարողացա՞ն լուծել հայ ժողովրդի ազգային հիմնական հարցերը: Մինչեւ այժմ՝ հայտնի փաստերից կարելի է վճռական կերպով եզրակացնել, թե՛ ո՛չ, չկարողացան:

Ի՞նչ կպատահի վաղը, մարդ չգիտես: Ի՞նչ է պատահել մինչեւ այժմ՝ հրապարակի վրա է, ամենքի աչքի առջեւ: Եվ այդ պատահածը անողոք տրամաբանությամբ ասում է, որ՝

- 1) Բոլշեւիկյան քաղաքականությունը Հայաստանի վերաբերմամբ, սկզբից մինչեւ վերջ, ոչնչով չի տարբերվել «գիշատիչ իմպերիալիստների» քաղաքականությունից: Նա հետապնդել է եսական ու շահախնդիր նպատակներ եւ Հայկական Հարցը ծառայեցրել է իր շահերին: Հայաստանը եւ հայ ժողովուրդը, որպես այդպիսին, նրան չեն հետաքրքրել, ինչպես նրանից առաջ չեն հետաքրքրել դրամատիրական պետություններին:
- 2) Խորհրդայնացման հենց առաջին օրերից սկսած՝ բարեկամական կապ է հաստատվել բոլշեւիկների եւ թուրքերի միջեւ: Բոլշեւիկները օգնել ու գործակցել են ոչ միայն «հեղափոխական» քեմալականներին, այլեւ «Չարդարար» իթթիհատականների պարագլուխներին՝ նյութապես քաջալերելով նրանց դավերը Հայաստանի դեմ:
- 3) Իրենց իշխանության առաջին օրերին ներկայանալով իբրեւ Հայկական Դատի ջատագով եւ նույնիսկ Հայաստանի անկախության խոստում տալով հրապար-

րակավ՝ իրենց գործնական քաղաքականությամբ բու-
շելիկները արգելք հանդիսացան Հայկական Հարցի
նպաստավոր լուծման եւ, ի վերջո, Թուրքիայի հետ
կնքած դաշնագրերով ոչ միայն ամբողջ Թուրքա-
հայաստանը ձգեցին Թուրքերին, այլեւ Ռուսահայաս-
տանի մեկ երրորդը զիջեցին՝ մնացած մասից էլ,
գուտ հայկական մի քանի կարեւոր գավառներ,
հանձնելով Ազրբեջանին եւ Վրաստանին:

- 4) Ամեն անգամ, երբ առիթ է եղել միջազգային դիվա-
նագիտության մեջ Հայկական Հարցը արծարծելու,
բուշելիկները միշտ պաշտպանել են Թուրքիայի շա-
հերը ի վնաս հայերի եւ Հայաստանը գոհել են իրենց
համաշխարհային հեղափոխության նպատակներին:
- 5) Թուրքերը ամենաճարպիկ կերպով օգտագործել են
բուշելիկների այս վերաբերումը եւ խորհրդային իշ-
խանության օգնությամբ հարվածել են հայերին ու
վնասել Հայաստանին:
- 6) Հայ բուշելիկները, սկզբից մինչեւ վերջ, կուրորեն
համակերպվել ու հետեւել են Մոսկվայի քաղաքակա-
նությանը ու Մոսկվայի հրահանգներին եւ, կամա թե
ակամա, գործիք են ծառայել ուսս բուշելիկների
ձեռքին ի վնաս Հայաստանի: Չհամակերպվողները
բնաջնջվել են:
- 7) Լեցված ատելությամբ դեպի Դաշնակցությունը եւ
ամեն գնով ջանալով տիրանալ Հայաստանի իշխա-
նությանը՝ հայ բուշելիկները երկիրը մղեցին դեպի
քաղաքացիական կռիվներ եւ այդպիսով պատճառ

դարձան Հայաստանի տկարացման՝ թե ներքին եւ թե արտաքին ճակատներում:

- 8) Ի դին ամեն ներքին եւ աններքին միջոցների տեր դառնալով երկրի իշխանության՝ հայ բուլղերիկները չկարողացան եւ մինչեւ այժմ էլ չեն կարողանում լուծել եւ ոչ մեկ հիմնական հարց, որ դրված է հայ ժողովրդի առաջ եւ որ հանձն էին առել լուծելու, նախքան իշխանության հասնելը:
- 9) Հայաստանի խորհրդայնացումով՝ մահացու հարված ստացավ Հայկական Հարցը, իբրեւ միջազգային քաղաքականության խնդիր, եւ ոտքի տակ դրվեցան միջազգային հանձնառություններն ու դաշնագրերը Հայաստանի մասին:
- 10) Եվ այս բոլորի հետեւանքով, Հայաստանը զրկվեցավ իր հողերի մեծ մասից, երկու միլիոն հայություն անհայրենիք եւ աստանդական, դատապարտվեցավ բարոյական ուժացման եւ նյութական փոշիացման՝ մատնված կորստյան՝ իրեն եւ Հայաստանի համար:

Այո՛, մինչեւ այժմ հայտնի փաստերից կարելի է վճռական կերպով եզրակացնել, թե հայ բուլղերիկները չկարողացան լուծել Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող կենսական հարցերը: Պատմության առջեւ նրանք հանցավոր են: Ապագա սերունդները չեն ների նրանց, որ Հայաստանի պատմության բախտորոշ օրերին, երբ իրագործվում էին հայության դարավոր իղձերը, նրանք դավաճանեցին

ազգային իդեալներին եւ միացան օտար ուժերին՝ դավադրաբար խորտակելու համար երկարատեւ պայքարի եւ անհաշիվ զոհերի գնով ձեռք բերված ազատությունը:

Գո՞հ են բուլղեւիկները իրենց գործից: Հանգի՞ստ է նրանց խիղճը: Չեմ կարծում:

Եթե լինեին գոհ եւ խղճով հանգիստ, ապա, ուրեմն, ինչո՞վ բացատրել այն փաստը, որ նրանք այնքան զոհեր տվին ստալինյան արյունռուչտ Մոզոքին, որին ուխտել էին հավատարմորեն ծառայել:

Հայաստանն ու հայ ժողովուրդին այրելուց հետո, համաշխարհային հեղափոխության հրդեհում, հայ բուլղեւիկները իրենք էլ այրվեցին նույն այդ հրդեհից:

Ո՞ր են այժմ Հայաստանի դեմ դավող, ուսուական կարմիր բանակին ապավինած, օտար սվինների օգնությամբ Հայաստանի իշխանությանը տիրացած հայ բուլղեւիկները: Ի՞նչ եղավ նրանց ճակատագիրը: Հիշենք միայն մի քանի անուններ մեծերից.

Հայաստանի մի տասնյակ տարիների բռնատեր Աղասի Խանջյան՝ գնդակահարված:

Գաղափարական հին բուլղեւիկ, Հայաստանի վարչապետ Սահակ Տեր Գաբրիելյան՝ սպանված բանտում:

Սարգիս Սրապիոնյան-Լուկաչին - ամենից տաղանդավորը եւ գաղափարականը հայ բուլղեւիկների մեջ, Հայաստանի վարչապետ՝ սպանված բանտում:

Ալեքսանդր Բեգլադյան - Հայաստանի Հեղկոմի արտաքին գործավարը եւ Խորհրդ. Միության դեսպան՝ անհետացած:

Արամայիս Երզնկյան - Երեւանի քաղաքագլուխ եւ նախարար՝ զնդակահարված:

Աբրահամ Գուլոյան- Հայաստանի վարչապետ՝ զնդակահարված:

Հայաստանի Կարմիր բանակի պետ Հ. Ադոյան՝ զնդակահարված:

Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Դանուշ Շավերոյան՝ զնդակահարված:

Հայաստանի ներկայացուցիչ Պոլսում՝ գրագետ Պողոս Մակինցյան՝ զնդակահարված:

«Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի խմբագիր՝ Եղիա Չուբար՝ զնդակահարված:

Նշանավոր «մենք ամենայն հայոց կառավարություն չենք» խոսքի հեղինակ, նախարար Եսայան՝ զնդակահարված:

ՀՕԿ-ի նախագահ՝ Գրիգոր Վարդանյան՝ զնդակահարված:

Հայաստանի ներկայացուցիչ Փարիզում՝ Սիմ. Փիրումյան՝ զնդակահարված:

Ավիա Նուրիջանյան՝ Հայաստանի Հեղկոմի չար ոգին՝ զնդակահարված:

Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Ա. Անանյան՝ անհետ կորած:

Հայտնի բողոքիկ Հայկ Ազատյան՝ անհետ կորած:

Լոռավորության գործավար Ա. Եղիազարյան՝ սպանված:

Հայկոմիկոսի քարտուղար Հ. Կոստանյան՝ հաշվեհարդարի ենթարկված:

Հին բողոքիկ Ստ. Բաղդասարյան՝ զնդակահարված:

Լենինի զինակից, գաղափարական հին բոլշևիկ Արշավիր Մելիքյան՝ աքսորված Հայաստանից, անհայտ:

Անհետացած Ս. Մարտիկյան, Բ. Ներսիսյան, Գ. Հանեսուրժյան: Չեկայի պետեր Մելիք Հովսեփյան, Ամատունի, Մուղղուսի եւ բազում ուրիշներ:

Սրանք միայն քաղաքական գործիչներ են՝ մեկ փոքրիկ մասը հարյուրավոր պատժվածներից: Եվ ինչքան է թիվը մտավորական, գրական դեմքերի, որոնք սպանվել են կամ անհետ կորել՝ Եղիշե Չարենց, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի, Վահան Թոթովենց, Ալազան, Վաղարշակ Նորենց, Մ. Դարբինյան, Ջալել Եսայան, Սուրխաթյան Ջանան, Սիմոն Հակոբյան, պատմաբան Բորյան, ճարտարապետներ՝ Մ. Մազմանյան, Գ. Քոչար, քննադատներ՝ Գ. Վանանդեցի, Թերզիպալյան, Ն. Դաբաղյան, Ը. Վահանյան եւ ուրիշներ:

Հապա՞ բազմահազար այն համայնավարները, որոնց անունները գիտե միայն Աստված եւ մեկ էլ Բերիան՝ անհայտության մեջ կորած Սիբիրի սառնամանիքներում, աքսորված զանազան «թեքումների» հանցանքով:

Չափազանց ծանր եղավ հայ բոլշևիկներին հատուցումը իրենց մոսկովյան տերերին մատուցած ծառայությանց փոխարեն...

Ի՞նչ է պատճառը այս ամենի: Պատճառն այն է, որ հայ բոլշևիկներն էլ, ի վերջո, հայ են: Ապրելով Հայաստանում, տեսնելով եւ իրենց կաշիի վրա զգալով բոլոր այն անիրավություններն ու վատությունները, որ Մոսկվան գործում էր Հայաստանի նկատմամբ, հայ բոլշևիկի մեջ էլ զարթնում է ազգային խիղճը եւ մղում նրան ընդդիմության կենտրոնի անիրավ իշխանության դեմ: Հետեւանքը՝ անխնա պատիժ «ազգայնական» կամ «ղաշնակ» ամբաստանու-

Թյամբ: Մոսկվան շատ լավ գիտի, որ Հայաստանի հողից միայն «դաշնակ» կարող է բուսնել եւ, ինչպէս դիցաբանական Կռոնոսը լափում էր իր զավակներին, անխնա ու հետեւողական կերպով բնաջնջում է դաշնակամիտ համայնավարներին:

Բայց միայն Մոսկվայի հատուցումով հարցը չի փակվի: Կա եւ պատմութեան հատուցումը: Ու նաեւ հայ ժողովրդի հատուցումը: Եվ հոսանք՝ տասնյակ տարիներով, բոլշեւիկյան մուրճի եւ թուրքական սալի միջեւ ճգմված, անհուն անիրավութեանց ու տառապանքների մատնված բազմաչարչար Հայաստանի ու հայ ժողովրդի հատուցումը կլինի արդար եւ անողոք:

Այո՛, արդար եւ անողոք:

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս գիրքը մամուլի տակ էր, երբ 1953թ. հունիս 10-ին, Ֆրանսիական տեղեկատու գործակալությունը՝ ԱՖՓ, հրապարակեց հետեւյալ հեռագիրը էնկյուրիից.

«Տեղեկացվում է, Խորհրդ. Միությունը, փափազելով մեղմացում առաջ բերել ներկա լարված վիճակի մեջ, մի շարք առաջարկներ է արել Թուրքիային եւ պատրաստակամություն հայտնել հրաժարվելու համաշխարհային երկրորդ պատերազմի վախճանից ասդին իր ներկայացրած բոլոր պահանջներից:

Մի ոչ պաշտոնական աղբյուրի համաձայն՝ Խորհրդ. Միության էնկյուրիի դեսպանը՝ Ալեքսանդր Լավրիչչեւը, Թուրքիայի արտաքին գործոց նախարարին հանձնել է մի հուշագիր, որով Խորհրդ. Միությունը հրաժարվում է Կարսի, Արտասանի եւ Արդվինի առնչությամբ 1945-ին ներկայացրած բոլոր պահանջներից:

Խորհրդ. Միությունը հրաժարվում է նաեւ նեղուցների վերաբերմամբ դրած պահանջներից եւ փափազ է հայտնում «ապագային լավագույն հարաբերություններ մշակել Թուրքիայի հետ»:

Այս հաղորդագրությունը պաշտոնապես ոչ հերքվեց Մոսկվայից, ոչ էլ հաստատվեց պաշտոնապես, բայց հետագա լուրերը եւ դեպքերը հաստատեցին, որ Ֆրանսիական գործակալության տեղեկատվությունը անհիմն չէր:

Հիրավի, մայիս 30-ին, Մոլոտովը ներկայացրել էր Թուրք կառավարությանը նման բովանդակությամբ մի հուշագիր:

Ի՞նչ է նշանակում Մոսկվայի քաղաքական այս նոր շրջադարձը: Եվ ի՞նչ առնչություն ունի Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագրի հետ:

Նախ՝ վերհիշենք հաջորդական դեպքերը մի անգամ էլ:

Համայնավար կուսակցությունը Ռուսաստանի իշխանությունը գրավելով՝ ի լուր աշխարհի հանդիսավոր խոստումներ տվեց հայ ժողովրդին, նույնիսկ Հայաստանի անկախության մասին հավաստիքներ եւ պաշտոնական որոշումներ հրապարակեց: Վերջը, սակայն, Բրեստ-Լիտովսկի դաշնագրով, ոչ միայն ամբողջ Թուրքահայաստանը, այլ Ռուսահայաստանի մեկ մասն էլ զիջեց Թուրքերին:

1920-ին, խորհրդային իշխանությունը ճանաչեց Հայաստանի անկախությունը, խոստացավ աջակցել Թուրքահայաստանից էլ հողեր միացնել Հայաստանին եւ հաջորդ տարին, 1921թ. մարտ 16-ին, Մոսկվայի դաշնագրով Սուրմալուն եւ Շարուրն ու Նախիջևեանն էլ, ուրեմն՝ Բրեստ-Լիտովսկում տվածից ավելին հանձնեց Թուրքերին:

1920-ի վերջերը, Հայաստանի խորհրդայնացումով, Մոսկվան հույսեր ներշնչեց հայերին, թե Հայաստանի սահմանները պիտի ընդարձակվին, իսկ Մոսկվայի արբանյակ Խորհրդ. Ազրբեջանը հանդիսավորապես հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջևեանը այսուհետեւ մաս պիտի կազմեն «եղբայրական» Հայաստանի: Բայց դեռ մեկ տարի չանցած, 1921թ. հոկտեմբերի 13-ին, Կարսի դաշնագրով, առանց մեկ թիզ հող ավելացնելու, վերահաստատվեցին Մոսկվայի դաշնագրի սահմանները: Ղարաբաղն էլ, Շարուր-Նախիջևեանի հետ միասին մնաց Ազրբեջանի տիրապետության տակ:

Եվ, ի վերջո, Ստալինյան Սահմանադրությամբ, առանց վերաքննության հույսի, հաստատվեց սահմանը Հայաստանի եւ Ազրբեջանի ու Վրաստանի միջեւ, որով Ղարաբաղ, Գյուլիստան, Շարուր, Նախիջեւան, Գողթն, Լոռիի մեկ մասը, Ախալքալաքն ընդմիջտ խլվեցին Հայաստանից, ի հաշիվ հարեւանների: Ծուրջ 10.000 քառ. կիլոմետր Հայաստանի անբաժան մասը կազմող հայկական հող ավելի քան 300.000 հայերով, բուլղեղիկների կամ քով, կտրվեցին Հայաստանի մարմնից եւ անցան ազերիներին եւ վրացիներին:

Լոգանն էլ վերջը եղավ՝ տապանաքար բուլղեղիկների ձեռքով թաղված Հայկական Հարցի վրա:

Հայերը կարող էին հրձվել. Հայկական Հարցը, վերջապես, լուծված էր Ստալինի վկայությամբ:

Քառորդ դար տեւեց թուրքերի եւ բուլղեղիկների մեղրալուսինը: Եվ քառորդ դար այլեւս խոսք չեղավ թուրքահայոց հողերի մասին: Մոսկվայի համար հայերը այլեւս հետաքրքրություն չէին ներկայացնում: Իսկ Երեւանում նստած չէր «Ամենայն Հայոց Կառավարությունը»:

Միայն արտասահմանում, «հայրենասերները» շրջաններում, դեռ պլպլում էր երեւակայական «տեսիլքի» աղոտ ճրագը եւ բերնեբերան, փսփսուքով խորհրդավոր լուրեր էին տարածվում, իբր թե Մոսկվայից կամ Էջմիածնից բխած, որոնց համաձայն, իբր թե, հարմար վայրկյանին, նորից պիտի արծածվի Հայկական Հարցը:

Եւ «հարմար» վայրկյանը հասավ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի վախճանին, աշխարհագրական բոլոր դիրքերում հաղթական խորհրդային իշխանությունը, հանկարծ, նորից հիշեց հայերի մասին:

1945թ. մարտի 19-ին, Մոլոտովը չեղյալ հայտարարեց 1925թ. դեկտեմբերի 17-ի ռուս-թուրքական բարեկամության դաշինքը, որը շարունակությունն էր 1921թ. մարտ 16 Մոսկվայի դաշնագրի:

Ամենքի հիշողության մեջ դեռ թարմ են 1945-1946 թվականների դեպքերը: Մոսկվայի ակնհայտնի ներշնչումով ու քաջալերությամբ ամբողջ հայությունը ոտքի ելավ. էլ Հայ Դատի հանձնախմբեր զանազան երկրներում ու դիմումներ Միացյալ Ազգերի Ժողովին, էլ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեսակցություն գեներալիսիմուսի հետ ու հանդիսավոր դիմում Երեք Մեծերին. էլ հուզումնալից ժողովներ Հայաստանում եւ արտասահմանում, էլ ներգաղթ: Մոսկվան հրահրում ու հուսադրում էր, բայց գործնական ոչ մի քայլի չէր դիմում: Ի վերջո Կարմիր բանակը, փոխանակ դեպի Կարին շարժվելու, մտավ Թավրիզ: Ինչ^օւ Թավրիզ եւ ոչ Կարին: Որովհետեւ հայկական հողերի պահանջը ինքնապատակ չէր բուլղեիկների համար, այլ միայն միջոց ուրիշ նպատակների հասնելու: Ինչպես եւ հաջորդող ներգաղթի շարժումը, այսօր այլեւս անվիճելիորեն պարզ է, հայերի բարիքին ծառայելու կոչված չէր, այլ լող գեներ էր Մոսկվայի ձեռքին հայության հետ կապ չունեցող քաղաքական ծրագրերի հետապնդման համար:

Խորհրդային իշխանության հարձակողական քաղաքականությունը երկրագնդի բոլոր մասերում անխուսափելի կերպով առաջ բերեց ճեղքվածք պատերազմի տարիներին կազմված «Մեկ Աշխարհի» մեջ: Մարդկությունը բաժանվեց երկու հակամարտ մասերի, եւ ազատ աշխարհը անցավ ինքնապաշտպանության բռնատիրական համայնավարու-

Թյան դեմ: Պատերազմի մղձավանջը նորից թառեց մարդկության կրծքին:

Մոսկվայի միջազգային քաղաքականությունը Ստալինի առաջնորդությամբ, ձեռով խաղաղասեր, բովանդակությամբ՝ ռազմատենչ, Խորհրդ. Միությունը հասցրեց փակուղիի՝ հանդիպելով Ամերիկայի հյուլեական ահարկու ուժին: Գեներալիսիմուսի դիվանագիտական ռազմախաղերը այլևս անզոր էին խաբելու պատրանքներից զգաստացած եւ հեւհեւ իր ռազմական գորությունը կազմակերպող ազատ աշխարհին:

Պատերազմ կամ խաղաղություն, Այգնհաուերին նախագահական աթոռի վրա նստեցնելով, Ամերիկան հարցը դրեց գործնական գետնի վրա, երբ Ստալինը իմաստություն ունեցավ անհետանալու ասպարեզից՝ նոր ռազմախաղերի հնարավորություն բանալով ժառանգների առջեւ: Մալենկովի «խաղաղության հարձակողականը» այլ բան չէ, բայց եթե առժամյա նահանջ, մի նոր Լոքարնո, պատերազմից խուսափելու եւ ժամանակ շահելու նպատակով:

Պիտի հաջողի՞ այս նոր ռազմավարությունը մեր հարցի կապակցությամբ՝ այս պահուս էական չէ: Էականը նահանջն է: Մոսկվան ճարպիկ ռազմախաղով մի կողմից ձգտում է պառակտել արեւմտյան ժողովրդապետությունների միացյալ ճակատը, մյուս կողմից ուզում է ապահովել իր հարավային սահմանները՝ վերականգնելով նախկին բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ: Մայիսի 30-ի հուշագիրը արդյունք է այդ քաղաքականության, որով նորից զոհվում է Հայկական Հարցը:

Հայկական Հարցը ինքնանպատակ չէր 1945-ին, երբ Մոսկվան ջնջում էր «բարեկամության դաշինքը» Թուրքիայի հետ՝ հայկական հողերի պահանջ դնելով, ինքնանպատակ չէ եւ այժմ՝ երբ ուզում է վերականգնել նախկին բարեկամությունը Թուրքերի հետ՝ հրաժարվելով 1945-ի պահանջներից:

Հայկական Հարցը ինքնանպատակ չէր ցարերի ժամանակ, ինքնանպատակ չէ այսօր՝ Խորհրդային իշխանության օրով:

Եթե հայության մեջ դեռ կան բարեմիտ մոլորվածներ, որոնք անկեղծորեն հավատում են, թե Խորհրդային իշխանությունը իրոք մտահոգված է Հայաստանի եւ հայ ժողովրդի ճակատագրով, մայիսի 30-ի հուշագրից հետո պետք է հասկանան, որ բոլշեւիկների համար հայն ու Հայաստանը, որպես ինքնուրույն արժեքներ, գոյություն չունին:

Հայ ժողովուրդ, Հայաստան, Հայկական Հարց համայնավարների համար էլ, ինչպես բոլոր աշխարհակալների, սոսկ միջոց են իրենց քաղաքական ձգտումների եւ հաշիվների մեջ: Այս տեսակետից՝ վկա 35 տարիների պատմությունը, ըստ էության տարբերություն չկա դրամատիքական աշխարհակալության եւ համայնավարական աշխարհակալության միջեւ: Տարբերությունը ձեւի մեջ է՝ ոչ ի նպատակ համայնավարության:

Եվ, հետեւաբար, անկարելի չէ, որ վաղը, երբ պայմանները փոխվին դիվանագիտական խաղով Մոսկվան նորից հրապարակ գա «Կարսի, Արդահանի եւ Արզվինի» պահանջով, հանուն հայերի կամ վրացիների, բայց հուսալ, թե հայերն են կամ վրացիները նրա անկեղծ մտահոգության

առարկան, առնվազն միամտություն կլինի: Մոսկվայի բուն նպատակը համաշխարհային համայնավարությունն է, ոչ թե ճնշված ժողովուրդների ազատությունը:

Աշխարհակալությունը միեւնույնն է՝ սպիտակ թե կարմիր, ունի իր ուրույն փիլիսոփայությունը, իր տրամաբանությունը, իր եսական նպատակներն ու գործելակերպը, որոնց մեջ ամենավերջին տեղն են գրավում ազատագուրկ ժողովուրդների շահերը: Այդ շահերը հաշվի կառնվին միայն այն դեպքում, երբ ժողովուրդներն իրենք որոշ կշիռ կներկայացնեն գորավորների քաղաքական նժարի վրա:

Դեռ անցյալ դարու յոթանասունական թվականների վերջերը, Բեռլինի վեհաժողովից հետո, մի մեծ հայ՝ Խրիմյան Հայրիկը, հուսախաբ դրամատիրական պետությունների խաղերից, կոչ ուղղեց հայության.

«Հայ ժողովուրդ, եթե կուզես հարիսա ուտել (այսինքն՝ ազատություն ձեռք բերել) գինվե երկաթե շերեփով:

Կես դար վերջը, բանաստեղծի տաղանդով օժտված մի ուրիշ մեծ հայ՝ Եղիշե Չարենց, հուսախաբ համայնավար պետության խաղերից, մի այլ կոչ ուղղեց հայությանը.

«Ով հայ ժողովուրդ, քո միակ վրկությունը քո հավաքական ուժի մեջ է:

Մի մեծ հայ եւս, մեծ տաղանդով եւ մոլորություններով, Ավ. Իսահակյան, երբ դեռ ծունկի չէր իջել «ժողովուրդների հոր» առջեւ, հորդորեց հայ ժողովրդին.

Մուրճ կամ զնդան պիտի լինես,

Ճմարտություն չկա ուրիշ:

Նման եզրակացության պետք է գա եւ այս գրքի ընթերցողը.

Հայ ժողովուրդ, սուտ են եւ անարժեք քեզ տրված բոլոր
խոստումները, եթե ինքդ անգոր են, չունիս ազգային իդեալ
եւ իդեալիդ Հասնելու վճռական կամք:

Սիմոն Վրացյան

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՈՂՇԵՎԻԿՅԱՆ ՄՈՒՐՃԻ
ԵՎ ԹՈՒՐԳԱԿԱՆ ՍԱԼԻ ՄԻՋԵՎ**

Խմբագիր

Գազիկ Սարգսյան

Համակարգչային շարվածքը՝

Աննա Գաբրիելյանի

Տեխնիկական խմբագիր

Նարինե Հարուժյունյան

Քարտեզի հեղինակ

carte.ophile



Մինճն Վրացյանը ծնվել է 1882թ. մարտի 24-ին, Նոր Նախիջևանի Մեծ Սալա գյուղում: Հայրենի գյուղի ծխական և Նոր Նախիջևանի թեմական դպրոցներում սովորելուց հետո՝ 1900թ. ընդունվել է Վևորգյան ճեմարան, որն ավարտել է 1906թ-ին: 1908-10թթ. սովորել է Սանկտ-Պետերբուրգի համալսարանի մանկավարժական և իրավաբանական ֆակուլտետներում, միաժամանակ նաև բարձրագույն ուսումնական ճեմարանում: Հեղափոխական գործունեությունը սկսել է 1906 թվականից: 1907թ. մասնակցել է Վիեննայում կայացած ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովին: 1918թ. ընտրվել է Անդրկովկասյան Սեյմի, իսկ 1919թ.-ին ՀՅԴ Բյուրոյի անդամ: 1919թ. ընտրվել է ՀՀ խորհրդարանի պատգամավոր: Առաջին Հանրապետության շրջանում եղել է Գյուղատնտեսության և աշխատանքի նախարար, իսկ 1920թ. նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 2-ը՝ վարչապետ: Փետրվարյան ապստամբության օրերին գլխավորել է Հայրենիքի Փրկության Կոմիտեն: Այնուհետև անցել է արտասահման և շարունակել հայրենանվեր գործունեությունը Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և Լիբանանում, կուսակցական-կազմակերպական գործին զուգահեռ՝ ստանձնելով տարագիր հայությանը կրթելու, դաստիարակելու ազգանվեր գործը: Վախճանվել է Բեյրութում՝ 1969թ. մայիսի 21-ին:



ԵՐԵՎԱՆ 2022